ՀԻՄՆԱՏԱՐՐԵՐ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

ÀÐÌÅÍ ÀÉÂÀÇß Í

ÎÑÍÎÂÍÛÅ ÝËÅÌÅÍÒÛ ÊÄÎÊÒÐÈÍÅ ÍÀÖÈÎÍÀËÜÍÎÉ ÁÅÇÎÏÀÑÍÎÑÒÈ ÀÐÌÅÍÈÈ

×ÀÑÒÜ ÏÅÐÂÀß

ARMEN AIVAZIAN

ESSENTIAL ELEMENTS FOR ARMENIA'S NATIONAL SECURITY DOCTRINE

PART ONE

ЛУСАКН LUSAKN
ЕРЕВАН 2004 YEREVAN

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԻՄՆԱՏԱՐՐԵՐ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

ՄԱՄԼ ԱՌԱՋԻՆ

ԼՈՒՍԱԿՆ
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 32·001
ԳՄԴ 66
Ա 551

Հիմնաարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության Հայեցակարգի:
Մասն Ա

Ա 551 Այվազյան Ա.
Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի.-Մասն 1.- Եր.: 2-րդ, լրամշակված հրատ.:
Հեղինակային հրատարակչություն, 2004.- 264 էջ

ՄեՎագրության մեջ քննության են ենթարկված Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգային խնդիրները, մասնավորապես՝ հայության համակարգային ճգնաժամի պատմաքաղաքակրթական ու քաղաքական պատճառները, հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները, նոր աշխարհակարգի աշխարհաքաղաքական առանձնահատկությունները, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները և ԵԱՀԿ Մինսկի խմբի ծրագրերը, Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը, Հայաստանի պաշտպանական ռազմավարությունները և ռազմական քաղաքականությունը, Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունները:

2-րդ, լրացված և մշակված հրատ.:
Առաջին հրատ.՝ «Սամարկ», 2003:

0801000000
Ա ---------- 2004 ԳՄԴ 66
0150(01)-2004

ISBN 99930-4-099-1

© Ա. Մ. Այվազյան

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանում անվտանգության ու ռազմավարության հարցերին նվիրված գիտական բարձրակարգ՝ քաղաքագիտության համաշխարհային մակարդակին համապատասխանող հետազոտությունները դեռևս սակավադեպ են: Աննշան է նաև հայկական շահերն ընկալող, գերադասող ու պաշտպանող վերլուծությունների ծավալը: Սա անհանդուրժելի փաստ է, քանզի Հայաստանն ակամա ներքաշված է իր բուն գոյությանն սպառնացող երկարատև հակամարտության մեջ, և նրա անվտանգության բնագավառը կարիք ունի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության:

Հայաստանում ազգային անվտանգության բնագավառի մտավոր անմշակվածությունը բացատրվում է՝ ա) միջազգային հարաբերությունների և ռազմավարագիտության մեջ ունեցած մտավոր ռեսուրսների պակասով, բ) խնդրո առարկա հարցերում ՀՀ քաղաքական վերնախավի անպատրաստվածությամբ, գ) օտար ուժերի գործադրած ազդեցություններով:

Մտավոր ռեսուրսների պակաս. *Հայաստանում առկա է միջազգային հարաբերությունների ու հատկապես ռազմավարագիտության մեջ մտավոր ռեսուրսների ծայրահեղ պակաս: Խոսքը վերաբերում է ոչ միայն անհատ մասնագետների խիստ սակավությանը, այլև այս բնագավառում հասարակական-քաղաքական մտքի դպրոցի չգոյությանը՝ որոշակի կառույցների շուրջը ձևավորված ու համակարգված չլինելուն, ինչպես և պետության պատվերի բացակայությանը (այս մասին մանրամասն խոսում ենք Գլուխ 6-ում):*

Ազգային անվտանգության բնագավառում ՀՀ քաղաքական վերնախավի անպատրաստվածությունը. *Ազգային անվտանգության*

(ներառյալ՝ միջազգային քաղաքականության) հարցերում ՀՀ 1990-ականների վերնախավի ներկայացուցիչները մասնագիտացած չէին, որովհետև նրանք ո՛չ համապատասխան կրթություն էին ստացել, ո՛չ աշխատել էին համապատասխան պետական մարմիններում, ո՛չ էլ այդ կարգի փորձ ու գիտելիք էին ստացել Հայկական հարցի բաղկացուցիչ մաս կազմող որևէ խնդրի համար լեգալ կամ ընդհատակյա երկարամյա պայքար մղելու ճանապարհով: Այդ վերնախավը բաղկացած էր իշխանության գլուխ բարձրացած պատահական մարդկանցից:

ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և նրա թիմակիցների՝ սկզբնական կատարյալ անծանոթությունն անվտանգության խնդիրներին, վարչակազմի փոփոխությունից հետո էլ, ցավոք, արմատապես չի շտկվել: Իրադրության անմխիթար վիճակն ընդգծվում է նրանով, որ Հայաստանում մինչև օրս էլ չեն ստեղծվել ռազմավարական վերլուծության լուրջ կենտրոններ: Այդպիսի կենտրոնների բացակայությունը զրկում է ՀՀ իշխանություններին, ինչպես և քաղաքական բոլոր ուժերին իրենց որոշումները հայկական ռազմավարական ինքնուրույն մտքի վրա կառուցելու հնարավորությունից: Բարեբախտաբար, Հայաստանի կառավարությունը սկսել է այս ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկել:

Օտար ուժերի գործադրած ազդեցությունը. մտավոր այս վակուումի մեջ էլ ՀՀ (ինչպես և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների, ներառյալ Ռուսաստանի) ղեկավարության աշխարհայացքի և որոշումներ ընդունելու վրա ճնշող ազդեցություն գործեցին նրանց մատուցվող օտար, հատկապես ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերից բխող ռազմավարական վերլուծությունները, որոնք արտաքնապես կուռ և տրամաբանված շղարշ ունենալով՝ շատ հաճախ սխալ էին, երբեմն էլ՝ միտումնավոր ապակողմնորոշիչ: Արդյունքում Հայաստանի իշխանությունները չկարողացան մշակել և ժողովրդին ներկայացնել ազգային անվտանգության հստակ ու հիմնավոր հայեցակարգ:

Ազգային անվտանգությունը որպես գիտական առարկա

Ազգային անվտանգության ոլորտն առանձին ուսումնասիրության առարկա է դարձել վերջին տասնամյակներում՝ սկզբում

ԱՄՆ-ում, այնուհետև նաև այլ երկրներում: Ազգային անվտանգությանը տրվել են տասնյակ բնորոշումներ: Ինչպես նշում է ամերիկացի մի մասնագետ՝ «ազգային անվտանգության ոլորտի՝ բոլորի կողմից ընդունված որևէ սահմանում չկա, հավանորեն, հնարավոր էլ չէ, որ լինի: Ընդհանուր առմամբ, այդ ոլորտն ուսումնասիրում է պետությունների դիմագրաված անվտանգության խնդիրները, այդ խնդիրները լուծելու կոչված գործողություններն ու ծրագրերը, ինչպես նաև կառավարությանը վերաբերող այն գործընթացները, որոնց միջոցով այդ գործողություններն ու ծրագրերը որոշվում են ու իրականացվում»[1]: Անվտանգության ոլորտի հասկացությունների անբավարար մշակվածության և տերմինաբանության մեջ առաջացած որոշակի խառնաշփոթին համամիտ են նաև վերջին տարիներին այս հարցերին բազմաթիվ մենագրություններ նվիրած ռուսաստանցի մասնագետները[2]:

Արժե մեջբերել ազգային անվտանգության մի շարք հաջողված սահմանումներ:

Բուն անվտանգության առավել սեղմ սահմանումը տալիս է ամերիկացի մասնագետ Հաֆթենդորնը՝ «արժեքների և համակարգի երկարատև ապահով պահպանումն ու դրանց նկատմամբ սպառնալիքի բացակայությունը»[3]:

Ռուսաստանի նախագահին առընթեր Պետծառայության ակադեմիայի դասագրքի համապարփակ սահմանումն այսպիսին է. «Ազգային անվտանգությունը կամ ազգի անվտանգությունը՝ կենսագործունեության տարբեր ոլորտներում անհատի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունն է ներքին և արտաքին սպառնալիքներից, որով ապահովվում է երկրի կայուն առաջընթաց զարգացումը»[4]:

Ն. Մատրուսովը բնորոշում է ազգային անվտանգությունը որպես «ազգային ռեսուրսների և արժեքների, ինչպես նաև պետական, հասարակական և անհատական շահերի մակարդակով և բնույթով բավարար պաշտպանվածություն»[5]:

Վ. Մանիլովի համաձայն, ազգային անվտանգությունը մի համակարգ է, որի բաղկացուցիչ տարրերն են սպառնալիքները, շահերը և դրանց վրա ազդելու գործոնները, ինչպես նաև ազգային անվտանգությունն ապահովելու եղանակները[6]:

Մ. Զլիևը և Ա. Ուրսուլն ընդգծում են, որ «ազգային անվտանգության քաղաքականությունը՝ պետության և հասարակության քաղաքական մյուս ինստիտուտների նպատակասլաց ջանքերի փոխկապակցված այն համակարգն է, որը կոչված է ապահովել նրանց ապահով գործունեությունը»[7]*:*

Մեր ուսումնասիրության տեսանկյունից ազգային անվտանգության օգտակար սահմանում է առաջարկում Չիկագոյի Լոյոլա համալսարանի քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր Սեմ Սարկեսյանը. «Ազգային անվտանգությունը պետության բնակչության բացարձակ մեծամասնության տածած վստահությունն է առ այն, որ պետությունը ռազմականապես ունակ է և արդյունավետ քաղաքականություն է վարում կանխելու համար իր թշնամիների ուժի հաջողակ գործադրումն ի վնաս իր ազգային շահերի իրականացման բռնած ուղու»[8]*:*

Այս սահմանմամբ պահանջվում է ազգային անվտանգության թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բաղկացուցիչների հետազոտություն, որ համահունչ է սույն աշխատության ուղղվածությանն ու ընդգրկմանը: Ուսումնասիրության ելակետային սկզբունքներից է նաև այն, որ ազգային անվտանգության համար լուրջ վտանգ կարող են ներկայացնել ոչ միայն արտաքին սպառնալիքները, այլև ինքնավար զարգացման կարողություններով օժտված բացասական երևույթները ներքին կյանքում՝ տնտեսական, հասարակական, քաղաքական և այլ բնագավառներում: Յուրաքանչյուր պետություն ձգտում է հավերժացնել իր գոյությունը, ուստի և մշակում ու կիրառում է այս գերագույն նպատակին համապատասխանող ներքին և արտաքին քաղաքականության հիմնային դրույթներ, որոնք ոչ այլ ինչ են, քան իր ազգային անվտանգության հայեցակարգը (ԱԱՀ): ԱԱՀ-ն ձևավորվում է երկու ուղղությամբ. նախ՝ պետության բուն գոյությանը սպառնացող վտանգների ճշտում, հայտնաբերում և կանխատեսում, ապա՝ այդ վտանգները կանխարգելող կամ դիմագրավող միջոցների ծրագրավորում: ԱԱՀ-ն ընկած է յուրաքանչյուր պետության կենսագործունեության և քաղաքականության հիմքում:

Ազգային բաղադրությամբ միատարր Հայաստանի պարագայում ազգային ու պետական անվտանգություն հասկացություններ-

ը համընկնում են: Մենք նախընտրում ենք համաշխարհային գործածում ստացած ազգային անվտանգություն եզրը (հետևելով անգլերեն կամ ֆրանսերեն national security-sécurité national *գործածությանը, ուր* national *եզրը միավորում է երկու իմաստ՝ և՛ ազգային, և՛ պետական):*

Ազգային անվտանգությունը կարելի է բաժանել մի շարք գլխավոր ոլորտների՝ ռազմավարական, ժողովրդագրական, տնտեսական (ֆինանսական, էներգետիկ և այլն), տեղեկատվական, սոցիալական, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրոնական, էկոլոգիական: Այս ոլորտներից յուրաքանչյուրը կենսական նշանակություն ունի ազգային անվտանգության համար: Սակայն առաջնային ու կենտրոնականը ռազմավարական անվտանգությունն է: Այն ներառում է աշխարհաքաղաքական միջավայրի բազմատեսակ ազդեցությունների հաշվառումն ու հավասարակշռումը, ինչպես նաև ռազմական համալիր բնագավառը՝ զինված ուժերը, հետախուզությունն ու հակահետախուզությունը, ռազմական քաղաքականությունը և հարակից բոլոր տեսակի բնագավառներն ու գործոնները՝ նպատակ ունենալով ապահովել երկրի և ազգի ֆիզիկական ապահով գոյատևումը:

Այսօր Հայաստանի ԱԱՀ-ի հիմքում ընկած պետք է լինեն հետևյալ փոխկապակցված բաղադրամասերը.

1. Հայաստանի (ներառյալ Արցախի) անվտանգության ամրապնդում բոլոր ուղղություններով, ուժերով և միջոցներով:

2. Հայկական ինքնօրինակ քաղաքակրթության զարգացում՝ համաշխարհային առաջադեմ փորձի օգտագործմամբ, սակայն սեփական հոգևոր ու մշակութային ժառանգության և արժեքների հիմքի վրա:

3. Հայաստանում օրենքի ու սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված հասարակության կառուցում:

4. Աշխատանքի և բարեկեցության ապահովում Հայաստանի ժողովրդի համար:

5. Հայոց ցեղասպանության ռազմավարական ծանր հետևանքների աստիճանական վերացմանն ուղղված ծրագրված, նպատակասլաց ու հետևողական գործողություններ, որոնք կարող են ձգվել տասնամյակներ:

6. Ազգային շահերի և նպատակների ճշտում, բացահայտում ու ձևակերպում:

Հայկական պետության համար վերը նշված դրույթներից յուրաքանչյուրի պաշտպանությունը հիմնարար պահանջ է, որովհետև այդպես են թելադրում մեր ազգային անվտանգության կենսական շահերը:

Թվարկված հինգ խնդրի շուրջ Հայաստանի ժողովուրդն ու ամբողջ հայությունն ունեն ընդհանուր համաձայնություն: Սակայն խնդիրը հասարակության կրավորական համաձայնությունը գործունյա միջամտության վերածելն է: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է, որ հնարավորին չափ շատ հայ անհատներ, բացի համաձայնությունից, դրսևորեն նաև քաղաքացիական նվիրվածություն և անձնապես մասնակցեն նշված համազգային նպատակների կենսագործմանը: Այս խնդիրը լուծելու համար դեռևս չկան մանրակրկիտ մշակված ծրագրեր:

Հայաստանի ժողովրդի առողջ և կուռ համախմբվածությանը հասնելու արդյունավետ միջոցներից է քաղաքացիական-հայրենասիրական դաստիարակությունը՝ ներառյալ Հայաստանի բացառիկ ծանր աշխարհառազմավարական դրության և դրան դիմակայելու միջոցների մասին բավարար գիտելիքների քարոզումը: Նույն նպատակներով և տարաբնույթ եղանակներով քաղաքացիական-հայրենասիրական գիտակցություն են դաստիարակում նաև կայացած պետությունները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Չինաստանը, Ռուսաստանը, արաբական երկրներից շատերը և այլն: Անցյալի և ներկայի համալիր վերլուծության վրա հիմնված համազգային նպատակների համակարգի շարունակական կատարելագործումը յուրաքանչյուր հասարակության դրական և կայուն համախմբվածության հասնելու, ասել է թե՝ ազգային անվտանգությունն ամրապնդելու գլխավոր միջոցներից է:

* * *

Սույն ուսումնասիրության մեջ հայության համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հիմնահարցեր առաջին անգամ

են վերլուծության ենթարկվում Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, մասնավորապես՝

- Հայության համակարգային ճգնաժամի պատմաքաղաքակրթական ու քաղաքական պատճառները,
- Հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները և դրանց հաղթահարման հնարավորությունները,
- Նոր աշխարհակարգի աշխարհաքաղաքական առանձնահատկությունները,
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները,
- ԵԱՀԿ Մինսկի խմբի ներկայացրած ծրագրերի կառուցվածքային թերությունները,
- Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը,
- Հայաստանի պաշտպանական հայեցակարգը և ռազմական քաղաքականությունը,
- Հայոց ցեղասպանության՝ միջազգային ասպարեզում վերջին արծարծումները,
- Պատմության դերն ու նշանակությունը Հայաստանի ազգային անվտանգության համար,
- Հայաստան-Սիյուռք փոխհարաբերությունները:

Վերոբերյալ և հարակից հարցերի քննությունը կատարվել է համադրված կերպով: Ազգային անվտանգության հետազոտության գործում, որպես սոցիալական ուսումնասիրությունների մեթոդաբանության սկզբունք, հատկապես կարևորվում է համակարգային մոտեցումը, որը թույլ է տալիս միահյուսել աշխարհաքաղաքական և հասարակական-քաղաքական գործընթացների, կոլեկտիվ մտայնության և պատմության միջև եղած անմիջական ու դինամիկ կապը[9]:

Աշխատության վերլուծաբանական աշխատանոցը կարելի է համառոտագրել հետևյալ պայմանական հերթականությամբ (պայմանական, որովհետև քննության ընթացքում ստորև նշված

փուլերի հերթականությունը հաճախ խախտվում, հետ ու առաջ է գնում).

1. *քննվող խնդրին համակողմանի ծանոթացում,*
2. *կիրառվող հասկացությունների ճշտում և բնորոշում,*
3. *անհրաժեշտ փաստերի հավաքագրում,*
4. *բազմալեզու և տարատեսակ փաստերի դասակարգում, վերլուծություն և մեկնաբանում,*
5. *վարկածի առաջադրում,*
1. *եզրակացությունների շարադրում*[10]*:*

Գրականության համառոտ տեսություն

Հայաստանի ազգային անվտանգության հիմնախնդիրների համալիր և հանգամանալի ուսումնասիրություններ, ըստ էության, տակավին չկան: Դեռևս մշակված չէ Հայաստանի ազգային անվտանգության պետական հայեցակարգը[11]*:*

Պերճախոս է արդեն միայն այն փաստը, որ Հայաստանում չկա գեթ մեկ պարբերական, որը մասնագիտացած լինի միջազգային քաղաքականության և ազգային անվտանգության հարցերում: Վերջին տարիներին այդ բացը մասնակիորեն լրացնում են Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ «Դրօշակը», Հայաստանի հանրապետական կուսակցության «Հանրապետական» պարբերականը և «Նորավանք» գիտակրթական հիմնադամի «21-րդ դար» հանդեսը: Ազգային անվտանգության մի շարք հարցեր քննության են ենթարկված նաև «Նորավանք» հիմնադրամի նոր երս հրատարակած պրակներում[12]*:*

Միաժամանակ թե՛ Հայաստանում, և թե՛ արտասահմանում լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ Հայաստանի ազգային անվտանգության արդի ամենակենսական հիմնահարցի՝ Ղարաբաղյան հակամարտության մասին:

Հայաստանում առավելաբար կենտրոնացել են Արցախի պատմական հայկականության անժխտելի փաստը ցուցադրելու և դրանով արցախահայության ինքնորոշման իրավունքը հիմնավորելու վրա, թերանալով, սակայն, մանրազնին քննության ենթարկելու Ղարաբաղյան հակամարտության վրա արդի միջազգային քաղաքական համակարգի ունեցած կարևոր ազդեցությունը: Հայ հեղի-

նակների նպատակը եղել է ո՛չ այնքան հակամարտության վերջնական կարգավորման որոնումը, որքան առավելապես արտաքին քաղաքականությունը, որը թեև նույնպես չափազանց կարևոր է, սակայն այլ խնդիր է (դժբախտաբար, այդ ուղղությամբ կատարված մեծ աշխատանքի միայն չնչին մասն է թարգմանվել ու ներկայացվել եվրոպական լեզուներով)[13]:

Արտասահմանյան՝ հիմնականում արևմտյան, ուսումնասիրությունները ծանրացել են Ղարաբաղյան հակամարտության միջազգային ելևեջների վրա, սակայն, սրանք էլ, իրենց հերթին, անտեսել են հակամարտության պատմական ետնախորքը և այդ ետնախորքից բխող՝ հակամարտող կողմերի ռազմավարական մտածողության բաղադրիչ տարրերը:

Փոքր-ինչ ավելի մանրամասն անդրադառնանք արևմտյան ընկալումներին ու մեկնաբանություններին: 1992 թ. մարտից սկսած ԱՄՆ-ն ու մյուս արևմտյան երկրները՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով, եռանդուն մասնակցություն են բերել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման դիվանագիտական-քաղաքական աշխատանքներին: Այդուհանդերձ՝ կայուն կարգավորման հասնելու բոլոր փորձերն առայժմ տապալվել են, իսկ միջնորդող ավագ դիվանագետները՝ հաճախ անթաքույց հիասթափվել են ուրախությամբ տեղափոխվել այլ պաշտոնների, դրանց թվում՝ այնպիսի փորձառու դիվանագետներ, որպիսիք են դեսպաններ Մարիո Սիկան (Իտալիա), Ջոն Մարեսկան (ԱՄՆ), Յան Էլիասոնը (Շվեդիա) և ուրիշներ: Արևմտյան միջազգայնագետները (ինչպես նաև նույն այդ դիվանագետները) փորձել են բարդել այս գրեթե կատարյալ ձախողման մեղքը հիմնականում հակամարտության կողմերի անզիջողականության վրա: Իրենց կարծիքով՝ հայ և ադրբեջանցի զանգվածներն ու ղեկավարներն իբր այն աստիճան իռացիոնալ են, որ, «էթնիկական գզվռտոցով» (ethnic strife) տարված լինելով՝ անընդունակ են գնահատելու նյութական այն բարօրությունը, որ խոստանում է բերել տարածաշրջանին տնտեսական ինտեգրացիան:

Այսպիսի, մեղմ ասած, ժուռնալիստական գնահատականի մի պերճախոս օրինակ է «Ֆորին Ըֆէյրզ» հանդեսում ոմն Դեյվիթ Ռիֆի հրապարակած՝ «Լեռնային Ղարաբաղ՝ էթնիկական գզվռտոցի մի պատմության վերլուծություն» խորագրով հոդվածը[14]: Ար-

դեն այն փաստը, որ միջազգային հարաբերությունների բնագավառում արևմտյան ամենահարգված ու հայտնի հանդեսներից մեկը վստահել է Ղարաբաղյան հակամարտության իր առաջին և առայժմ վերջին հրապարակումը Ռիֆին՝ մի մարդու, որը բացարձակապես անծանոթ է տարածաշրջանի պատմությանն ու հակամարտության կարևոր մանրամասնություններին (մինչ այդ Ռիֆը գրել է բոսնիական պատերազմի մասին)[15], ինքնին վկայում է Արևմուտքում Ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրության խիստ ցածր մակարդակի մասին: Ռիֆի, ու, հետևաբար՝ նաև «Ֆորին Ըֆէըրզ»-ի պատվարժան խմբագիրների, թյուրըմբռնումներն ապշեցուցիչ են. նա «կասկածում է անկլավի (իմա՝ Ղարաբաղի) ղեկավարներից ոմանց ողջամտությանը» և անհավատալի է համարում, որ «անկլավի քաղաքացիներից շատերը համարում են իրենց կառավարությունը չափից դուրս չափավորական»[16], այլ կերպ ասած, ըստ Ռիֆի՝ Ղարաբաղի բնակչության մի մեծ հատվածը կազմում են հոգեկան հիվանդները: Այս զառանցանքն էլ, որ կարմիր թելի պես անցնում է Ռիֆի ողջ գրվածքի միջով, հրամցվում է իբրև հակամարտության բուն պատճառ: Նա խոսում է հայերի «հաղթանակները ուղեկցած գազանությունների մասին» և անգամ չի վարանում մեղադրելու արցախահայերին «այն տառապանքների համար, որ նրանք իրենք են պատճառել [ներառյալ իրենք իրենց]»[17]: Միևնույն ժամանակ Ռիֆի գիտելիքներն այն աստիճան սահմանափակ են, որ նա մինչև իսկ ղարաբաղյան ավանդական տարազը շփոթում է ռուսական բաբուշկա գլխաշորի հետ[18]: Հեղինակն անկարող է հասկանալու այն տարրական ճշմարտությունը, որ արցախահայության զինված պայքարը հայրենի հողում ապրելու իրավունքի պաշտպանություն է՝ պարզ ինքնապաշտպանություն: Եթե դրա համար պատերազմելն անողջամտություն է, ապա որքան ավելի անողջամիտ էին, օրինակ, Միացյալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիան, որոնք հարյուր հազարավոր զինվորներ տեղափոխեցին Պարսից Ծոց ու Իրաք և այնտեղ՝ իրենց սահմաններից հազարավոր մղոններ հեռու, մեծ ու դեռ շարունակվող պատերազմներ են մղում: Ռիֆի մտքին հետևողը պետք է մարդկության պատմության ընթացքում մղված բոլոր պատերազմները համարի իռացիոնալ, տեսակետ, որը գուցե և ճշմարտության ինչ-ինչ փիլիսոփայական-բարոյական հատիկներ է պա-

բունակում, սակայն որևէ կապ չունի քաղաքագիտական վերլուծության հետ: Իրականում՝ Ռիֆն ընդամենը վարձու մի գրչակ է, որին պատվիրել են վարկաբեկել արցախահայերի մղած արդար պատերազմը և ներկայացնել հայերին որպես մեղավոր կողմ: (Ի դեպ, Ռիֆի հոդվածի թարգմանությունը և տպագրությունը «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթում (հուլիսի 17, 1997)՝ այն էլ խմբագրության կցած դրական մեկնաբանությամբ, վկայում է, թե մեզանում, անգամ պետական քարոզչության մակարդակի վրա, դեռևս որքան թույլ է ազգային անվտանգություն հասկացության ըմբռնումը:)[19]

Գլուխը քարը՝ եթե գործը սահմանափակվեր միայն Ռիֆի և «Ֆորին Ըֆէըրզ»-ի տեսակետներով: Ցավն այն է, որ նույնատիպ «վերլուծություններով» տառապում են նաև Ղարաբաղյան հակամարտության հարցերով զբաղվող արևմտյան բարձրաստիճան դիվանագետները: Այսպես՝ 1996 թ. հուլիսի 30-ին ԱՄՆ Կոնգրեսի Միջազգային հարաբերությունների կոմիտեի առջև ելույթ ունենալով, Ղարաբաղյան հակամարտության գծով ԱՄՆ հատուկ պատվիրակ, դեսպան Ջոն Փրեսելը ասում է փաստորեն ճիշտ նույն բանը. «Հինգ տարվա [ուսումնասիրությունների] փորձն ունենալով, այժմ մենք կարող ենք պարզ տեսնել, որ Կովկասում ընթացող էթնիկական հակամարտություններն արդյունք են հիմնականում չշի մեջ սեղմված ազգայնականության, *որը դուրս է ժայթքում կայսրությունների փլուզմանը զուգընթաց: ...Լեռնային Ղարաբաղի հակամարտության ողբերգությունն այն է, որ կայսրության փլուզումը և ամբոխներին մոլորեցնող քաղաքական գործիչների ամբիցիաները թույլ տվեցին, որ այն վերածվի լայնածավալ պատերազմի» (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)*[20]:

Արևմտյան մյուս անլուրջ տեսակետն էլ այն է, որ հակամարտության շարունակության գլխավոր պատասխանատուն պատերազմից շահող տեղական մաֆիական կլաններն են: Այս տեսակետի նորացված տարբեկակը առաջարկում է ոչ անհայտ Փոլ Գոբլը (վերջին տարիներին աշխատում էր «Ազատ Եվրոպա» ռադիոկայանում իբրև քաղաքական մեկնաբան): Սրա համաձայն՝ Ղարաբաղի խնդրի լուծման մեջ որևէ հաջողության բացակայությունը բխում է ազգայնականությունից և հետկոմունիստական վարչակարգերի մա-

ֆիական կառուցվածքների համադրությունից: Պարզվում է, այս նախկին դիվանագետն էլ «գաղափար չունի» այս հակամարտության արմատական պատճառների, այն է՝ հայ-թուրք/ադրբեջանական դարավոր հակամարտության աշխարհաքաղաքական ետնախորքի եւ այն իրական «գզվռտոցի» մասին, որ մղում են Այսրկովկասում մեծ տերությունները: Գոբլն անհիմն կերպով պնդում է նաև, թե իբր այժմ «ո՛չ Բաքուն, ո՛չ Երևանն ամբողջովին չեն վերահսկում իրենց բնակչություններին, որոնց մեծ մասը մինչև ատամները զինված է ու խորապես նվիրված հակամարտությունը շարունակելուն»[21]: Այս առթիվ պետք է ասել, որ թեև Հայաստանում էլ, Ադրբեջանում էլ կան որոշ մարդիկ ու խմբեր, որոնք շրջափակումներից և պատերազմից կարող են իրոք շահ ունենալ, սակայն նրանց՝ կառավարության որոշումների վրա ազդելու կարողությունը ու նաև ցանկությունը չպետք է այդչափ անլրջորեն գերագնահատել, քանզի հակամարտության շարունակությունը լուրջ վտանգ է ներկայացնում նաև նրանց գոյությանը[22]:

Արևմտյան առավել սթափ հեղինակները երբեմն հպանցիկորեն նշում են մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախումը՝ որպես Այսրկովկասում հակամարտություններ ծնող պատճառ[23]: Ավելի հաճախ, սակայն, այդպիսի վերլուծությունները, պարունակում են Ռուսաստանի կամ Իրանի քաղաքականության խիստ միակողմանի քննադատություն:

Ղարաբաղյան հակամարտության իր քննության մեջ Արևմտյան ռազմավարական միտքը ջրի երես է հանում իր մեթոդաբանության ցցուն թերությունները, որոնցից են, հատկապես՝ հակամարտության անմիջական մասնակիցների ռազմավարական մտածողության անտեսումը և նույնիսկ կարևոր փաստերին վատածանոթությունը: Այս առումով տեղին է մեջբերել բրիտանացի ճանաչված պրոֆեսոր Քեն Բութի՝ ռազմավարական մտքի անհամաչափ ու միակողմանի զարգացման վերաբերյալ արած կարևոր մի դիտողությունը.

> «Մասամբ ռազմավարագիտության (strategic studies) զարգացման մեջ Միացյալ Նահանգների ունեցած գերիշխանության պատճառով այս առարկան ձեռք է բերել ցեղակենտրոն (ethnocentric) երանգավորում, այն է՝ ռազմավարագիտությունն արտա-

ցոլում է [ամերիկյան] մշակութային առանձնահատկություններով պայմանավորված ենթադրությունները, աշխարհայացքը և առարկայիս մեջ գերիշխող մտածողների երկրի (իմա՝ ԱՄՆ-ի) նախասիրություններն ու նախապաշարմունքները: Ռազմավարական բանավեճին մասնակցած հեղինակները, մեծավ մասամբ, գրել են՝ մտածելով առավելապես ԱՄՆ-ի խնդիրների մասին: Նրանք նաև ունեցել են ընդհանուր՝ ամերիկյան հասկացողություն ռազմավարական այն տիրույթի վերաբերյալ, որը փորձել են վերլուծել և որի վրա երբեմն փորձել են նաև ներազդել: Այդուհանդերձ՝ ռազմավարության տեսությունն ու պրակտիկան գոյատևում են բազմաթիվ մշակույթների և բազմաթիվ պետությունների միջավայրում, այնինչ այս փաստը շատ դանդաղ է գիտակցվում մասնագիտական գրականության մեջ: Ուստի անհրաժեշտ է խրախուսել ինչպես ամերիկյան ռազմավարագիտական համայնքից դուրս աշխատող հեղինակներին, այնպես էլ այդ բնագավառում արտահայտվող ազգային տարբեր տեսակետները, քանզի ռազմավարագիտությունը... դեռևս մնում է ցեղակենտրոն առարկա...»[24]:

Ամերիկացի մեկ այլ հեղինակ ձայնակցում է Բութի վերոհիշյալ տեսակետին, նշելով մեկ ընդհանուր արատ ԱՄՆ հետախուզական ծառայությունների՝ միջազգային հակամարտություններին վերաբերող վերլուծություններում. «ԱՄՆ-ի եւ՛ քաղաքացիական, եւ՛ ռազմական հետախուզական ծառայություններն, ի հաշիվ խորքային խնդիրների վերլուծության, միտում ունեն նվիրելու իրենց ուժերը տակտիկական մանրամասնությունների ուսումնասիրությանը»[25]:

Բնական է, որ Ղարաբաղյան հակամարտության մասին փաստերի և գաղափարների այսպիսի պաշար ունենալով, արևմտյան «միջնորդներն» ընդունակ են ոչ այնքան թեթևացնելու խնդրի խաղաղ լուծումը, որքան է՛լ ավելի բարդացնելու այն: Որքան էլ զարմանալի է, սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբում տասներկու տարի բանակցություններ վարելուց հետո, միջազգային միջնորդները դեռևս խիստ թերի պատկերացումներ ունեն հակամարտության բուն էության ու ռազմավարությունների մասին:

Համառոտաբար զննենք Ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրության վիճակը նաև Հայաստանում: Թվում էր, թե

Մինսկի խմբի առաջարկությունները, իրենց բոլոր մանրամասնություններով հանդերձ, պետք է լինեին Հայաստանի պետական մարմինների հովանավորությունը վայելող մասնագետների հետազոտության մշտական առարկա (ընդ որում՝ ոչ թե մեկ, այլ մի քանի միմյանցից անկախ աշխատող և այդպիսով մեկը մյուսի վրիպումները շտկող վերլուծական խմբերի կողմից): Ցավոք, պատկերը բոլորովին տարբեր է. անկախության յոթ տարիների ընթացքում Հայաստանում չստեղծվեցին ազգային անվտանգության բնագավառը ուսումնասիրող՝ պատշաճ գիտական որակավորում ունեցող վերլուծական կենտրոններ ու համապատասխան կադրեր, թեև ի սկզբանէ պարզ էր, որ Ղարաբաղյան հակամարտությունն սերտորեն առնչվում է համաշխարհային բազմաբնույթ զարգացումների, որոնք անհրաժեշտ է ժամանակին և ստույգ վերլուծել[26]: Մերժելի է պետության ֆինանսական անկարողությամբ փորձել բացատրել այդ սխալը՝ 30-40 հոգուն տանելի աշխատավարձով և աշխատանքային պայմաններով ապահովելը Հայաստանի կառավարության ուժերից վեր խնդիր չէ:

Այլ հարցերով ու հոգսերով մշտազբաղ պետական այրերը ֆիզիկապես իսկ ի վիճակի չեն ապահովելու բազմաքանակ խճճված հարցերի պատշաճ գիտական քննությունը, որ երբեմն նեղ մասնագիտական պատրաստվածություն է պահանջում[27]: Մինչդեռ, ինչպես ստորեւ ցույց կտրվի, անգամ տեխնիկական բնույթի մեկ վրիպումը կարող է կործանել Ղարաբաղն ու Հայաստանը:

Մեզանում ռազմավարական մտքի թուլության արդյունքներից մեկն էլ այն է, որ անգամ ներքին՝ հայաստանյան շրջանակներում չենք քննում եւ քննարկում Հայաստանի և Ղարաբաղի ապագան ըստ իրական քաղաքականության՝ այսպես կոչված «ռեալփոլիթիկի» կատեգորիաներով ու համաշխարհային քաղաքականության արդի զարգացումների և միտումների լույսով: Փոխարենը՝ անդադար խոսում ենք արցախահայության ինքնորոշման և անկախ պետականություն ունենալու իրավունքի մասին, այլևս մոռացության մատնելով, որ Արցախի անկախությունն իմաստ ունի միայն այն պարագայում, եթե այն ծառայելու է միացյալ Հայաստանը (այսինքն՝ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն միասին) հզորացնելու և կենսունակ դարձնելու համար:

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Հայաստանում կատարված ուսումնասիրությունները կարելի է պայմանականորեն անվանել պատմա-իրավական, իսկ արտասահմանում լույս տեսածները՝ դիվանագիտական-իրավական: Հակամարտության խաղաղ կարգավորման դիտանկյունից նայելով, այս երկու ուղղություններից և ոչ մեկը ռազմավարական վերլուծություն չէ[28]. առաջինը չի քննում պետությունների միջև ուժային հարաբերությունները, երկրորդը՝ հաշվի չի նստում տարածաշրջանի պատմությամբ պայմանավորված կարևոր զարգացումների և իրողությունների հետ: Համապատասխանաբար՝ խաղաղ կարգավորման առաջարկությունները կառուցվել են միջազգային իրավունքի սահմանափակ շրջանակների մեջ, այն է՝ ա) կա՛մ ազգերի ինքնորոշման սկզբունքի համաձայն իրականացվելիք Ղարաբաղի միացում Հայաստանին (որպես նույն լուծման ենթատարբերակ՝ Ղարաբաղի անկախություն). կա՛մ բ) պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքների համաձայն՝ Ղարաբաղի վերադարձ Ադրբեջանի պետականության գիրկը[29]: Այդ մոտեցումներից և ոչ մեկը չի արտացոլում գոյություն ունեցող ռազմավարական իրողությունները: Այդ իսկ պատճառով էլ՝ մինչև այժմ առաջարկված փոխզիջումային տարբերակների կիրառումը անհնար է եղել:

Հայաստանի ազգային անվտանգության հարցերի ակադեմիական մակարդակով կատարված հետազոտությունները մեծապես նպաստում են հասարակության քաղաքական գիտակցության զարգացմանն ու քաղաքացիական պատասխանատվության բարձրացմանը: Աշխարհառազմավարական իրողությունների՝ Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից կատարված վերլուծությունները կարևոր են նաև տարածաշրջանային խաղաղությունն ու կայունությունն ապահովելու բազմակողմանի և առավել լայնախոհ միջազգային մոտեցումներ ձևավորելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Richard Smoke**, *National Security and the Nuclear Dilemma*, 2nd ed. (New York, N. Y.: Random House, 1987), p. 301.

[2] **С. З. Павленко**, *Безопасность российского государства как политическая проблема.* Дисс. докт. полит. наук, Москва, 1998, с. 94-99; *Общая теория национальной безопасности.* Учебник Российской Академии государственной службы при Президенте РФ. Ï îä ðåäàêöèåé **А. А. Прохожева** (Москва: Изд. РАГС, 2002), с. 22-23. **Т. Э. Шуберт**, *Национальная безопасность России: конституционно-правовые аспекты* (Москва: "Право и закон", 2001), с. 5-9.

[3] **О. Н. Новикова**, *Концепция "национальной безопасности" в современной американской политологии. Научно-аналитический обзор* (Москва, 1994), с. 5.

[4] *Общая теория национальной безопасности*, ук. соч., с. 22.

[5] **Н. Д. Матрусов**, "О необходимости создания целостной системы национальной безопасности России: основные принципы, подходы, элементы", *Информационный сборник "Безопасность"*, ¹ 3-4, 1996, с. 46-47.

[6] **В. Л. Манилов**, *Теория и практика организации системы национальной безопасности России*. Автореферат дисс. докт. полит. наук (Москва, 1995), с. 17.

[7] **М. И. Дзлиев, А. Д. Урсул**, *Основы обеспечения безопасности России* (Москва: изд. "Экономика", 2003), с. 23.

[8] "National security is the confidence held by the great majority of the nation's people that the nation has the military capability and effective policy to prevent its adversaries from effectively using force in preventing the nation's pursuit of its national interests." **Sam C. Sarkesian**, *U. S. National Security: Policymakers, Processes, and Politics.* Second edition (Boulder, Colorado: 1995), p. 4.

[9] **А. В. Возженников**, *Национальная безопасность России: методология комплексного исследования и политика обеспечения* (Москва: Изд. РАГС, 2002).

[10] Այս աշխատանոցի մանրամասն նկարագրությունը տե՛ս **W. Gee**, Social Science Research Methods (New York, 1950); **J. A. Thomson**, *Introduction to Science* (New York, 1911); **W. Platt**, *Strategic Intelligence Production: Basic Principles* (New York, 1957). **Джарол Б. Мангейм, Ричард К. Рич**, *Политология. Методы исследования* (Москва: Изд. "Весь Мир", 1997).

[11] Իրականում ազգային անվտանգության հայեցակարգը որոշակիորեն նույնանում է մեզանում անհարկի չարչրկված «ազգային գաղափարախոսություն» հասկացության հետ: Ազգային գաղափարախոսությունը (այնպես, ինչպես այն կիրառվում է հայկական քաղաքագիտական գրականութ-

յան մեջ) կարելի է բնորոշել իբրև *անցյալի և ներկայի համալիր վերլուծության վրա հիմնված համազգային նպատակների մի համակարգ, որը պատմական առանձին ժամանակահատվածում ընդունելի է դառնում տվյալ ազգի մեծամասնության համար:* Վերջերս հրապարակվել են ազգային գաղափարախոսության էությունն ու բովանդակությունը քննության առարկա դարձրած մի շարք աշխատություններ. - տե՛ս **Լենդրուշ Խուրշուդյան**, *Հայոց ազգային գաղափարախոսություն* (Երևան, 1999): **Լևոն Դոնոյան**, *Երրորդ հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը* (Երևան. «Լուսաբաց», 2002): **Արմեն Հովսեփյան**, **Սիրակ Հովհաննիսյան**, *Քաղաքականության պատմական դասերը և արդիականությունը* (Երևան. «Կախսա», 1999, տե՛ս, հատկապես, էջ 71-127): **Àëüáåðò Íàë÷àäæÿí**, *Íàöèîíàëüíàÿ èäåîëîãèÿ è ýòíîïñèõîëîãèÿ* (Åðåâàí: "Îäåááàí", 1999): **Գևորգ Խուդինյան**, *Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն* (Երևան. «Նորավանք», 2003): Ազգային անվտանգության հայեցակարգի և ազգային գաղափարախոսության որոշակի նույնությունը (թեև տարբեր ենթատեքստում) նկատում է Լենդրուշ Խուրշուդյանը, հմմտ. նշվ. աշխ., էջ 12-13: Մեկ այլ հեղինակի կարծիքով՝ «ազգային անվտանգության հայեցակարգը... ազգային գաղափարախոսության իրացման մեխանիզմն է» (տե՛ս **Մուշեղ Լալայան**, *Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ* (Երևան. «Նորավանք», 2003), էջ 11:

[12] **Ստյոպա Սաֆարյան**, *Ազգային անվտանգություն՝ հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները* (Երևան, 2003): **Գագիկ Հարությունյան**, *ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, 2003): **Գագիկ Գագյան**, *Տնտեսական զարգացման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, 2003): **Աղասի Թադևոսյան**, *Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը* (Երևան, 2003): **Մխիթար Գաբրիելյան, Արտակ Դաբաղյան, Աղասի Թադևոսյան, Նիկոլ Մարգարյան,** *Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, 2003): **Համլետ Քոչարյան**, *Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, 2003): Հիմնականում անվտանգության ոլորտի տեսական հարցերը քննարկող այս ուսումնասիրությունների մեծ մասում, ցավոք, անբավարար է արտացոլված աղբյուրային բազան, ներառյալ հրապարակված մասնագիտական գրականությունը:

[13] Բերենք ընդամենը մի քանի օրինակ. **Сурен Золян**, *Нагорный Карабах:*

проблема и конфликт (Ереван, 2001); **Ա. Ս. Մանասյան**, ***Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում*** (Երևան, 2003): **А. С. Манасян**, *Карабахский конфликт в ключевых понятиях & избранные темы в расширенном формате* (Ереван, 2002); **Հայկ Դեմոյան, *Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը*** (Երևան, 2002):

[14] **David Rieff**, "Nagorno-Karabakh: Case Study in Ethnic Strife," *Foreign Affairs*, March-April 1997, pp. 118-132.

[15] *Ibid*., p. 118.

[16] *Ibid*., p. 126.

[17] *Ibid*., p. 121.

[18] *Ibid*., p. 122.

[19] «Ռեսպուբլիկա Արմենիա»յի այդ հրապարակման առթիվ շատ տեղին էին Հայաստանում ԼՂՀ Մշտական ներկայացուցչության եւ Հ. Հովհաննիսյանի հրապարակած քննադատությունները «Գոլոս Արմենիի» եռօրյայում (Հուլիսի 22, 1997):

[20] *Ambassador Presel Testimony on Caucasus Conflicts*, http://usiahq.usis.usemb.se/abtusia/posts/xA1/wwwhprsl.html: Այս ելույթը ծայրահեղ ադրբեջանամետ է: Փրեսելը ժխտում է Ադրբեջանի և Թուրքիայի՝ Հայաստանի դեմ կիրառած շրջափակումների բուն փաստը, նախընտրելով անվանել դրանք ընդամենը «փոխադարձաբար կիրառվող առևտրական էմբարգոներ... [որոնցից] տուժում են բոլոր երեք երկրները»: Փրեսելը «սխալական է» որակում այն փաստարկները, որոնք մեղադրում են Ստալինին ու բոլշևիկներին Այսրկովկասում անարդար և կամայական սահմաններ գծելու մեջ, քանզի «հայերն ու ադրբեջանցիները ապրել են կողք կողքի, և որևէ մեկը անկարող կլիներ բանականորեն ճիշտ սահմաններ գծել»: Հաստատելու համար իր պնդումը, Փրեսելն օգտվում է թերի աղբյուրից և հայտարարում, թե «1896 թ. մարդահամարի տվյալներով Երևանի գավառի 55%-ը մահմեդականներ էին», սակայն ո՛չ մի խոսք չի ասում Ղարաբաղում հայերի 96%-անոց մեծամասնության, արդի Ադրբեջանի տարածքներում (մասնավորապես, Նախիջևանում և Գանձակի գավառում) ապրած հայության մեծ թվերի կամ հայոց ցեղասպանության մասին: Փրեսելը 1988 թ. Սումգայիթի դեպքերն անվանում է «պոգրոմ», իսկ 1992 թ. ռազմական տեսակետից հույժ կարևոր Խոջալու ավանի ազատագրման կապակցությամբ օգտագործում է անհարիր ու շատ ավելի կտրուկ տերմիններ՝ «ադրբեջանցի քաղաքացիական բնակչության կոտորած (massacre)» (ոչ մի խոսք Բաքվի և Կիրովաբադի հայկական ջարդերի մասին): Փրեսելն աղավաղում է

դեպքերի ժամանակագրությունն ու իրարահաջորդությունը, սկզբում ասելով, թե հայերն «արտաքսել են» ադրբեջանցիներին Հայաստանից և Արցախից, ապա հուշելով, թե իբր միայն դրանից հետո հայերն իրենք «փախել» են Ադրբեջանից): Փրեսելը Շուշին անվանում է «պատմականորեն ադրբեջանցիներով բնակեցված» քաղաք առանց պարզաբանելու, որ այն դարձել էր հիմնականում ադրբեջանաբնակ 1920 թ. մարտի կոտորածից հետո: Այսպիսի խայտառակ ելույթից հետո Հայաստանն իրավունք ուներ և պետք է պահանջեր ԱՄՆ-ի կառավարությունից հեռացնել Փրեսելին նրա զբաղեցրած՝ անկողմնակալություն նախատեսող պաշտոնից, այլ ոչ թե սպասեր, որ այդ «միջնորդը» հաջողությամբ ավարտին հասցներ իր գործը, նախապատրաստելով ու կազմակերպելով 1996 թ. դեկտեմբերին ԵԱՀԿ Լիսաբոնյան գագաթժողովի ընդունած տխրահռչակ հայտարարությունը:

[21] **Paul Goble**, “When States Lose Control,” *RFE/RL Report*, 24 October 1997.

[22] 1992 թ. սկզբին Փ. Գոբլը ներկայացրեց նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքների փոխանակման իր հայտնի առաջարկություն-ծրագիրը (**Paul Goble**, “Coping with the Nagorno-Karabakgh Crisis”, *The Fletcher Forum of World Affairs*, vol. 16, ¹ 2 Summer 1992): Քիչ ավելի ուշ, ամերիկյան լիբերալ թեքում ունեցող շաբաթաթերթ *The Nation*-ում, շատ նման մի առաջարկությամբ հանդես եկավ Մերձավոր Արևելքի մի հայտնի ամերիկացի մասնագետ՝ Դիլիփ Հայրոն՝ **Dilip Hiro**, “The Question of Azerbaijan”, *The Nation,* vol. 255, ¹ 7, 14 September 1992: Այս ծրագրերը նույնպես որևէ քննադատության չեն դիմանում. տե՛ս, մասնավորապես, **Levon Chorbajian, Patric Donabedian & Claude Mutafian**, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh* (London & New Jersey: Zed Books, 1994), pp. 29-30; **Լևոն Շիրինյան**. «Արևելյան Հայաստան. ռազմագիտական նշանակությունը». – *Գիտելիք*, ¹ 12, 2003, էջ 1-11:

[23] Առավել օբյեկտիվ հեղինակներից կարելի է նշել պարսկական ծագում ունեցող ամերիկացի միջազգայնագետ Շիրին Հանթերին և նրա հաջողված աշխատությունը, տե՛ս **Shireen Hunter**, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict*. (Washington, D. C.: The Center for Strategic & International Studies, 1994).

[24] **Ken Booth and Eric Herring**, *Keyguide to Information Sources in Strategic Studies* (London: Mansell, 1994), pp. 9-11, 18.

[25] **Jonathan Stevenson**, *Losing Mogadishu: Testing US Policy in Somalia* (Annapolis, Maryland: Naval Institute Press, 1995), p. 116. ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչության (ԿՀՎ) նախկին մի սպա նկատում է միջազ-

գային խնդիրներին մակերեսայնորեն վերաբերվելու նույն միտումը, դրելով, թե իր աշխատանքի տարիներին՝ 1985-1993 թթ., ԿՀՎ-ի գաղտնի ծառայության (Directorate of Operations) «Իրանի բաժանմունքը գլխավորած պետերից որևէ մեկը պարսկերեն խոսել կամ կարդալ չգիտեր... Մերձավոր Արևելքի բաժնի պետերից և ոչ մեկը չգիտեր արաբերեն, պարսկերեն կամ թուրքերեն և միայն մեկը կարող էր ֆրանսերենից մի քիչ գլուխ հանել: ...ԿՀՎ-ի լրտեսական վարժարանում՝ Քեմփ Փիրրիում (Վիլյամսբուրգի մոտ, Վիրջինիա նահանգում), տեսուչները, որպես կանոն, ասում էին իրենց սաներին, թե մշակութային տարբերությունները կարևորություն չունեն, որ գործողությունը նույն գործողությունն է՝ անկախ իր նշանակետից». - **Edward G. Shirley**, “Can’t Anybody Here Play This Game?” *The Atlantic Monthly* February 1998, pp. 45-61: p. 48.

[26] Արցախի աշխարհառազմավարական նշանակությանը մեծ արժեք են տալիս նաև ոչ-հայ մասնագետները: Այսպես՝ ռուս ճանաչված աշխարհաքաղաքագետ Ա. Դուգինը խորհուրդ է տալիս Ռուսաստանի կառավարությանը «Ղարաբաղի հետ միանգամայն ուղղակի կապեր հաստատել՝ այդ տարածքը կովկասյան աշխարհաքաղաքական ամբողջ համակարգի հավասարակշռության կետ վերածելու համար». – **Александр Дугин**, *Основы геополитики. Геополитическое будущее России* (Москва: “Арктогея”, 1997), с. 353.

[27] Պետական գործիչների՝ միջազգային հարցերը խորապես վերլուծելու *լիմիտները*, որոնք պայմանավորված են համապատասխան պատրաստվածության ու ժամանակի պակասով, գիտակցվում է անգամ հզորագույն պետապարատ ունեցող Միացյալ Նահանգներում. – տե՛ս, օրինակ, **Douglas Johnston** (project director and editor), *Foreign Policy into the 21st Century: The U.S. Leadership Challenge* (Washington, D.C.: The Center for Strategic & International Studies, September 1996), pp. VII.

[28] Խոսքը չի վերաբերում զինվորականների մշակած օպերատիվ պլաններին, որոնց նպատակը հակամարտության զուտ ռազմական, այլ ո՛չ խաղաղ լուծումների հետազոտությունն է:

[29] Ա. Մանասյանի ու Հ. Գևորգյանի առանձնակի տեսակետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է ոչ թե ինքնորոշման առաջնային ակտի, այլ իր պետական-իրավական կարգավիճակի բարձրացման արդյունքում. – տե՛ս **Г. А. Геворкян,** “Замечания к проблеме Нагорного Карабаха”, *Азатамарт*, 17 марта 1992; **А. С. Манасян,** *Карабахский конфликт. Ракурсы правового подхода* (Ереван: “Амарас”, 1998).

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Գաղտնիք չէ՝ Հայաստանը ու նաև հայությունն առհասարակ ապրում են համակարգային մի ճգնաժամ, որն ընդգրկում է հայ կյանքի քաղաքական, տնտեսական, մշակութային, բարոյական, գաղափարախոսական, սոցիալ-հոգեբանական ոլորտները: Այս ճգնաժամից դուրս գալու, ամուր պետություն կառուցելու համար Հայաստանին երկարատև ժամանակաշրջան տրված չէ. այդ հնարավորությունն առկա է լինելու ընդամենը ևս մի քանի տարի, առավելագույնը՝ մեկ տասնամյակ: Այս եզրակացությանն է հանգեցնում թեկուզ միայն ժողովրդագրական աղետալի իրավիճակի թռուցիկ գննումը: 1991-2001 թթ. Հայաստանում (ներառյալ Արցախում) ազգաբնակչության թիվը պակասել է շուրջ 1 միլիոնով՝ ներկայումս կազմելով 3 միլիոնից զգալիորեն պակաս մարդ (2001 թ. Հայաստանում 3 միլիոն մշտական բնակիչ հայտնաբերած ՀՀ վիճակագրական ծառայության հաշվարկն ակնհայտորեն չափազանցված է)[1]: Մեկ տասնամյակում ծնելիությունը Հայաստանում ավելի քան կրկնապատիկ նվազել է. 1990 թ. ծնվել է 79885 երեխա, 2002-ին՝ ընդամենը 32380: Եթե նկատենք, որ 1995-2001 թթ. Հայաստանից տարեկան հեռացել է միջինը 50-60 հազար մարդ, ապա արտագաղթի նույն թափի պահպանման դեպքում (իսկ դրա բոլոր միտումները դեռ կան) 2010 թ. Հայաստանում բնակվելու է առավելագույնը 2 միլիոն մարդ, ընդ որում՝ արտագաղթողների մեջ դարձյալ մեծ տոկոս են կազմելու երիտասարդներն ու մասնագիտական բարձր

պատրաստություն ունեցողները[2]: Հասկանալի է, որ երկրում մնացող պակաս կրթված ու ծերացած մարդուժն անկարող կլինի պահանջված քանակով համալրել Հայաստանի անվտանգության հիմնական երաշխիքը հանդիսացող հայկական բանակը[3], զարգացնել Հայաստանի տնտեսությունը, պայքարել սոցիալական արդարության ողջամիտ պահանջները հարգող, բարեկեցիկ ու ժողովրդավարական պետություն կառուցելու համար (իսկ առանց ժողովրդի ճնշման՝ այդպիսի պետություն երբեք չի կառուցվի): Ստացվում է կախարդական շրջան. արտագաղթը ծնում է զարգացման համար անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք իրենց հերթին ծնում են արտագաղթ: Ուստի արտագաղթը պետք է ոչ միայն կասեցվի, այլև փոխհատուցվի ներգաղթով, այլապես այն անդադար շարունակվելու է: Հայաստանի քաղաքական ղեկավարության՝ արտագաղթի վերաբերյալ դրսևորած անտարբերությունն անթույլատրելի և դատապարտելի է: Իսկ բարձրագույն ամբիոններից հնչող լավատեսական հավաստիացումները, թե մի քանի տարուց արտագաղթածները կվերադառնան, մանկական երազանք են:

Սակայն դրությունն է՛լ ավելի տագնապալի երանգներով է ուրվագծվում, երբ այս համակարգային ճգնաժամը դիտում ենք Հայաստանի աշխարհառազմավարական բարդագույն իրադրության համապատկերում: Բանն այն է, որ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի՝ Հայաստանի դեմ սանձազերծելիք հնարավոր պատերազմում տարածքային խոշոր կորստով ուղեկցված մեր ընդամենը մեկ ռազմական պարտությունը կարող է նշանակել Հայաստանի վերջը (այժմ հիշատակենք միայն բոլորիս ծանոթ մոտավոր սցենարը. Արցախի կորուստը կնշանակի Սյունիքի կորուստ, իսկ Սյունիքի կորուստը՝ Հայաստանի վերացում աշխարհի քարտեզի վրայից)[4]:

Հայաստանի պատմական արդի վիճակը բնորոշելի է ոչ այլ կերպ, քան լինել-չլինելու ժամանակահատված, և այս առանցքային փաստից ելնելով էլ՝ պետք է քննել համաշխարհային քաղաքական ու տնտեսական իրադրությունը, Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը, հայության առաջնահերթ անելիքները: Սա նշանակում է նաև, որ ազգի և պետության ապագայով մտահոգ յուրաքանչյուր հայ անհատ՝ անձնական, հասարակական, քաղա-

քական և մասնագիտական բնագավառներում գործելու և կողմնորոշվելու ելակետ պետք է ունենա Հայաստանի գոյությանն սպառնացող վտանգը:

Արդ, ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար անհրաժեշտ է իրականացնել չորս իրարահաջորդ գործողություն.

1. *ճանաչել ճգնաժամն առաջացնող խորքային պատճառները,*
2. *վերլուծել իրադրությունը,*
3. *մշակել և առաջարկել ճգնաժամը հաղթահարելու միջոցներ,*
4. *ձեռնարկել այդ միջոցները:*

Սույն ուսումնասիրությունն անդրադառնում է այս շղթայի առաջին, երկրորդ և երրորդ կետերին: Ցավոք, մեզանում շատ ու շատ ազգային, պետական, սոցիալական հիմնախնդիրներ մնում են դեռևս չախտորոշված ու չմատնանշված (այլ հարց է, որ հաճախ միջոցներ չեն ձեռնարկվում անգամ տեսանելի, աչք ծակող խնդիրները լուծելու համար):

Ճգնաժամի պատմաքաղաքակրթական և քաղաքական պատճառները

Հայաստանի հիմնախնդիրների մի խումբը ծագում է պատմական խոր անցյալից, մյուսը՝ խորհրդային յոթանասնամյա տիրապետության շրջանից, ևս մեկն էլ վերջին տասնամյակի արդյունք է: Առավել մութ ու չպարզաբանված են մնում հայության ներկա ճգնաժամի ներքին խորքային պատճառները: Ուստի կենտրոնանանք ներքին խնդիրների վրա (թեև արտաքին խնդիրները պակաս կարևոր չեն): Նախ՝ ճգնաժամին նպաստած պատմաքաղաքակրթական պատճառների մասին:

1. Ազգային-պետական կառույցների բացակայություն

1375 թ. Կիլիկյան Հայաստանի կործանմամբ՝ հիմնովին ոչընչացվեց հայկական պետության այդ պահին արդեն շուրջ երեքհազարամյա շարունակական ավանդույթներ ունեցող ճյուղավորված

համակարգը՝ ներառյալ թագավորական հաստատությունը և հայկական բանակը (միակ ազգային-պետական կառույցը, որ շարունակեց գոյատևել՝ հասնելով մինչև մեր օրերը, Հայոց եկեղեցին էր)[5]: Հետագա երեք հուժկու ազատագրական ելույթների ժամանակահատվածներում՝ 1722-35 թթ., 1885-1921 թթ., ինչպես նաև 1988-ից մինչև այժմ, վերստեղծված ազգային-պետական կառույցները հայկական քաղաքակրթության հետ իրենց կապը վերագտնելու բավարար ժամանակ չունեցան, այլ հիմնականում փոխառեցին ու նմանակեցին օտար տիրապետող ուժերի համապատասխան հիմնարկներն ու փորձը: Այնինչ, հայոց պետականության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է հայկական քաղաքակրթության բուն արմատներն ու սկզբունքները ճանաչել-ընկալելու և դրանց համաձայն առաջնորդվելու դեպքում: Ասվածն, իհարկե, չի նշանակում, թե մեզանում անհրաժեշտ է միապետություն հաստատել կամ վերադառնալ հին կացութաձևերին և օրենսդրությանը: Ամենևի՛ն: Խոսքը վերաբերում է ընդամենը հայկական աշխարհընկալման, ազգային բնավորության և վարքուբարքի հիման վրա կառուցվելիք ներհասարակական հարաբերություններին ու պետական մեխանիզմներին: Շատ դեպքերում այդ մեխանիզմներն արտաքնապես կարող են նմանվել մեր ընտրած այսօրվա արևմտյան մոդելներին, սակայն դրանց ներքին ամբողջ բովանդակությունը պարտադիր պետք է հայկականացվի (ճիշտ այդպիսի մի օրինակ է ճապոնական փորձը): Այս գործն, ի թիվս այլ միջոցառումների, պահանջում է նաև ազգային հողի վրա դնել հասարակական գիտությունները և ապահովել դրանց զարգացումը:

Արտերկրում հայկական կառույցների վիճակն է՛լ ավելի ծանր է: Սառը պատերազմի՝ միջազգային քաղաքականությանը պարտադրած կանոններով՝ վերջին տասնամյակներում սփյուռքահայ կազմակերպությունները հայտնվել էին օտար պետությունների հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում՝ դառնալով նրանց նպատակային ներազդման առարկա: Իբրև հետևանք՝ սփյուռքահայ կառույցների մի զգալի մասի գործունեությունը, հատկապես քաղաքական ասպարեզում, արդյունավետորեն վերահսկվում և ուղղորդվում է օտար ուժերի կողմից: Կարելի է բերել

այս փաստը հաստատող բազմաթիվ հին, նոր և նորագույն օրինակներ[6]:

2. Հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները

Հասկանալու համար հայությանն այսօր հետապնդող խնդիրները, անհրաժեշտ է նաև պարզորեն պատկերացնել վերջին հարյուրամյակում մեզ պատուհասած աղետների ահավոր արդյունքները:

Գրեթե մեկ դար է անցել Մեծ եղեռնից: Սակայն այսօր էլ այդ հրեշավոր հարվածի հետևանքները կրում են Հայաստանը, հայ ազգը և մեզանից յուրաքանչյուրը: Հայաստանի և հայության կազդուրումը դեռ շատ երկար ժամանակ է պահանջելու: Ի՞նչ էր ցեղասպանությունը հայ ազգի ապագայի համար, ինչպիսի՞ն է եղել մեր կորուստների ներգործությունն այսօրվա իրականության վրա: Այս հարցերը, որքան էլ զարմանալի է, մեզանում ըստ արժանվույն չեն հետազոտված: Ավելի ճիշտ՝ այս հարցերին մենք տվել ենք հիմնականում հուզական պատասխաններ՝ թերանալով գնահատել ցեղասպանության հետևանքները քաղաքական ու ռազմավարական չափանիշներով[7]:

Համառոտ գծերով ներկայացնենք ցեղասպանության պատճառած կորուստները և դրանց հեռահար՝ ցայսօր զգացնել տվող հետևանքները:

2.1. Կենսատարածքի կորուստ

Մինչև 1915 թ. հայ ժողովրդի հինգհազարամյա գոյատևման տարածքն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այսինքն՝ պատմական Հայաստանը: Աշխարհառազմավարական (geostrategic) առումով՝ այս մեծ՝ ավելի քան 350,000 կմ^2 տարածքը նմանվում է մի հսկա բերդի, որն ունի մի շարք պաշտպանական շրջաններ, որոնցից յուրաքանչյուրն ի վիճակի է ինքնուրույն ապահովել իր պաշտպանությունը: Օտար զավթիչի կողմից պաշտպանական շրջաններից մեկի կամ մի քանիսի գրավումը դեռևս չէր նշանակում Հայաստանի գրավում, քանի որ մյուս շրջաններում

կենտրոնացած հայկական ուժերը միշտ ի վիճակի էին լինում վերախմբավորվել և հարմար առիթը որսալով՝ հակահարձակման դիմել ու վերատիրանալ Հայաստանի զավթված տարածքին:

Ավելի ուշ՝ XV-XIX դարերում, երբ Հայաստանի պետականությունը կործանվել էր, իսկ ազգային զինված ուժերը հիմնականում ոչնչացված ու վերացված էին ասպարեզից (առանձին հայկական զորամիավորումներ էին պահպանվել միայն Հայաստանի լեռնային որոշ շրջաններում, Վրաստանում ու պարսկական զորքերի կազմում), Հայաստան երկրի գոյատևման գլխավոր առհավատչյան ժողովրդագրական գործոնն էր՝ նրա տարածքում հայկական տարրի մեծամասնություն կազմելը: Երբ մոնղոլական ու թյուրքական արշավանքների կամ թուրք-պարսկական պատերազմների հետևանքով Հայաստանի որևէ շրջան ավերվում էր (երբեմն գրեթե անմարդաբնակ դառնում), շատ չանցած՝ Հայաստանի մյուս շրջաններում ապաստանած հայությունը, կարծես մագնիսական ձգողականություն ունենալով հայրենի, պապենական հողի նկատմամբ, դարձյալ վերադառնում ու յուրացնում էր այն՝ միշտ հուսալով, որ հայրենիքը վաղ թե ուշ ձեռք է բերելու ազատություն, անկախություն, տնտեսական և ռազմական հզորություն[8]:

Հայաստանի նահանգներն ու գավառները սոսկ տարածք չէին, այլ հինգհազարամյա կենսատարածք ու հայրենիք: Ցեղասպանության առաջին ահավոր հետևանքն այն է, որ հայերին օտարացրել և անջատել են իրենց կենսատարածքից: Ռազմավարական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին պաշտպանական մի քանի շրջան ու թիկունք ունենալու նախկին հնարավորությունից. մնացել է մի բուռ Հայաստան՝ ընդամենը մի վերջին միայնակ ամրոց: Այն այլևս նահանջելու, ուժերը վերախմբավորելու տեղ և հնարավորություն չունի: Հայաստանն այլևս ռազմական ոչ մի պարտության իրավունք չունի: Այլապես՝ դա կլինի Հայաստանի ու, հետևաբար, հայ ազգի վերջը:

2.2. Մշակութային կորուստներ

Ցեղասպանության նպատակը ոչ միայն հայության ֆիզիկական բնաջնջումն էր, այլև Հայաստանում հայկական քաղաքա-

կրթության բոլոր հետքերի ոչնչացումը (նպատակ, որ թուրքական պետությունն այսօր էլ շարունակում է իրագործել): Անթիվ և անհամար են մեր մշակութային կորուստները: Դրանք ոչ միայն առանձին ու անջատ եկեղեցիներ են, ճարտարապետական անկրկնելի շինություններ ու կոթողներ, բայց և հինգ հազար տարվա ընթացքում այդ հողի վրա ստեղծված ամրոցներ, քաղաքներ ու գյուղեր, այլև տասնյակ հազարավոր մատյաններ, որոնցում ամփոփված են եղել ժողովրդի հանճարն ու գիտելիքը: Միայն մեկ խոսուն փաստ. այսօր ամբողջ աշխարհում կա մոտավորապես այնքան հայերեն ձեռագիր մատյան, որքան ոչնչացվել է Եղեռնի ժամանակ: Անգին տեղեկություններ ու գաղտնիքներ են ոչնչացվել, կորել-գնացել՝ մեզ զրկելով մեր նախնիների ստեղծած հոգևոր ժառանգությունից, մեզ կտրելով նրանց մտքից ու ոգուց[9]:

2.3. Նյութական կորուստներ

Ցեղասպանության ենթարկված արևմտահայության ամբողջ ունեցվածքի և գույքի բռնագրավումն ու թալանը ստիպեցին վերապրած զանգվածներին տասնամյակներ շարունակ զբաղվել ոչ թե ազգային հավաքական կյանքը հարստացնող և ամրապնդող ստեղծագործ աշխատանքով, այլ չարքաշորեն, անջատ-անջատ ճգնել՝ իրենց ընտանիքների տարրական ֆիզիկական գոյությունը ապահովելու համար:

2.4. Հոգեբանական վնասվածք

Հոգեբանական առումով՝ կենսատարածքի կորուստը զրկել է հայերին բնական ու ձեռակերտ ազգային խորհրդանիշերի հետ ամենօրյա շփումից՝ դրանով իսկ վերացնելով հայ ազգի բնականոն հոգևոր զարգացման հնարավորությունը: Միաժամանակ՝ ցեղասպանությունը շատ հայերի մեջ առաջացրել է թերարժեքության բարդույթ, ազգի ապագայի նկատմամբ թերահավատություն, որոշ դեպքերում՝ նույնիսկ ինքնատյացություն՝ օտարապաշտություն, ազգային շահերի և արժեքների մերժում:

2.5. Կազմակերպված համայնքների, կառույցների և ղեկավարության ոչնչացում

Հայոց ցեղասպանության ընթացքում ոչնչացվեցին ոչ թե սոսկ մարդկային զանգվածներ, այլ ժողովուրդ, որը համախմբված և կազմակերպված էր իր դարավոր կառույցների շուրջը: Ոչնչացվեցին համայնքները, եկեղեցիները, դպրոցները, բազմաթիվ ու զանազան հայկական կառույցներն ու կազմակերպությունները, վերջապես՝ հայ ազգի ղեկավարությունը՝ ներառյալ քաղաքական, մտավորական ու մշակութային ընտրանին: Մարդկային զանգվածներն առանց իրենց համախմբող կառույցների այլևս ժողովուրդ չեն, այլ տարազատված խմբեր ու անհատներ: Ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ ցրվելով՝ սփյուռքահայության ընդամենը մի փոքր հատվածը կարողացավ վերահամախմբվել ազգային նորաստեղծ կառույցների շուրջը: Արտերկրում ապաստանած հայության մյուս մասը ներգրավվեց օտար կառույցների մեջ և աստիճանաբար ձուլման ենթարկվեց: Խորհրդային Հայաստանում հայությունը նույնպես կազմակերպվեց հիմնականում ապազգային կառույցների և գաղափարախոսության շուրջը և մշակութապես զգալի չափով հեռացավ ազգային հիմքից:

Հայկական ավանդական կառույցների ոչնչացումն այն կարևոր օբյեկտիվ գործոններից էր, որ թույլ չտվեց օտարության մեջ հայտնված հայության բեկորներին կազմակերպվել իրենց միավորող մեկ միասնական կառույցի մեջ:

2.6. 20-րդ դարում հայության մարդկային կորուստները

Վերջին հարյուրամյակում հայության կրած մարդկային կորուստներն աղետալի են:

1894-1922թթ. չորս փուլով իրագործված հայկական ցեղասպանությունը, բնաջնջելով հայկական քաղաքակրթությունն իր բնիկ տարածքի մեծ մասից, խլեց ավելի քան 2.000.000 հայերի կյանք (շուրջ 300.000 հայ ոչնչացվեց 1894-96 թթ., 30.000՝ 1909 թ., 1.5 միլիոն՝ 1915-16 թթ., շուրջ 300.000՝ 1918-22 թթ.)[10]:

1920-21 թթ. Արևելյան Հայաստանի կենտրոնական մասում հռչակված հայկական խորհրդային փոքրիկ հանրապետությունը, վայելելով հարաբերական խաղաղության ու կայունության 70-ամյա մի շրջան, կարողացավ արձանագրել տնտեսական-մշակութային լուրջ առաջընթաց: Բայց, ի հավելումն ցեղասպանության պատճառած կորուստների, հայերը մարդկային մեծ զոհեր տվեցին նաև Խորհրդային Հայաստանում. 1920-ական թթ. ոչնչացվեց անկախության կարճատև շրջանում ազգային ոգով կոփված գրեթե ողջ հայ սպայակազմը, իսկ 1930-ական թթ. բոլշևիկյան բռնարարքների զոհ գնաց հայ մտավորականության ծաղիկը՝ հազարավոր շարքային քաղաքացիների հետ միասին: 1941-45 թթ. պատերազմին մասնակցություն բերած մոտ 600.000 հայորդիներից զոհվեց շուրջ 300.000-ը: Պատկերացնելու համար, թե սա ինչ ահավոր վիճակագրություն է փոքրաթիվ հայ ժողովրդի համար, բավական է ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան տվել են գրեթե նույնքան սպանված, համապատասխանաբար՝ 291.557 ու 357.116 զինվոր[11]:

1949 թ. Հայաստանից Ի. Ստալինի կազմակերպած բռնագաղթը հազարավոր նոր զոհերի պատճառ դարձավ:

Կայուն ու տնտեսական զարգացման աննախադեպ բարենպաստ ժամանակահատված էր 1954-ից մինչև 1988 թ. ընկած տարիները: Սակայն սկսած 1988 թ.՝ Հայաստանի այս վերջին բեկորում հայ ազգի գոյատևումը դարձյալ հարցականի տակ դրվեց. 1988 թ. երկրաշարժը խլեց 25-30 հազար կյանք և ամբողջությամբ ավերեց Հայաստանի մոտ մեկ երրորդը՝ ներառյալ Երևանից հետո ամենամեծ հայկական քաղաքները՝ Գյումրին ու Վանաձորը: Դրան հետևած Արցախյան պատերազմում զոհվեցին ևս շուրջ մեկ տասնյակ հազար հայեր[12]: Այս ամենին ուղեկցած արտագաղթը, որը դեռ շարունակվում է, Հայաստանից արդեն տարել է 1-1.5 միլիոն մարդ:

Ցեղասպանությանը հետևեց մի երկարատև շրջան, որի ընթացքում հայությանը պարզապես արգելվեց ազատորեն անդրադառնալ իր կորուստներին, մտածել ապաքինման ուղիների մասին: Փաստն այն է, որ Խորհրդային Հայաստանը՝ հայկական պետականության ձև չէր (որքան էլ փորձեն դրան այդպիսի գործառույթներ վերագրել), այլ ազգային արժեքներին ու նպատակներին խորթ,

գաղափարապես գաղութացված կվազի-պետական վարչական մի միավոր, հզորագույն կայսրության մասնիկ՝ իր մշակութապես հետզհետե ռուսականացող կուսակցական և մտավորական վերնախավերով: Խորհրդային Հայաստանն ի վիճակի չէր ու բնավ էլ կոչված չէր հաղթահարելու ցեղասպանության հետևանքները: Մասնավորապես, ամենակենսական խնդիրը՝ հայկական բնիկ տարածքներին կամ դրանց գոնե մի մասին վերատիրացումը (լինի Արևելյան, թե Արևմտյան Հայաստանում), որը և միայն կարող էր ապահովել հայ ազգի անվտանգ զարգացումը խորհրդային կայսրության հնարավոր փլուզման դեպքում, դրված էր յոթ փականքի տակ, և դրա մասին մտածելն անգամ պատժելի արարք էր: Հայության ահավոր մարդկային կորուստներն ազդել են ոչ միայն մեր ազգի թվաքանակի, այլև նրա հավաքական որակի վրա՝ մասնավորապես հայ գանգվածների մեջ արմատավորելով այսպես կոչված «վերապրելու հոգեբանությունը», անհատի համար՝ իր և ընտանիքի անձնական շահի ամեն ինչից վեր դասելը:

Հետցեղասպանական շրջանում հայությանը հետապնդում էր նաև շարունակաբար ուժաթափող մի երևույթ՝ սփյուռքում մշտապես ընթացող ու այժմ էլ ավելի արագացած ճուլումը՝ այսպես կոչված «սպիտակ ջարդը»:

Ազգային իրավունքների վերականգնման ուղղությամբ հնարավոր եղավ կազմակերպված պայքարի դիմել ավելի ուշ՝ միայն 1960-ական թթ. սկսած: Ժամանակի այդ կորուստը ևս թանկ նստեց. այդ ընթացքում տասնյակ հազարավոր հայեր զոհ գնացին «սպիտակ ջարդին», իսկ թշնամին է՛լ ավելի ամրապնդեց իր նվաճած դիրքերը:

Շատ բնական ու հասկանալի է, որ այսպիսի աներևակայելի տարածքային, հոգևոր, մշակութային, նյութական ու մարդկային կորուստները պետք է ազդեին նաև ազգի մտավոր ու բարոյական ընդհանուր ներուժի վրա: Սակայն հե՛նց այս նույն ցավալի փաստերը մեզ պետք է նաև ուժ ու հավատ ներշնչեն, որովհետև, թերևս ոչ մի ազգ չէր դիմանա այսպիսի հարվածների և բառիս բուն իմաստով կանհայտանար աշխարհի երեսից: Ուրեմն մեր ժողովուրդն ունի նաև անօրինակ տոկունություն և ապրելու կամք, որը և պետք է գործի դնել՝ ի հեճուկս պարտվողականություն, երբեմն էլ՝

անկախությունից կամովին հրաժարում քարոզող բոլոր ուժերի և տրամադրությունների:

3. Մշակութային ապահայացում

Ոչ միայն Հայաստանից դուրս, այլև Հայաստանի ներսում գոյություն ունեն մշակութապես ապահայացված՝ ուծացած հայ զանգվածներ: Եթե արտերկրում ուծացումը բնականոն և անխուսափելի երևույթ է ու առանձին բացատրության կարիք չունի, ապա Հայաստանում այդպիսի հայերի տարօրինակ գոյությունը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքներով.

Ա. Խորհրդային Հայաստանի գաղափարական գաղութացումը բերել էր նրան, որ կուսակցական ու մտավորական վերնախավերը հետզհետե հեռանում էին ազգային արժեքներից ու նպատակներից՝ տանելով իրենց հետևից ժողովրդի մի ստվար զանգված:

Բ. Խորհրդային Հայաստանում գործող ռուսական դպրոցները տվեցին տասնյակ հազարավոր շրջանավարտներ, որոնց գերակշիռ մեծամասնության համար հայոց լեզուն հասանելի է միայն խոսակցական մակարդակով, իսկ հայոց պատմությունն ու մշակույթն այդպես էլ մնացել են անծանոթ տարածք՝ terra incognita: *Թեև հայկական դպրոցներում հայոց լեզվի դասավանդումը վատ չէր կազմակերպված, սակայն այստեղ էլ ամբողջ կրթության նպատակը ոչ թե հայոց պատմության ու մշակույթի արժանավոր ժառանգ ու տեր դաստիարակելն էր, այլ սովետական կայսրության համար «վերազգային» կոմունիստական արժեքներով տոգորված հավատարիմ քաղաքացի կերտելը: Ի դեպ, Հայաստանում այլալեզու միջնակարգ կրթության ջատագովները (որոնք, զարմանալիորեն, այսօր էլ դեռ ասպարեզում են) չեն հասկանում տարբական մի բան. միայն հայկական դպրոցն է ընդունակ դաստիարակելու Հայաստանի քաղաքացիներ, մինչդեռ Հայաստանում գործող ռուսական, անգլիական կամ ֆրանսիական միջնակարգ ու բարձրագույն դպրոցներն օտարացնելու են աշակերտությանը Հայաստանից: Հայ մտավորականության և քաղաքական ուժերի որոշ մասի՝ այլալեզու կրթության ջատագովությունը ևս մեկ անգամ փաստում է հայոց մտքի վրա օ-*

տար վերահսկողության բացառիկ զորեղությունը: Այսօրվա Հայաստանի իշխանությունների և մտավորականության զգալի մասի վերաբերմունքը մայրենի լեզվին համեմատության եզր իսկ չունի, օրինակ, մերձբալթյան հանրապետություններում տարվող հստակ ու հետևողական լեզվաքաղաքականության հետ, որը վայել է խելամիտ պետական շինարարություն վարող արժանապատիվ պետականություններին:

Գ. Արտերկրից, հատկապես նախկին ԽՍՀՄ տարածքից, տասնյակ հազարավոր արդեն իսկ մշակութապես ուծացած, հիմնականում ռուսացած, հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան, իր դրական վիթխարի ներազդեցության հետ միասին, տիրող քաղաքական պայմաններում ունեցավ նաև բացասական լուրջ հետևանքներ: Այս հայերը (որ առավելաբար քաղաքաբնակ էին և լավ ուսում ստացած) մեծ նպաստ բերեցին Հայաստանի տնտեսական բարեկարգմանն ու զարգացմանը՝ կազմելով տեղական վերնախավի մի կարևոր մասը: Սակայն ո՛չ իրենք, ո՛չ էլ իրենց սերունդները մշակութապես չհայացվեցին, շարունակեցին ռուսական դպրոցներ հաճախել ու ռուսերենը մայրենի լեզու համարել՝ այդպիսի օրինակ և ուղղություն տալով նաև տեղի քաղքենի տարրի մշակութային ճաշակին ու ձգտումներին:

Հայության զանգվածային ուծացումն արտահայտվում է նախ և առաջ լեզվական վիճակի մեջ: Բուն Հայաստանում այսօր էլ տասնյակ հազարավոր հայեր չեն տիրապետում հայոց լեզվին, ըստ այդմ էլ անհաղորդ են մնում ազգային մշակույթին: Վերջին տասնամյակի մեծ արտագաղթի հետևանքով հայոց լեզվի կրողների թիվը կտրուկ ընկավ. տասնյակ հազարավոր հայ երեխաներ ու պատանիներ, որ կրթություն պետք է ստանային Հայաստանում, ծնողների հետ արտագաղթեցին այլ երկրներ և ուսումնառությունը շարունակեցին օտար լեզուներով: Վերջերս էլ հուժկու թափով սկսվել է մի նոր աղետալի գործընթաց՝ մշակութային ամերիկանացումը, որ առավել հայտնի է իբրև համաշխարհայնացում (համընդհանրացում, գլոբալիզացիա): Համաշխարհայնացումը խիստ բացասաբար է անդրադառնում հայեցի կրթության վրա[13]:

Արտերկրի օտար միջավայրի պայմաններում դրությունը, բնականաբար, անհամեմատ ծանր է:

Հայոց լեզվի ճգնաժամը խորացվում է նաև արհեստականորեն. սփյուռքում տիրապետողը դասական ուղղագրությունն է, իսկ Հայաստանում՝ խորհրդային տարիներին ընդունվածը: Տարբերական տրամաբանությունը պահանջում է միասնական ուղղագրության շուտափույթ ընդունում հայության բոլոր հատվածների համար: Այս հարցում պահանջվում է պետության եռանդուն միջամտություն, սակայն միասնական ուղղագրության հաստատման շուրջ գործնական քննարկումներ չեն կատարվում: Ուղղագրական շիլաշփոթը ձեռնտու է հայությունն անմիաբան տեսնել ցանկացող ուժերին, որոնք, ըստ երևույթին, անմասն չեն խնդիրը չլուծված վիճակում պահելու մեջ[14]:

Կրթական ոլորտը ևս խոր ճգնաժամի մեջ է. կաշառակերությունը թափանցել է դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների մեջ: Մասնագետների պատրաստումը կատարվում է առանց հաշվի առնելու երկրի կարիքները: Արագորեն ընթանում է ուղեղների արտահոսքը[15]:

4. Սփյուռքի անկազմակերպվածությունը

Արտերկրի հայ համայնքներն ու ավանդական կազմակերպությունները ցայսօր չեն կարողացել ձևավորել համասփյուռքյան ներկայացուցչական կառույց՝ իր վերկուսակցական ճյուղավորված տեղական մարմիններով: Իրականում՝ միայն այդպիսի կառույցը կարող է ըստ արժանվույն կազմակերպել սփյուռքահայ կյանքը, այդ թվում՝ տեղերում անցկացնել հայերի մարդահամար, ազգային որոշակի տուրք սահմանելու միջոցով ստեղծել կայուն ու վերահսկելի բյուջե՝ և՛ համայնքի, և՛ Հայաստանի զանազան կարիքները հոգալու համար, ինչպես նաև միջազգային ատյաններում ներկայացնել Հայոց ցեղասպանության արդյունքում առաջացած քաղաքական, իրավական, ֆինանսական և այլ խնդիրներ: Եթե պարբերաբար կազմակերպվող Հայաստան-սփյուռք համաժողովները հերթական ցուցամոլություն չեն, այլ իսկապես նպատակ ունեն դրական արդյունքների հասնել, ապա այդ համաժողովների քննարկելիք հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի ընդհանուր ներկա-

յացուցչական կառույցի ստեղծումը: Մինչ այսօր, սակայն, այդ համաժողովները զբաղվել են ժամավաճառությամբ ու նորանոր հիասթափություններ տեղիք տվել:

5. Ռազմավարական մտքի բացակայություն

Հայության ներուժի թուլության մյուս պատճառն ազգային անվտանգության հարցերում ինքնուրույն մտածելու մեր թույլ կարողություններն են, *որն արդյունք է միջազգային քաղաքականության ռազմավարական խնդիրներում Հայաստանի, ինչպես նաև սփյուռքի ղեկավար շրջանակների թերի պատրաստվածության: Փաստորեն, արտաքին քաղաքականության հարցերում հայ ինքնուրույն միտքը դեռևս ձևավորված չէ: Օտար, հատկապես, ամերիկյան ռազմավարական մտքի գերիշխանությունը հասցրել է մինչև այնտեղ, որ մեզ հաջողությամբ պարտադրել են մեր ազգային անվտանգության մասին մտածել իրենց մտակաղապարներով:* Այնինչ մեր անվտանգության պահանջները ոչ ոք մեզանից լավ չի կարող վերլուծել և որոշել: *Անվտանգության բնագավառում ինքնուրույն մտածելու մեր անկարողությունը Հայոց պետականությանը սպառնացող ամենամեծ վտանգներից է:*

Հայաստանում և արտերկրում շարունակվում է հայերի մեջ հայրենասիրական զգացմունքները թուլացնելու ուղղությամբ տարվող նպատակասլաց աշխատանքը: Հայրենասիրությունը ցուցադրվում է որպես հետամնաց, ատավիստական երևույթ, որն իբր վաղուց սպառել է իրեն ու վերացել ժամանակակից զարգացած պետություններում: Իհարկե, այս կեղծիքն արևմտյան մեկնաբաններն ու վերլուծաբանները մատուցում են այն պետություններին ու ժողովուրդներին, որոնց հզորացումը և ուժեղ պետականությունն իրենց շահերին չեն համապատասխանում: Մինչդեռ, օրինակ, Թուրքիայի ազգայնամոլությունը և փոքրամասնությունների (հատկապես քրդերի) նկատմամբ վարվող ֆաշիստական քաղաքականությունը համարժեք գնահատականի և վերաբերմունքի չեն արժանանում: Իսկ մենք պետք է հասկանանք, որ որևէ պետության ներքին կայունությունն ու կազմակերպվածությունը պայմանավորող գոր-

ծոնների շարքում իր կարևորությամբ առանձնանում է այդ պետության բնակչության՝ ազգային-պետական միասնական շահերի գիտակցմանը հասած լինելու աստիճանը և համապատասխանորեն գործելու պատրաստվածությունը, այլ կերպ ասած՝ «կիրառական» հայրենասիրությունը:

Իսկ այժմ առավել մանրամասնորեն խոսենք հայության արդի ճգնաժամի ամենակարևոր պատճառի մասին, որ է՝ ազգային պետության դե ֆակտո չկայացածությունը:

6. Հայկական պետության չկայացածությունը և դրա հետևանքները

Ներկա ծանր կացությունից դուրս գալու համար անհրաժեշտ է նախ և առաջ ունենալ բարձրագույն կարգի ազգային կազմակերպություն, այն է՝ ազգային կայացած պետություն: Ցավոք, հայ ժողովուրդն առայժմ չունի այդպիսի կազմակերպություն: Մանրամասնենք:

Կայացած պետություն *ասելով՝ հասկանում ենք.*

1. *պետություն, որն ապահովել է իր* ներքին *անվտանգությունը, այսինքն՝ իր ենթակայության տակ գտնվող ուժային կառույցների միջոցով կարողացել է սաստել ու նաև տարանջատվել կազմակերպված հանցագործ այն ուժերից, որոնք առավել խոշոր չափերով թալանում են պետական ու հանրային ունեցվածքը:*

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: *Վերջին տասնամյակի ընթացքում* ներքին *կազմակերպված հանցագործ ուժերը, հաճախ անպատիժ մնալով, կատարել են պետական ու հանրային ունեցվածքի վիթխարի չափերի հասնող թալան և դրան հարակից բազմաթիվ խոշոր հանցագործություններ, ինչը հասարակության մեջ ծնել է խոր հուսալքություն, անօգնականության զգացում, առաջացրել անպատժելիության մթնոլորտ, հանցածին լայն միջավայր, օրինախախտ տնտեսական գործունեության մեջ*

մասնագիտացող կոռումպացված քաղաքական վերնախավ[16]: Այս երևույթները, յուրաքանչյուրն իր հերթին, առաջացրել են վտանգավոր հասարակական միջավայր, այդ թվում՝ ժողովրդի օտարվածություն պետությունից, ազգի շահերի հանդեպ անտարբերություն, ազգային արժեքների և մշակույթի զանգվածային ուրացում, կործանարար չափերի հասնող արտագաղթ:

2. Կայացած պետություն ասելով՝ հասկանում ենք պետություն, որը, հենվելով իր վերը նշված ներքին անվտանգության վրա, կենտրոնացնում է իր ռեսուրսներն արտաքին ուժերի ոտնձգությունները կանխատեսելու, դրանք կանխարգելելու և դիմագրավելու, ինչպես նաև տնտեսական, բնապահպանական և այլ սպառնալիքները հաղթահարելու վրա:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Ներքին անվտանգության երաշխիքների բացակայությունն անհնար է դարձրել պետական մարմինների, ինչպես նաև քաղաքական-հասարակական առողջ ուժերի ուշադրության կենտրոնացումն արտաքին սպառնալիքների վրա[17]: Հայաստանի տեղեկատվական, բարոյահոգեբանական ու տնտեսական ոլորտների դեմ դրսից կազմակերպված լայնածավալ քայքայիչ գործողությունները հաճախ դուրս են մնում պետական մարմինների ուշադրությունից:

3. Կայացած պետություն ասելով՝ հասկանում ենք պետություն, որի կառույցները, տիրապետելով անհրաժեշտ պրոֆեսիոնալ գիտելիքին, կատարում են օրենքով իրենց վերապահված գործառույթները:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետության պետական կառույցներն իրենք կայացած չեն, որովհետև կադրային քաղաքականությունը հետևողականորեն մերժում և բացառում է գիտելիքն ու մասնագիտական էթիկան: Ավելին՝ ՀՀ պետական կառույցները հաճախ կատարում են իրենց օրենսդրորեն վերապահված գործի ճիշտ հակառակը: Այսպես՝ իրավապահ մարմինները ոչ հազվադեպ հանդես են գալիս իբրև իրավախախտներ, բնապահպանության նախարարությունը՝ անհիմն

ծառահատումների կազմակերպիչ, տեղական կառավարման մարմինները՝ իրենց տարածքում եղած պատմամշակութային հուշարձանների ոչնչացման կազմակերպիչ, արտգործնախարարությունը՝ օտարահպատակության մեջ գտնվող բարձրաստիճան աշխատակիցներ ունեցող դերատեսչություն, կրթության նախարարությունը՝ հայոց լեզվի պետական կարգավիճակը չհարգող կառույց (ցանկության դեպքում այս ցանկը կարելի է լրացնել ու մանրամասնել)[18]:

ՀՀ ազգային անվտանգության համար անմիջականորեն պատասխանատու պետական ուժային կառույցների մեջ առավել կայացած մարմինը, իր բոլոր մեծ ու փոքր թերություններով հանդերձ, նորաստեղծ հայկական բանակն է: Սա մասամբ գալիս է նրանից, որ հայկական բանակի գործունեության օրակարգը՝ երկրի ֆիզիկական անվտանգության ապահովումը, պարզորեն և ինքնըստինքյան համապատասխանում է ազգային-պետական բուն շահերին ու նպատակներին: Սակայն հայկական բանակը նույնպես ազգային ավանդույթներին մոտենալու խնդիր ունի, քանի որ կառուցված է հայ զինվորի հոգեբանությանը խորթ խորհրդային բանակի մոդելով[19]: Հայկական բանակի ներքին ռեսուրսներն ինքնին օբյեկտիվորեն անբավարար են հետագա անհրաժեշտ զարգացումն ապահովելու համար:

4. Կայացած պետություն ասելով՝ հասկանում ենք պետություն, որի ազգաբնակչության առնվազն կեսը վստահում է իշխանություններին, իսկ մեծամասնությունը ենթարկվում է հաստատված օրենքներին:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը, մեղմ ասած, չի հավատում քաղաքական վերնախավին (ընդդիմությունն ու «դիմությունը» միասին վերցրած) և վերջինից օրինակ վերցնելով՝ չի հարգում երկրի օրենքները:

5. Կայացած պետություն ասելով՝ հասկանում ենք պետություն, որի տնտեսությունն իր ազգաբնակչության մեծ մասին ապահովում է աշխատանքով, իսկ պետա-

կան ծառայողին՝ այնպիսի աշխատավարձով, որը բավարար է նրա ընտանիքի վայելուչ գոյության համար:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետությունն աշխարհի ամենաաղքատ պետություններից է, որի յուրաքանչյուր շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ն տարեկան կազմում է մոտավորապես 650 դոլար[20]: ՀՀ-ն չի կարողանում արդեն իսկ նոսրացած ազգաբնակչությանն ապահովել աշխատանքով, ոչ էլ գոնե պետական ծառայողներին է տալիս տանելի՝ թեկուզ կենսաբանական նվազագույն պահանջները բավարարող աշխատավարձ: Պաշտոնական ամենաթարմ տվյալների համաձայն՝ աղքատության մեջ է ապրում ՀՀ ազգաբնակչության 50,9 տոկոսը, որից 16 տոկոսը ծայրահեղ չքավորներն են[21]: 2001 թ. Համաշխարհային բանկի հրապարակած տվյալներով՝ աղքատության մեջ էր ապրում ՀՀ ազգաբնակչության 55 տոկոսը, իսկ աշխատուժի 30 տոկոսը գործազուրկ էր[22]: Ինչպես նշում են ՀՀ-ում «Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագրի» մշակողները, 1996-2001 թթ. «բնակչության աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշը «դոփում էր» 50 տոկոսի շրջակայքում»[23]:

Անբացատրելի են մնում նաև Հայաստանի տնտեսության զարգացման որոշ միտումները, երբ, օրինակ, ներքին արտադրողը դրված է պակաս բարենպաստ վիճակում, քան արտաքինը. Հանրապետությունում ներքին արտադրանքը վաճառվում է ավելի թանկ գներով, քան արտաքին շուկայում[24]:

6. Կայացած պետություն ասելով՝ հասկանում ենք պետություն, որի գործունեության հիմքում ընկած է իր՝ որպես քաղաքական և պատմամշակութային առանձին օրգանիզմի գոյությունը հավերժացնելու ձգտումը:

Իսկ ի՞նչ ունենք Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ հստակ չի սահմանել ո՛չ իր նպատակներն ու շահերը, ո՛չ էլ դրանց առաջնահերթությունը: Դեռևս չկան ազգային անվտանգության հայեցակարգն ու տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիրը[25]: Արտաքին սպառնալիքներից իր անվտանգությունն ու անկախությունը պաշտպանելու խնդրում ՀՀ-ն, ընդհանուր առմամբ, պատշաճ մտահոգություն ու շահագրգռվածություն չի ցուցաբերում:

7. Հայկական իրականության պարադոքսը

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս կայացած պետություն չէ: Ավելին՝ արդի հայկական իրականության մեծագույն պարադոքսն է, որ ի հեճուկս այն փաստի, որ այսօր գոյություն ունեն հայկական զինված ուժեր, որոնք ինքնուրույնաբար վերահսկում են Արևելյան Հայաստանի մի մասը և տարածաշրջանային առումով ռազմաքաղաքական լուրջ գործոն են, և ի հեճուկս մեկ ուրիշ փաստի, որ դե յուրե գոյություն ունի միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետությունը, այդուհանդերձ՝ Հայաստանի Հանրապետությունը դժվար է բնութագրել իբրև կայացած *հայկական պետություն:*

Հայաստանի Հանրապետության՝ հայկական որոշակիորեն երևութական պետություն լինելը խիստ հակասության մեջ է Հայաստան երկրի (որն այս պահին ընդգրկում է հայկական զինված ուժերի վերահսկած ամբողջ տարածքը), նրա սահմանների մեջ ապրող հայ ժողովրդի ու աշխարհասփյուռ հայության գոյատևման պահանջների հետ[26]: Այսօրվա աշխարհառազմավարական իրողություններն այնպիսին են, որ Հայաստանի Հանրապետության նման կենսագործունեությունն այլևս սպառնում է մեկընդմիշտ ընդհատել հայկական հինգհազարամյա քաղաքակրթությունը:

Հայկական պետության գոյության այս որոշակի երևութականության՝ հայության վրա թողած վնասաբեր ազդեցություններից նշենք կարևոր երկուսը. ա) անհատն ու հասարակությունը թմրեցվում են, և ազգային շահն այլևս ուշադրության ու պաշտպանության չեն արժանացնում՝ թյուրիմացաբար կարծելով, թե արդեն կա, գոյություն ունի մի հայկական պետություն, որը և կոչված է զօրուգիշեր զբաղվելու ազգային-պետական հարցերով. բ) հստակ չգիտակցելով Հայաստանի Հանրապետության չկայացածությունը իբրև պետություն ու առավել ևս իբրև հայկական պետություն՝ հայերը զանգվածաբար հիասթափվում են անկախության բուն գաղափարից և հայոց հավաքական կարողականությունից՝ այստեղից բխող վտանգավոր բոլոր հետևանքներով հանդերձ:

Պատմական այս փուլում հայ ազգի (նախ և առաջ նրա պետական ու քաղաքական վերնախավի) համար առաջին խնդիրն է,

օգտվելով Հայաստանի Հանրապետության դե յուրե գոյությունից (քանի դեռ չափազանց ուշ չէ), ծնել դեռևս գոյություն չունեցող դե ֆակտո հայկական պետությունը:

Ի մի բերենք: Այսօր ազգի և պետության ապագայով մտահոգված յուրաքանչյուր հայ պետք է իր քաղաքական դիրքորոշումները ճշտի՝ նկատի ունենալով հետևյալ ռազմավարական հանգամանքները.

1. *Թեև Հայաստանի Հանրապետությունը դե յուրե միջազգայնորեն ճանաչված է իբրև անկախ պետություն, այն դե ֆակտո չկայացած ու թույլ պետություն է: Ավելին՝ այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի հայկական պետականության լիարյուն բովանդակություն:*
2. *Հայաստանի և սփյուռքի կառույցների զգալի մասը նվիրված չէ ազգային հիմնախնդիրների լուծմանը, չունի զարգացման երկարաժամկետ ծրագիր ու ռազմավարություն, մասամբ օտար վերահսկողության և թելադրանքի տակ է: Միանգամայն բնական է, որ ազգի բարոյապես մաքուր և մտավորապես կարող ուժերն այդ կառույցներից դուրս են մնում՝ տեղը զիջելով գաղափարայնությունից զուրկ միջակություններին, միայն անձնական շահ ճանաչող չինովնիկներին, հաճախ էլ՝ կիսագրագետ և քրեամետ տարրերին: Հասկանալի է նաև, որ այդ կառույցները խեղդում են նախաձեռնությունն ու նորարարական միտքը, տեղ չեն տալիս արժանավոր և ընդունակ կադրերին, չափից ավելի փակ են, ներկա միտումների շարունակվելու դեպքում՝ դատապարտված են փտելու:*
3. *Հետևաբար, ազգային և պետական շահերն արտահայտող կառույցների ստեղծումը Հայաստանի ու հայության ամենակարևոր խնդիրներից է: Այլ կերպ ասած՝* Հայաստանում դրված է պետական մարմինների և բուն պետության կառուցման ու դրանց հայկականացման խնդիրը, իսկ արտերկրում՝ համայնքային ներկայացուցչական բոլոր կառույցներն ի մի բերող, օտար ուժերի

թելադրանքին դիմակայելու ընդունակ հայկական դեբագույն համասփյուռքյան վերկուսակցական մարմնի ձևավորման հրամայականը:

Հայկական պետության չկայացածության փաստը կարող է որոշ չափով կասկածի տակ դնել նաև «Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի հիմնատարրեր» վերնագիրը կրող այս ուսումնասիրության իմաստը: Իսկապես, եթե դե ֆակտո հայկական պետությունը կայացած չէ, ապա, բնականաբար, չեն կարող լինել նաև նրա ազգային անվտանգության համակարգն ու հայեցակարգը: Սակայն հայկական պետության կայացումը ոչ թե հեռավոր ապագայի, այլ մե՛ր օրերի հրամայականն է, որը պահանջում է օր առաջ քննել անվտանգության խնդիրները կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում, հասկանալ համաշխարհային, տարածաշրջանային և ներքին զարգացման միտումները, ուրվագծել վտանգներն ու դրանց դիմագրավելու միջոցները[27]: Այդ մտավոր անհետաձգելի աշխատանքն անհրաժեշտաբար նախորդելու է Հայկական պետության կայացմանը, որին էլ իր համեստ ներդրումը բերելու նպատակ ունի սույն ուսումնասիրությունը:

Այդուամենայնիվ՝ այսօր առկա են հայկական պետության լիարժեք կայացումն ապահովող ֆունդամենտալ նախադրյալները. 40,000 կմ² կազմող բավականին պաշտպանունակ տարածք (ներառյալ Արցախն ու ազատագրված տարածքները), հայկական զինուժ, հրաշալի բնություն, հարուստ ընդերք (այդ թվում՝ ջրային վիթխարի ռեսուրսներ, որոնք մի քանի տասնամյակ անց նավթից ու գազից ավելին են արժենալու), աշխատասեր, տաղանդավոր, հայրենասեր ու ճիշտ առաջնորդման պարագայում ամեն տեսակի զոհողությունների պատրաստ ժողովուրդ, ժառանգված հնագույն մշակույթ, ներառյալ ազգային լեզվով զարգացած գիտություն, մեծ գրականություն, սփյուռքի ներուժի ճիշտ օգտագործման հնարավորություն, ռազմավարական հզոր դաշնակից, բարեկամ պետություններ: Կարճ ասած՝ հայությանը պակասում է ընդամենը քաղաքական համապատասխան կազմակերպվածությունը և դրան հասնելու համար ռազմավարական մտածողության անհրաժեշտ մակարդակը: Սրանք ձեռքբերովի արժեքներ են, բայց դրանց ձեռքբերումը պետք է կատարվի ամենասեղմ ժամկետում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] 2001 թ. մարդահամարի վերջին արդյունքները հրապարակվել են 2002 թ. հոկտեմբերին, տե՛ս **Anush Dashtents**, “More Armenian Census Data Released,” *Armenialiberty Report*, 22 October 2002.

[2] Միայն Ռուսաստանում հայերի թիվն անցնում է 2 միլիոնից (սա նշում են ինչպես ռուս պետական պաշտոնյաները, այնպես էլ հայկական համայնքի ղեկավարները). առնվազն 1 միլիոնը պետք է արտագաղթած լինի Հայաստանից վերջին մեկ տասնամյակի ընթացքում: Հայաստանում ժողովրդագրական իրավիճակի ողջ ծանրությունը մասնագիտորեն ներկայացնող նյութերից նշենք երկուսը՝ **Áåíèàìèí Ìèðçîÿí**, “×åðåç 15 ëåò”, *Ãîëîñ Àðìåíèè*, 9 àïðåëÿ 2002 (35/18832), **Վ. Ե. Խոջաբեկյան**, *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին:* Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, էջ 458-473: Վ. Ե. Խոջաբեկյանը, մասնավորապես, հավասարեցնում է արտագաղթի արդյունքները հայոց ցեղասպանության արդյունքներին՝ «Հայ ժողովրդի նկատմամբ ՀՀՇ-ի վարած հայաթափության քաղաքականությունը նման էր այն եղեռնագործությանը, ինչ կատարեցին սուլթան Համիդը և երիտթուրքերը» (նույն տեղում, էջ 471): Տե՛ս նաև **Ք. Ս.**, «Առկա բնակչության թիվը հազիվ թե գերազանցի 2,5 մլն մարդը». - *Իրավունք*, փետրվարի 7-10, 2003, ¹ 8 (729):

[3] Տագնապեցնող փաստերը սկսել են հայտնվել նաև պաշտոնական աղբյուրներում՝ **Մ. Ա. Սարգսյան**, «Զինված ուժերի համալրումը զորակոչով. պրոբլեմներ, մոտեցումներ, լուծումներ». - *Հայկական բանակ*, 2001, ¹ 4 (30), էջ 18-25:

[4] Մանրամասն տե՛ս **Արմեն Այվազյան**. *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը* (Երևան. «Հայաստան», «Հայինֆո», 1998), էջ 19-24:

[5] Օտար տիրապետության ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին ստիպված ինքը ստանձնեց ազգի առաջնորդի դերը: Հայոց եկեղեցին մեծ գործ կատարեց՝ պահպանեց ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպեց ազգային կրթությունը, հնարավորին չափով առաջ տարավ մշակույթը, ավելին՝ գաղտնի դիվանագիտական գործունեություն ծավալեց Հայաստանը քրիստոնյա մեծ տերությունների օգնությամբ մահմեդական լծից ազատագրելու համար և այդ ուղղությամբ որոշակի գաղտնի նախապատրաստական աշխատանք կատարեց հայկական միջավայրում: Սա առավելագույնն էր, որ Հայոց եկեղեցին կարող էր իրականացնել և իրականացրեց

թուրք-պարսկական տիրապետության պայմաններում: Իսկ 1720-ական թթ. եկեղեցին հայոց վերածնված զինուժի կառուցողներից էր և այդ զինուժի ոգեշնչողն էր: Բնականաբար, միամտություն կլիներ եկեղեցուց ակնկալել ռազմաքաղաքական կառույցներին հատուկ հմտություններ, կարողություններ ու փորձառություն: Մյուս կողմից՝ 1915 թ. ցեղասպանության և խորհրդային 70-ամյա տիրապետության ընթացքում եկեղեցին ենթարկվեց այնպիսի ավերիչ հարվածների, որ շատ առումներով կորցրեց իր նախկին ժողովրդայնությունն ու կապը ժողովրդի հետ: Հայոց եկեղեցին ևս ինքն իրեն վերագտնելու և ապաքինվելու կարիքն ունի:

[6] Այս հարցն առավել մանրամասն քննված է Սփյուռքին նվիրված գլխում:

[7] Հայկական ցեղասպանությունն իրականացնելու խորքային պատճառն աշխարհառազմավարական բնույթ ուներ՝ Հայաստանը սեպի պես մխրճված էր Թուրքիայի և թյուրքախոս աշխարհի միջև, իսկ հայերը նկատվում էին Թուրքիայի գլխավոր թշնամու՝ Ռուսաստանի դաշնակից (ցեղասպանության հարցերին նվիրված լայնածավալ գրականությունից նշենք ընդամենը երկու հիմնարար աշխատություն՝ *Ãåíîöèä àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè*. Ñáîðíèêê äîêóìåíòîâ è ìàòåðèàëîâ ïîä ðåä. Ì. Ã. Íåðñèñÿíà, 2 èçä., Åðåâàí, 1983; **Vahakn N. Dadrian**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucausus*. Providence & Oxford: Berghahn Books, 1995): Ուշագրավ է, որ հայությանն ամբողջովին բնաջնջելու որոշումը Ստամբուլում քննարկվել է դեռևս 1720-ական թթ., այսինքն՝ շատ ավելի վաղ, քան օսմանյան կայսրությունն իր հոգեվարքը կապրեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ինչը նաև վկայում է էթնիկական բնաջնջման օսմանյան պետական ավանդույթի հանրակարգային, գաղափարական և հոգեբանական արմատների ու բուն մեխանիզմի վաղ ծագման մասին (այս մասին տե՛ս **Armen Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997):

[8] Հայերի ազատագրական ձգտումներն ու հույսերն առանձնապես ցայտուն արտահայտված են մի շարք գուշակություններում, տեսիլքներում և լեգենդներում (տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*: Գիրք առաջին. «Հայ ազատագրական լեգենդը», Երևան, ԳԱ հրատ., 1957: **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում:* Երևան. ԳԱ հրատ., 1961, էջ 50-57):

[9] Դրամական-նյութական չափանիշներով անթվելի այս կորուստների մասին կարելի է մասնակի պատկերացում կազմել հետևյալ գրքերից՝ **Վարդան Լևոն**, *Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը* (Բեյրութ, 1970):

Տաճատ Եարտըմյան, *Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն* (Վենետիկ-Ս. Ղազար, 1995):

[10] 1894-96 թթ. կոտորածները ցեղասպանություն և ոչ սոսկ ջարդեր էր համարում նաև ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը (տե՛ս **Մ. Գ. Ներսիսյան**, *Պատմության կեղծարարները*. հոդվածներ և հաղորդումներ, Երևան, ԳԱԱ հրատ., 1998, էջ 130-131): Ցեղասպանության ժամանակային սահմաններին և ընդհանուր մարդկային կորուստներին հատուկ անդրադարձած սակավաթիվ ուսումնասիրություններից նշենք հետևյալ երկուսը. **Էդվարդ Դանիելյան**, Հայ ժողովրդի ցեղասպանությունը 1894-1922 թթ. (պատճառները, իրագործման փուլերը, թուրք պետականության պատասխանատվությունը). - *Միտք* (Երևան), թիվ Բ, սեպտեմբեր 1992, էջ ԺԱ-ԺԴ: **Ք. Ã. Áàðñåãîâ**, *Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïî ìåæäóíàðîäíîìó ïðàâó* (Ì îñêâà: Èçä. Äî ì “XXI âåê-Ñîãëàñèå”, 2000): Յուրի Բարսեղովը Հայոց ցեղասպանության ժամանակային սահմանները դնում է 1876-ից մինչև ընդհուպ 1923 թվականը:

[11] Տե՛ս *Funk & Wagnalis New Encyclopedia*, Vol. 25 (New York: Funk & Wagnalis, Inc., 1972), p. 304 (Source: Statistical Abstract of the United States):

[12] Միայն արցախցիները (շուրջ 150.000 բնակիչ) տվեցին, ոչ ամբողջական տվյալներով, ավելի քան 3000 զոհ: Եթե այս թիվը տոկոսային հարաբերությամբ արտահայտվի Վիետնամի պատերազմի օրոք ԱՄՆ-ի 220 միլիոն բնակչության վրա, ապա սպանվածների թիվը կկազմի 4,4 միլիոն մարդ: Հիշեցնենք, որ Վիետնամում զոհվել էր 55,000 ամերիկացի զինվոր: Նմանատիպ մի հաշվարկ կատարել է Լ. Չորբաջյանը՝ հիմք ընդունելով, սակայն, 1993-94 թթ. ձմռանը արցախցիների տված 700 սպանվածների մասին տեղեկությունը և ստանալով ԱՄՆ-ի բնակչության վրա արտահայտվող 1 միլիոն սպանվածների թիվը. - տե՛ս **Levon Chorbajian, Patric Donabedian & Claude Mutafian**, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh*, pp. 41, 48:

[13] Տե՛ս **Սերգեյ Աբրահամյան**, *Մեր լեզուն և մեր դպրոցը* (Երևան: Անանիա Շիրակացու համալսարանի հրատ., 2001):

[14] Ուղղագրության հարցերին նվիրված մեծաքանակ հրապարակումներից կառանձնացնեինք մի ուշագրավ վերլուծություն, որի եզրակացություններին հետ հիմնականում համամիտ ենք. **Հարություն Խաչատրյան**, «Քաղաքագետի հայացք միասնական ուղղագրության խնդրին». - *Առավոտ* օրաթերթ, 8 հուլիս 2002:

[15] Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության

ծայրահեղ բյուրոկրատացման մասին տե՛ս **Ãàÿíå Ñàðìàêåøÿí**, “Äîñòîéíûå ìóæè è áåäíàÿ ïàä÷åðèòà”, *Ãîëîñ Àðìåíèè*, 30 àïðåëÿ 2002.

[16] Այս առթիվ մի հետաքրքրական տեղեկություն. 2002 թ., թեև հարկերի հավաքը Հայաստանում աճել էր 20 տոկոսով, հարկային մուտքերի մակարդակը դեռևս ցածր էր համախառն ներքին արդյունքի 20 տոկոսից, որ տարածաշրջանում ամենացածր ցուցանիշներից է: Համաշխարհային բանկի վերլուծաբանի կարծիքով՝ սա նշանակում է, որ «մաքսանենգության և հարկերի չվճարման ծավալները առաջվա պես շատ նշանակալի են, ինչը հնարավոր է միայն երկրի քաղաքական վերնախավի ակնհայտ աջակցությամբ և թաքուն հանցակցությամբ» (“Èíòåðâüþ ñòàðøåãî ýêîíîìèñòà ïî Àðìåíèè Âñåìèðíîãî áàíêà Ëüâà Ôðåéíêìàíà èíôîðìàöèîííîìó ïîðòàëó ArcNews”, 27 Í îÿáðÿ 2002 *ArCNews*:

[17] Մասնավորապես, թուրքական հետախուզության գործողությունների անպատասխան մնալը փայլուն նկարագրված է հետևյալ հոդվածում՝ **Лия Аветисян**, “Made in Turkey-2”, *Голос Армении*, 6 марта 2004г.

[18] Պետական վերահսկողության տակ գտնվող տարբեր բնագավառներում (նաև կրթության համակարգում) հայոց լեզվի անմխիթար վիճակի մասին գրվել է բազմիցս. տե՛ս, օրինակ, *Լեզուն՝ ազգի հարատևման գրավական*: Պատասխանատու խմբագիր և գրախոս՝ Լևոն Ղազանչյան, Երևան, «Մաշտոց միավորում», 2002: **Սերգեյ Աբրահամյան**, *Մեր լեզուն և մեր դրպրոցը*, նշվ. աշխ.: Միջնակարգ դպրոցներում հաջողված նախաձեռնությունների միտումնավոր կասեցման մասին տե՛ս **Լիլիթ Գալստյան**, «Օրինականությամբ» քանդում ենք դպրոցը». - *Երկիր*, 7-13 հունիս 2002. նույն նախաձեռնության մասին տե՛ս **Հրանտ Հայրապետյան**, «Թիվ 60 դպրոցի ֆենոմենը. պետական հանրակրթական դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման մի մոդելի մասին». - *Կրթություն*, 24 նոյեմբերի 1998, Բ տարի ¹ 17: Արտգործնախարարությունում տիրող կացությունը քննադատող բազմաթիվ հրապարակումներից նշենք մի քանիսը միայն՝ **Թաթուլ Հակոբյան**, «Հայաստանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականության բաղադրիչներից մեկը ծուլությունն է». - *Ազգ*, 13 սեպտեմբերի 2002: **Ã. Òåð-Àðóòþíÿíö**, “Ïðîáëåìû ñïðêêà â ðàìêàõ ÌÈÄ ÐÀ”, *Ãîëîñ Àðìåíèè*, 19 íîÿáðÿ 2002, ¹ 127 (18924). **Âëàäèìèð Äàðáèíÿí**, “Äîðîãè ÌÈÄ â äûìêàõ ïàðèæåé”, *Ãîëîñ Àðìåíèè*, 22 àïðåëÿ 2000, ¹ 42 (18547); “Ðåâàíø â îòäåëüíî âçÿòî ìèíèñòåðñòâå”, *Ãîëîñ Àðìåíèè*, 20 àâãóñòà 2002, ¹ 91 (18888); **Ðóáåí Ìàðêàðÿí**, “Ï îñëê ïðèõîäÿò è óõîäÿò. ×òî îñòàåòñÿ?” *Ãîëîñ Àðìåíèè*, 18 àïðåëÿ 2002, ¹ 39 (18836):

[19] Տե՛ս նաև հետևյալ հարցազրույցս՝ «Մենք զինվոր ազգ ենք», - *Հայ զինվոր* (ՀՀ ՊՆ շաբաթաթերթ), 29 դեկտ. 2001-5 հունվ. 2002, ¹ 51 (408):

[20] **World Bank**, *Armenia. Country Assistance Strategy*. Report ¹ 22111-AM. Washington, DC, April 25, 2001.

[21] "16% íàñåëåíèÿ – î÷åíü áåäíûå", *Ãîëîñ Àðìåíèè*, 21 íîÿáðÿ 2002.

[22] **World Bank**, *Armenia. Country Assistance Strategy* (2001). 2001 թ. հունվարի 22-ին, Հայաստանի վիճակագրական պետական ծառայության համաձայն, Հայաստանի բնակչության 56 տոկոսն ապրում էր աղքատության սահմանագծից ներքև ("56 Percent Below Poverty Line," *Glasnost Foundation report* Jan 22, 2001):

[23] «Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագիր (նախագիծ)». - *Հայացք տնտեսությանը*, ¹ 12, հոկտ. 2002 թ., էջ 9:

[24] Այսպես՝ Հայաստանում արտադրված 1 կվտ էլեկտրաէներգիան երկրի ներսում վաճառվում է 25 դրամով, իսկ Վրաստանին տրվում է 15 դրամով. - **Àðàèê Ñàðêèñÿí**, " Ì û ïëàòèì äàíü ñâîèì è ÷óæèì", *Ãîëîñ Àðìåíèè*, 16 èþëÿ 2002, ¹ 76 (18873): Ըստ այլ տվյալների՝ 1990-ական թթ. արտասահմանից Հայաստան բոլոր տիպի ռեսուրսների (ներառյալ պետական ու միջազգային օգնությունը) 1 դոլարի ներմուծմանն ընկնում էր միջոցների 3-4 դոլարի արտահոսք արտասահման. - **Ãðèãîðèé Àðàêåëÿí**, "Ðîáðò Êî÷àðÿí ó âàæíîãî ðóáåæà", *Ãîëîñ Àðìåíèè*, 23 íîÿáðÿ 2002, ¹ 129 (18926):

[25] Տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր ունենալու անհրաժեշտության վերաբերյալ տե՛ս, օրինակ, **Íèêèòà Çàðîáÿí**, "Íîâîõîäèì äàèíûé äîëãîñðî÷íûé ñòðàòåãèÿ-åñêèé ïëàí", *Ãîëîñ Àðìåíèè*, 16 àïðåëÿ 2002, ¹ 38 (18835).

[26] Ռուսահայ մի հեղինակ, խոսելով վերջին տասնամյակում Հայաստանում տեղի ունեցած «քաղաքակրթական ակնհայտ անկման և ընդհանուր համակարգային ճգնաժամի» մասին, գալիս է միևնույն տխուր եզրակացություններին. «Հարկ է անկեղծորեն ասել՝ Հայաստանի պատմական տարածքում գտնվող այսօրվա պետությունը ո՛չ իր ռեսուրսների զարգացման ծավալով, կառուցվածքով ու մակարդակով, ո՛չ իր վարչարարության բովանդակությամբ ու ձևերով, ո՛չ իր սոցիալ-տնտեսական ու ազգային քաղաքականությամբ ընդունակ չէ էականորեն ազդել հայության վերապրելու խնդիրների առաջադրման և լուծման վրա: Ավելին՝ երկրում ճգնաժամի ռացիոնալ լճացումն ուղեկցվում է բնակչության ակտիվ զանգվածային արտագաղթով, որն ինքնին արդեն ցույց է տալիս այսօրվա հայկական պե-

տության իրական վիճակը» (**Î. À. Àðàêåëÿí**, “Àðìÿíñòâî â ýïîõó èíôîðìàöèîííûõ òåõíîëîãèé”, â êíèãå *Àðìÿíñòâî â óñëîâèÿõ ãëîáàëüíîãî ìàùòàá: Ãåîïîëèòè÷åñêèå è öèâèëèçàöèîííûå àñïåêòû.* Ì îñêâà: Èíñòèòóò ñîöèàëüíûõ íàóê, 2002, ñ. 7):

[27] Ազգային անվտանգության որոշ հարցեր մասնագիտորեն քննած հայ սակավաթիվ հեղինակներից մեկը՝ այժմ արդեն գեներալ-մայոր Մ. Մելքոնյանը, դեռևս 1999 թ. գրում էր. «Ամենից առաջ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի անմիջական ղեկավարությամբ և ազգի ողջ մտավոր ներուժի մասնակցությամբ մշակել Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգը: Ընդհանուր պետական մասշտաբով անվտանգության հայեցակարգի, կենսական կարևոր ազգային շահերի հստակ ձևակերպումների տևական բացակայության պայմաններում երկրի անվտանգության ապահովմանը կոչված առաջատար գերատեսչությունները (ամենից առաջ պաշտպանության, արտաքին գործերի, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունները) հարկադրված են դրանք որոշել իրենց մակարդակով: Այս դեպքում չի բացառվում համապետական, համազգային խնդիրներին նեղ գերատեսչական, զուտ մասնագիտական մոտեցման դրսևորում: Հնարավոր է նաև ազգային շահերի իրարամերժ, կամայական մեկնաբանում» (**Մ. Մելքոնյան**. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 1». - *Հայ զինվոր* շաբաթաթերթ, 13-20 փետրվարի 1999, ¹ 6 (261)): Սակայն, ցավոք, մինչև այսօր ոչ միայն այդպիսի հայեցակարգ չի մշակվել, այլ ՀՀ Անվտանգության խորհուրդն արդեն հինգ տարի է, ինչ դադարել է կանոնավոր աշխատելուց, դարձել է սոսկ թղթի վրա գրանցված մի մարմին:

ԳԼՈՒԽ 2.

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ ԵՎ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Համաշխարհային նոր համակարգ կամ (հայերենը թույլ է տալիս համառոտել) նոր աշխարհակարգ ասելով՝ ընդունված է հասկանալ 1990-ական թթ. սկզբից մինչև այսօր ձգվող ժամանակաշրջանը. այսինքն՝ երբ Խորհրդային Միության փլուզումով Ամերիկայի Միացյալ Նահանգները մնաց որպես միակ ու դեռևս իր մրցակիցը չունեցող գերտերություն[1]: Աշխարհը դարձել է պակաս կանխատեսելի, առավել մասնատված և վտանգավոր, զուգահեռաբար կտրուկ աճել է ռազմական հակամարտությունների թիվը: Ամերիկյան Ազգային պաշտպանության խորհրդի հիմնադրամ (National Defense Council Foundation) վերլուծաբանական կենտրոնի հաշվարկով՝ սառը պատերազմի օրոք ռազմական հակամարտությունների մեջ էին ներգրավված տարեկան միջինը 35, 2000 թ.-ին՝ 68, 2001-ին՝ 59 պետություն[2]: Սրա պատճառն այն է, որ Միացյալ Նահանգների հնարավորությունները որքան էլ ահռելի են, այդուհանդերձ թույլ չեն տալիս ստեղծել խոշոր հակամարտություններից զերծ գլոբալ այնպիսի մի իրավիճակ, ինչպիսին սառը պատերազմի օրոք հաստատել էին զույգ գերտերությունները՝ իրենց արբանյակ-դաշնակիցների հետ միասին:

Որո՞նք են մյուս հիմնական՝ «մակրո» չափանիշները, որոնք տարբերում են հին՝ սառըպատերազմյան աշխարհակարգը նոր աշխարհակարգից՝ ուղղակիորեն անդրադառնալով փոքր պետություն-

ների և պետություն չունեցող ճնշված ժողովուրդների շահերի վրա: Զննենք այդպիսի չորս մակրոչափանիշ՝ բարոյականը, տնտեսականը, ռազմականը և հոգևոր-մշակութայինը:

Բարոյական մակարդակում պատկերը շատ հստակ է. որևէ առաջընթաց չի՛ գրանցվել: Վկա՝ վերջին տասնամյակի ընթացքում տարբեր պետությունների իրականացրած զանգվածային հանցագործությունները, ցեղասպանական կոտորածները (genocidal massacres), էթնիկական զտումները, բնակչության տեղահանությունները և, զուգահեռաբար, այդ ամենի նկատմամբ մեծ տերությունների դրսևորած անտարբերությունը: Մասնավորապես, կարելի է վերհիշել 1994 թ. 800.000 թութսիների և «չափավոր» հութուների սպանդը Ռուանդայում, 1990-95 թթ. բալկանյան իրադարձությունները, քրդական շարժումների և ազգային ինքնության ճնշումները Թուրքիայում և այլն:

Այն դեպքերում, երբ մեծ տերությունները, «մարդասիրական միջամտություն» անվան տակ, ռազմական ուժով ուղղակիորեն միջամտել են իրադարձություններին, նրանք դարձյալ, նախ և առաջ, հետապնդել են հստակ աշխարհաքաղաքական շահ, լինի դա Քուվեյթում՝ 1990 թ., Բոսնիայում՝ 1995 թ., Կոսովոյում, թե՛ Արևելյան Թիմորում՝ 1999 թ.:

Բացահայտվել է ևս մի հետաքրքրական մոտեցում. «մարդասիրական միջամտությունը» իրականացվել է միայն միջազգային ասպարեզում մեկուսացված և թուլացած պետությունների՝ Իրաքի, Հարավսլավիայի, մասամբ՝ Ինդոնեզիայի նկատմամբ: Մինչդեռ հզոր կամ դաշնակից պետությունների նույնատիպ վարքագծի պարագայում ռազմական կամ թեկուզ տնտեսական ճնշամիջոցների մասին խոսք անգամ չի եղել (նման օրինակներից են Թուրքիայում քրդերի դեմ կիրառվող ռասիստական ճնշումները և Իսրայելի կողմից Պաղեստինի երկարատև բռնազավթումը)[3]: Ընդհանուր առմամբ՝ միջազգային հարաբերություններում խաղի կանոնները շարունակում են թելադրել ուժը և սեփական շահը[4]: Սակայն ճիշտ չէր լինի այս միտումները կապել զուտ բարոյականության հետ: Խնդիրըն ավելի խորքային է. պարզապես, ներկա միջազգային քաղաքական համակարգի պայմանները նույնիսկ ամենահզոր տերու-

թյուններին թույլ չեն տալիս բարոյական չափանիշը դարձնել իրենց արտաքին քաղաքականության ուղենիշ:

Այսպիսով՝ նոր աշխարհակարգի բարոյականությունը հին աշխարհակարգերի բարոյականությունից քիչ է տարբերվում. միջազգային հզոր ուժերը դարձյալ գործում և առաջնորդվում են «իմ շահն ամենից վեր է» սկզբունքով: Տարբերությունն այն է, որ հաղորդակցության արդի միջոցները որոշ հնարավորություն են տալիս արագ և ուղղակիորեն ազդելու ժողովրդավարական համակարգ ունեցող մեծ տերությունների հասարակական կարծիքի վրա: Սակայն նույնիսկ այդ սահմանափակ միջոցից օգտվելու համար փոքր պետությունների և ժողովուրդների ռեսուրսները չեն բավարարում:

Ի տարբերություն բարոյականի՝ տնտեսական ոլորտում փոփոխություններն ակնհայտ են և արտահայտվում են նրանում, որ Արևմուտքը ու նախ և առաջ ԱՄՆ-ն է՛լ ավելի ամրապնդեցին համաշխարհային տնտեսության մեջ իրենց դիրքերը: Մասնավորապես՝ նրանց հաջողվեց տնտեսական վերահսկողություն հաստատել նախկինում իրենց անհասանելի ԽՍՀՄ ողջ տարածքի վրա: Այս գործում զգալի դեր կատարեցին համաշխարհային տնտեսական կառույցները, հատկապես՝ Միջազգային արտարժույթի հիմնադրամը: Նախկին ԽՍՀՄ տարածքում տնտեսապես բավական բարեկեցիկ կյանքով ապրող միլիոնավոր մարդիկ ընդամենը երկու-երեք տարվա ընթացքում գլորվեցին աղքատության գիրկը, որից դուրս գալու ճանապարհները դեռևս չեն ուրվագծվում: Այժմ դժվար է ասել, թե որքանո՞վ էին խաղաղ ժամանակների համար այս աննախադեպ անկման պատճառները գիտակցաբար ուղղորդվում կամ կառավարվում դրսի ուժերի կողմից: Սակայն գոնե մի բան պարզ է. Արևմուտքի վերահսկողության տակ գտնվող միջազգային ֆինանսական կառույցները, հետխորհրդային տարածքի պետություններին (ինչպես և այլոց) տված իրենց խորհուրդներով ու վարկերով հանդերձ, սնանկ դուրս եկան՝ դրությունը շտկելու և ճգնաժամը հաղթահարելու գործում[5]:

Վերջին տարիներին անցկացված հետազոտություններն աներկբայորեն մատնացույց են անում, որ նոր աշխարհակարգի գոյատևման կարճաժամկետ ժամանակահատվածում կտրուկ արագացել են աղքատ երկրների հետագա աղքատացումը և հարուստ եր-

կըրների հետագա հարստացումը: 1970-ից մինչև 2000 թ. ընկած ժամանակամիջոցում 1.6 միլիարդ բնակիչներ ունեցող հարյուր երկրներ ապրել են տնտեսական անկում. դրանց գրեթե կեսում մի-ջին եկամուտներն ավելի ցածր էին, քան 1970 թ.[6]: Մոլորակի 1.2 միլիարդ բնակիչների օրական եկամուտը 1 դոլարից պակաս է, այ-սինքն՝ բազմապատիկ ցածր եվրոպական միջին ցուցանիշից, որն օ-րական 60 դոլար է[7]:

Բրիտանացի հետազոտողների գնահատականով՝ Արևմուտքն ստիպել է աշխարհի մյուս երկրներին բացել իրենց շուկաները՝ ա-ռանց փոխադարձաբար նույնը կատարելու: Զարգացող երկրները տարեկան կորցնում են 100 միլիարդ դոլար՝ արևմտյան երկրների սեփական արտահանմանը տրվող լրավճարների և ներմուծման առջև դրված առևտրական պատնեշների պատճառով: 2000 թ. միայն գյուղատնտեսության համար դրանք հասնում էին 245 մի-լիարդ դոլարի, ինչը մոտավորապես 5 անգամ ավելի էր այդ տար-վա ընթացքում զարգացող երկրներին Արևմուտքի տրամադրած գումարից: Զարգացող աշխարհի արտադրական ապրանքների առջև տուրքային պատնեշները միջինը 4 անգամ ավելի բարձր են, քան ինդուստրալացված աշխարհի ապրանքների առջև դրված տուրքե-րը: Ամենաթույլ զարգացած 49 երկրներից (որտեղ մոտ 300 միլիոն մարդ ապրում է ՄԱԿ-ի հաստատած աղքատության սահմանագծից ներքև) ԱՄՆ մտնող կաշին, կոշկեղենը, տեքստիլ և այլ ապրանքա-տեսակներ ենթարկվում են այնպիսի բարձր մուտքատուրքերի, ո-րոնք այդ երկրների վրա ավելի թանկ են նստում, քան ԱՄՆ-ից նրանց ստացած օգնությունը: Մուտքատուրքերի նվազմանը նվիր-ված բանակցությունների այսպես կոչված «Ուրուգվայական փու-լում» (ստորագրվել է 1994 թ.) Արևմուտքը խոստացավ իջեցնել գյուղատնտեսությանը տրվող լրավճարները 36 տոկոսով, որին ի պատասխան՝ զարգացող երկրները պետք է իջեցնեին ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների առջև դրված մուտքատուրքերը: Զարգացող երկրները կատարեցին իրենց խոստումը և մոտավորա-պես կիսով չափ նվազեցրին իրենց մուտքատուրքերը: Զարգացած երկրները չկատարեցին պայմանագրի իրենց մասը՝ թողնելով իրա-վիճակն այնպես, ինչպես այն կար 1994 թ.[8]:

2002 թ. օգոստոսին Յոհաննեսբուրգում կայացած ՄԱԿ-ի՝ Երկրի զարգացման հարցերին նվիրված գագաթաժողովում Հարավ-աֆրիկյան Հանրապետության նախագահ Թհաբո Մբեկին, կոչելով վերջ դնել «գլոբալ ապարթեիդին», նախազգուշացրեց. «Կենսունակ չէ համաշխարհային այն հասարակությունը, որը հիմնված է բյուրերի աղքատության ու քչերի բարգավաճման վրա և բնութագրվում է հարստության կղզյակներով, որոնք շրջապատված են աղքատության օվկիանոսով»[9]:

Համաշխարհային տնտեսության այսպիսի իրավիճակն ստեղծում է նաև մեծ լարումներ, որոնք արդեն մոտ ապագայում կարող են շատ լուրջ ցնցումներ առաջացնել միջազգային քաղաքական համակարգում. դա վերջերս ընդունում են անգամ արևմտյան պետությունների որոշ առաջին դեմքեր և առաջատար վերլուծաբաններ[10]:

Ռազմական ոլորտում փոփոխություններն ամենաակնառուն են: Տարեցտարի մեծանում է ԱՄՆ-ի զինուժի տեխնոլոգիական և տեղեկատվական առաջընթացն ու «պոկվածությունը» ոչ միայն Ռուսաստանից, այլև ՆԱՏՕ-ական դաշնակիցներից[11]: ԱՄՆ-ը այժմ միակ գերտերությունն է, որն ընդունակ է մեծաթիվ մարդկային ու կրակային ուժեր տեղափոխել և կիրառել աշխարհի ցանկացած վայրում: Ահա իրականությունը պատկերող մի քանի պերճախոս փաստեր. 1999 թ. Միացյալ Նահանգները ռազմական նպատակներով ծախսել է 283.1 միլիարդ դոլար, մինչդեռ Ռուսաստանը՝ 56.8, Ճապոնիան՝ 40.4, Չինաստանը՝ 39.9, Ֆրանսիան՝ 37.9, Մեծ Բրիտանիան՝ 36.9, Գերմանիան՝ 31.1[12]: 2001 թ. ԱՄՆ-ի ռազմական ծախսերը կազմել են 306 միլիարդ դոլար (չհաշված սեպտեմբերի 11-ից հետո նախագահ Բուշի հայտարարած 40-միլիարդանոց հավելումը), այսինքն՝ մոտ 85 տոկոսով ավելի, քան ՆԱՏՕ-ի մյուս 18 անդամները միասին վերցրած[13]: Իսկ 2002 թ. ԱՄՆ-ի ռազմական բյուջեն ապրել է վերջին 20 տարվա մեջ ամենակտրուկ աճը՝ կազմելով շուրջ 340 միլիարդ դոլար[14]:

Վերջապես, հոգևոր-մշակութային ոլորտում նույնպես դիտվում է ամերիկյան բարքերի և զանգվածային մշակույթի տարածում՝ ի հաշիվ տեղական մշակույթների և ավանդույթների: Այս

բնագավառում հատկապես մեծ դեր են կատարում անգլերեն լեզվի հաղթարշավը և ինտերնետի տարածումը[15]:

Համաշխարհային անկայունությանը նպաստող Արևմուտքի և մահմեդական աշխարհի միջև արդեն իսկ առկա հակամարտությանն առաջիկայում հնարավոր է գումարվի և լուրջ ապակայունացման տեղիք տա նաև գնալով թափ առնող լարվածությունների աճը բուն Արևմուտքի՝ ԱՄՆ-ի և Եվրոպական Միության միջև[16]:

Հետսառըպատերազմյան շրջանում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները նման չեն դիվանագիտության վերջին երկու դարի պատմությունից ծանոթ՝ ազդեցության ոլորտների վերաբաշխման ավանդական խաղերին: Գլոբալացման ընդհանուր ընթացքն առաջիկա մեկ-երկու տասնամյակում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների համար հնարավոր է դարձնում համաշխարհային հարաբերական տիրապետությունը: Համենայն դեպս՝ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջ եկած ԱՄՆ-ի համաշխարհային միանձնյա առաջնորդությունն ընդունել է կայուն ձևեր: Աշխարհի «ամերիկակենտրոնությունը» խոստանում է ձգվել առնվազն մեկ-երկու տասնամյակ ևս, հնարավոր է՝ ավելի երկար[17]: Միջին Ասիայում, Աֆղանստանում և Պակիստանում ԱՄՆ-ի ռազմական բազաների հաստատումը գալիս է է՛լ ավելի նեղացնելու Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության շրջանակը:

Մեր օրերում մեծ տերությունները ձգտում են հաստատել իրենց տիրապետությունը ոչ թե բիրտ ուժով, այլ տնտեսական լծակների հմուտ օգտագործմամբ ու հոգևոր-մշակութային արժեքների գերիշխանության հաստատմամբ: Վերջերս արդյունավետորեն օգտագործվում են նաև այնպիսի լծակներ, ինչպիսիք են փոքր ժողովուրդների վերնախավերի (հատկապես նրանց աշխարհընկալման և մտքի) վրա վերահսկողության սահմանումը կամ այդ վերնախավերի ուղղակի կաշառումը:

Հետաքրքրական են մեծ տերությունների՝ տիրապետություն և ազդեցություն հաստատելու ընդհանուր կանոնները.

1) հնարավորին չափ ապահովել վերահսկողության տակ հայտնվողի կամավորությունը.

2) փորձել բացարձակ վերահսկողություն հաստատել ոչ թե այս կամ այն տարածաշրջանի կամ աշխարհառազմավարական նշա-

նակություն ունեցող խնդրի մի մասի վրա, այլ հարաբերական վերահսկողություն՝ ամբողջ այդ տարածաշրջանի կամ խնդրի վրա.

3) հակամետ շահեր ունեցող պետությանը ջախջախել ու հպատակեցնել ոչ թե մարտի դաշտում, այլ վերածել այն համագործակցող պետության, որով մեծապես հեշտանում է նրա վերահսկողությունը և ուղղորդումը.

4) հմտորեն խույս տալ վերահսկողություն հաստատելու փորձերի դեմ ամենավտանգավոր ախոյանից՝ հայրենասիրական-ազգայնական զգացմունքների հետ բախումից: Այս առումով՝ ռազմական միջամտությունը Կոսովոյում, Չեչնիայում, Աֆղանստանում և Իրաքում բացառություններ են, որոնք ընդամենը հաստատում են ընդհանուր կանոնը:

Խաղի հե՛նց այս կանոններով ԱՄՆ առայժմ կարողացել է հարաբերական վերահսկողություն սահմանել մոլորակի մեծ մասի վրա[18]: Եվ սա չեն էլ թաքցնում ԱՄՆ-ի համաշխարհային գերիշխանությունն ու հետագա ծավալապաշտությունը ջատագովները: Ահա ընդամենը մեկ մեջբերում այդ շրջանակների վառ ներկայացուցիչ Զբիգնև Բժեզինսկու աղմուկ հանած՝ «Շախմատային մեծ տախտակ. Ամերիկայի առաջնությունն ու նրա աշխարհառազմավարական հրամայականները» գրքից. «Ամերիկյան համաշխարհային համակարգը շատ ավելի լայնորեն է կիրառում կոոպտացիայի տեխնիկան (օրինակ՝ պարտված ախոյանների՝ Գերմանիայի, Ճապոնիայի և վերջերս նույնիսկ Ռուսաստանի հանդեպ), քան դա անում էին անցյալի իմպերիալիստական համակարգերը: Այն նաև մեծապես օգտագործում է օտար կախյալ վերնախավերի վրա ոչ ուղղակիորեն ազդելու միջոցառումները»[19]:

Ամերիկյան վերահսկողությունից ցցուն կերպով դուրս են մնացել Կուբան, Հյուսիսային Կորեան, Իրանը, Սիրիան և, իհարկե, Չինաստանը: Ռուսաստանը, պահպանելով հանդերձ իր հզորագույն միջուկային զինապաշարը, այդուամենայնիվ զգալիորեն հայտնվել է ԱՄՆ-ի քաղաքական ու հոգևոր-մշակութային ազդեցության տակ:

Վերոհիշյալ խաղի կանոններով են առաջնորդվում նաև մյուս մեծ պետությունները, ներառյալ Ռուսաստանը, որը, սակայն, առայժմ փորձում է ամրապնդել իր ազդեցության գոտիները շատ

ավելի փոքր աշխարհագրական ընդգրկմամբ՝ իրեն անմիջականորեն հարող պետությունների տարածագոտում:

Նոր աշխարհակարգի պայմաններում ճնշված ժողովուրդների միջև արդյունավետ համագործակցությունն անհնար է դառնում հաղորդակցության բարդությունների, նրանց տրամադրության տակ եղած ռեսուրսների պակասի և, ամենակարևորը, տարբեր մեծ տերությունների ազդեցության տակ լինելու պատճառով: Մեծ պետությունները ևս ամենևին շահագրգռված չեն պաշտպանելու փոքր կամ ճնշված ժողովուրդների շահերը: Այդ ժողովուրդների ճակատագիրը կարող է բարելավվել միայն սեփական ուժերով՝ առանց դրսից ստացվելիք օգնության հետ ավելորդ հույսեր կապելու:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] Նոր աշխարհակարգի հայեցակարգային հիմքերի մասին տե՛ս, օրինակ, **А. И. Зубков**, *Геополитика и проблемы национальной безопасности России.* Курс лекций (Санкт-Петербург: Юридический центр Пресс, 2004), с. 24-25.

[2] **The National Defense Council Foundation**, *World Conflict List, 2000, 2001*, http://www.ndcf.org, հմմտ. Carolyn Skorneck, "Study: Number of Conflicts Declines," *Associated Press,* Dec. 23, 2001, 6:43 PM ET. Այս իրողությունը բերել է նաև միջազգային խաղաղարար ու խաղաղապահ ուժերի բազմապատկմանը. տակավին 1995 թ. հունիսի 26-ին ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Բ. Բութրոս Ղալին հայտարարում էր. «Խաղաղապահության (ՄԱԿ-ի) բյուջեն նախկինում սովորաբար 600 միլիոն դոլար էր, իսկ այժմ այն 3.6 միլիարդ դոլար է: Մեր կապույտ բերետների թիվն առաջ 5000 էր, իսկ այժմ՝ 60.000» (*US News & World Report*, June 26, 1995, p. 44):

[3] Ընդունելով այս իրողությունը՝ շատ հեղինակներ կարծում են, որ 20-րդ դարի վերջում ընդհանուր միտումներն, այնուամենայնիվ, ժողովուրդների ինքնորոշման օգտին են, տե՛ս William Safire, "Against Internal Agression (Essay)," *New York Times*, March 25, 1999. Նույնիսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Աննան է ասում, որ «Մարդու իրավունքների խնդիրները հետ են շպրտում ինքնիշխանությունը. որևէ դաժան ու ցավոտ իրադրության մեջ մարդկանց տառապանքները շատ ավելի կարևոր են, քան ինքնիշխանությունը» (Human rights issues push sovereignty to the edge:

When you have a cruel and painful situation, the suffering of these people is so much more important than sovereignty.). – Justin Brown, “NATO sets precedent in deciding to violate a border,” *The Christian Science Monitor*, March 25, 1999:

[4] Այս իրականության վերջին ցայտուն օրինակներից կարելի է հիշել համաշխարհային հարաբերական դերիշխանության ձգտող ԱՄՆ-ի վարքագիծը հետևյալ հարցերում.

ա) ձերբակալելով Աֆղանստանում հարյուրավոր մահմեդական ծայրահեղականների, ի հակադրություն ՄԱԿ-ի և մարդու իրավունքների գծով այլ կառույցների իրավական միահամուռ տեսակետի, հրաժարվեց տալ նրանց ռազմագերիների կարգավիճակ, որ 1949 թ. ժնևի կոնվենցիաներով որոշակի պաշտպանվածություն է նախատեսում, այլ որակեց նրանց որպես «օրենքից դուրս զինյալներ» (unlawful combatants). - տե՛ս “Third Group of Prisoners Arrives in Guantanamo,” *World-Reuters News*, January 17, 2002, 12:05 AM ET; **Mike Peacock**, “Britain Wants U.S. to Explain Guantanamo Bay Photos,” *World-Reuters News*, January 20, 2002, 10:17 AM ET. **Christopher Wilson and Sayed Salahuddin**, “U.S. Holds Firm: Afghanistan Captives Are Not POWs,” *World-Reuters News*, January 27, 2002, 7:50 PM ET.

բ) ԱՄՆ-ը դեմ հանդես եկավ Միջազգային հանցանքների դատարանի (International Criminal Court) ստեղծմանը՝ ցանկանալով, որ իր ռազմական գործողությունները դուրս լինեն արտասահմանում որևէ միջազգային ատյանի վերահսկողությունից. - տե՛ս “Courting Disfavour,” *The Economist,* Apr 12th 2002. Այս հարցում ԱՄՆ-ը դեմ դուրս եկավ անգամ իր ամենամտերիմ դաշնակիցներին՝ Մեծ Բրիտանիային, Գերմանիային, Ֆրանսիային (տե՛ս **Edith M. Lederer**, “War Crimes Court Officially Begins,” *Associated Press News*, July 1, 2002 7:12 AM ET; **Irwin Arieff**, “US Kills UN Bosnia Mission, Then Grants Reprieve,” *World-Reuters News*, July 1, 2002, 12:27 AM ET: **Evelyn Leopold**, “Bitter Fight with U.S. Leads to Compromises on Court,” *World-Reuters News*, July 13, 2002, 2:45 AM ET): Դրանից բացի, ԱՄՆ-ը 89 պետությունների հետ երկկողմանի պայմանագրեր է ստորագրել, որոնցով արգելվում է ամերիկացի պաշտոնյաների որևէ դատավարությունն այդ երկրներում (**Edith M. Lederer**, “Many Oppose U.S. Peacekeeper Exemptions,” *Associated Press News,* May 21, 2004):

[5] Այսպես՝ 1958-ից ի վեր Միջազգային արժութային հիմնադրամը (ՄԱՀ) Թուրքիայում իրականացրել է չուրջ 20 ծրագիր, որոնց արդյունքը ծաղրում է «Ուոլ Սթրիթ Ջոռնալի» մի խմբագրական հոդվածը. – “Tinkering

With Turkey (Editorial)," *The Wall Street Journal*, January 16, 2002: Իսկ Արգենտինայի (որը դեռևս կես դար առաջ աշխարհի ամենահարուստ երկրներից մեկն էր) աննախադեպ տնտեսական ճգնաժամը նույնպես մեծապես պայմանավորված էր նույն կառույցների սխալ խորհրդատվությամբ: Այդ մասին վերջերս ուղղակի հայտարարեց տնտեսության գծով նոբելյան մրցանակի դափնեկիր, Համաշխարհային բանկի նախկին գլխավոր տնտեսագետ Ջոզեֆ Ստիգլիցը՝ կոչ անելով բարելավել գլոբալ ֆինանսական համակարգը և այդ գործն սկսել Միջազգային արժութային հիմնադրամի կատարյալ ռեֆորմից (տե՛ս "Economist: IMF Made 'Fatal' Mistakes in Argentina," *World-Reuters News*, January 17, 2002, 5:31 AM ET). Ավելի վաղ այս կապակցությամբ ռադիկալ հայտարարություններ էր արել Կուբայի նախագահ Ֆիդել Կաստրոն, որը պահանջել էր «ոչնչացնել Միջազգային արժութային հիմնադրամը» (տե՛ս **Jason Webb**, "Developing Countries to Fight 'Economic Apartheid'," *World-Reuters News,* April 15, 2000 12:13 AM ET), իսկ մի այլ առիթով էլ պնդել, որ «սոցիալիստական Կուբան կարողացել է դիմանալ ԱՄՆ-ի ճնշմանը և [տնտեսության գլոբալ] անկմանը, որովհետև այն առանձին է կանգնած քաոսային [ընույթ ունեցող] գլոբալ կապիտալիզմից և այդ իսկ պատճառով փրկվել է դահիճ Միջազգային արժութային հիմնադրամից» (տե՛ս **Pascal Fletcher**, "Castro Says Cuba Lives Free of IMF 'Executioner'," *World-Reuters News*, January 29, 2000, 1:02 PM ET): Արևելյան Եվրոպայի երկրներին, Ռուսաստանին և Ուկրաինային Արևմուտքի տված խորհրդատվության ու ֆինանսական «օգնության» տարօրինակ սխալները և դրանց կործանարար հետևանքները (մասնավորապես՝ օլիգարխների կլանների տիրապետության հաստատումը) մանրամասն քննադատված են հետևյալ մենագրության մեջ՝ **Janine R. Wedel**, *Collision and Collusion: The Strange Case of Western Aid to Eastern Europe*. New York, N.Y.: Palgrave, 2001:

[6] Տե՛ս **Michael Watts**, "Poverty and the Politics of Alternatives at the End of the Millennium," in *Global Futures: Shaping Globalization*, ed. by Jan Nederveen Pieterse, London-New York: Zed Books, 2000, p. 137); **Timothy J. Yeager**, *Institutions, Transition Economies, and Economic Development* (Boulder, Colorado: Westview Press, 1997), p. 3; "U.N. Says Extreme Poverty Plagues Third of Planet," *World-Reuters News*, Sep. 19, 2000, 6:27 PM ET.

[7] **Alastair Macdonald**, *"*End 'Global Apartheid' Call Heralds Earth Summit", *World-Reuters News,* August 25, 2002, 9:13 PM ET.

[8] **Kevin Watkins**, *Eight Broken Promises: Why the WTO Isn't Working For the World's Poor* (Oxford: Oxfam Briefing Paper No. 9, 2001).

[9] **Matt Daily**, “Earth Summit Talks Roll On, No Deal in Sight,” *World-Reuters News,* August 26, 2002, 11:09 PM ET. Փաստորեն, ՀԱՀ-ի նախագահը կրկնել էր համաշխարհային կապիտալիզմին տված այն բնութագրությունը, որ նրանից երկու տարի առաջ տվել էր Կուբայի նախագահ Ֆիդել Կաստրոն (**Jason Webb**, "Developing Countries to Fight 'Economic Apartheid'," *op. cit.*):

[10] Ամենաթարմ օրինակը Կանադայի վարչապետ Ժան Կրետյենն է, որը 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները կապեց Արևմուտքի «գոռոզության» հետ (**David Ljunggren**, “Canada PM Links Sept. 11 to 'Arrogant' West,” *Reuters-News* Sep. 12, 2002, 1:36 PM ET; “Canada PM Again Ties Sept. 11 to Western Policies,” *Reuters-News* Sep 16, 2002, 4:18 PM ET: Գիտակցելով այդ սպառնալիքները՝ Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Գորդոն Բրաունը վերջերս հանդես եկավ աննախադեպ մի նախաձեռնությամբ, որով հարուստ երկրները կպարտավորվեն տարեկան 50 միլիարդ դոլար հատկացնել աղքատ և զարգացող երկրներին՝ 2015 թ. գլոբալ աղքատությունը կիսով չափ նվազեցնելու նպատակով (տե՛ս **Stephen Cunningham**, “UK's Brown Calls for 21st Century Marshall Plan,” *Reuters World News,* December 16, 2001 7:16 PM ET): Մոտավորապես նույն կոչով հանդես եկավ նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը (տե՛ս **Evelyn Leopold**, “UN's Annan Warns Not to Punish Poor for Being Poor,” *Reuters World News*, Feb 5, 2002, 12:08 AM ET): Աղքատության հաղթահարման հարցերին էր նվիրված 2002 թ. մարտին Մեքսիկայի Մոնթերեյ քաղաքում անցկացված միջազգային գիտաժողովը, որի ընդունած այսպես կոչված «Մոնթերեյի կոնսենսուսով» զարգացած ինդուստրիալ երկրներին առաջարկվում է միլիարդավոր դոլարներով ավելացնել աղքատ երկրներին տրվող օգնությունը (**Julie Watson**, “World Leaders Vow to Relieve Poverty,” *Associated Press* March 23, 2002, 6:03 AM ET).

[11] **Thomas L. Friedman**, “The End of NATO”? *The New York Times*, February 3, 2002; **Colleen Barry**, “NATO Chief Warns of Military Gap,” *World News-Associated Press*, February 3, 2002, 8:20 AM ET. ՆԱՏՕ-ական դաշնակիցների ԱՄՆ-ից ետ մնալը շատ ակնհայտորեն ցուցադրվեց Կոսովոյում 1999 թ. ու հատկապես Աֆղանստանում 2001 թ., ապա և Իրաքում 2003 թ.: Ռուսաստանի և ԱՄՆ-ի ռազմական պոտենցիալների հարաբերակցությունը աղյուսակով ցուցադրված է հետևյալ գրքում՝ **М. И. Дзлиев, А. Д. Урсул**, *Основы обеспечения безопасности России, ук. соч.,* с. 128:

[12] Այս տվյալների աղբյուրն է **International Institute for Strategic Studies**,

The Military Balance 2000/2001 (London: Oxford University Press, 2000), pp. 297-302. Մի ուրիշ աղբյուր, սակայն, Ռուսաստանի տարեկան ռազմական բյուջեն հաշվում է ընդամենը 5 միլիարդ դոլար, տե՛ս **Fred Weir**, "Russia's Disarmament Gambit," *The Christian Science Monitor*, November 15, 2000.

[13] **Paul Ames**, “EU Sees Need to Boost Military,” *Associated Press*, Mar 22, 2002, 5:41 PM ET. “NATO'S Robertson Sounds Alarm on World Security,” *Reuters World News*, Oct. 3, 2002, 4:29 AM ET.

[14] Այսպիսի գերմիլիտարիզացումը բերում է նրան, որ նույնիսկ ամերիկացի բարձրաստիճան սպաների խոստովանությամբ՝ աշխարհում ԱՄՆ-ին սկսում են ավելի ու ավելի դիտել իբրև մի սարսափազդու ռազմական ուժի կրող, քան ժողովրդավարական, ազատ շուկայական և օրենքի գերակայության երկիր (տե՛ս, օրինակ, Բոսնիայում բազմազգ ուժերի նախկին հրամանատար գեներալ Վ. Նաշի այս առթիվ հայտնած անհանգստությունը՝ “Reinventing War,” *Foreign Policy* November-December 2001, p. 43):

[15] ԱՄՆ-ի համաշխարհային գերիշխանության ռազմական, տնտեսական, մշակութային բաղկացուցիչները փոքր-ինչ չափազանցված երանգներով ներկայացրել է Զբիգնև Բժեզինսկին. **Zbigniew Brzezinski**, *The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives* (New York: BasicBooks, 1997), Chapter 1, "Hegemony of a New Type," pp. 3-29.

[16] **Charles A. Kupchan**, “The End of the West,” *The Atlantic Monthly* November 2002.

[17] Ռազմավարական մի ուշագրավ ուսումնասիրություն, քննելով սպառազինությունների և ընդհանրապես պատերազմելու ասպարեզում ընթացիկ հեղափոխական փոփոխությունները, գալիս է այն եզրակացության, որ 21-րդ դարն առավել Ամերիկայի գերիշխանության դար կլինի, քան 20-րդն էր տե՛ս (**George Friedman and Meredith Friedman**, *The Future of War: Power, Technology, and American World Dominance in the 21st Century.* New York: Crown Publishers, 1996).

[18] Այս խաղի կանոնները բավական հաջող բացատրում է «ֆունկցիոնալ ինտեգրացիայի» տեսությունը, որ միահյուսում է քաղաքական տնտեսության և կառավարման տեսությունները. - տե՛ս **A. Papathanasis and Chris Vasilllopulos**, “Functional Integration and the Middle East,” *Journal of Political and Military Sociology*, Vol. 20, No. 2, Winter 1992, pp. 179-197.

[19] **Zbigniew Brzezinski**, *The Grand Chessboard*, p. 25.

ԳԼՈՒԽ 3.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղյան հակամարտության որևէ վերլուծություն պետք է սկսվի հետևյալ հարցին ճիշտ պատասխան տալով. ի վերջո, հանուն ինչի՞ է մղվում այս հակամարտությունը: Այսինքն՝ պետք է մեկընդմիշտ ճշտել, թե ո՞րն է Ղարաբաղյան հակամարտության բուն արմատը՝ սոսկ Արցախի հայության ապագան թե՞ Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ անվտանգությունն ու զարգացման հեռանկարները:

Երկրորդ. հասկանալի է, որ Ղարաբաղյան հակամարտության սառեցումն այսօրվա վիճակով՝ ադրբեջանա-թուրքական շրջափակման և ռազմական խոշոր ծախսերի շարունակության պայմաններում, ծանրագույն բեռ է Հայաստանի դեռևս լիովին չկայացած պետականության համար: Սակայն արդյո՞ք հակամարտության կարգավորման՝ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (այսուհետև՝ ԵԱՀԿ) Մինսկի խմբի մշակած ծրագիրը խոստանում է Հայաստանին առավել բարենպաստ արտաքին շրջադրություն, թե՞ այդ ծրագրի կիրառումը կարող է է՛լ ավելի բարդացնել հայկական պետության ներկա ճգնաժամային կացությունը:

Նշված հարցադրումները պարզաբանելու համար, անհրաժեշտ է ճիշտ պատկերացնել Ղարաբաղյան հակամարտության խոր-

քային՝ բուն պատճառները և զարգացման ներքին տրամաբանությունը: Միայն դրանից հետո հնարավոր կլինի գտնել այդ պատճառների վերացման կամ չեզոքացման հնարավորություններն ու եղանակները:

Ղարաբաղյան հակամարտության զարգացման երկու ետնախորքը

Ղարաբաղյան հակամարտությունը զարգանում է երկու ետնախորքի մեջ՝ ռազմավարական ու դիվանագիտական-իրավական:

*Ռազմավարական ետնախորքը բազիսայինն է, այն ընդգրկում է հակամարտության դրդապատճառների և խթանիչների աշխարհաքաղաքական (*geopolitical*), աշխարհատնտեսական (*geo-economic*) և բուն ռազմական ամբողջ համադրությունը:*

Դիվանագիտական-իրավական ետնախորքը վերնակառուցային է, այն ներառում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցությունները, որոնք արտաքնապես ընթանում են միջազգային իրավունքի նորմերի համաձայն:

Հակամարտության հաջող կարգավորումը կախված է նրանից, թե վերնակառուցային մակարդակում որքանով են ճիշտ հասկանում, ապա և փորձում համապատասխան պատասխաններ գտնել բազիսային մակարդակի վրա ընթացող զարգացումներին: Այլ կերպ ասած՝ դիվանագետների մշակած առաջարկությունները կարող են հաջողություն ունենալ միայն այն դեպքում, եթե նրանք գիտակցեն և ճգտեն վերացնել հակամարտության բուն պատճառները: Հայտնի օրենքի համաձայն՝ վերնակառուցային և բազիսային զարգացումների միջև մեծ չափերի հասնող անհամապատասխանությունը վտանգավոր է: Ղարաբաղյան դեպքում՝ այդպիսի անհամապատասխանությունը ուշ թե շուտ, անգամ խաղաղ համաձայնագրերի կնքումից հետո, անպատճառ ծնելու է նոր հակամարտություն:

Ստորև քննելու ենք Ղարաբաղյան հակամարտության բազիսային՝ ռազմավարական շերտը:

Պատմական ետնախորքը

Պատմական առումով՝ 1988-ից մինչև օրս շարունակվող Ղարաբաղյան հակամարտությունն անջատ դրվագ չէ, այլ օրգանական շարունակությունն է 1890-ականներից մինչև 1923 թվականը ձգված հայ-թուրքական (օսմանյան) հակամարտության: Դժբախտաբար, 1905-1906 թվականներից ի վեր հայ-թուրքական հակամարտության բաղկացուցիչ մաս է եղել Այսրկովկասում ընթացող հայ-թաթարական հակամարտությունը: Հակահայկական ուղղվածություն ունեցող թուրք-թաթարական ռազմաքաղաքական դաշինքը բացահայտորեն դրսևորվել է 1905-1906 թթ., 1918-1921 թթ. և արդի՝ 1991-ից ցայսօր շարունակվող պատմական ժամանակահատվածներում: Առանց խորանալու պատմության մեջ, հիշեցնենք, որ դարասկզբի հայ-թուրք/թաթարական հակամարտության հիմքում ընկած էր Օսմանյան կայսրության՝ հայ ազգի բնաջնջման և Հայաստանին տիրանալու քաղաքականությունը: Արդյունքում՝ լիովին հայաթափվեց պատմական Հայաստանի արևմտյան մասը և մասամբ Արևելյան Հայաստանը:

Հակամարտության արդի ռազմավարությունները

Հայ-թուրք/ադրբեջանական հակամարտության արդի փուլը բնորոշվում է Թուրքիայի, Ադրբեջանի, Հայաստանի հետապնդած հետևյալ ռազմավարություններով (strategies):

Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթ ռազմավարական խնդիրներից է՝ ամրացնել իր դիրքերը նորերս առաջացած ու դեռևս վերջնական ձևավորում չստացած Կովկասյան-Միջինասիական աշխարհառազմավարական տարածաշրջանում: Անկարայի՝ այս նպատակին հասնելու գլխավոր միջոցներից է թյուրքախոս 5 նորանկախ պետությունների՝ Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի հետ տնտեսական-քաղաքական հարաբերությունների խորացումն է, հնարավորության դեպքում՝ ընդհուպ մինչև միջպետական քաղաքական-ռազմական միության ստեղծումը (Ադրբեջանի հետ արդեն իսկ

իրագործվում են ռազմական համագործակցության բազմաթիվ պայմանագրեր ու ծրագրեր):

Ադրբեջանական Հանրապետության ռազմավարական խնդիրներն են՝ ա) ամրապնդել իր անկախությունը Ռուսաստանից՝ կառուցելով և շահագործելով Ռուսաստանը շրջանցող նավթամուղեր ու գազամուղեր, բ) ապահովել սակավաթիվ բնակչություն (մոտ 150,000 մարդ) ունեցող և գլխավորապես Հայաստանով ու Իրանով շրջապատված Նախիջևանի ռազմական ու տնտեսական անվտանգությունը:

Ե՛վ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի նշված երկարաժամկետ նպատակները հրամայականորեն պահանջում են Ռուսաստանի ազդեցության ոլորտի հետագա նեղացում և, զուգահեռաբար՝ հայկական սեպի վերացում: Եվ սա ո՛չ թե հատուկ հայատյացության կամ պանթուրքիստական գաղափարախոսության պատճառով, այլ պարզապես շատ հստակ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի թելադրանքով: Հայատյացությունն ու պանթուրքիզմը ընդամենը այդ նպատակներին ծառայող օգտակար միջոցներ են:

Հայաստանի Հանրապետության ռազմավարական խնդիրն է՝ դիմագրավել թուրք-ադրբեջանական ճնշմանը, ապահովել իր երկարաժամկետ անվտանգությունը, կայանալ որպես կենսունակ անկախ պետություն: Մինչդեռ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ առավել ևս Թուրքիան իբրև պետություն և ազգ վերապրելու խնդիր չունեն, այդ խնդիրն իր ողջ ծանրությամբ շարունակում է կախված մնալ Հայաստանի և հայ ազգի վրա:

Այսպիսով՝ արդեն մեկ հարյուրամյակ ձգվող այս հակամարտության առանցքում ընկած է, մի կողմից՝ «հայկական սեպը» վերացնելու Թուրքիայի և Ադրբեջանի նպատակը, մյուս կողմից՝ դրան հակադրվող Հայաստանի գոյապայքարը: Ուստի՝ խոսքը ո՛չ թե սոսկ Ղարաբաղի, այլ նույն չափով Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին է: Ղարաբաղյան հակամարտությունը վերաբերում է Հայաստանի (ներառյալ Արցախի) գոյությանը՝ լինել թե՞ չլինելուն:

Ղարաբաղյան հակամարտության երկու առանցքը

1921 թ. դրությամբ հակամարտությունը սառեցվեց հայկական կողմի համար ծանր պայմաններով. Այսրկովկասում գծվեցին այնպիսի սահմաններ, որոնք 1918-1920 թթ. սցենարի հնարավոր ապագա կրկնության դեպքում Հայաստանը դարձնելու էին անկենսունակ պետություն: Թուրք-ադրբեջանական մուրճի և սալի միջև հայտնվելով, Հայաստանն արագորեն կորցնելու էր լրիվ անպաշտպան մնացած Սյունիքը (Զանգեզուրը) ու, դրա հետ միասին՝ նաև իր անկախությունն ու բնականոն զարգացման հնարավորությունները:

ՀԽՍՀ հիմքի վրա վերածնվելիք հայոց անկախ պետականության ապագա կայացումը կապված էր Ղարաբաղի և Նախիջևանի հետ վերամիավորվելու հնարավորության հետ: Նախիջևանի լիակատար հայաթափությունից հետո Ղարաբաղն այլևս միակ դիրքն էր Սյունիքն ու Սյունիքի հետ միասին Իրանի հետ Հայաստանի կենսատու սահմանը պահպանելու և պաշտպանելու համար: ԽՍՀՄ փլուզմանը զուգընթաց՝ կյանքի կոչվեց 1920-1923 թթ. ուրվագծված սցենարը և Հայաստանի նորանկախ պետականությունը հայտնվեց լինել-չլինելու վտանգի առջև: Ընդ որում՝ այս անգամ Թուրքիան կարող էր մնալ խաղաբեմի հետևում, մինչդեռ, Սյունիքի զավթումով, Հայաստանի պետականությանը մահացու հարված հասցնելու դերը կատարելու էր Ադրբեջանը:

Բանն այն է, որ 1921-1924 թթ. գծված սահմանները զրկում են Հայաստանի հարավային հատվածը՝ Սյունիքը ռազմավարական որևէ խորությունից: Այդ սահմանների վերահաստատման դեպքում Սյունիքը կարող է ենթարկվել ինչպես հանկարծակի հարձակման, այնպես էլ «սահմանային» անվերջ սադրանքների: Ինչպես ցույց է տալիս փորձը, «սահմանային» սադրանքներ կազմակերպելն ու այնուհետև հակառակորդին դրանց մեջ մեղադրելը որևէ դժվարություն չի ներկայացնում, այն էլ լեռնային բարդ ռելիեֆ ունեցող շրջաններում (այս առումով հատկապես խոցելի է Սյունիքի սիրտը՝ Կապանը): 1000 միջազգային դիտորդն էլ ի վիճակի չի լինի ճշտելու, թե ո՞վ է առաջինը կրակել կամ, ասենք՝ ո՞վ է պայթեցրել Մեղրիի տարածքով անցնող ադրբեջանական գնացքը: Սադրանքներ

կազմակերպելուց հետո Ադրբեջանը՝ վկայակոչելով հայկական կրակակետերը լռեցնելու և Նախիջևանի անվտանգությունը ապահովելու ռազմական անհրաժեշտությունը և ունենալով Թուրքիայի գաղտնի կամ բացահայտ աջակցությունը, կանցնի ավելի վճռական գործողությունների՝ ձեռնարկելով ընդհուպ ամբողջ Սյունիքը կամ նրա հարավային մասը զավթելու փորձ: Հնարավոր միջազգային հակազդեցությունից խուսափելու համար, Բաքուն կարող է նաև դիմել Սյունիքի տարածքի ժամանակավոր բռնագրավմանը, այնպես ինչպես թուրքական զորքերը պարբերաբար «ժամանակավորապես» գրավում են հյուսիսային Իրաքը կամ ինչպես նույնը անում է Իսրայելը՝ հարավային Լիբանանում: Բնականաբար՝ այդ ժամանակավոր բռնագրավման ժամանակ Սյունիքի տնտեսական ամբողջ ենթակառուցվածքը ենթարկվելու է ոչնչացման և թալանի՝ զրկելով փախուստի դիմած ազգաբնակչությանը իրենց տները վերադառնալու թե՛ հնարավորությունից, և թե՛ ցանկությունից:

Ավելին՝ գուցե այդ ներխուժման անհրաժեշտությունն էլ չառաջանա: Սյունիքը ոչ միայն թիկունքազերծ է և անպաշտպանունակ երկու կողմից ձեռնարկված խոշոր հարձակման դեպքում, այլև գրեթե ամբողջովին հասանելի է արդի հրետանային համակարգերի ռմբահարությանը: Մարզի կենսագործունեությունը կաթվածահար անելու և բնակչության արտահոսք առաջացնելու համար բավարար կլինեն «սահմանային» հորջորջվելիք բախումները: Ղարաբաղում հայկական իշխանության և բանակի չգոյության պարագայում Սյունիքը դատապարտված է:

Լավագույն դեպքում Սյունիքը միայն ձևականորեն կարող է մնալ Հայաստանի մաս, քանզի նույնիսկ եթե չիրականացվի ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ տարբերակը՝ դրանք Սյունիքի հանդեպ կիրառելու սպառնալիքն ինքնին արդեն բավական կլինի Հայաստանը Թուրքիայի և Ադրբեջանի խամաճիկ՝ «Այսրկովկասի Սվազիլենդ» դարձնելու համար: Ինչպես Սվազիլենդը՝ իր սահմանների բերումով, չի կարող ունենալ Հարավաֆրիկյան Հանրապետության ռազմավարական շահերի հետ հակասող կամ նույնիսկ չհամընկնող որևէ քաղաքականություն, այնպես էլ Հայաստանն է ստիպված լինելու վերանայել իր ռազմաքաղաքական դաշինքը Ռուսաստանի հետ, ինչպես նաև իր սերտ՝ աստիճանաբար ռազմավարական որակ

ձեռքբերող հարաբերությունները Իրանի հետ: Հայաստանը դատապարտված է լինելու որդեգրելու միակ՝ թուրք-ադրբեջանական «կողմնորոշում»: Մյուս կողմից՝ Հայաստանի անելանելի դրությունն ու ռազմավարական կատարյալ անարժեքությունը արագորեն բերելու է նրան, որ Ռուսաստանն ու Իրանը կորցնեն Հայաստանի հետ իրենց դաշինքը պահպանելու շահագրգռվածությունն ու ցանկությունը:

Սկզբում Զանգեզուրը, ապա նաև ամբողջ Հայաստանը վերածվելու են թուրք-ադրբեջանական տարանցիկ մայրուղիի: Թուրքիայի և Ադրբեջանի թելադրանքը Հայաստանի վրա տարածվելու է քաղաքական-տնտեսական ոլորտից մինչև ազգային-հոգևոր ոլորտը՝ ընդհուպ մինչև Հայաստանի կրթության բնագավառում հայոց պատմության՝ հատկապես ցեղասպանության, բայց նաև այլ հարցերի ուսուցման վրա վերահսկողություն հաստատելու փորձերը (սրանում որևէ կասկած չկա, քանզի թուրքական հատուկ ծառայությունները վաղուց է, ինչ եռանդուն աշխատանքներ են կատարում այդ ուղղությամբ և արդեն իսկ, իրենց ամերիկյան գործընկերների օժանդակությամբ, մեծ հաջողություններ են արձանագրել արևմտյան, ներառյալ՝ սփյուռքահայ «հայագիտության» մեջ): Եթե Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքական-տնտեսական թելադրանքին Հայաստանը կարող է դեռ որոշ չափով հարմարվել, ապա հոգևոր ոլորտի վրա անխուսափելիորեն տարածվելիք ճնշումը ծնելու է հոգեբանական անտանելի բարդույթներ և պառակտումներ ու պատճառելու է հայ ազգի հոգևոր անկում և քայքայում: Այս զարգացումների հետևանքը լինելու է միայն ազգային աղետը, ներառյալ՝ սոցիալական ու տնտեսական ոլորտներում: Հայաստանի՝ աշխարհի երեսից վերացման ընթացքը կդառնա այլևս անկասելի և անդառնալի:

1918-1921 թթ. սցենարը՝ որոշ տարբերություններով, կրկնվում է 1991 թ. հետո ընկած ժամանակահատվածում: Իրականում՝ ապահովելով արցախահայության գոյատևումը իր հողին, Ղարաբաղյան շարժումը և ռազմական հաղթանակները միակ միջոցն էին Սյունիքը Հայաստանի մաս պահելու և Հայաստանը կենսունակ պետություն դարձնելու համար: Կասեցնելով թուրք-ադրբեջանական կողմի՝ Հայաստանի վերաբերյալ փայփայած ծրագրերը, այդ

հաղթանակները ժամանակ և հնարավորություն ընձեռեցին Հայաստանին իր անկախությունն ամրապնդելու համար: Եթե չլինեին Ղարաբաղյան հաղթանակները ու եթե այժմ Ղարաբաղը հայաթափված լիներ՝ չէին լինի ո՛չ Հայաստանի անվտանգության հիմքում ընկած հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքը, ո՛չ էլ Իրանի հետ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող հարաբերությունները:

Այսպիսով, Ղարաբաղյան ազատամարտը ոչ միայն արցախահայության ազատագրության համար մղված պատերազմ էր, այլ դրանից էլ առավել՝ միակ հնարավորությունն էր Սյունիքը պաշտպանելու և Հայաստանը թուրք-ադրբեջանական գերիշխանությունից (իմա՝ կործանումից) փրկելու համար: Միմիայն շնորհիվ Ղարաբաղյան ազատամարտի ընթացքում տոնած փայլուն հաղթանակների հաջողվեց ամրապնդել և կայունացնել Հայաստանի ռազմական անվտանգությունը: Արցախի հայաթափության կամ Արցախում հայկական հզոր զինված ուժի չեզոքացման դեպքում՝ Հայաստանն անխուսափելիորեն հայտնվելու է թուրքական թելադրանքի տակ և չի վերապրելու ո՛չ հոգեպես, ո՛չ էլ տնտեսապես, նույնիսկ անկախ նրանից, թե Սյունիքը ձևականորեն կմնա Հայաստանի մաս թե մասամբ կամ ամբողջովին կենթարկվի բռնագրավման: Ի չիք է լինելու Հայաստանի՝ իբրև կենսունակ անկախ պետության կայացումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի ողնաշարը ջարդելու խնդիրը թուրքերին և ադրբեջանցիներին թվում էր հեշտ իրագործելի, «զինվորական պարահանդեսի» պես մի բան, քանի որ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններն անբնական էին և խոցելի, գրեթե ամենուր գծված լինելով այնպես, որ աշխարհագրական-դիրքային առավելությունը տրվեր Ադրբեջանին: Մասնավորաբար՝

ա. Խորհրդային տարիներին ամբողջությամբ հայաթափության ենթարկվելով՝ Նախիջևանը վերածվել էր Հայաստանի մարմինը ծվատող քաղցկեղային գոյակցության ու նաև հրաշալի ռազմահենադաշտի՝ պատերազմը մինչև Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտ ու քաղաքամայր Երևան հասցնելու համար:

բ. Արցախում ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ էին իշխող բարձունքներից շատերն ու ռազմական տեսակետից հույժ կարևոր անառիկ Շուշին:

գ. Արցախն ամբողջությամբ շրջապատված էր ու մեկուսացված և գրեթե ամբողջովին ենթակա հրետակոծության:

Այս անգամ Հայաստանին մահացու հարված հասցնելու խնդիրը կատարելու էր Ադրբեջանը, իսկ Թուրքիան մնալու էր վարագույրի հետևում՝ խուսափելով Ռուսաստանի հետ բախումից և անցանկալի միջազգային բարդություններից ու քննադատությունից: Սակայն, շնորհիվ Արցախում և Հայաստանում ժամանակին կազմակերպված պատշաճ ինքնապաշտպանության, այս ծրագրերը դատապարտվեցին լիակատար ձախողման:

Հայ-թուրք/ադրբեջանական հակամարտության արդի փուլը՝ Ղարաբաղյան հակամարտությունը ընթանում է միմյանց անանջատ կերպով շաղկապված երկու առանցքի շուրջը՝ պայքար հանուն արցախահայության ազատության և Սյունիքի պաշտպանունակության: Հայաստանը չի կարող դառնալ կենսունակ պետություն առանց Արցախում հայկական իշխանության ու զինված ուժերի մշտական և անկաշկանդ գոյության:

Ներկա ռազմավարական իրադրությունը

Արցախյան փայլուն հաղթանակներն ու տարածքային հայտնի առաջխաղացումները եկան ամրապնդելու Հայաստանի (ներառյալ Արցախի) ռազմական անվտանգությունը: Այս առումով հատկապես կարևոր են հետևյալ հանգամանքները.

ա) Հայաստանի և Արցախի միջև տարածքային անմիջական և անխափան հաղորդակցության գոյությունը.

բ) Ադրբեջանի և Նախիջևանի միջև այդպիսի հաղորդակցության կատարյալ բացակայությունը.

գ) հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող տարածքների՝ հարաբերական բարձունքում գտնվելը, որ հեշտացնում է և՛ պաշտպանական, և՛ հարձակողական գործողությունների հնարավորությունը.

դ) հայկական բանակի՝ հարաբերականորեն ավելի լավ կազմակերպվածությունն ու բարոյահոգեբանական վիճակը:

Այսպիսով, այսօրվա դրությամբ, Հայաստանն Ադրբեջանի նկատմամբ ունի ռազմավարական զգալի առավելություն, որը պետք է ամեն գնով պահպանել:

Սրանով հանդերձ՝ ներկայումս Հայաստանի ռազմավարական ընդհանուր դրությունը մնում է ծանր: Շարունակվում է թուրք-ադրբեջանական շրջափակումը: Ադրբեջանը վերազինում ու վարժեցնում է իր բանակը՝ նոր պատերազմ սկսելու և հաղթանակելու հույսով: Թուրքիան աջակցում է Ադրբեջանին բոլոր բնագավառներում՝ դիվանագիտական, քարոզչական, տնտեսական, հետախուզական և ռազմական :

Կանխատեսելի կարճաժամկետ հեռանկարում իրադրությունն, ամենայն հավանականությամբ, զարգանալու է հետևյալ իրողությունների շուրջ:

Ադրբեջանի և Թուրքիայի վրա չկա և չի սպասվում նշանակալի արտաքին (միջազգային) այնպիսի ճնշում, որը կպարտադրեր նրանց հրաժարվել կամ գոնե մեղմացնել Հայաստանի և Արցախի հանդեպ որդեգրած անզիջում դիրքորոշումը: Այդ երկու դաշնակից պետությունները հետևողականորեն շարունակելու են Հայաստանը քայքայել փորձող իրենց այսօրվա թշնամական քաղաքականությունը՝ շրջափակումները, քարոզչական պատերազմը, ռազմական լայնածավալ պատրաստությունները: Իսկ Թուրքիայի և Ադրբեջանի՝ ռազմավարական դաշնակիցներ լինելու փաստն արդեն որևէ մեկի մոտ կասկած չի առաջացնում: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի խոսքերով իսկ՝ «Թուրքիայի հետ մեր ռազմական հարաբերությունները արդեն վերածվել են ռազմավարական համագործակցության»[1]:

Այսպիսի պայմաններում հայկական կողմը, ինչպիսի արտաքին ճնշում էլ գործադրվի, չի դիմելու միակողմանի տարածքային զիջումների, որովհետև այդպիսի զիջումները, բարելավելով Ադրբեջանի (համապատասխանաբար՝ թուլացնելով Հայաստանի) ռազմավարական ընդհանուր վիճակը, միայն կմեծացնեն պատերազմի հավանականությունը:

Հայաստանը ֆիզիկապես չի կարող գոյատևել 29,000 մ² վրա՝ առանց Արցախյան պատնեշի:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող բանակցություններում հայկական կողմի համար անփոփոխ պետք է լինեն հետևյալ դիրքորոշումները.

1. Ազատագրված տարածքները, պատմականորեն հայկական հող լինելով հանդերձ, նաև անվտանգության երաշխիք են: Բնականաբար, տարածքային զիջումները՝ հօգուտ Ադրբեջանի, կտրուկ իջեցնելու են հայկական կողմի ռազմավարական անվտանգության մակարդակը:
2. Հետևաբար, եթե երբևէ հայկական կողմը զիջում կատարի հօգուտ Ադրբեջանի, ապա այդ զիջումը պետք է փոխհատուցվի, նախ և առաջ, անվտանգության բնագավառում, այնուհետև՝ նաև իրավական, բարոյական ու տնտեսական առումներով: Հայկական կողմը Ադրբեջանից պետք է ստանա ռազմավարական համարժեք և վերահսկելի զիջումներ, անվտանգության ամրակուռ երաշխիքներ:
3. Ղարաբաղյան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխավոր սկզբունքը պետք է լինի հետևյալ ձևակերպումը՝ հակամարտության վերջնական կարգավորումը չպետք է հանգեցնի Հայաստանի և Արցախի ռազմավարական անվտանգության մակարդակի իջեցմանը:

Այսուհանդերձ, միջազգային և տարածաշրջանային ներկա պայմաններում հայկական կողմի տարածքային որևէ զիջում արդարացված չի լինի: Չի կարելի մոռանալ, որ Ղարաբաղյան հակամարտությունը «երկհարկանի» է. «առաջին հարկում» այն ընթանում է հակամարտության անմիջական մասնակիցների (Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի, ինչպես նաև Թուրքիայի) միջև, իսկ «երկրորդ հարկում»՝ տարածաշրջանում մեծ կշիռ ունեցող տերությունների (հատկապես՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իրանի և դարձյալ

Թուրքիայի) միջև: «Առաջին հարկում» ընթացող հակամարտության մարումը չափազանց դժվար է լինելու, եթե «երկրորդ հարկում» հակամարտողները չհասնեն բոլորին ընդունելի մի ինչ-որ համաձայնության (modus vivendi)*: Սակայն արդի զարգացումների, հատկապես Չեչնիայում, Աֆղանստանում և Իրաքում ընթացող իրադարձությունների վերլուծությունը հանգեցնում է սթափեցնող եզրակացության, այն է՝ մեծ տերությունների բախումն Այսրկովկասում և Միջին Ասիայում երկարելու է՝ բարդացնելով տարածաշրջանի փխրուն կայունությունը: Ցավոք, սառը պատերազմի ավարտից հետո մեզ համար աշխարհը չի դարձել առավել անվտանգ վայր: Ընդհակառակը, Այսրկովկասն ու Միջին Ասիան այսօր այն տարածաշրջաններն են, որտեղ ընթանում է մի նոր՝ «մինի» սառը պատերազմ[2] ու, հետևաբար, ծիծաղելի կլինի, եթե վստահենք սեփական անվտանգության ապահովումը միմյանց միջև կատաղի պայքար մղող ուժերի համատեղ խոստացած երաշխիքներին[3]: Այս տարածաշրջանում և միջազգային այսպիսի իրադրության մեջ Հայաստանին խոստացվող անվտանգության երաշխիքները (համենայն դեպս այն տեսքով, որով մինչև վերջերս դրանք առաջարկվել են և բավականաչափ հայտնի են) կարող են թյուրիմացության մեջ գցել միամիտ գործիչներին միայն:*

ԵԱՀԿ Մինսկի խմբի ծրագրի կառուցվածքային թերությունները

1992 թ. գարնանից ի վեր Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (մինչև 1994 թ. դեկտեմբեր՝ Խորհրդակցության) շրջանակներում ընթանում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված բանակցություններ: Ցայսօր դրանք կենտրոնացել են միայն «սառցաբեկորի» անմիջականորեն երևացող վերին՝ փոքր մասի վրա, այն է՝ արդյո՞ք արցախահայությունն Ադրբեջանից անջատ ապրելու իրավունք ունի թե՞ ոչ: Հայաստանի երկարաժամկետ ռազմավարական անվտանգության խնդիրներն առհասարակ չեն արծարծվել: Այսպիսի մոտեցումն արտացոլում է Ղարաբաղյան հակամարտության վերա-

բերյալ այսպես կոչված «միջազգային հանրության» կամ, որ նույնն է՝ մեծ տերությունների պատկերացումները, չներկայացնելով ո՛չ հայկական կողմի, ո՛չ ադրբեջանական-թուրքական դաշնակիցների ռազմավարական դիրքորոշումներն ու հաշվարկները (այլ հարց է, որ հակամարտության այդպիսի նեղ սահմանումը վերջին հաշվով ձեռնտու է ադրբեջանա-թուրքական կողմին): Մինչդեռ ԵԱՀԿ շրջանակներում գործող միջազգային միջնորդները (հատկապես՝ ԱՄՆ-ն և Եվրոպական Միությունը) դիտում են Ղարաբաղյան հակամարտությունը միջազգային արդի զարգացումների և իրենց անմիջական շահերի տեսանկյունից, Հայաստանը, Ղարաբաղը, Ադրբեջանը և Թուրքիան ընկալում են նույն հակամարտությունը վերոհիշյալ պատմա-ռազմավարական ետնախորքի մեջ: Ինչպես ցույց է տալիս ստորև շարադրված աղյուսակը, ռազմավարական ընկալումների տարբերությունները միջազգային միջնորդների և հակամարտության անմիջական մասնակիցների միջև նշանակալից են:

ԱՂՅՈՒՍԱԿ Ա

Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցների (ՂՀԱՄ) և ԵԱՀԿ Մինսկի խմբի (ՄԽ) ռազմավարական մտածողության հիմունքային տարբերությունները[4]

1. Պատմա-ժամանակագրական մոտեցում

ՂՀԱՄ -- Հակամարտությունն ունի հարյուրամյա պատմություն և շարունակվելու է ՄԽ մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո.

ՄԽ -- Հակամարտությունն սկսվել է 1988 թ. և ՄԽ մշակած կարգավորման ծրագրի գործադրումից հետո անմիջապես ավարտվելու է.

2. Տարածքային մոտեցում

ՂՀԱՄ -- հակամարտությունը վերաբերում է ներկա Հայաստանի և Ադրբեջանի զբաղեցրած ամբողջ տարածությանը, ինչպես նաև Թուրքիայի արևելյան շրջաններին.

ՄԽ -- Հակամարտությունը վերաբերում է միայն Ղարաբաղին և նրա շուրջն ընկած տարածքներին.

3. Անվտանգության երաշխիքներ

Հայաստան և Ղարաբաղ -- պարտադիր են Ղարաբաղի, ինչպես նաև Հայաստանի, հատկապես՝ Սյունիքի համար.

Ադրբեջան և Թուրքիա -- պարտադիր են Նախիջևանի համար.

ՄԽ -- պարտադիր են Ղարաբաղի համար.

4. Ղարաբաղյան խաղաղապահ զինուժի ներկայության տևողության ցանկալիությունը

Հայաստան և Ղարաբաղ – այդ ներկայությունը կա՛մ առհասարակ անցանկալի է (անվստահելիության պատճառով), կա՛մ հնարավորին չափ երկար

Թուրքիա, Ադրբեջան և ՄԽ -- հնարավորին չափ կարճ

Ռազմավարական ընկալումների այս մեծ տարբերություններն ինքնըստինքյան սահմանազատում են հակամարտության չորս անմիջական մասնակիցներին մյուս շահագրգիռ կողմերից:

Թերևս, ամենասկզբում՝ 1992 թ. առաջին կեսին, բանակցությունների բևեռացումը սոսկ տվյալ պահի և տեղի վրա որոշ չափով արդարացված էր: Նախ՝ քննվելիք հարցերի քանակի կրճատումով մեծապես թեթևանում էր բանակցությունների օրակարգը: Երկրորդ՝ ԵԱՀԽ միջնորդության նախնական նպատակները բավական համեստ էին, այն է՝ նստեցնել հակամարտող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ, կնքել զինադադար և ընդունելի օրակարգ որոշել հետագա բանակցությունների համար: Այս տեխնիկական նպատակներին հասնելու համար անիմաստ էր հակամարտության արմատների մեջ խորանալը: Սակայն երկարաժամկետ առումով՝ նույն այդ նեղ հարցակարգը դարձավ ամենամեծ խոչընդոտը հակամարտության կարգավորման ճանապարհին:

1992 թ. մարտի 24-ին Հելսինկիում կայացած ԵԱՀԽ Խորհրդի արտակարգ նիստն[5] ընդունեց ինը կետանոց մի փաստաթուղթ, որով էլ սահմանվեցին բանակցությունների կանոնները: Նախատեսվում էր անցկացնել բանակցությունների երկու փուլ. առաջինը պետք է զբաղվեր զինադադարի կնքման, «գրավյալ» տարածքներից զորքերի դուրս բերման և հաղորդակցության ուղիների ապա-

շրջափակման հարցերով, երկրորդը կայանալու էր Մինսկում՝ որպես խորհրդաժողով, իր օրակարգում ունենալով ԼՂ-ի կարգավիճակի հարցը (այս խորհրդաժողովը տակավին չի գումարվել): Հակամարտության լիիրավ կողմեր ճանաչվեցին, փաստորեն, միայն Հայաստանն ու Ադրբեջանը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, որոնք մարտի 24-ի փաստաթղթում անվանված են «ԼՂ ընտրված ներկայացուցիչներ» պետք է մասնակցեին Մինսկի կոնֆերանսին իբրև «շահագրգիռ կողմ»: Նույն փաստաթղթով Բաքուն և Անկարան հաջողեցրին բանակցություններին մասնակից դարձնել նույնիսկ ղարաբաղցի ադրբեջանցիներին՝ «ԼՂ այլ ներկայացուցիչներ» անվան տակ[6] (թեև սրանց մասնակցությունը բանակցություններին երբեք լուրջ չի ընդունվել):

Եվ այսպես, 1992 թ. առաջին կեսին Հայաստանի անփորձ դիվանագիտությունը որպես բանակցությունների հիմք ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի հապշտապ ու կողմնակալ կերպով կազմված օրակարգը: Տասներկուամյա հեռավորությունից նայելով, կարելի է վստահ ասել, որ հատկապես մեծ սխալ էր մեր տված համաձայնությունը Մինսկի խմբի աշխատանքային կանոնադրության երկու կետերին. մի կողմից՝ Թուրքիային որպես միջնորդ ընդունելը, մյուս կողմից՝ ԼՂՀ-ն հակամարտության իրական կողմ չճանաչելը: Այդ ժամանակից ի վեր մեզ պարտադրվեց մի խաղ, որի կանոնները մենք չէինք սահմանել:

Այսպիսով, ԵԱՀԿ շրջանակներում վարվող բանակցություններն սկզբից մինչև այսօր ունեցել են երեք հիմունքային փունկցիոնալ թերություն.

1. անտեսվել է Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցների (ՂՀԱՄ) ռազմավարական մտածողությունը, որը, ի թիվս այլ տարրերի, ներառում է նաև պատմա-հոգեբանական խորը շերտեր.

2. Հակամարտության մասնակիցներից մեկը՝ Հայաստանն, անընդունակ է գտնվել իր ռազմավարական մտավախությունները պարզ և բաց ներկայացնելու ու, թերևս, նաև ամբողջովին գիտակցելու դրանք.

3. Թուրքիան՝ Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցներից մյուսը, ոչ միայն չի ճանաչվել որպես այդպիսին,

այլև ներգրավվել է միջնորդների խմբի մեջ:

1997 թ. հոկտեմբերին Ադրբեջանն ու Հայաստանը ընդունեցին ԵԱՀԿ միջնորդների առաջարկած հակամարտության կարգավորման ծրագրի հերթական տարբերակը, մինչդեռ Ղարաբաղը կտրականապես մերժեց այն: Այդ ծրագիրը նախատեսում էր երկու փուլ. առաջինի ընթացքում՝ հայկական զորքերի դուրսբերում «գրավյալ» վեց շրջաններից, ԵԱՀԿ խաղաղապահ զինուժի տեղաբաշխում հայկական և ադրբեջանական զորքերի միջև և հաղորդակցության ուղիների ապաշրջափակում. երկրորդ փուլում բանակցություններ են վարվելու Ղարաբաղի կարգավիճակի մասին և, միաժամանակ՝ Լաչինն ու Շուշին ադրբեջանական իշխանության տակ դնելու հարցերը[7]:

Եթե այնուամենայնիվ ԵԱՀԿ Ղարաբաղյան ծրագիրը կյանքի կոչվի, ապա Ղարաբաղի անվտանգությունը մեծապես կախված է լինելու ԵԱՀԿ Ղարաբաղյան խաղաղապահ զինուժի (այսուհետև՝ պայմանականորեն անվանում ենք ՂԽԶ) հստակ և հաջող գործունեությունից: ՂԽԶ-ի անհաջողությունը կամ տարածաշրջանից վաղաժամ հեռանալը նշանակելու են հայկական կողմի պարտություն և ադրբեջանական կողմի հաղթանակ՝ Հայաստանի անկախությանն սպառնող վերը նկարագրված հետևանքներով:

Ստորև նշում ենք ՂԽԶ-ի ծրագրային-կառուցվածքային բնույթի հիմնական թերությունները: Մեջբերվող տեղեկությունները մասամբ հայտնի են տողերիս հեղինակին 1993-1994 թթ. ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններին բերած անձնական մասնակցությունից, մասամբ էլ՝ հետագայում հրապարակված նյութերից, ինչպես նաև հայ ու օտարազգի դիվանագետների տրամադրած թարմ տեղեկություններից:

Ա. Տարածաշրջանում մնալու ժամկետի կարճատևությունը

Ինչպես վերը շեշտել ենք, 20-րդ դարի ողջ ընթացքում հայ-թուրք/ադրբեջանական հարաբերությունները ունեցել են զարգացման միևնույն աննրդաշնակ միտումը, որն անկախ մեր ցանկությունից դեռ երկար է պահպանվելու: Այժմ որևէ հիմք չունենք են-

թադրելու, թե մոտ ապագայում միջազգային հարաբերությունները թևակոխելու են մի անզուգական խաղաղության դարաշրջան, աշխարհի ժողովուրդներն ու պետություններն ապրելու են աստվածաշնչյան մարգարեություններով գուշակված կատարյալ փոխըմբռնման պայմաններում և Հայաստանին սպառնող թուրք-ադրբեջանական վտանգը ի չիք է լինելու: Հետևաբար՝ ՂԽԶ-ի ամենամեծ թերությունն այն է, որ այն նպատակ ունի մնալու Արցախի շուրջը մի շատ կարճ ժամանակահատված, մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ ընդամենը երկու տարի: Անգամ եթե ընդունենք, որ ՂԽԶ-ն կմնա տարածաշրջանում տաս կամ նույնիսկ քսան տարի (որ գրեթե անհնար է և, ամենակարևորը՝ որևէ պայմանավորվածությամբ երաշխավորված չէ) և հաջողությամբ կկատարի իր առջև դրված պարտականությունները, միևնույն է՝ ի վերջո այդ զինուժը հեռանալու է, թողնելով Հայաստանն ու ԼՂՀ-ն ռազմավարական տեսակետից անհամեմատ ավելի խոցելի վիճակում, քան մինչև ազատագրված տարածքներից հայկական ուժերի դուրս բերումը:

ՂԽԶ-ի գործունեության կարճատևությունը ամրագրված է դեռևս 1992 թ. հուլիսի 9-ին և 10-ին Հելսինկիում անցկացված ԵԱՀԽ գագաթաժողովի ընդունած՝ «Փոփոխության մարտահրավերները» գլխավոր փաստաթղթում: ԵԱՀԿ խաղաղապահության գլխավոր դրույթներն սահմանված են այդ փաստաթղթի Գ գլխում, որի 25-րդ կետը հստակ նշում է, որ «չպետք է կարծել, թե [ԵԱՀԽ] խաղաղապահպան գործողությունները փոխարինելու են բանակցությունների միջոցով հասանելիք [հակամարտությունների] կարգավորումը, ուստի պետք է պարզ լինի, որ այդ գործողությունները կարճաժամկետ են լինելու»[8]*: ՂԽԶ-ի առաքելությունը մշակող ԵԱՀԿ Բարձր մակարդակի ծրագրավորող խմբի (ԲՄԾԽ)*[9] *սպաները նույնպես հատուկ նկատում են, որ «ևս մեկ անգամ պետք է ընդգծել, որ [Ղարաբաղյան] գործողությունը կտևի միայն հաստատված ժամանակահատվածի մեջ և կդադարեցվի հնարավոր ամենավաղ պահին»* ("it should be emphasized once more that the operation will only last for a set period of time and will be terminated at the earliest possible date")*:*[10]

Հաջորդ արգելքը, որն ստիպելու է շուտով դուրս բերել ՂԽԶ-ն տարածաշրջանից՝ ֆինանսական խնդիրն է: Մինչդեռ ԵԱՀԿ տա-

րեկան բյուջեն շուրջ 30 միլիոն ամերիկյան դոլար է (ընդ որում՝ դա էլ դժվարությամբ է հավաքվում անդամ-պետություններից), ԲՄԾԽ-ի հաշվարկների համաձայն՝ Ղարաբաղյան խաղաղապահ գործողությունը կարող է տարեկան արժենալ տասնապատիկ ավելին, այսինքն՝ շուրջ 300 միլիոն դոլար[11]: Շատ մեծ հարց է, թե արդյո՞ք այս ահռելի գումարը կհաջողվի հայթայթել թեկուզ մեկ կամ երկու տարի շարունակ, էլ չասած տաս կամ քսան տարվա մասին: Ինչպես ցույց է տալիս նաև բոսնիական ԿԶ-ի փորձը, խաղաղապահ գործողությունների հետագա ֆինանսավորումը միշտ բախվում է շատ լուրջ արգելքների:

Կա ևս մեկ հանգամանք, որ խափանելու է ՂԽԶ-ի տարածաշրջանում երկար մնալը: Աղդամի, Քելբաջարի, Ղուբաթլիի, Զանգելանի, Ֆիզուլիի և Ջեբրայիլի շրջանների հանձնումով՝ ռազմաբեմի դիրքային և իրավիճակային առավելությունն ամբողջովին անցնելու է ադրբեջանական բանակի կողմը, որի պատրաստվածությունը, ի դեպ, զգալիորեն աճել է 1991-1994 թթ. համեմատությամբ: Ռազմաբեմում ունենալով այդ մեծ առավելությունը, Ադրբեջանը շարունակելու է պահանջել Լաչինը և Շուշին, ինչպես և, հորը հետևելով, շիտակ հայտարարում է նաև կրտսեր Ալիևը: Բնական է, որ հայկական կողմը չի բավարարելու Բաքվի այդ ցանկությունը: Ուստի Ադրբեջանը ձգտելու է հասնել իր այդ նպատակին կամ ՂԽԶ-ի օժանդակությամբ կամ, եթե դա չհաջողվի, ՂԽԶ-ն տարածաշրջանից արագ հեռացնելու և Ղարաբաղի (ու հնարավոր է՝ նաև Հայաստանի) դեմ ռազմական ագրեսիա իրականացնելու միջոցով: Ռազմական գործողությունները վերսկսելու պատճառաբանություններ Ադրբեջանը միշտ էլ կգտնի՝ թեկուզ հայկական զորքերի մտացածին «հարձակումը» խափանելու կամ ուղղակի Լաչինն ու Շուշին «ազատագրելու» դրոշի տակ:

Այսպիսով՝ ՂԽԶ-ն լքելու է տարածաշրջանը, հակամարտությանը որևէ արմատական լուծում չտալով ու թողնելով այն իր բուռն զարգացման շրջանում: Սա է երկարամյա միջազգային բանակցությունների որևէ շոշափելի արդյունքի չհասնելու գլխավոր պատճառը՝ երկարակեցության բոլոր տվյալներով օժտված հայ-թուրք/ադրբեջանական հակամարտությունը փորձում են լուծել մի շատ սահմանափակ ժամանակահատվածի մեջ: Դա նույնն է, ինչ ծա-

նը թոքաբորբով հիվանդին որպես միակ բուժում ցավազրկիչ նե-րարկեն. շատ շուտով այդ դեղամիջոցի ազդեցությունը կանցնի, իսկ հիվանդությունն ավելի կխորանա:

Տարածաշրջանում ՂԽԶ-ի մնալու անխուսափելի կարճա-տևությունը իմաստազրկում է ամբողջ գործողության անհրաժեշ-տությունը (խաղաղության կայունության շահերից դատելով), մինչդեռ ադրբեջանցիների համար ստեղծվում են հակամարտու-թյունը ռազմական ճանապարհով լուծելու առավել բարենպաստ հնարավորություններ:

Բ. Ռազմական խաղաղապահության գործում ԵԱՀԿ անփորձառությունը

Իրականանալու դեպքում՝ ՂԽԶ-ի կազմավորումը, տեղակա-յումը և գործունեությունը լինելու են ԵԱՀԿ առաջին նմանատիպ ձեռնարկը: Այդ կազմակերպությունը մինչև այժմ մասնագիտացել է այսպես կոչված կանխարգելիչ (պրեվենտիվ) դիվանագիտության մեջ: Զինված խաղաղապահությունն ավանդաբար եղել է ՄԱԿ-ի, իսկ վերջերս նաև ՆԱՏՕ-ի իրավասությունների և գործողություն-ների շրջանակներում: Հետևաբար, որպես առաջին փորձ, գործողու-թյունն անկասկած ունենալու է լուրջ թերություններ:

Գ. ՂԽԶ-ի փոքրաթիվությունն ու մանդատով որոշված կրավորականությունը

1995 թ. հուլիսի 14-ին ԵԱՀԿ ԲՄԾԽ-ն ներկայացրեց ԵԱՀԿ անդամ 54 պետություններին իր ծրագրած գործողության չորս տարբերակները.

Ա տարբերակով *տարածաշրջան են գործուղվելու 240 դիտորդ և 3,560 հոգանոց խաղաղապահ զինուժ, բաղկացած երեք գումար-տակից և երեք առանձին վաշտից (որոնցից մեկը պահվելու է ռե-զերվում).*

Բ տարբերակով՝ *200 դիտորդ և 4,200 հոգանոց խաղաղապահ*

զինուժ, բաղկացած հինգ գումարտակից.

Գ տարբերակով՝ *240 դիտորդ և 1,260 հոգանոց խաղաղապահ զինուժ. և*

Դ տարբերակով՝ *ընդամենը 400 հոգանոց զինված դիտորդական խումբ և նրանց օժանդակող 375 հոգանոց անձնակազմ:*

Այդ ժամանակ առավել հավանական էր Բ տարբերակի գործադրումը, այսինքն՝ ՂԽԶ-ն լինելու էր մոտավորապես 4,200-անոց մի բազմազգ զինուժ[12]: Այդ զինվորների առնվազն 30-ից 50 տոկոսը տրամադրելու էր Ռուսաստանը, մնացածը՝ զանազան այլ երկրներ: ՂԽԶ-ի անձնակազմի կազմավորմանը կամ տեխնիկայի ու ֆինանսների ապահովմանը ցանկություն էին հայտնել մասնակցել մոտ 18 պետություն[13]: Հավանական էր Բելառուսի, Չեխիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Կանադայի, Ուկրաինայի զորամասերի ներգրավումը: Ամերիկացիները տրամադրելու էին ֆինանսական, նյութական ու թիկունքային օժանդակություն: Նկատենք, որ այդ 4,200 զինվորներին նախատեսված էր ցրել Արցախի՝ շուրջ 400 կիլոմետրանոց բարդ լեռնային ռելիեֆ ունեցող սահմանների երկայնքով: ՂԽԶ-ի տարանջատվածությունը և ցանցառ տեղաբաշխումն իսկ նշանակում է, որ այն լինելու էր խորհրդանշական, այլ ո՛չ իրական ռազմական ուժ: Թեև, տեսականորեն, ՂԽԶ-ն կարող է անհրաժեշտության դեպքում ստանալ լրամիավորումներ, սակայն կարող է նաև այնպես պատահել, որ այդ լրամիավորումները «մի փոքր» ուշանան՝ տեխնիկական կամ քաղաքական պատճառներով (ինչպես Սումգայիթում 1988 թ. և Բաքվում 1990 թ.): Ավելին՝ վերը հիշատակված Հելսինկիի 1992 թ. «Փոփոխության մարտահրավերներ» փաստաթղթի Գ գլխի 22-րդ կետը պարզ հայտարարում է, որ ԵԱՀԿ խաղաղապահությունը չի ներառելու հարկադրիչ գործողություններ» ("CSCE peacekeeping operations will not entail enforcement action.")[14]*: Այսինքն՝ Ադրբեջանի հնարավոր հարձակման դեպքում՝ ՂԽԶ-ի պարտականությունների մեջ չի մտնելու զինված դիմադրություն ցույց տալը, այլ այդ խաղաղապահները, ամենայն հավանականությամբ, հրաման կստանան թաքնվել իրենց խրամատների մեջ, այնպես, ինչպես դա արեցին 1982 թ. ՄԱԿ-ի զորքերը Լիբանանում՝ Իսրայելի ներխուժման ժամանակ:*

Դ. ԵԱՀԿ Ղարաբաղյան ուժերի հրամանատարության ոչ-հստակ և ապակենտրոնացված կառույցը

Սոմալիում միջազգային 30,000-անոց բազմազգ զինուժը կաթվածահար էր եղել ՄԱԿ-ի կառույցների դանդաղաշարժության և անվճռականության պատճառով, թեև այդ կառույցները ունեին խաղաղապահության և խաղաղարարության տասնամյակների փորձ: Այսպես՝ տարբեր պետությունների զորքերը հաճախ գործում էին առանց պատշաճ համագործակցության: Երբ մի դեպքում ամերիկյան զորքերի հրամանատար գեներալ Թ. Մոնթգոմերին իտալական զորքերի հրամանատարից խնդրել էր տանկային աջակցություն ցույց տալ, վերջինս պարտավորված էր եղել նախ կապվելու Հռոմի հետ և այնտեղից թույլտվություն ստանալու[15]:

Սոմալիի սխալները մասամբ հաշվի առնվեցին Բոսնիայում, ապա և Կոսովոյում, որտեղ միջազգային խաղաղապահ ուժերը դրվեցին ոչ թե ՄԱԿ-ի, այլ աշխարհում ամենահզոր ռազմաքաղաքական կազմակերպության՝ ՆԱՏՕ-ի կենտրոնացված ընդհանուր հրամանատարության տակ[16]: Բոսնիական, ինչպես նաև դրան հետևած Կոսովոյի խաղաղարարները գործում են ՆԱՏՕ-ի միացյալ շտաբի հրամանի ներքո, անհրաժեշտության դեպքում վճռական գործողություններ իրականացնելու որոշումներն ընդունվում են ոչ թե քաղաքական, այլ զինվորական մակարդակի վրա, այսինքն՝ շատ արագ: Բացի այդ՝ ՆԱՏՕ-ի գլխավոր անդամ-պետությունների ռազմավարական նպատակները Բոսնիայում և Կոսովոյում հիմնականում համընկնում են: Այս ամենով հանդերձ, Կոսովոյում տեղաբաշխված 40-50-հազարանոց ընտիր զինուժը չկարողացավ (կամ չցանկացավ) կանխել տասնյակ հազարավոր սերբերի էթնիկական զտումը:

Լրիվ հակառակ բոսնիական և կոսովական խաղարարար զինուժերի՝ ՂԽԶ-ի ընդհանուր հրամանատարը գործելու է ո՛չ թե ՆԱՏՕ-ի կամ Ռուսաստանի Գլխավոր շտաբի հրամանների ներքո (ռազմական տեսակետից՝ այդ երկու լուծումներից որևէ մեկը կլիներ ամենանպատակահարմարը), ո՛չ էլ նույնիսկ ՄԱԿ-ի բավական փորձառու զինվորական կառույցի շրջանակներում, այլ ենթարկվելու է ԵԱՀԿ բարձրագույն մարմինների որոշումներին: Շատ աղոտ է

մնում այն չափազանց կարևոր հարցը, թե ինչպես են տարանջատվելու իրավասությունները ԵԱՀԿ Ղարաբաղյան զինուժի գլխավոր հրամանատարի, դաշտային հրամանատարների և ԵԱՀԿ մարմինների միջև: 1992 թ. Հելսինկիի գագաթաժողովի առայժմ չբեկանված որոշման համաձայն՝ ԵԱՀԿ խաղաղարար ուժի ընդհանուր օպերատիվ հրամանատարությունը իրականացնելու է ԵԱՀԿ Նախագահի Պաշտոնակատարը (Chairman-in-Office), այսինքն՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ փոփոխվող ԵԱՀԿ անդամ պետություններից մեկի արտգործնախարարը: Նրան օժանդակելու է հատուկ ստեղծված մի խումբ, որը բաղկացած է լինելու այն պետությունների ներկայացուցիչներից, որոնք օժանդակել են ՂԽԶ-ի կազմավորմանը զինվորական անձնակազմով կամ այլ կերպ: Տարածաշրջանում գտնվող առաքելության ղեկավարը ենթարկվելու է ԵԱՀԿ Նախագահի Պաշտոնակատարին[17]:

Ավելի անհաջող և վտանգավոր սցենար դժվար է պատկերացնել: Կոնսենսուսի սկզբունքով աշխատելու պատճառով՝ ԵԱՀԿ-ն ամենաշատախոս ու, հետևաբար, ամենադանդաղաշարժ միջպետական կազմակերպությունն է (սա դիվանագիտական շրջանակներում համընդհանուր և անժխտելի կարծիք է): ԵԱՀԿ-ում որոշումներ ընդունելու կարգը չափազանց բարդացված է՝ անդամ-պետություններից յուրաքանչյուրի վետոյի իրավունք ունենալու պատճառով: Եթե այս փաստը բաղդատենք այն իրողության հետ, որ ԵԱՀԿ մարմիններում շատ հաճախ առաջանում են լուրջ տարաձայնություններ հատկապես Ռուսաստանի, Թուրքիայի և Միացյալ Նահանգների միջև, որոնք այսրկովկասյան թատերաբեմի գլխավոր երրորդ դերակատարներից են՝ ապա պարզ կլինի, թե ինչպիսի դանդաղաշարժ և կաշկանդված զինուժ է լինելու ՂԽԶ-ն: Անգամ ԵԱՀԿ ԲՄԾԽ-ի սպաներն են զինվորական ուղղամտությամբ նշում, որ ՂԽԶ-ի հրամանատարության կառուցվածքի հարցը մնում է չլուծված (ցավոք՝ նրանք ո՛չ մանրամասնում են իրենց մտահոգությունները ու ո՛չ էլ լուծումներ առաջարկում)[18]:

Պետք է նաև նշել, որ բազմազգ զինվորական որևէ դաշնության անդամները հաճախ ունենում են սեփական ուրույն «թաքնված» ծրագրեր, որոնք միշտ չէ, որ համընկնում են դաշնության հայտարարված ընդհանուր նպատակների հետ: Զմոռանանք, որ

քառասնամյա Սառը պատերազմի հակառակորդները նախկինում՝ 1941-1945 թվականներին, դաշնակիցներ էին: Եթե Սոմալիում տեղի ունեցած վերոհիշյալ միջադեպը հնարավոր էր ամերիկացիների և իտալացիների՝ ՆԱՏՕ-ի անդամ այդ երկու դաշնակիցների միջև, ապա նմանատիպ միջադեպեր շատ ավելի հավանական են ՂԽԶ անդամ՝ խայտաբղետ և հակամետ քաղաքական ծրագրեր ունեցող պետությունների միջև: Իրաքում ծավալվող դեպքերը, մասնավորապես, Իսպանիայի, Գոնդուրասի, Սալվադորի և Դոմինիկյան հանրապետության խաղաղարարների վաղաժամ դուրսբերումը գալիս են հաստատելու այս հավանականության լրջությունը[19]:

Ե. Բազմազգ զինուժի «բնածին թերությունները»

Որևէ միջազգային բազմազգ զինուժ ունի զուտ զինվորական բնույթի «բնածին թերություններ», ինչպիսիք են՝ զորամիավորումների միջև եղած լեզվական պատնեշը, ռազմական կարողությունների և ունակությունների, մեթոդաբանության և ոճի տարբերությունները, որոնք հաճախ անցանկալի հետևանքների են հանգեցնում: Սոմալիում ամերիկյան զորքերը դրսևորում էին ագրեսիվություն, իսկ եգիպտացիները՝ կրավորականություն, վերջիններս նաև հաջողությամբ կաշառվում էին տեղացիների կողմից: Անդամ կանադացիները, որոնք լավագույն «կապույտ բերետներ» են համարվում, իրենց դրսևորեցին ոչ փայլուն կերպով. նրանց Դեսանտային գնդի (Canadian Airborn Regiment) *զինվորներն ավելի հետաքրքրված էին կռվելու, քան խաղաղապահ առաքելություն իրականացնելու մեջ, իսկ նրանցից ոմանք նույնիսկ խոշտանգումներ և սպանություններ կատարեցին[20]: Սոմալեցիների խոշտանգումներ և բռնաբարություններ կատարել էին նաև բելգիացի և իտալացի սպաներն ու զինվորները (իտալացիները մեղադրվում են նաև զենքի վաճառքով զբաղվելու մեջ)[21]: Այնպես որ՝ խաղաղապահ զորքը «մեղր ու կարագ» չէ, այն ունի իր ցցուն բացասական կողմերը, և առանց ծայրահեղ անհրաժեշտության առհասարակ չարժե օտար զինվորներ հրավիրել հայրենի հողի վրա:*

Հիմնականում կառուցվածքային խնդիրներն էին պատճառը, որ 1992-1993 թթ. ՄԱԿ-ի դրոշի տակ Սոմալիում անցկացված խա-

զաղապահ խոշոր գործողությունը (UNICOM I և II) *անփառունակ վախճան ունեցավ: Եվ սա այն դեպքում, երբ այդ գործողության հաջողության հետ էր իր միջազգային հեղինակության աճը կապել՝ ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհիս միակ գերտերություն մնացած Միացյալ Նահանգները, շռայլորեն տրամադրելով իր ամենաընտիր զորամասերը ու գրեթե անսպառ ռեսուրսները: Միջազգային խաղաղապահության բազմաթիվ ձախողումներն ու տապալումներն արդեն առանձին ուսումնասիրությունների նյութ են դարձել*[22]*:*

ՂԽԶ-ի վերը նշված ծրագրային-կառուցվածքային թերությունները շատ ավելին են, քան UNICOM-ի ունեցածները: Մասնավորապես, դրանք բավարար են, որպեսզի ՂԽԶ-ն գործնականում չկարողանա հակազդել ադրբեջանական բանակի շատ հավանական սադրիչ գործողություններին կամ անսպասելի հարձակմանը:

Այսպիսով, ԵԱՀԿ Մինսկի խմբի ծրագրի ծրագրային-կառուցվածքային թերությունները և վճռորոշ «մանրուքները» լուրջ քննադատության չեն դիմանում[23]*: Իսկ 2001 թ. նոյեմբերին ֆրանսիացի և ամերիկացի համանախագահները հայտարարեցին, որ խաղաղարար ուժերի տեղակայումն անգամ որոշված չէ, և իրենք տեխնիկական բնույթի այդ հարցերի մեջ դեռևս շատ չեն խորացել, այլ աշխատում են քաղաքական մեծ պայմանագրի վրա: Այնինչ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար «տեխնիկական» համարվող նմանատիպ հարցերն ունեն ճիշտ նույն նշանակությունը, ինչ, ասենք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի հարցը*[24]*: Միաժամանակ՝ չի կարելի վստահել Թուրքիայի և Ադրբեջանի բարի խոստումներին, մանավանդ, որ այդ երկու դաշնակիցները որևէ լուրջ զիջում հայկական կողմին չեն էլ առաջարկում:*

Ժամանակն է ճիշտ ու հստակ գնահատել իրականությունը. Հայաստանն ակամա ներքաշված է իր բուն գոյությանն սպառնացող երկարատև հակամարտության մեջ: Մենք, ուզենք, թե չուզենք, դեռ երկար ենք մնալու արտաքին այն իրադրության մեջ, որում այժմ ենք: Կանխատեսելի ապագայում ո՛չ Թուրքիայի ու Ադրբեջանի թշնամական քաղաքականությունն է փոխվելու, ո՛չ էլ հայկական զորքերն են նահանջելու իրենց այսօրվա դիրքերից:

Հե՛նց այսպիսի անբարենպաստ արտաքին պայմաններում է, որ Հայաստանը պետք է տարիներ, գուցե և տասնամյակներ շարունակ ապրի՛, զարգանա՛ և բարգավաճի՛: Այլ ելք մեզ չի տրված:

Սակայն 1991 թ. ի վեր Հայաստանի իշխանություններն բազմիցս են ժողովրդին հավաստիացրել, թե Ղարաբաղյան հակամարտությունն ուր որ է ստանալու է մի ընդունելի վերջնական փոխզիջումային լուծում: Եթե սա դիվանագիտական խաղ է, ապա այն չափազանց պարզունակ է, այն կարող է բթացնել ժողովրդի և բանակի զգոնությունը: Այս առումով տեղին է համեմատել, թե, օրինակ, ինչ էին ասում հակամարտության կարգավորման հեռանկարների մասին նույն օրերին (2002 թ. հուլիսին) Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները: Պատասխանելով մի մտահոգված քաղաքացու այն հարցին, թե նախարարն ինչպես է պատկերացնում հայոց բանակի համալրման խնդիրը մի քանի տարի անց, երբ Հայաստանում արդեն ուժգնորեն զգացնել կտա ծնելիության ավելի քան կրկնապատիկ նվազումը (հիշեցնենք, որ 1990-ին ծնվել է 79885 երեխա, 1999-ին՝ 36502, 2000-ին՝ 34276, 2001-ին՝ 32065, 2002-ին՝ 32380)[25]*, պրն. Ս. Սարգսյանն ասում է. «Հայոց բանակի ապագան ես պատկերացնում եմ շատ հստակ. այն կլինի բնականոն զարգացող, մարտունակ և ոչ մեծ թվաքանակ ունեցող: Այդ խնդիրներին մենք կսկսենք առնչվել 2012-15 թթ. ընթացքում, բայց ես հույս ունեմ, որ այն ժամանակ արդեն մեր խնդիրները լուծված կլինեն, և մեր պետությունն ու ժողովուրդը պարտադրված չեն լինի ունենալ մեծ բանակ ու ծախսել այդքան մեծ միջոցներ»*[26]*: Փոքր-ինչ շեղվելով՝ նկատենք, որ Հայաստանի համար «ոչ մեծաթիվ» բանակ ունենալու այս գաղափարն, ըստ ամենայնի, բոլորովին վերջերս է առաջացել. այդ են վկայում դրանից ընդամենը մեկ տարի առաջ՝ 2001 թ. սեպտեմբերին ՀՀ պաշտպանության նախարարի նշած հակառակ տրամաբանությունն հուշող փաստերը. «Մենք հիմա պաշտպանում ենք մի այնպիսի ճակատ, որի համար, ըստ ռազմարվեստի օրենքների, անհրաժեշտ է 200-հազարանոց բանակ: Այնինչ խնդիրը լուծում ենք անհամեմատ քիչ անձնակազմով՝ չխոսելով արդեն այն մասին, որ բանակը միայն սահմանում չէ կենտրոնացված»*[27]*:*

Այժմ մեջբերենք Ադրբեջանի պաշտպանության նախարարի՝ 2002 թ. հուլիսի 19-ին արած հայտարարությունը (Ճապոնիայի նորանշանակ դեսպանի հետ հանդիպման ժամանակ), որը լայնորեն տարածեց ադրբեջանական մամուլը. «Մենք նույնիսկ մեկ մետր չենք տա Հայաստանին մեր տարածքից: Մենք պետք է վերականգնենք մեր պետության տարածքային ամբողջականությունը: Մեր թշնամին, որ բռնի ուժով գավթել է մեր հողերը, չի ցանկանում կամավորապես լքել մեր տարածքը: Եթե այդպես շարունակվի, մենք ունենք հզոր զինված ուժեր, որոնք կազատագրեն մեր տարածքը»[28]: Նմանատիպ հայտարարություններ Ադրբեջանում հնչում են ամեն օր, ընդ որում՝ և՛ պաշտոնական, և՛ ընդդիմության շուրթերից: Ընդհանուր տպավորությունն այն է, որ Ադրբեջանի իշխանություններն անընդհատ իրենց ժողովրդին նախապատրաստում են նոր ու դաժան պատերազմի: Այսպիսի պայմաններում Հայաստանի իշխանությունները պետք է իրատեսորեն գնահատեն մեզ պարտադրված և երկարելու միտումներ ունեցող այս դիմակայությունը, դադարեցնեն խոսակցությունները զիջումների մասին և ժողովրդին արթուն պահեն՝ պարզ ներկայացնելով Ադրբեջանի սանձազերծելիք նոր պատերազմի հավանականության լրջությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] **Michael Lelyveld**, “Azerbaijan: Turkey Pursues Ambiguous Ties,” *RFE/RL* August 28, 2001. Տե՛ս նաև ռազմական բնագավառում թուրք-ադրբեջանական լայնածավալ հարաբերությունները լուսաբանող հետևյալ հաղորդագրություններն ու վերլուծությունները՝ “Turkey Considering Military Alliance with Azerbaijan: Azeri Official,” *Agence France Presse*, February 11, 1999; “Interview-Azeris Want US, Turkish Bases-Aliyev Aide,” *Reuters*, January 25, 1999; **Elmira Akhundova**, “Defense Minister Abiyev: "We Are Keen on Privileged Partnership with NATO," *Azernews/Azerkhabar* 2/17/99-2/23/99; “Defense Chief Wants Azerbaijan, Turkey to Stand up to Armenia,” *Agence France Presse*, March 16, 2001; **Nair Aliev and Mamed Bagirov**, “Azerbaijan Flexes Muscles Over Karabakh” *IWPR's Caucasus Reporting*

Service, ¹ 97, September 7, 2001; **Gulnara Ismailova**, “Behind The "Turkish Stars": The Depth of Turkish-Azerbaijani Military Cooperation,” *The Analyst*, 29 August, 2001 (posted on www.groong.com on Oct 1, 2001); “Sarkissian Responds to Turkey's Promise of Military Aid To Baku,” *Armenpress*, October 2, 2001.

[2] Թեև միջազգային իրադարձությունները սկսել են զարգանալ հաճախ անսպասելի ուղղություններով և աննախընթաց արագությամբ, բազմաթիվ մեկնաբաններ արդեն նկատել են, որ Ռուսաստանի և ԱՄՆ-ի՝ վարագույրների հետևում ընթացող աշխարհաքաղաքական մենամարտերը տակավին չեն դադարել նույնիսկ Աֆղանստանում թալիբների դեմ համատեղ հանդես գալուց հետո (**James Ridgeway**, “The New Cold War,” *Yahoo! News Story*, December 14, 2001, 04:48 PM EST. Âÿ÷åñëàâ Í èêî í îâ. “ Ì û – ñ ñèëà-ì è öèâèëèçàöèè”, *Ãðàæäàíèí* (åæåì åñÿ÷íàÿ ï îëèòè÷åñêàÿ ãàçåòà), ¹ 1, äåêàáðü 2001, ñ. 4): Նույն եզրակացությանը հանգող Իրանի ռադիոյի տեսությունը տե՛ս «Մոսկվա-Վաշինգտոն ջերմ հարաբերությունները խոսքից այն կողմ չեն անցնի», *Azg*, 21 դեկտեմբերի 2001 թ.): Աֆղանստանում պատերազմական գործողությունների ավարտից հետո ԱՄՆ վերսկսեց ինչպես Չեչնիայի հարցում Մոսկվայի քննադատությունը, այնպես էլ չեչենների հետ կապերը՝ դրդելով Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես գալ հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասվում է՝ «Հարցն այն է, թե արդյո՞ք ամերիկյան կողմը դեռևս չղթայված է հին մտապատճեններով և շարունակում է ահաբեկիչներին բաժանել «լավերի» և «վատերի». - **Ron Popeski**, “Russia Chides U.S. Over Chechen Contacts,” *Reuters World-News*, January 24, 2002, 4:48 PM ET: ԱՄՆ-ում շատ ազդեցիկ ուժեր շարունակում են կասկածանքով վերաբերվել Ռուսաստանի հետ ավելի սերտ ռազմավարական համագործակցությանը, մասնավորապես Ռուսաստան-ՆԱՏՕ որոշումներ ընդունող նոր՝ 1+19 առաջարկված ֆորմատին՝ պնդելով, որ այդ դեպքում ՆԱՏՕ-ն կնմանվի ԵԱՀԿ-ի պես դանդաղաշարժ ու բյուրոկրատական կազմակերպության (տե՛ս, օրինակ, **Helle Dale**, “Yesterday's Alliance?” *The Washington Times*, January 30, 2002): Տե՛ս նաև **Uri Avnery**, “Oil, Sharon and the Axis of Evil: The Great Game,” *Counter Punch* (www.counterpunch.com), Feb. 11, 2002 (posted in *Turkistan Newsletter*, 12 Feb. 2002 (լույս է տեսել նաև իսրայելական *Ma'ariv* օրաթերթում, Feb. 08, 2002): Գ. Տեր-Հարությունյանցը կարծում է, որ Ռուսաստանն սկսել է նորից հանդես գալ իր աշխարհաքաղաքական շահերի ու դիրքերի պաշտպանությամբ հատկապես 2002 թ. օգոստոսից՝ մի շարք կարևոր ռազմավարա-

կան հարցեր լուծելուց հետո (**Г. Тер-Арутюнянц**. “Регион без границ”, *Голос Армении*, 5 сентября 2002г.):

[3] Այս հարցերին նվիրված ուսումնասիրության մեջ ներկայացրել էինք Ղարաբաղյան հակամարտության մեր մշակած փոխզիջումային լուծման մի նոր ծրագիր, որն, ի թիվս այլ առաջարկությունների, նախատեսում էր ներգրավել ԱՄՆ-ին հայ-ռուսական պաշտպանական դաշինքի մեջ (տե՛ս **Ա. Այվազյան**, *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը*, էջ 60-78: Ռուսաստան-ՆԱՏՕ ռազմաքաղաքական դաշինքի հնարավորությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 69-72): Սակայն այս փոխզիջումային ծրագրի կիրառման հավանականությունն առայժմ շատ փոքր է, գուցե և՝ աննպատակահարմար, քանի որ, նախ և առաջ, անհրաժեշտ է Ադրբեջանի և Թուրքիայի անհաշտ դիրքորոշման փոփոխություն, մի բան, որ դեռևս լրիվ բացակայում է: Այդ ծրագիրը կարող է տարբեր բարելավումներից հետո կիրառվել, թերևս, միայն այն ժամանակ, երբ ամերիկա-ռուսական ռազմավարական համագործակցությունն իրականություն դառնա: Սակայն այդ օրվա հույսին մնալն անթույլատրելի է. այն կարող է շատ ուշանալ: Ընդհանուր առմամբ, առայժմ անհավանական է փոխզիջումային այնպիսի մի ծրագրի կիրառում, որը նախատեսում է հայկական զորքերի դուրսբերում Արցախի և Սյունիքի շուրջն ազատագրված տարածքներից (այս մասին տե՛ս **Armen Aivazian**, “Possible Solutions for the Nagorno-Karabagh Problem: A Strategic Perspective,” in **Levon Chorbajian**, ed., *Making a State: From Secession to Republic in Nagorno-Karabagh.* New York: St. Martin's Press, 2001, pp. 233-234):

[4] Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցներն են Հայաստանը, Ղարաբաղը, Ադրբեջանը և Թուրքիան: Զորսն էլ ներկայացված են Մինսկի խմբում, սակայն Մինսկի խմբի ռազմավարական մտածողություն ասելով, նկատի ունենք ամերիկացի, ֆրանսիացի և ռուսաստանցի համանախագահների կարծիքը, որը վերջիններս արտահայտում են հակամարտության կարգավորման վերաբերյալ ներկայացվող իրենց առաջարկություններում:

[5] Սովորաբար, ԵԱՀԿ Խորհուրդը գումարվում է տարին մեկ անգամ, այն բաղկացած է ԵԱՀԿ անդամ-պետությունների արտգործնախարարներից:

[6] **Bloed, Arie**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe: Analysis and Basic Documents, 1972-1993* (Dodrecht; Boston; London: Kluwer Academic Publishers), 1993, pp. 841-843.

[7] Տե՛ս,օրինակ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի 1998 թ. հունվարի 9-ի հաղորդագրությունը նախորդ օրը Բաքվում Հեյդար Ալիևի՝ ԱՄՆ մի խումբ կոնգրեսմեննների

հետ հանդիպման մասին: Շուշիի և Լաչինի հարցերը երկրորդ փուլի օրակարգում ընդգրկված լինելը հաստատում են նաև ոչ-ադրբեջանական հավաստի աղբյուրները:

[8] "Peacekeeping operations cannot be considered a substitute for a negotiated settlement and therefore must be understood to be limited in time," **Arie Bloed**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe, op. cit.*, p. 726.

[9] Այն է՝ High Level Planning Group (այսպես է կոչվում 1994 թ. դեկտեմբերի 20-ից): ՂԽԶ-ի գործողությունը ծրագրավորող՝ հիմնականում զինվորականներից բաղկացած այդ հատուկ խումբը ստեղծվել էր դեռևս 1992 թ. սեպտեմբերին և կոչվում էր Առաջնորդող դիտորդական խումբ (Advance Monitoring Group), այնուհետև 1993 թ. մայիսից կոչվում էր Նախնական Գործողությունները Ծրագրավորող Խումբ (Initial Operations Planning Group): 1995 թ. ամառվա ընթացքում ԲԾԽ-ում աշխատում էին 17 պետություններից գործուղված 33 սպա և 9 օժանդակ հոգի, 1996 թ. մայիսի դրությամբ՝ 13 սպա և 2 քարտուղար(ուհի):

[10] **Vilén, Heikki, Mike Karie and Roger Biesel**, "Preparations of a Peacekeeping Mission for the Nagorno-Karabakh Conflict by the OSCE's High Level Planning Group (HLPG)," May 1996: Ժամանակին այս զեկույցը զետեղված էր Ինթերնեթ-ում՝ www.osce.org/inst/organix/conflct5.htm հասցեով:

[11] **Vilén, Heikki, Mike Karie and Roger Biesel**, *op. cit.*. Ըստ մեկ այլ գնահատականի՝ ՂԽԶ-ի գործունեությունը առաջին վեց ամիսների ընթացքում կարժենա 40 միլիոն դոլար. – տե՛ս **William J. Durch**, ed., *UN Peacekeeping, American Politics and the Uncivil Wars of the 1990s* (New York: St. Martin's Press, 1996), p. 446.

[12] Այդ պահին արդեն հնացած այլ տեղեկությունների համաձայն, ՂԽԶ-ն ունենալու էր 3,000 զինվոր. – տե՛ս **William J. Durch**, ed., *UN Peacekeeping, American Politics and the Uncivil Wars of the 1990*, p. 446.

[13] Նույն տեղում:

[14] **Arie Bloed**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe, op. cit.*, p. 725.

[15] **Jonathan Stevenson**, *Losing Mogadishu: Testing US Policy in Somalia (Annapolis, Maryland: Naval Institute Press, 1995)*, p. 119.

[16] *Dayton Peace Agreement, Annex 1A: Agreement on the Military Aspects of the Peace Settlement*, Article I, 1 (b), November 21, 1995.

[17] **Arie Bloed**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe, op.*

cit., pp. 727-728.

[18] **Vilén, Heikki, Mike Karie and Roger Biesel**, *op. cit.*.

[19] **Mar Roman**, “Final Spanish Soldiers Return From Iraq,” *Associated Press News* April 28, 2004; **Peter Prengaman**, "Dominican Republic to Pull Out of Iraq," *Associated Press News*, April 20, 2004; **Beata Pasek**, "Honduras Follows Spain, Pulls Out of Iraq," *Associated Press News* April 19, 2004

[20] **Jonathan Stevenson**, *Losing Mogadishu, op. cit.*, p. 138.

[21] Այդ հանցագործությունների բացահայտումն ու հետաքննությունը Իտալիայում հայտնի է Սոմալիգեյթ անունով: Տե՛ս **Reese Elrich and Andrea Cangioli**, “Italy Accused of Coverup in Somalia,” *San Francisco Chronicle* January 26, 1998, pp. A8, A10.

[22] «Ինչու՞ է խաղաղապահությունը ձախողվում» խոսուն վերնագրով մի այդպիսի մենագրություն է գրել նաև ամերիկացի նախկին փորձառու դիվանագետ, դեսպան Դեննիս Ջեթթը՝ **Dennis C. Jett**, *Why Peacekeeping Fails* (New York, NY: St. Martin’s Press, 1999).

[23] ԵԱՀԿ Մինսկի խմբի ծրագրի ռազմավարական ու զուտ ռազմական լուծումների թերությունների մանրամասն քննադատությունը տե՛ս **Ա. Այվազյան**, *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը*, էջ 37-59: Նույն քննադատությունը ներկայացրել ենք 1998 թ. մարտին Միացյալ Նահանգների Խաղաղության ինստիտուտում (որ ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի գիտահետազոտական մի մաս է)՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերին նվիրված հատուկ կլոր սեղանին, որի ժամանակ ամերիկացի դիվանագետներն ստիպված էին դժկամությամբ խոստովանել Մինսկի խմբի ծրագրի նախատեսած անվտանգության երաշխիքների խիստ անբավարար լինելը: Նրանց այս խոստովանությունը իր տեղն է գտել նաև այդ քննարկման արդյունքներով հրապարակված գրքի «Եզրակացություններ» բաժնի առաջին իսկ նախադասության մեջ՝ *Nagorno-Karabakh: Searching For A Solution*, A United States Institute of Peace Roundtable Report. Peaceworks ¹ 25. First published December 1998: Գիրքը հրապարակված է նաև ինտերնետում՝ հետևյալ հասցեով՝ *http://www.usip.org/pubs/pworks/pwks25*:

[24] Տե՛ս «Կարգավորումը մոտ ապագայի խնդիր չէ (*Հարցազրույց պատմաբան-քաղաքագետ Արմեն Այվազյանի հետ*)». – *Հայոց աշխարհ*, 20 նոյեմբերի 2001):

[25] **Լիլիթ Գրիգորյան**, «Բնակչության թիվն աննկատ նվազում է». – *Իրավունք*, ¹ 20(747), մարտ 21-24, 2003թ.:

[26] Սերժ Սարգսյանի հետ այս հարցազրույցը տպագրված է *Իրավունք՝ Հարց ու պատասխան*-ում, հուլիս 30-օգոստոս 5, 2002 թ., ¹ 58 (654):

[27] «ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԱՊՀ հայկական համայնքների «Նոյյան տապան» թերթին». – *Հայ գինվոր*, 8-15 սեպտեմբերի 2001, ¹ 35 (392):

[28] "Azerbaijan will not give even one square meter of its territory to Armenia," - **General S. Abiyev**, Baku, July 22, 2002, *Sahil* (www.azerigenocide.org).

ԳԼՈՒԽ 4.

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՒ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ

Հայաստանի հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ունեն մեծ նշանակություն: Այսօր ԱՄՆ-ը և՛ ռազմական, և՛ տնտեսական առումով աշխարհի ամենահզոր պետությունն է, փաստորեն՝ միակ գերտերությունը, որի ազդեցությունը գնալով մեծանում է նաև մեր տարածաշրջանում: ԱՄՆ-ը, ինչպես նաև նրա ազդեցության տակ գտնվող միջազգային ֆինանսական հաստատությունները՝ Համաշխարհային բանկն ու Միջազգային արտարժույթի հիմնադրամը, Հայաստանի խոշորագույն դոնորն են: 1992-2003 թթ. ԱՄՆ-ի կառավարության Հայաստանին հատկացված տնտեսական և մարդասիրական օգնությունը կազմել է ավելի քան մեկ ու կես միլիարդ դոլար[1]: 2001 թ. ԱՄՆ-ի օգնությունը Հայաստանին յուրաքանչյուր շնչի հաշվով կազմում էր 42 դոլար, մինչդեռ, օրինակ, Բոսնիային՝ 34 դոլար, Ռուանդային՝ 3 դոլար, Ռուսաստանին՝ 1.40 դոլար, իսկ Հնդկաստանին՝ 14 ցենտ[2]: Վերջապես, ԱՄՆ-ում է բնակվում հայության ստվար և ամենահարուստ հատվածը, որի թիվն այսօր հասնում է շուրջ մեկ միլիոնի: Հետևաբար, Հայաստանը պետք է անի հնարավոր ամեն ինչ՝ ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները զարգացնելու և բարձր մակարդակի վրա պահելու համար:

Սակայն թուրքական և պակաս չափով նաև ադրբեջանական գործոնները որոշակիորեն սահմանափակում են հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման հնարավորությունները: Վերջին 50 տարիների ընթացքում Թուրքիան եղել և մնում է ԱՄՆ-ի ռազմավարական ամենակարևոր գործընկերներից մեկը, որի ռազմական ուժն ու աշխարհաքաղաքական դիրքն անհամեմատ ավելի բարձր են գնահատվում Վաշինգտոնում, քան ավանդապես Ռուսաստանի դաշնակից համարվող փոքրիկ Հայաստանն ու նրա շահերը: ԱՄՆ-ի պետական և քաղաքական շրջանակները Թուրքիայի դերը կարևորում են՝

ա) Արևմուտքի նավթային կարիքները բավարարող Մերձավոր Արևելքում՝ որպես պատվար «միջազգային ահաբեկչության», «մահմեդական ռադիկալիզմի» և այսպես կոչված «հերձվածող պետությունների» (rogue states, ռուսերեն՝ ñòðàíû-èçãîè), որոնք են, ըստ ամերիկյան չափանիշների, Իրանը, Լիբիան, Կուբան, Հյուսիսային Կորեան (պակաս հաճախականությամբ սրանց թվում հոլովվում է նաև Սիրիան)[3],

բ) Բալկանյան անկայուն տարածաշրջանում,

գ) որպես Ռուսաստանի և Իրանի տարածաշրջանային հակակշիռ,

դ) որպես առավել արևմտականացած աշխարհիկ մահմեդական պետության մոդել, որը կարելի է կիրառել Միջին Ասիայի նորանկախ պետություններում և Աֆղանստանում: Այս առումով կարևոր է միշտ նկատի ունենալ, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի միակ մահմեդական անդամ-պետությունն է: Արևմուտքի հետ մահմեդական Թուրքիայի մտերմությունն ի ցույց է դրվում՝ ԱՄՆ-ից ու նրա մերձավորագույն դաշնակից Իսրայելից խիստ դժգոհ մահմեդական աշխարհում յուրային ունենալու համար: Թուրքիայի նշանակությանը գումարվում են նաև վերջինիս մերձավորագույն դաշնակից Ադրբեջանի ու նաև կասպիական նավթի գործոնները:

Այս ամենից ելնելով էլ՝ ԱՄՆ-ը ձևավորում է Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությունը, որի հիմնական դրույթներն արդեն բավական հստակ են.

ա) Ղարաբաղյան հակամարտության հարցում՝ Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» պաշտպանություն (ներա-

ռյալ Արցախն ինքնավարության կարգավիճակով Բաքվի ենթակայության տակ դնելու և ազատագրված տարածքներից հայկական զորքերի դուրսբերման հարցերում): ԱՄՆ-ի այս դիրքորոշումն առավել ցայտուն արտահայտվեց 1993-94 թթ., երբ ԱՄՆ-ի հատուկ ծառայություններն օգնեցին կազմակերպել մի քանի հազար աֆղանացի մոջահեդների ավիափոխադրումն Ադրբեջան՝ ռազմաճակատում հայերի դեմ նրանց օգտագործելու և այդպիսով պատերազմում բեկում մտցնելու նպատակով[4]:

բ) Հայոց ցեղասպանության ճանաչման-դատապարտման հարցում՝ խնդիրն իրավական, քաղաքական ու պետական մակարդակի վրա չբարձրացնելու՝ այն «պատմաբաններին թողնելու» (այսինքն՝ մոռացության մատնելու) թուրքական թեզի պաշտպանություն.

գ) Թուրքիայի կողմից Հայաստանը շրջափակելու հարցում՝ չեզոքություն պահպանելու և այդ երևույթը չդատապարտելու դիրքորոշում.

դ) նշված ոչ հայանպաստ դրույթների հիման վրա՝ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման խրախուսում՝ ի հաշիվ հայ-ռուսական հարաբերությունների.

ե) վերջապես, ԱՄՆ-ը չի ցանկանում տեսնել Հայաստանը որպես ուժեղ, կայացած պետություն, որը կարող է տարածաշրջանում լինել Ռուսաստանի հենարանը, զանազան խոչընդոտներ ու գլխացավանքներ պատճառել վաղուց յուրային դարձած Թուրքիային և այդ ամենով թուլացնել ԱՄՆ-ի ազդեցության ոլորտը[5]:

Մոտակա ժամանակներում նշված դիրքորոշումների փոփոխությունը դեռևս քիչ հավանական է: Կարևոր է գիտակցել, որ ԱՄՆ-ի քաղաքականության այս դիրքորոշումները համապատասխանում են ամերիկյան շահերին (ինչպես այսօր դրանք հասկացվում են ԱՄՆ-ի իշխող վերնախավում):

Առաջին հայացքից կարող է թվալ, որ Հայաստանը նշանակալի զիջումներ չի արել ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությանը, այլ միայն տնտեսական մեծ օգնություն է ստացել ԱՄՆ-ից: Իրականությունը, ցավոք, այդպիսին չէ.

- *Հայաստանը հայտնվել է Արևմուտքից ֆինանսական այնպիսի ծանրագույն կախվածության մեջ, որ ՀՀ Կառավարությանը բառացիորեն թելադրում են ինչ և ինչ-*

պես անել տնտեսության (և, ըստ երևույթին, նաև կրթության, գիտության ու մշակույթի) զարգացման ուղղությամբ՝ առանց հաշվի առնելու երկրի և ժողովրդի բուն շահերը.

- ՀՀ արտաքին քաղաքականությունը շատ լուրջ զիջումներ է արել Հայոց ցեղասպանության հետևանքները վերացնելու հարցում, մասնավորապես՝ ՀՀ նախագահը հրապարակայնորեն հայտարարել է Թուրքիայից տարածքային, նյութական կամ որևէ այլ պահանջ չունենալու մասին (այս խնդրին դեռ անդրադառնալու ենք).
- Հայաստանի արտգործնախարարությունը «չեզոք դիրք» բռնեց, իսկ իրականում իր լռելյայն համաձայնությունը և աջակցությունը տվեց ԱՄՆ-ի պետքարտուղարության ծրագրով ու ֆինանսավորմամբ գործող, այսպես կոչված, «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» (ԹՀՀՀ) ձևավորմանն ու գործունեությանը, որը միայն վնաս հասցրեց և՛ ցեղասպանության ճանաչման խնդրին, և՛ ներհայկական համագործակցությանը[6].
- Ղարաբաղյան հարցում նույնպես զիջումներ են արվել. քննարկվում է Ադրբեջանի հետ Արցախի «միասնական պետություն» կազմելու՝ իր մանրամասնություններով անհայտ մի ծրագիր. բանակցությունների ընթացքում շոշափվել է Մեղրիով թուրք-ադրբեջանական միջանցք բացելու հարցը:
- 2003 թ. հունիսին Հայաստանում անցկացվել են «Լավագույն համատեղ ջանք-2003» (Cooperative Best Effort-2003) բազմազգ զորավարժությունները՝ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, որոնց մասնակցել են նաև թուրք զինվորականները[7]: Սա արդեն ավելին է, քան ԱՄՆ-ի սցենարով ստեղծված ու ծրագրված «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» գործունեությունը, որովհետև զինվորականների համատեղ զորավարժությունները կարող են նշանակել միայն այն, որ թուրք-հայկական հաշ-

տեցումը կայացած փաստ է, մինչդեռ այն իրականում բացակայում է: Թուրք զինվորականության հետ համագործակցությունը հղի է վտանգներով. մասնավորապես, դա կարող է ուժգին հարված հասցնել հայ ժողովրդի աշխարհաքաղաքական դիրքորոշումների ամբողջ համակարգին, ազգային ոգուն և արժանապատվությանը: Ավելորդ է մանրամասնել, թե խորհրդանշային համակարգը ինչպիսի կարևոր նշանակություն ունի պետության և բանակի շինարարության գործում[8]*:*

Այսպիսով՝ ԱՄՆ-ը կարողացել է հայկական կողմից բավական մեծ զիջումներ կորզել, մինչդեռ ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ Ադրբեջանը ռազմավարական լուրջ զիջումներ անել չեն պատրաստվում:

Տեսականորեն, 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները կարող են բարելավել Հայաստանի աշխարհաքաղաքական համարումը Վաշինգտոնում, սակայն դա պահանջելու է աշխարհաքաղաքական առաջնահերթությունների լայն վերանայում, որն, անգամ եթե իրականացվի, մեկ-երկու տարում լինել չի կարող: ԱՄՆ-ի դիրքորոշումների բարելավումը կարող է տեղի ունենալ երկու հիմնական գործոնի ազդեցության տակ. նախ՝ ԱՄՆ-Ռուսաստան ռազմավարական ամուր ու վստահելի համագործակցության հաստատմամբ, այնուհետև՝ Ռուսաստանի և Արևմուտքի դաշնակից համարվող Հայաստանը որպես մահմեդական աշխարհի հետ անմիջական սահման (ըստ այդմ էլ, աշխարհառազմավարական հույժ կարևոր դիրք ունեցող պետություն) դիտելու դեպքում: Սակայն, առայժմ ավելի հավանական է, որ ԱՄՆ-ը կշարունակի անտեսել Հայաստանի շահերը՝ ի հաշիվ իր ավանդական Թուրքամետ քաղաքականության:

Հայաստանի զիջումների սահմանագիծը

Այսօր Հայաստանը մեծ կախվածության մեջ է միջազգային ուժերից, հատկապես Ռուսաստանից և ԱՄՆ-ից: Ռուսաստանից կախվածությունն առավելապես ռազմավարական անվտանգության

բնագավառում է[9], իսկ ԱՄՆ-ից՝ տնտեսական ոլորտում: Այս երկու տերությունների ազդեցությունը Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության վրա հաճախ ընդունում է սովորական թելադրանքի բնույթ: Այն, որ ռուս-ամերիկյան շահերը տարածաշրջանում չեն համընկնում, կարող էր Հայաստանի համար դառնալ մանևրելու և սեփական շահերը պաշտպանելու հնարավորություն, սակայն պետության ծայրաստիճան թուլությունն առայժմ բերում է հակառակ արդյունքի՝ Երևանը դառնում է մերթ մեկի, մերթ մյուսի հարվածի առարկա: Այսպես՝ Ռուսաստանը պարբերաբար սպառնում է կտրել վառելիքի մատակարարումները և մերթ ընդ մերթ խոսքից անցնում է գործի, խրախուսում է ռուսաց լեզուն Հայաստանում երկրորդ պետական լեզու հռչակելը, ճնշումների է ենթարկում Ռուսաստանում ապրող հայերին, իսկ ԱՄՆ-ը՝ Միջազգային արտարժույթի հիմնադրամի և Համաշխարհային բանկի միջոցով ֆինանսական ճնշումներ է գործադրում: Վերջերս էլ կիրառվեց բացահայտ հոգեբանական շանտաժ՝ Հայաստանի քաղաքացիներին սպառնացին դնել ստորացուցիչ վիզային ռեժիմի մեջ[10]:

ԱՄՆ-ի և Ռուսաստանի շահերը ոչ մի դեպքում չոտնահարելու («քամու հետ համընթաց քայլելու») Հայաստանի պես փոքր, երրորդական պետության ներկա քաղաքականությունը հասկանալի է, սակայն գոյություն ունի երկու սահմանագիծ, որից այն կողմ Հայաստանի անվտանգության կենսականորեն կարևոր շահերը կարող են անդառնալիորեն վնասվել: Այդ սահմանագծերն են.

1. եթե Հայաստանին ստիպեն զգալիորեն իջեցնել իր ռազմական անվտանգության ներկա (առանց այն էլ ոչ բավարարաչափ) մակարդակը.

2. եթե Հայաստանին և հայերին ստիպեն մոռացության մատնել կամ մերժել սեփական պատմությունն ու ազգային հարուստ արժեքները՝ հարմարեցնելով այդ ամենը միջազգային քաղաքական ներկա իրավիճակին:

Ռազմական անվտանգության մակարդակի իջեցումը (որ կարող է տեղի ունենալ, եթե Ադրբեջանին զիջենք որոշ տարածքներ՝ առանց դիմացը ռազմավարական համարժեք զիջումներ և փոխհատուցում ստանալու) սպառնում է Հայաստանի բուն գոյությանը, մինչդեռ պատմական ճշմարտության կեղծումը (և ոչ միայն ցե-

դասպանության հարցում), բաժանարար նոր և անհաղթահարելի գծեր անցկացնելով հայկական միջավայրում, ընդունակ է վերջնա-կանապես տրոհելու և քայքայելու ազգը: Այս երկու կետում էլ զի-ջողականությունն անթույլատրելի է: Ուստի անհրաժեշտ է բոլորին՝ և՛ դաշնակիցներին, և՛ չեզոք միջնորդներին, և՛ հակառակորդներին բացատրել, թե որտեղ են ավարտվում Հայաստանի՝ զիջումներ կա-տարելու հնարավորությունները: Ընդ որում՝ բացատրությունները պետք է կատարվեն ռազմավարական պարզ կատեգորիաներով ու նաև մշտապես՝ ըստ փոփոխվող միջազգային իրադրու-թյան:

Տարածաշրջանում բավական կայուն հավասարակշռություն է ստեղծվել թե՛ հակամարտող ուժերի և թե՛ մեծ տերությունների շա-հերի միջև: Հայկական կողմը պատերազմը չի վերսկսում, որով-հետև հիմնականում հասել է իր ռազմական նպատակներին, իսկ ադրբեջանական կողմը պատերազմը չի վերսկսում, որովհետև ա-ռայժմ ի վիճակի չէ թեկուզ փոքր հաղթանակ կորզել:

Ռուսաստան-ԱՄՆ հարաբերությունների ներկա փուլը ևս այնպիսին է, որ Այսրկովկասում ուժերի խոշոր վերաբաշխման խնդիր նրանցից որևէ մեկը չի դնի: ԱՄՆ-ին այսօր անհրաժեշտ է ունենալ Ռուսաստանի աջակցությունը Կենտրոնական Ասիայում, մասնավորապես՝ Աֆղանստանում հակաահաբեկչական գործողու-թյուններն անխափան շարունակելու, Ուզբեկստանում և Տաջիկս-տանում իր բազաների գոյությունը երկարաձգելու, ինչպես նաև Իրաքյան թնջուկը հաջող լուծելու համար: Իսկ Ռուսաստանն այ-սօր կենտրոնացած է Զեչնիայում լիակատար վերահսկողություն հաստատելու, ինչպես նաև Վրաստանի արևմտամետ ընթացքը կա-սեցնելու ջանքերի վրա և ավելի մեծ ծրագրեր իրականացնելու հնարավորություններ դեռևս չունի:

Հետևաբար՝ Ղարաբաղյան հակամարտությունն առնվազն մեկ-երկու տարի վերաբռնկվելու քիչ հավանականություն ունի[11]:

[1] **Emil Danielyan**, “US, Armenia Agree on Use of American Aid,” *RFE/RL Armenia Report*, 24 January 2002; “U.S. Wants Political Reform For Extra Aid To Armenia,” *RFE/RL Armenia Report*, 18 May 2004.

[2] **Michael Dobbs**, "Foreign Aid Shrinks, but Not for All: With Clout in Congress, Armenia's Share Grows," *Washington Post*, January 24, 2001, p. A01.

[3] «Հերձվածող պետություններից» ԱՄՆ-ին սպառնացող վտանգի արհեստական ուռճացումը քննադատել են բազմաթիվ մասնագետներ. - տե՛ս, օրինակ՝ "Threat of 'Rogue' States: Is It Reality or Rhetoric?" *Washington Post*, May 29, 2000; "Rogue States and the New Reality," *Stratfor.com Weekly Global Intelligence Update*, 3 April 2000, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այս հայեցակարգի արմատական քննադատությունը տե՛ս **Noam Chomsky, Ramsey Clark, Edward W. Said**, *Acts of Agression: Policing “Rogue” States* (New York, N. Y.: Seven Stories Press, 1999). 2000 թ. հունիսին ԱՄՆ-ի պետդեպարտամենտը որոշեց փոխարինել «հերձվածող պետություն» արտահայտությունը՝ «մտահոգող պետություն» եզրով, տե՛ս **Robert Thomason**, "A 'Rogue' Is a 'Rogue' Is a 'State of Concern'," *Washington Post*, June 20, 2000. Սակայն «հերձվածող պետություն» եզրը գործածվում է մինչև օրս:

[4] Այս մասին բավական մանրամասն տեղեկություններ է հայտնում ադրբեջանամետ-թուրքամետ ճանաչված հեղինակ Թոմաս Գոլցը, տե՛ս **Thomas Goltz**, *Azerbaijan Diary: A Rogue Reporter’s Adventures in an Oil-Rich, War-Torn, Post-Soviet Republic* (New York: M.E. Sharpe, 1998), pp. 270-279. Աֆղանստանից բերված մոջահեդների մասին մի ռուս վարձկան-ականատեսի հուշերը տե՛ս Àðèñ Êàçèíÿí, “’Äóõè’ íà Êàðàáàõñêîì ôðîíòå: ñâèäåòåëüñòâà áîéöà àçåðáàéäæàíñêîãî Î Ï Î Í à”, *Ãîëîñ Àðìåíèè*, 4 äåêàáðÿ 2001:

[5] Այս առումով ուշագրավ է մի վկայություն: Կովկասում և Միջին Ասիայում 1990-ից մինչև 1996-ը Լոնդոնի «The Times» թերթի թղթակից աշխատած Անատոլ Լիվենը, չհամաձայնելով ԱՄՆ-ի վարչակազմի ծայրահեղ թուրքամետությանը, հիշում է, որ մի առիթով տարածաշրջանում ԱՄՆ-ի հախուռն քաղաքականության ջատագովներից մեկն իրեն ասել է, թե «Միացյալ Նահանգները պետք է ոլորի հայերի ձեռքերը՝ մինչև որ դրանք ջարդվեն», որպեսզի հայերը ենթարկվեն ԱՄՆ-ի առաջնահերթություններին (An exponent of a forward U.S. policy in the region once told me that the United States ought to "twist the Armenians' arms till they break" in order to get

them to submit to U.S. priorities). – տե՛ս **Anatol Lieven**, "The (Not So) Great Game," *The National Interest* (Winter 1999-2000), pp. 69-80. «Հայաստանին անկյուն դցելու» և զիջումներ կորզելու ճիշտ նույն տեսակետը հինգ տարի անց արտահայտում է ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության խոսափող համարվող *Stratfor* վերլուծական կենտրոնը. – տե՛ս **Samvel Martirosian**, “Big Insinuations For Little Armenia”, *Rosbalt* (Russia, Saint-Petersburg), 31/05/2004, 11:05 (Translated by Alex Anderson).

[6] Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ստեղծմանն անմիջականորեն մասնակցել է ՀՀ կառավարությունը (տե՛ս **Àðèñ Êàçèíÿí**, “Áåç ïðàêà íà ìîë÷àíèå”, *Ãîëîñ Àðìåíèè*, 16 àïðåëÿ 2002): 2002 թ. հոկտեմբերի 31-ին Հարվարդի համալսարանում կարդացած դասախոսության մեջ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի նշանակած ԹՀՀՀ-ի «ճարտարապետ»ը՝ Դեյվիդ Ֆիլիպսը, նույնպես բացեիբաց հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունն ի սկզբանե այս հարցի մասին ամբողջապես տեղեկացված է եղել («Ըստ Տեյվիտ Ֆիլիպսի՝ «Հաշտության» հանձնաժողովը դեռ կգործե». - *Ազգակ* (Բեյրութ), 6 նոյեմբեր 2002): Այս առումով ուշագրավ է նաև, որ այդ հանձնաժողովի գործունեության սկզբնական փուլում՝ նրա չորս հայ անդամներից մեկը (արտակարգ և լիազոր դեսպանի կարգավիճակ ունեցող Դավիթ Հովհաննիսյանը) դեռևս շարունակում էր աշխատել ՀՀ արտգործնախարարության համակարգում:

[7] «Թուրքական կողմը, հավանաբար, կընդգրկվի զինավարժություններում». - *Հայաստանի Հանրապետություն*, 13 նոյեմբերի 2002, ¹ 204 (3097):

[8] Թուրք զինվորների մուտքը Հայաստան և համագործակցությունը հայկական զինուժի հետ՝ միջազգային պրակտիկայի մեջ լինելու է աննախադեպ մի նոնսենս: Համատեղ զինավարժությունները հնարավոր են միայն այն պետությունների միջև, որոնք ունեն դաշնակցային, բարիդրացիական կամ առնվազն սուր հակասություններից զերծ, ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը ձևավորվող հարաբերություններ: Արդ, հայ-թուրքական հարաբերությունները ո՛չ դաշնակցային են, ո՛չ բարիդրացիական, ո՛չ էլ զարգանում են ընդհանուր ռազմավարական շահերի շուրջը: Հնարավոր չէ պատկերացնել համատեղ զորավարժություններ ԱՄՆ-ի և Կուբայի միջև (ընդ որում՝ Կուբայի տարածքում), Իսրայելի և Սիրիայի միջև (Սիրիայի տարածքում), Կիպրոսի և Թուրքիայի միջև (Կիպրոսի տարածքում), նաև Պակիստանի և Հնդկաստանի, Իրանի և Իրաքի միջև, որովհետև կողմերն ունեն բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնցից առաջ ընկնելն ու «ռազմական գործընկերություն» խաղալը զավեշտ է: Այսօրվա հարաբերու-

թյունների պայմաններում հայ-թուրքական զինավարժությունները (թեկուզ և բազմազգ ուժերի կազմում) նույնպես անհեթեթություն են, սակայն դրանք վնասաբեր են միմիայն հայկական պետականության համար, որովհետև հայ հասարակության և զինվորականության մեջ բթացնելու են թուրքական վտանգի գիտակցությունը և ազգային արժանապատվության հարցերում հայությանը ներարկելու են թերարժեքություն: Այս խնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս տողերիս հեղինակի հետևյալ հրապարակումները՝ «Կգա՞ն թուրքերը Հայաստան». - *Հայոց աշխարհ*, 16 նոյեմբերի 2002, ¹ 212 (1307). «Երբ բթանում է վտանգի զգացումը». - *Վասն Հայության*, 16.12.2002, ¹ 44. "Ï îõëåùå ÒÀÊÏ," *Âîëîñ Àðìåíèè*, 10.12.2002, ¹ 136: Հայկական մամուլում հայտնվել են քննադատական այլ նյութեր ևս՝ **Àðèñ Êàçèíÿí**, "Òóðåöêèé ìàðø â Ñàðäàðàïàòà – âîçìîæíî ëè?" *Âîëîñ Àðìåíèè*, 06.08.2002, ¹ 85; "Ï îðà âêëþ÷èòü ðóïîð", *Âîëîñ Àðìåíèè*, 21.12.2002, ¹ 141; "Áëîêàäà ïðîäîëæàåòñÿ, çíà÷èò – ïðîäîëæàåòñÿ âîéíà", *Âîëîñ Àðìåíèè*, 14.11.2002, ¹ 125. **Խ. Կարապետյան**, «Թուլացեք և «հաճույք» ստացեք: Թուրքերից:» *Իրավունք*, ¹ 93 (706), նոյեմբեր 28-դեկտեմբեր 2, 2002թ.: **Ժ. Պէօճէքեան,** Երկու հարցում՝ Հայաստանի մեջ ՕԹԱ-Նի ռազմափորձերուն թուրք զինվորներու մասնակցության առիթով», *Ազդակ* (Բեյրութ), 10 հունվար 2003:

[9] 1990-ական թթ. հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության զարգացման մասին տե՛ս **О. А. Колобов, А. А. Корнилов, А. Г. Симонян**, *Российско-армянские отношения: исторический опыт, стратегические вызовы и перспективы развития,* с. 25-39.

[10] **Armenian National Committee of America**, "Armenian Caucus Asks Attorney General To Explain Armenia's Mistaken Inclusion And Subsequent Removal From I.N.S. List," *Press Release*, December 21, 2002. **Ãàãèê ÒåðÀðóòþíÿíö**, "Êîìïåìåíòàðèçì â ðàçãàðå èëè 'ïðîâåðêà íà âøèâîñòü'", *Âîëîñ Àðìåíèè,* 19.12.2002, ¹ 140.

[11] 2001 թ. վերջին ամերիկյան հեղինակավոր National Defense Council Foundation–ի հրապարակած՝ աշխարհում ընթացող հակամարտությունների տարեկան վերլուծության մեջ ևս Ղարաբաղյան հակամարտությունը առանձնապես վտանգավոր հակամարտությունների շարքում չի նշվում (տե՛ս **Carolyn Skorneck**, "Study: Number of Conflicts Declines," *Associated Press*, December 23, 2001):

ԳԼՈՒԽ 5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ազգային անվտանգության հայեցակարգի առանցքային բաղադրամասը պետության որդեգրած պաշտպանական քաղաքականությունն է: Հայաստանում ցայսօր չի մշակվել, մանրազնին վերլուծության բովով չի անցկացվել և կիրառության մեջ չի դրվել երկրի անվտանգության պահանջներին համապատասխանող պաշտպանական քաղաքականություն: Մեր խորին համոզմամբ՝ 1991 թվականից ի վեր Հայաստանում պետական շինարարության մեջ իշխանությունների խոշոր ճախողումները մեծապես պայմանավորված են երկարաժամկետ սպառնալիքների հաշվառման վրա հիմնված ռազմական քաղաքականություն չունենալու հանգամանքով:

Հայաստանի պաշտպանական հայեցակարգի հիմքում պետք է ընկած լինի անվտանգության ապահովումը բոլոր չորս ուղղություններով՝ հյուսիսային (վրացական), հարավային (պարսկական), արևմտյան (թուրքական) և արևելյան ու հարավարևմտյան (ադրբեջանական ու նախիջևանյան): Սակայն այսօրվա (և կանխատեսելի ապագայի) դրությամբ, Իրանն ու Վրաստանը Հայաստանին չեն սպառնում, մինչդեռ ադրբեջանական-թուրքական վտանգն առավել քան իրական է:

Վրացական և պարսկական ճակատներ

Այսուհանդերձ, ինչպես վրացական, այնպես էլ պարսկական ճակատի ամուր պաշտպանվածության ապահովումն անհրաժեշտ է:

Նախ՝ թուրքական կամ ադրբեջանական զորքերը կարող են օգտագործել սահմանային այդ հատվածները (հատկապես վրացականը) Հայաստան ներխուժելու համար: Բացի այդ, որքան էլ դա անցանկալի է, վրացական ճակատում չեն բացառվում Ջավախքի հայության պաշտպանության նպատակով ձեռնարկված ինչ-ինչ գործողություններ: Իսկ պարսկական ճակատում ապագայում կարող են խնդիրներ առաջանալ Իրանական Ադերբեյջանում ապրող թրքախոս հոծ բնակչության հետ՝ Իրանի կենտրոնական իշխանության հանդեպ վերջինիս հնարավոր ընդվզումների պարագայում:

Ադրբեջանական ճակատ

ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները բազմիցս են ընդգծել Ադրբեջանի սանձազերծելիք հնարավոր պատերազմի սպառնալիքը: Այդ իրավացի տեսակետի հիմնական դրույթներն այսպես են շարադրված, օրինակ, ՀՀ պաշտպանության փոխնախարարի ելույթում.

> «Հայաստանի անվտանգությանն ուղղված գլխավոր սպառնալիքն այսօր և տեսանելի հեռանկարում միանշանակ կարելի է համարել Ադրբեջանի կողմից ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ ուղղված ռազմական ագրեսիայի իրական սպառնալիքը: Այն պահին, երբ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը գտնի, որ ռազմական գերազանցություն ունի Հայաստանի նկատմամբ, պատերազմը կդառնա անխուսափելի: Այն ուղղված կլինի ոչ միայն ԼՂՀ-ի, այլև Հայաստանի դեմ, որովհետև ադրբեջանական ղեկավարությունն այն կարծիքին է, որ առանց Հայաստանի ռազմական պարտության, Ղարաբաղի բռնակցումն անհնար է»[1]:

Հայաստանը պետք է մշտապես ի զորու լինի միայնակ ռազմական ջախջախիչ պարտության մատնել Ադրբեջանին: Հայ-ադրբեջանական հավանական պատերազմում կամ պատերազմներում երկու հանգամանք քիչ հավանական է դարձնում Ռուսաստանի ուղղակի միջամտությունը հօգուտ Հայաստանի: Նախ՝ Ադրբեջանը ևս Անկախ Պետությունների Համագործակցության անդամ է ու,

հետևաբար, այդպիսի միջամտությունը վերջնականապես կվարկաբեկի Ռուսաստանի համար մեծ նշանակություն ունեցող միջպետական այս կառույցը և կքայքայի նրա կենսունակությունը: Սակայն ավելի կարևոր է այն հանգամանքը, որ Ադրբեջանին դիմակայելու անընդունակ Հայաստանը պարզապես անարժեք կլինի Ռուսաստանի համար՝ որպես ռազմավարական դաշնակից: Հայաստանի տկարանալուն զուգահեռ թուլանալու է նաև Ռուսաստանի (ինչպես նաև Իրանի, Չինաստանի և մի շարք այլ պետությունների) շահագրգռվածությունը՝ սատարելու Հայաստանի զորությանն ու անվտանգությանը: Եվ ճիշտ հակառակը. որքան ավելի ռազմականապես զորեղ լինի Հայաստանը, այնքան ավելի Ռուսաստանն ու բարեկամական մյուս պետությունները պատրաստ կլինեն սատարել մեզ: Տեսանելի ապագայում Հայաստանի ռազմավարական արժեքի որոշիչը լինելու է նրա՝ Ադրբեջանին ինքնուրույնաբար դիմագրավելու կարողությունը: Ուստի՝ ադրբեջանական ճակատում Հայաստանն առհասարակ չպետք է հույս կապի Ռուսաստանի տրամադրելիք օգնության հետ: Ասվածը, բնականաբար, չի նշանակում, որ Հայաստանը չպետք է աշխատի Ռուսաստանից այդպիսի օգնություն ստանալ:

Թուրքական ճակատ

Ավելի մանրամասն անդրադառնանք Հայաստանի համար խիստ վտանգավոր մյուս ճակատին: Հայաստանում ազգային անվտանգության ոլորտի թերամշակ լինելու ամենալուրջ հետևանքն այն է, որ նույնիսկ կառավարական մակարդակում բացակայում է պատրաստվածությունը «ամենավատ օրվան»՝ Թուրքիայի հնարավոր ներխուժմանը:

Ճիշտ է, միջազգային արդի դրության մի շարք հանգամանքներ առայժմ խիստ նվազեցնում են թուրքական ներխուժման հավանականությունը: Այդ հանգամանքներից են՝

ա) հայ-ռուսական ռազմական դաշինքի առկայությունը.

բ) Թուրքիայի ներքին և արտաքին ծանր խնդիրները (տնտեսական ճգնաժամը, քրդերի քաղաքական-մշակութային պահանջնե-

ը, Կիպրոսի հյուսիսային մասի շարունակվող բռնազավթումից առաջացող միջազգային բարդությունները, Հունաստանի և Սիրիայի հետ խիստ լարված հարաբերությունները, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և այլն).

դ) Հայաստան ներխուժելու դեպքում Թուրքիան կանգնելու է միջազգային կազմակերպությունների և մի շարք պետությունների դատապարտման՝ ներառյալ դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական ճնշումների ենթարկվելու վտանգի առջև: Հատկապես խիստ կլինեն Ռուսաստանի, Իրանի, Սիրիայի, Հունաստանի, Կիպրոսի, Եվրոպական Միության, գուցե նաև ԱՄՆ-ի քննադատությունն ու հակազդեցությունը: Իր դերը կխաղա նաև հայկական սփյուռքը:

Այսպիսով՝ առայժմ, աշխարհաքաղաքական ներկա պայմաններում, Թուրքիան հազիվ թե ընդունի Հայաստան ներխուժելու և այդ քայլով մի լրացուցիչ միջազգային գլխացավանք ձեռքբերելու որոշում: Վերոհիշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Հայաստանը քայքայելու և կործանելու իր ծրագրերը Թուրքիան մինչև այսօր փորձել է իրականացնել ո՛չ թե բացահայտ հարձակման դիմելով, այլ Ադրբեջանի ձեռքերով ու շրջափակման միջոցով:

Սակայն վերն ասվածից ամենևին չի հետևում, թե Հայաստանի թուրքական ճակատի անվտանգությունն այլևս չպետք է մեզ անհանգստացնի: Թուրքական ներխուժման առջև վերը նշված արգելքները բացարձակ ու հավերժական համարվել չեն կարող: Միջազգային և տարածաշրջանային հնարավոր նշանակալի տեղաշարժերի դեպքում Թուրքիայի իշխանությունները կարող են նոր հաշվարկներ կատարել և եզրակացնել, որ, մի կողմից, Հայաստանի վերջնական ջախջախումն ավելի կարևոր է միջազգային անցողիկ դատապարտումից, մյուս կողմից՝ Հայաստանի դեմ լայնամասշտաբ կամ «սահմանափակ» ագրեսիան ռազմական տեսակետից արագ ու հեշտ իրականանալի ձեռնարկ է լինելու, ինչպիսին էր, օրինակ, 1990 թ. Քուվեյթի զավթումը Իրաքի կողմից: Թուրքական այդպիսի հաշվարկները նկատի են ունենալու մասնավորապես այն, որ Հայաստանի կործանման դեպքում Թուրքիայի ազդեցությունը Կովկասում, Միջին և Առաջավոր Ասիայում կբազմապատկվի:

Հիմունքներ
Հայաստանի պաշտպանական հայեցակարգի

Արդ՝ վերոշարադրյալից հետևում է, որ Հայաստանի պաշտպանական հայեցակարգի հիմքում ընկած պետք է լինի երկու պայմանի ապահովում.

ա) Հայաստանի՝ Ադրբեջանին ռազմականապես դիմագրավելու ինքնուրույն կարողություն.

բ) Թուրքական վտանգը չեզոքացնող ռազմաքաղաքական դաշինք որևէ գերհզոր տերության կամ պետությունների խմբակցության հետ: Կանխատեսելի ապագայում այդպիսի դեր կարող է կատարել միայն Ռուսաստանը: Նմանատիպ հովանավորությունը նշանակում է նաև Հայաստանի կախվածություն Ռուսաստանից և անկախ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունների որոշակի սղում, սակայն այս խնդիրը չպետք է մեզ չափից դուրս հուզի: Ցավոք, Հայաստանն առայժմ ի վիճակի չէ միայնակ ապահովելու իր Թուրքական ճակատի անվտանգությունը, ուստի այն դեռևս չի կարող հետևել աշխարհառազմավարական առումով նմանատիպ ծանր կացության մեջ գտնվող Իսրայելի օրինակին, որի պաշտպանական հայեցակարգը մերժում է հույսը որևէ տերության խոստացած երաշխիքների վրա դնելը և հիմնված է բացառապես սեփական կարողությունների վրա[2] *(թեև Հայաստանի ռազմական քաղաքականության զարգացման նպատակը պետք է հե՛նց այդպիսին լինի):*

Ընդսմին, եթե Հայաստանը կորցնի Ադրբեջանին ռազմականապես միայնակ դիմագրավելու իր կարողությունը, նրա ռազմավարական արժեքը Ռուսաստանի համար նույնպես կվերանա. ռուսական զորքերի հեռանալը Հայաստանից այլևս ժամանակի հարց կլինի:

Հայաստանի պաշտպանական հայեցակարգի առաջին պահանջ-կետը՝ Ադրբեջանին ինքնուրույնաբար դիմագրավելու կարողության պահպանումը, օբյեկտիվորեն նախատեսում է Արցախում հայկական իշխանության և բանակի մշտական առկայություն ու որևէ այլ ռազմական ուժի բացակայություն:

Հայաստանն անդամ է ռազմական անվտանգության բնագավառում երեք կարևոր կառույցների՝ ԱՊՀ Կոլեկտիվ անվտանգության համակարգին, ՆԱՏՕ-ի Համագործակցություն հանուն խաղաղության ծրագրին և Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրին (ԵՍՍՊ): Այդուհանդերձ՝ Հայաստանի աշխարհառազմավարական շրջադրությունն այնպիսին է, որ մասնակցությունն այդ կառույցներին և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներին չի տալիս նրան անվտանգության ծանրակշիռ երաշխիքներ: Մասնավորապես, դժվար է պատկերացնել, որ եթե այսօր Հայաստանը հարձակման ենթարկվի Թուրքիայի կողմից, ապա մեխանիկորեն, ինչպես և նախատեսված է Կոլեկտիվ անվտանգության պայմանագրով, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը կամ Ուզբեկստանը պատերազմ կհայտարարեն Թուրքիային:

ՆԱՏՕ-ի Համագործակցություն հանուն խաղաղության ծրագիրն առհասարակ չի պարունակում անվտանգության երաշխիքներ ոչ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների համար: Սա առավելապես խորհրդանշական ծրագիր է, որն այժմ, սակայն, օգտագործվում է ԱՊՀ անդամ պետությունների զինվորականությանը հնարավորին չափ ՆԱՏՕ-ին մերձեցնելու նպատակով:

ԵՍՍՊ-ն, որը հստակ սահմանափակումներ է դնում անդամ-պետությունների սպառազինությունների և զորքերի ընդհանուր քանակի վրա, դեռևս չի ցուցադրել խախտող պետություններին պատժելու իր ունակությունը[3]: Ավելին՝ մինչդեռ Հայաստանն ամբողջությամբ կիրառում է ԵՍՍՊ սահմանափակումներն ու վերահսկումները, Թուրքիայի տարածքի 39-րդ հորիզոնականից հարավ ընկած մեծ հատվածը, որ սահմանակից է Հայաստանին, չի մտնում այդ պայմանագրով նախատեսված կրճատումների և վերահսկումների մեջ[4]: Սա արտառոց և ծանր պայման է Հայաստանի համար: Մյուս կողմից՝ Իրանը, որը սահմանակից է Հայաստանին, ընդհանրապես ԵՍՍՊ անդամ չէ: Թեև ներկայումս Հայաստանը լավ հարաբերություններ ունի Իրանի հետ, և իրանական ներխուժման վտանգ գոյություն չունի, սակայն հայ-իրանական սահմանի ամուր պաշտպանվածությունը, ինչպես վերը նշվել է, պետք է լինի Հա-

յաստանի ռազմական քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը:

Հայաստանը կնքել է ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության երկկողմ պայմանագրեր նաև Թուրքիայի ավանդական հակառակորդ երկու պետությունների՝ Սիրիայի (օգոստոս, 2001 թ.) և Կիպրոսի (փետրվար, 2002 թ.) հետ, սակայն այդ պայմանագրերը չեն նախատեսում օգնության գալու փոխադարձ պարտավորություններ՝ կողմերից որևէ մեկի ագրեսիայի ենթարկվելու դեպքում:

1990-ական թթ. երկրորդ կեսից Թուրքիայի որդեգրած ռազմական նոր հայեցակարգը ևս գալիս է ընդգծելու Հայաստանի համար թուրքական վտանգի իրական լինելը:

Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը

Մինչև ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի ռազմական հայեցակարգն ուներ հիմնականում պաշտպանական բնույթ և կառուցված էր սովորական սպառազինություններով վարվելիք պատերազմում ուժերի հաշվարկների վրա: Միջուկային զենքի կիրառման հետ կապված հարցերը վերապահված էին ՆԱՏՕ-ին կամ ԱՄՆ-ին: Սառը պատերազմի տարիներին ՆԱՏՕ-ում բանավիճում էին այն մասին, թե խորհրդային և Վարշավայի պայմանագրի բանակների հարձակման դեպքում թուրքական զորքերը որքա՞ն տարածք կկարողանան պահպանել՝ մինչև դաշնակից ուժերն անցնեն հակագրոհի: Թուրք զինվորականները հույս ունեին դիմագրավել հակառակորդին սահմանին և այնուհետև կազմակերպված նահանջել: Ամերիկյան ծրագրավորողները պակաս լավատես էին. 1950-ական թթ. վերջի հաշվարկներով՝ Թուրքերն արագ շպրտվելու էին մինչև Միջերկրական ծով՝ Իսկենդերունի շրջանը: Թեև այս հաշվարկները ժամանակի հետ փոփոխվում էին, 1990 թ. թուրքական գլխավոր շտաբը տակավին անվտանգության հիմնական խնդիր էր համարում երկրի տարածքի բազմաճակատ պաշտպանությունը[5]:

1990-ական թթ. առաջին կեսին այս մտայնությունը դեռ չէր վերանայվել: 1997 թ. թուրք ռազմական մեկնաբանները, հիմնվելով

Ռուսաստանի, Հունաստանի, Իրաքի, Իրանի և Սիրիայի՝ կռվի դաշտ սովորական ուժեր հանելու կարողությունների վրա և նրանց վերագրելով տարածքային նկրտումներ՝ այդ պետությունները համարում էին անվտանգության գլխավոր սպառնալիքներ[6]: ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Շյուքրու Էլեքդաղն իր «Երկուսուկես պատերազմի ռազմավարություն» հայտնի հոդվածում, արտահայտելով ռազմական գերատեսչության տեսակետները, ընդգծում էր, որ Թուրքիան պետք է ծրագրի և պատրաստ լինի խոշորամասշտաբ պատերազմ մղել միաժամանակ երկու տարբեր ճակատներով (օրինակ՝ Սիրիայի և Հունաստանի դեմ) ու մեկ ներքին պատերազմ՝ քրդական ապստամբության դեմ[7]:

Այս հայեցակարգով թուրքական զինված ուժերը պետք է կազմակերպվեին, մարզվեին և սպառազինվեին՝ ունենալով երկու հիմնական խնդիր. ա) Թուրքիայի ցամաքային և օդային ուժերը պետք է կարողանային կասեցնել զրահատանկային հուժկու ներխուժումներն արևելքից (ԽՍՀՄ/Ռուսաստան) ու հարավից (Սիրիա, Իրաք), ապա անցնեին խոր էշելոնային պաշտպանության. բ) Բանակը և ներքին զորքերը (ժանդարմերիան) պետք է պատրաստ լինեին վարելու հակապարտիզանական պատերազմ՝ հենվելով ամրացված շրջանների և արագ արձագանքման շարժուն ուժերի վրա: Նավատորմին վերապահված էր Բոսֆորի նեղուցի հսկողությունը: Այսպիսով, զինված ուժերից պահանջվում էր մարտավարական շարժունություն, մինչդեռ ռազմավարական շարժունությունը և թշնամու խորքը հարվածելու կարողությունը պակաս կարևոր էին համարվում, քանզի ակնկալվում էր, որ պատերազմն ընթանալու է Թուրքիայի տարածքում[8]:

Մինչև վերջերս Թուրքիայի զինվորականությունը, հավատարիմ մնալով Քեմալ Աթաթուրքի առաջադրած այն տեսակետին, ըստ որի՝ Թուրքիայի ճակատագիրը կապված է միմիայն Արևմուտքի հետ, մահմեդական արևելքում ազդեցությունը մեծացնելու փորձերը գնահատում էր իբրև իսլամականների հետադիմական ձգտումներ, որոնք կարող են վտանգել երկրի արևմտամետ ուղին: Սակայն 1999 թ. սկզբին պաշտպանության նախարարությունը հրապարակեց «Սպիտակ տետրակ. պաշտպանություն 1998» պաշտոնական տեղեկագիրքը, որում, շեղվելով արտաքին քաղաքակա-

նության յոթանասնամյա ավանդույթից, Թուրքիան դիտվում է արդեն իբրև «եվրասիական երկիր», որը «պարտավոր է պահպանել ու ընդլայնել կապերը և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի հետ»[9]: Տեղեկագիրքը շարադրում է նաև Թուրքիայի ռազմական քաղաքականության պաշտոնական գլխավոր սկզբունքները.

(1) Զսպում (deterrence). *ռազմական այնպիսի ուժի պահպանում, որն ի զորու է սաստել արտաքին և ներքին սպառնալիքներ հարուցողներին.*

(2) Կոլեկտիվ անվտանգություն. *գործուն մասնակցություն միջազգային և տարածաշրջանային դաշինքների և կազմակերպությունների աշխատանքներին՝ հատկապես ՆԱՏՕ-ի և Արևմտաեվրոպական միության շրջանակներում.*

(3) Առաջ մղված պաշտպանություն (forward defense). *հնարավոր զավթողականության (ագրեսիայի) բովանդակությունն առավել վաղ հայտնաբերելու և այն դրսից կանխելու կարողություն.*

(4) «Խաղաղարարություն». *Հակամարտություններին միջամտելու և խաղաղարար գործողություններին մասնակցելու կարողություն[10]:*

Այս դրույթներին պետք է ավելացնել նաև Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեին Կիվրիկօղլուի՝ «նախահարձակ ճակատամարտի» (forward engagement) դրույթը, ըստ որի՝ զինված ուժերը պետք է պատրաստ լինեն կանխելու Թուրքիայի շահերի դեմ եղած սպառնալիքները՝ մինչև դրանց Թուրքիայի սահմաններից ներս թափանցելը[11]: Կիվրիկօղլուի միտքը պարզաբանված է «Սպիտակ գրքում».

> «2000-ական թթ. ընդհանուր օպերատիվ հայեցակարգով պահանջվում է վերահսկելի դարձնել այն շրջանը, որտեղ գտնվում է ագրեսորը և նրան պարտության մատնել իր խոր թիկունքում ու ռազմադաշտի մատույցներում: Այդ նպատակին հասնելու համար կարևոր են դերակշիռ կրակային ուժով և զորաշարժային (մանյովրային) կարողություններով զորքեր ունենալը, ագրեսորի ամենաթույլ տեղի ճշտումը, նշանակետերի ճանաչումն ու հայտնաբերումը, նախազգուշացման համակարգերի, զորքերի ղեկավարման, էլեկտրոնային պատերազմի և կապի ու տեղեկատվական համակարգերի համադրված և արդյունավետ կիրառումը»[12]:

Այսպիսով՝ անգամ պաշտոնական փաստաթղթերում թուրքական հրամանատարությունը ծրագրում է ապագա պատերազմները մղել Թուրքիայի սահմաններից դուրս: ԱՄՆ-ի բանակի հեղինակավոր «Փարամիթըրզ» հանդեսում վերլուծելով այս նյութերը՝ նույն եզրակացությանն է հանգում թուրքական զինվորականության հարցերով մասնագիտացած մի հեղինակ. «Անկարան ընդունել է գործողությունների այնպիսի մի հայեցակարգ, որով զինվորականությունը ձգտելու է վերացնել Թուրքիայի դեմ սպառնալիքները նրա ինքնիշխան տարածքից դուրս: Թուրքական զինված ուժերը ոչ միայն ընդունակ են, այլև ցանկանում են գործել իրենց սահմաններից դուրս»[13]:

Այս նպատակին են ուղղված նաև թուրքական զինված ուժերի վերազինման չափազանց հավակնոտ ծրագրերը[14]: Դեռևս 1998 թ. օգոստոսին, մինչև գլխավոր շտաբի պետ նշանակվելը, Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար գեներալ Կիվրիկօղլուն, շեշտելով, որ «զորքերի արագ ծավալումը հեռավոր շրջաններում կենսական նշանակություն ունի այն ռիսկերի և պատասխանատվությունների համար, որ մենք հնարավոր է՝ ստանձնենք», այնուհետև շարադրեց արդիականացման մի ծրագիր, որը Թուրքիային պետք է ընձեռեր համատեղ գործողությունների ռազմավարական շարժունություն և երկրի սահմաններից դուրս հարված հասցնելու կարողություն[15]: Այդ ծրագրի իրականացումը, գեներալ Կիվրիկօղլուի հավաստմամբ, կբերի նրան, որ թուրքական բանակը կունենա «այնպիսի զենքերի համակարգեր, որոնք առավելություն կհաստատեն թշնամու վրա՝ նրա տարածքի խորը թիկունքում, կկիրառեն «խելացի» զինամթերք՝ ներառյալ «երկիր-երկիր» հեռահար հրթիռներ՝ ապահովելով կրակակետերի շարունակական ու լուրջ քողարկումը: Բանակը նաև կունենա նորագույն զրահով պատված արդիական տանկեր և արդյունավետ հակատանկային զենքերի համակարգեր, դրանց կից հակաօդային պաշտպանության միջոցներ, ինչպես նաև դեսանտային զորքեր տեղափոխող ուղղաթիռներ... Տեղեկատվության հավաքման համակարգերը հնարավորություն կտան ստորաբաժանումներին բոլոր մակարդակներում հայտնաբերել, ճշտորոշել և ճանաչել թշնամուն իրենց կարողության շառավիղի մեջ»[16]:

Դատելով ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ գեներալ-մայոր Արթուր Աղաբեկյանի մի ելույթում բերած փաստերից և գնահատականներից՝ հայկական բանակի հրամանատարությունը՝ թուրքական ռազմական հայեցակարգի դրույթների մասին ունի լրացուցիչ սեփական տեղեկատվություն.

> «[Ադրբեջանից բացի] լուրջ սպառնալիք է շարունակում ներկայացնել և Թուրքիան: Վերջին՝ 1998թ. խմբագրությամբ ընդունված «Ազգային ռազմական հայեցակարգում» Հայաստանը դիտվում է որպես Հունաստանից հետո թվով երկրորդ հավանական հակառակորդը: Թուրք ռազմագետների կողմից Հայաստանի ներկա իշխանությունները դիտվում են իբրև «ծայրահեղ ազգայնական ուժեր»: Ավելին, Թուրքիան արդեն իսկ ուղղակիորեն ներքաշված է հայ-ադրբեջանական հակամարտության մեջ: Նա իր վրա է վերցրել Ադրբեջանի զինված ուժերի վերակառուցման, մարտական կարողությունների բարձրացման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման խնդիրները»[17]:

Ի մի բերենք: Թուրքիայի ռազմավարական մտածողությունն այնպիսի վերափոխություն է ապրել, որ անգամ Թուրք և ամերիկացի վերլուծաբանները խոսում են «նոր (նեո) օսմանյան օրակարգի» հաստատման մասին[18]: Նրանց հետ համամիտ են ռուսաստանցի մեկնաբանները, նշելով, որ «մենք ականատեսն ենք Բարձր Դռան սրընթաց վերածննդին՝ սրանից բխող աշխարհաքաղաքական բոլոր հետևանքներով հանդերձ»[19]: 1999 թ. դեկտեմբերի 3-ին Վաշինգտոնի ինստիտուտներից մեկում Թուրքիայի պաշտպանության նախարար Հիքմեթ Սամի Թյուրքի կարդացած զեկուցման մեջ եղած դրույթների մի վերլուծություն էլ չի բացառում Թուրքիայի ուղղակի ռազմական ներխուժումն Այսրկովկաս, հատկապես, ղարաբաղյան հակամարտության կապակցությամբ[20]:

Այսպիսով՝ Կենտրոնական Ասիայից մինչև Բալկաններ գերիշխան դեր ստանձնելու իր նոր օսմանյան դիրքորոշումներով Թուրքիան առավել վտանգավոր է դարձել իր հարևանների և առավել անկանխատեսելի՝ իր դաշնակիցների համար: Իրապաշտությունը պահանջում է ընդունել, որ, ինչպես նախկինում, այսօր ևս Թուրքիան սպառնում է Հայաստանի բուն գոյությանը:

Հայ-թուրք/ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները և Հայաստանի անվտանգությունը

Ըստ երևույթին, Հայաստանի որոշ նախկին ղեկավար դեմքեր, հատկապես ՀՀ առաջին նախագահը, այն կարծիքին էին, թե Թուրքիայի և Ադրբեջանի հետ առևտրատնտեսական աշխույժ հարաբերությունների հաստատումով Հայաստանը մեկընդմիշտ կլուծի իր ազգային անվտանգության ցավոտ խնդիրները: Սա միամիտ ու սխալ տեսակետ է:

1890-1914 թթ. հայ-թուրքական և հայ-թաթարական (ադրբեջանական) առևտրատնտեսական հարաբերությունները չափազանց սերտ էին ու աշխույժ, սակայն դա չկանխեց հայոց ցեղասպանությունը: Մինչև 1990 թ. Քուվեյթի և Իրաքի առևտրատնտեսական, ֆինանսական, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները փայլուն էին, սակայն դա չկանխեց Իրաքի ներխուժումը Քուվեյթ: Մինչև 1988 թ. Հայաստանն ու Ադրբեջանը համագործակցում էին տնտեսության գրեթե բոլոր բնագավառներում, սակայն դա արգելք չեղավ Ղարաբաղյան հակամարտության բռնկման համար: Առևտրատնտեսական սերտ հարաբերությունները ինքնըստինքյան ռազմավարական շահերի ներդաշնակության չեն հանգեցնում, այլ երբեմն իրենք են հակամարտությունների պատճառ դառնում: Արևմտյան հակամարտաբանները (կոնֆլիկտոլոգները) վաղուց են նկատել, որ փոխադարձորեն կախյալ տնտեսական համակարգերը շատ ավելի են հակված հակամարտության, քան միմյանցից անկախ տնտեսական համակարգերը: Հատուկ ընդգծվել է այն փաստը, որ սառը պատերազմի տարիներին հնարավոր եղավ խուսափել իսկական պատերազմից նաև շնորհիվ այն հանգամանքի, որ սոցիալիստական և կապիտալիստական ճամբարների տնտեսական համակարգերը գոյատևում էին ինքնաբավ և միմյանցից անկախ ռեժիմներում: Բացի այդ, հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերություններում հնարավոր դրական զարգացումները երբեք չեն կարող լցնել ցեղասպանության օրինածին արդյունքը՝ երկկողմանի անվստահության անդունդը[21]*:*

Սա ամենևին չի նշանակում, որ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները ցան-

կալի չեն[22]: Դրանք ցանկալի են Հայաստանի տնտեսության բնականոն զարգացման համար (եթե, իհարկե, երաշխավորվի նաև համագործակցության իրավահասարությունն ու փոխշահավետությունը): Պարզապես՝ այդ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը և Հայաստանի անվտանգության ապահովումը տարբեր բաներ են: Հայաստանի անվտանգությունը պետք է ապահովվի այլ միջոցներով:

Հայաստանի սոցիալական-տնտեսական գլխավոր խնդիրը կայուն աշխատատեղերի ստեղծումն է: Հայաստանի ներքին շուկան բավական փոքր է տեղական արտադրանքի իրացման համար, հետևաբար անհրաժեշտ է ունենալ իրացման կայուն արտաքին շուկաներ: Ցավոք, հարևան երկրներից երեքի հետ այդպիսի ծավալի և որակի առևտրատնտեսական հարաբերություններ հաստատել հնարավոր չէ. Ադրբեջանի հետ՝ Ղարաբաղյան խնդրի, Թուրքիայի հետ՝ նրա հակահայկական ռազմավարական հաստատուն ուղեգծի, Վրաստանի հետ՝ նրա տկարության ու մասնատվածության պատճառով: Ադրբեջանը կտրականապես հրաժարվում է Հայաստանի հետ բարիդրացիական առևտրատնտեսական կապեր հաստատելուց, նրա դաշնակից Թուրքիան՝ նույնպես: Սակայն, եթե մի օր Թուրքիան որոշի բացել Հայաստանի հետ իր սահմանը, ապա, մեր համոզմամբ, միայն նրա համար, որպեսզի այս անգամ արդեն տնտեսապես գաղութացնի Հայաստանը:

Իրատեսական չէ նաև հույսը զարգացած աշխարհի՝ հեռավոր Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի շուկաների գրավման վրա դնելը, թեև պետք է շարունակաբար ավելացնել այդ ուղղությամբ կատարվող փոքրածավալ արտահանումները: Հետևաբար, միջնաժամկետ հեռանկարում Հայաստանի համար կայուն արտաքին շուկա կարող են լինել հարևան (ու բարեկա՛մ) 70 միլիոնանոց Իրանը, արաբական աշխարհը և նախկին ԽՍՀՄ հանրապետությունները, առաջին հերթին՝ Ռուսաստանն ու Միջին Ասիան: Ընդ որում՝ միջինասիական և արաբական շուկան Հայաստանի համար հասանելի է դարձյալ Իրանի տարածքով:

Թուրքական ներխուժման դեմ ամենամեծ արգելքը

Առանձին խոսենք թուրքական ներխուժման դեմ եղած ամենամեծ արգելքի՝ հայ-ռուսական ռազմական դաշինքի մասին:

Նախ՝ մի քանի փաստ: 2001-02 թթ. դրությամբ թուրքական զինված ուժերի կազմում կար 515,100 զինծառայող (ներառյալ 391,000 ժամկետային ծառայության զորակոչվածները)[23]: Ընդ որում՝ թուրքական զորքերի քանակը մեծ է հատկապես Հայաստանին սահմանակից շրջաններում. 2000 թ. վերջի տվյալներով՝ Թուրքիայի՝ այսպես կոչված «արտակարգ իրադրության» տարածքում (այսինքն՝ Արևմտյան Հայաստանում ու Քրդստանում) տեղակայված էին 220 հազար թուրք զինվոր և գյուղական ջոկատների մեջ միավորված 62.000 զինյալ[24]: Թուրքիայի տարածաշրջանային դաշնակից Ադրբեջանի բանակում (2001-02 թթ. դրությամբ) կար 72.100 զինծառայող[25] (այլ հարց է, որ Ադրբեջանի բանակը դեռևս բավական ծանր վիճակում է)[26]:

Համեմատության կարգով նկատենք, որ նույն 2001-02 թթ. դրությամբ Հայաստանի բանակում կար 42.060 զինծառայող (ներառյալ 33.100 ժամկետային ծառայության զորակոչվածները), իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանական բանակում՝ 18.000 զինծառայող[27]: Այսինքն՝ Հայկական բանակի ընդհանուր թիվը կազմում է շուրջ 60.000 զինծառայող: Բացի այդ, Հայաստանում տեղակայված է ռուսական մեկ բրիգադ (4,300 զինծառայող, 74 տանկ, 158 զրահամեքենա, 84 հրետանային համակարգ), Ս-300 հակաօդային հրթիռների և ՄԻԳ-29 կործանիչների սահմանափակ խմբաքանակ[28]: 2001 թ. այս ուժերի մի մասը մտցվեց հայ-ռուսական նոր ստեղծված համատեղ խմբավորման մեջ: 2002 թ. վերջին Ռուսաստանը համալրեց Գյումրիի ռազմակայանի իր ուժերը Վրաստանից դուրս բերվող որոշ (հիմնականում՝ կապի) ստորաբաժանումներով ու զինտեխնիկայով[29]: Այդուամենայնիվ, ռուսական այս ուժերը չափազանց փոքրաթիվ են՝ Հայաստանը Թուրքիայի հարձակումից ապահովող «վահանի» դեր կատարելու համար: Զուտ ռազմական տեսակետից՝ Հայաստանում ռուսական մեկ բրիգադի և մյուս զորատեսակների գտնվելն ունի առավելապես խորհրդանշական նշանակություն, այսինքն՝ այդ փոքրաթիվ զորքը մի

խոստում-գրավական է առ այն, որ անհրաժեշտության դեպքում Ռուսաստանը լրացուցիչ ուժեր կհատկացնի Հայաստանի պաշտպանությանը:

Սակայն անհրաժեշտ պահին Մոսկվայի խոստացած օգնությունը Հայաստանին կարող է ի չիք լինել ներքին կամ արտաքին ինչ-ինչ արտակարգ զարգացումների բերումով: Նման հավանական զարգացումներից կարելի է հիշել Ռուսաստանի ներսում հնարավոր հեղափոխական վայրիվերումների առաջացումը, որը կարող է կարճ կամ երկար ժամանակով կաթվածահար անել Կրեմլի պետական մեքենան: Նույն արդյունքի կարող են բերել թուրքական, ադրբեջանական և ամերիկյան քաղաքական ճնշումներն ու քաղաքական-տնտեսական «կաշառքները»[30]:

Ավելին, ներկայումս Ռուսաստանի զինված ուժերի ընդհանուր դրությունը տակավին ծանր է: Նախագահ Վ. Պուտինի ձեռնարկած միջոցառումները որոշակիորեն բարելավել են դրությունը, սակայն ոչ բավար չափով: Մինչ այդ լավատեղյակ ռուս մեկնաբանները համեմատում էին ռուսական զինուժի դրությունը 1941 թ. աշնան աղետալի իրավիճակի հետ և նախազգուշացնում, որ արմատական բարելավումներ չանելու դեպքում առաջիկա տարիներին բանը կարող է հասնել ռուսական բանակի անվերահսկելի և կատարյալ քայքայմանը[31]: 1999 թ. սեպտեմբերին Չեչնիայի դեմ Ռուսաստանի սկսած նոր պատերազմը ևս ցուցադրեց նախկինում հզորագույն ուժի գահավեժ քայքայումը, երբ Չեչնիայում կռվում էին Ռուսաստանի տարբեր վայրերից հավաքված լավագույն զորամասերը (նույնիսկ՝ բոլորովին այլ խնդիրներ լուծելու կոչված Հյուսիսային նավատորմի ծովային հետևակը), ռուսաստանցի զինվորները գերազանցում էին չեչեն գրոհայիններին մոտավորապես 10-ը 1 մարդու դիմաց հարաբերակցությամբ, ռուսներն ունեին վիթխարի կրակային ուժ՝ տանկեր, զրահամեքենաներ, հրետանի: Ռուսական ռազմական օդուժը չորս ամսվա ընթացքում կատարեց շուրջ 6.000 մարտական թռիչք, երբ չեչենները չունեին գեթ մեկ ինքնաթիռ: Եվ այդ ամենից հետո՝ ռուսական 100.000-անոց բանակը, ամիսներ կռվելով, դեռևս չէր կարողացել գրավել Չեչնիայի մայրաքաղաքն ու հարավային շրջանները[32]: Այսպիսի իրավիճակը բերել է նրան, որ արևմտյան որոշ մասնագետներ կարծում են, թե «Թուրքիայի

հարևաններից որևէ մեկը (նաև Ռուսաստանը՝ տեղայնացված սովորական պատերազմի դեպքում) ի վիճակի չեն միայնակ հակադրվելու թուրքական ռազմական կարողություններին»[33]:

Այսպիսով, այսօրվա դրությամբ, նույնիսկ զուտ ռազմական տեսակետից, Հայաստանի անվտանգությանը տրված ռուսական երաշխիքները 100-տոկոսանոց համարվել չեն կարող, թեև կազմում են Հայաստանի անվտանգության համակարգի ողնաշարային մասը[34]:

Նկատի ունենալով թուրքական ոտնձգությունների համար պարարտ հող ստեղծող այս հանգամանքները՝ հատկապես տագնապեցուցիչ պետք է համարել 1993 թ. ի վեր Անկարայի սանձազերծած այն ստահոդ քարոզչությունը, թե Հայաստանն իբր օժանդակում ու նույնիսկ բազաներ է տրամադրում Քրդական բանվորական կուսակցությանը (ՔԲԿ): Թուրքական մամուլի էջերից քաղված հետևյալ վերնագրերը կարող են որոշակի գաղափար տալ այդ քարոզչության ծավալների մասին. «Սիրիան ՔԲԿ-ի մարտիկներ է թռցնում Հայաստան», «Գարնանը ՔԲԿ-ն և ԱՍԱԼԱ-ն կցվելու են միմյանց», «Հետախուզության զեկուցագիրը մանրամասնում է Հայաստան-ՔԲԿ կապերը», «ՔԲԿ-ն տեղափոխվում է Իրան, Հայաստան»[35]: Հայաստան-ՔԲԿ կապերի մասին հայտարարություններով հանդես են եկել թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, նաև թուրքական բանակի գլխավոր շտաբի պետը: Իսկ 1998 թ. հոկտեմբերի 11-ին Թուրքիայի պետական նախարար Մեթին Գուրդերեն Հայաստանին սպառնաց բացահայտ պատերազմով. «Եթե Հայաստանը աջակցում է անջատողականներին, ապա մենք արել ենք մեր որոշումը՝ կոճակը սեղմված է: Պատերազմը կարող է բռնկվել յուրաքանչյուր պահի»[36]:

Տարածված կարծիքն այն է, թե իբր ՔԲԿ-Հայաստան կապերի մասին հերյուրանքները նախատեսված են սոսկ «ներքին սպառման» համար, թե դրանք իբր գալիս են բացատրելու քրդական զինված դիմադրության երկարատևությունը և բավարարելու թուրք հասարակության թշնամական զգացմունքները Հայաստանի հանդեպ: Իրականությունը, սակայն, ավելի վտանգավոր է: Հայաստան-ՔԲԿ կապերի մասին պետական մակարդակով վարվող տևական, լավ մշակված ու համաձայնեցված քարոզչության բուն նպատակը

Հայաստանի վրա մշտական ճնշումներ բանեցնելու նոր և լրացուցիչ պատրվակներ ունենալն է: Ընդ որում՝ այդ ճնշումը կարող է ընդունել ոչ միայն տնտեսական, այլև զուտ ռազմական ձևեր: Այսպես՝ ՔԲԿ-ին հետապնդելը պատրվակ դարձնելով՝ Թուրքիան պարբերաբար ներխուժում է հյուսիսային Իրաք, իսկ միջազգային հասարակական կարծիքը և ՆԱՏՕ-ական դաշնակիցներն արդեն վարժեցվել ու հաշտվել են այդ իրականության հետ: 1991-ից մինչև 1998-ի հունիսն ընկած ժամանակահատվածում Թուրքիան իրականացրել է 55 ներխուժում հյուսիսային Իրաք, որոնք միջազգային համայնքը չէր թույլատրել, բայց և չէր դատապարտել: Դրանցից չորսն ավելի քան 20.000 թուրք զինվոր ներգրաված խոշորամասշտաբ գործողություններ էին[37]: Ռազմավարապես կարևոր ու նավթով հարուստ այդ տարածքների թուրքական «ժամանակավոր» գրավումներն արդեն սովորական են դիտվում: Թուրքական զորքերի ներկայությունը հյուսիսային Իրաքում գնահատվում է իբրև մի սովորական բան՝ «կիսամշտական երևույթ»:

Միջազգային իրադրության մեջ հարմար առիթը որսալով՝ թուրքական բանակը կարող է փորձել նույն բանն անել նաև Հայաստանում: Արդյո՞ք պատահականություն է, որ վերոհիշյալ հաղորդագրություններում թուրքերը հականե-հանվանե նշում են Հայաստանի մի շարք բնակավայրեր, որոնք իբր ՔԲԿ-ի բազաներ են (ի թիվս այլոց, նշում են Հայկական ատոմակայանի շրջակայքը, Լաչինը, Արագածոտնի և Արարատի մարզերի որոշ գյուղեր)[38]: Ավելին՝ թուրքական քարոզչության ազդեցության տակ ռազմավարական հարցերում մասնագիտացող արևմտյան հեղինակավոր որոշ պարբերականներ արդեն ներկայացնում են Հայաստան-ՔԲԿ չեղած կապերը՝ իբրև հանրածանոթ փաստ[39]: 1999 թ. օգոստոսին, օրինակ, ՔԲԿ զինադադար հայտարարելուց հետո, աշխարհաքաղաքական վերլուծության ամերիկյան ամենաճանաչված հաստատություններից մեկը՝ Stratfor.com-ը, ըստ երևույթին, կատարելով թուրքերի պատվերը, երկիցս՝ 1999 թ. օգոստոսի 27-ին և նոյեմբերի 23-ին, աշխարհով մեկ, իբրև հավաստի լուր, տարածեց այն կեղծիքը, թե իբր ՔԲԿ ջոկատները վերազինվելու և վերամարզվելու են նահանջում Հայաստան՝ իրենց համար նախօրոք պատրաստված բազաներ[40]:

Ցավոք, այս ապատեղեկատվության դեմ որևէ լուրջ պայքար Հայաստանի կամ սփյուռքի համապատասխան մարմինները չեն մղում: Կարելի է նույնիսկ պնդել, որ իր դեմ սանձազերծված տեղեկատվական պատերազմին Հայաստանը պարզապես չի մասնակցում և այդ ճակատում, բնականաբար, ամեն օր պարտվում է: Նկատենք նաև, որ 2004 թ. հունիսի 1-ին ՔԲԿ-ն, որ հանդես է գալիս արդեն ԿՈՆԳՐԱ-ԳԵԼ անվան տակ, հայտարարեց իր հնգամյա միակողմանի զինադադարի դադարեցման մասին[41], որ ևս մեկ անգամ գալիս է փաստելու Թուրքիայում քրդական ապստամբների՝ տարածաշրջանում երկարատև ռազմավարական գործոն լինելու փաստը:

Բոլորովին վերջերս էլ նոր տվյալներ հրապարակվեցին այն մասին, որ 1993 թ. հոկտեմբերին Թուրքիան ծրագրել էր ներխուժել Հայաստան՝ պատրվակ բռնելով քրդական խնդիրը[42]: Մինչ այդ արևմտյան աղբյուրները հայտնել էին, որ 1993 թ. երկիցս՝ ապրիլին և սեպտեմբերին, Թուրքիան Հայաստանի սահմանի մոտ է ուղարկել իր տանկային, մեքենայացված և այլ զորամասեր, իսկ Թուրքական զինված ուժերը բերվել են մարտական բարձր պատրաստության վիճակի, իսկ վարչապետ Թ. Չիլլերը նախազգուշացրել էր, որ խորհրդարանից ռազմական գործողություններ վարելու իրավունք կխնդրի, եթե Հայաստանը դիպչի Նախիջևանի որևէ մասին[43]: Հետևաբար, բոլորովին պատահական չէ, որ ՔԲԿ-ի բազաների իբր Հայաստանում գտնվելու մասին տեղեկությունները Թուրքական մամուլում սկսել են հայտնվել 1993 թ. աշնանից[44]:

1999-ից ի վեր քրդական պարտիզանական պատերազմի ընդհատումը (որն իր ձևակերպումը գտավ միայն 2002 թ. սկզբին[45]) Թուրքիային որոշ չափով զրկում է Հայաստանի դեմ քրդական խաղաքարտն օգտագործելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով էլ 2002 թ. սկզբին, Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հուսեին Կիվրիկօղլուն հանդես եկավ մի նոր ստահոդ հայտարարությամբ, ըստ որի՝ Հայաստանն ունի զանգվածային ոչնչացման զենք ու, հետևաբար, նրա դեմ պետք է կիրառել նույնպիսի պատժամիջոցներ, ինչպիսիք կիրառվում են Իրաքի դեմ[46]: Այս հայտարարությունը Թուրքիայի հակահայաստանյան ընդհանուր քաղաքականության ծիրում դիտելու դեպքում պարզ կլինի, որ Թուրքիան հերթական նորանոր թակարդներ է լարում Հայաստանի

դեմ, որպեսզի մշտապես ճնշումներ բանեցնելու պատրվակներ ունենա կամ, եթե հարմար առիթ լինի, դիմի նաև ռազմական միջամտության:

Այսպիսով՝ թուրքական ներխուժումը Հայաստան հավանական զարգացում է, որը պետք է հաշվի առնել ամենայն լրջությամբ ու սառնասրտությամբ:

Հայաստանի ռազմավարությունը թուրքական հնարավոր ներխուժման դեպքում

Ինչպիսի՞ ռազմավարություն պետք է ընտրի Հայաստանը Թուրքիայի հետ հնարավոր պատերազմում:

Ընդունված տեսակետն այն է, որ թուրքական բանակը, օգտագործելով իր թվային առավելությունը, աշխարհագրական-տարածքային մեծ գերակշռությունը և Հայաստանի ռազմավարական խորություն չունենալը, սկզբունքորեն ի վիճակի է հաղթահարելու հայկական պաշտպանական գծերը և, մասամբ կամ ամբողջությամբ, գրավելու Հայաստանը: Այս տեսակետի հիման վրա արվում է այն ծանոթ հետևությունը, որ սեփական ուժերով թուրքերին դիմակայելու մասին չարժե նույնիսկ մտածել, այլ հույսը պետք է դնել միմիայն օտար դաշնակից ուժերի, նախ և առաջ Ռուսաստանի ռազմական միջամտության վրա:

Հայաստանի պետական շինարարության մեջ թույլ տրված խոշոր վրիպումները մասամբ առաջացել են ռազմավարական իրադրության ճիշտ այսպիսի թերի ընկալումներից և սեփական ուժերի թերագնահատումից: Հայկական բանակը կառուցվել է Ռուսաստանի հավերժական հովանավորության և հայ-ռուսական դաշինքին Ռուսաստանի անխախտ հավատարմության նախադրյալի վրա, որը, ցավոք, իրապաշտ չէ: Նախ՝ պետությունների «սիրո» վրա հիմնված հավերժական դաշինքներ ընդհանրապես չեն լինում: Հետո, ինչպես ցույց է տվել պատմությունը, Ռուսաստանը քանիցս չի տրամադրել կամ չի կարողացել տրամադրել Հայաստանին նախապես խոստացած օգնությունը (1722-35 թթ., 1878 թ., 1914-18 թթ., որոշ չափով նաև 1988-1997 թթ.): Երբեմն Ռուսաստանին ստիպել են զոհել Հա-

յաստանն ու հայկական շահերը, երբեմն էլ հյուսիսային այդ կայս-րությունը բավարար հնարավորություններ կամ պարզապես ցան-կություն ու կամք չի ունեցել այդ շահերը պաշտպանելու համար: Մեզանից անկախ պատճառներով՝ նույնը չի բացառվում նաև ա-պագայում, որին մենք պետք է այսօրվանից ու մշտապես պատ-րաստ լինենք: Ի՛նչ խոսք, Ռուսաստանի հետ մեր ռազմաքաղաքա-կան դաշինքն անգնահատելի նշանակություն ունի Հայաստանի ռազմական անվտանգության համար, և անհրաժեշտ է այն ամեն կերպ փայփայել և ամրապնդել: Սակայն, ինչպես վերը նշել ենք, ռուսական ռազմական «հովանոցը», մի կողմից, այսօր իսկ բավա-րար չէ Հայաստանի թուրքական ճակատի պաշտպանունակությու-նը 100 տոկոսով ապահովելու համար, մյուս կողմից՝ անկախ մեր ցանկությունից, Ռուսաստանի հովանավորությունը, ներքին կամ արտաքին հանգամանքների բերումով, մի գեղեցիկ օր կարող է հանկարծ հօդս ցնդել ընդհանրապես կամ թեկուզ ինչ-որ մի ժամա-նակահատվածով: Այդ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հատ-վածում Հայաստանը կարող է հայտնվել միայնակ թուրքական բա-նակների առջև:

Այս կապակցությամբ մի պահ չեղվենք և նկատենք, որ յու-րաքանչյուր կայացած պետություն իր ռազմական քաղաքակա-նությունը կառուցում է հավանական վատթարագույն սցենարների հաշվառման վրա: Ազգային անվտանգության հարցերում այս մո-տեցումը վաղուց արմատացել է զարգացած երկրներում՝ ներառյալ ԱՄՆ-ում, չնորհիվ նաև քաղաքագետների ու ռազմավարաբաննե-րի: Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ճանաչված ռազմավարա-գետ Սամուել Հանտինգտոնն, օրինակ, սկսած 1950-ականներից՝ «պատճառաբանում է, որ ամերիկյան հասարակությունը պետք է ունենա այնպիսի զինվորական և հետախուզական ծառայություն-ներ, որոնք մտածում են ամենաողբերգական, հոռետեսական կատե-գորիաներով»[47]: Իսկ Հայաստանի պարագայում վտանգի գերագնա-հատումը թեև կարող է ունենալ որոշակի բացասական հետևանք-ներ (այդ թվում՝ տնտեսության վրա լրացուցիչ ռազմական ծախսեր դնելով), սակայն այն անհամեմատելիորեն պակաս վնասաբեր է վտանգի թերագնահատումից, որը սպառնում է ազգի բուն գո-

յությանը: Իհարկե, լավագույն լուծումը վտանգի ճշգրիտ որոշումն է:

Ինչևէ, մի պահ պատկերացնենք Ռուսաստանից և միջազգային համայնքից լքված և Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմական զորության առջև մեն-մենակ մնացած Հայաստանը և դարձյալ առաջադրենք նույն հարցը. ինչպիսի՞ պաշտպանական ռազմավարություն ու մարտավարություն պետք է ունենա Հայաստանը՝ միայնակ դիմադրավելու համար թուրքական կամ թուրք-ադրբեջանական հնարավոր ներխուժմանը: Ահա ա՛յս հարցը պետք է դրված լինի Հայաստանի ռազմական քաղաքականության հիմքում:

Պատասխանը միակն է՝ Հայաստանը պետք է ձգտի թշնամու համար հնարավորին չափ ցավալի, դժվարին ու նույնիսկ անհնարին դարձնել իր զավթումը: «Միևնույն է՝ կպարտվենք, հետևաբար, դիմադրությունն անիմաստ է» փաստարկը քննադատության չի դիմանում: Սառը պատերազմի տարիներին ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ Խորհրդային Միությունը հասկանում էին, որ հակառակորդի հարձակման դեպքում ոչ միայն պարտվելու են, այլ բնաջնջվելու են: Սակայն նրանցից որևէ մեկի մտքով չէր անցնի առաջնորդվել «միևնույն է՝ բնաջնջվելու ենք, ուստի դիմադրությանը նախապատրաստվելն անիմաստ է» մտայնությամբ: Երկուսն էլ հասկանում էին, որ հակառակորդը չի հանդգնի հարձակվել, եթե համոզված լինի, որ ծանր կորուստներ է տալու: Արդ՝ պարզ է, որ թուրքական (կամ թուրք-ադրբեջանական) ներխուժումը սպառնալու է Հայաստանի և հայ ազգի ֆիզիկական գոյությանը: Պարզ է նաև, որ առայժմ Հայաստանն ի վիճակի չէ համարժեք սպառնալիք ներկայացնելու Թուրքիայի անվտանգությանը: Այլ կերպ ասած՝ մեր հակահարվածը առայժմ չի կարող սպառնալ Թուրքիային նույն հետևանքներով, ինչ Թուրքիայի հնարավոր հարձակումը Հայաստանի վրա: Սակայն աներկբայելի ճշմարտությունը հետևյալն է. որքան ավելի դժվար ու ցավալի (ոչ անպայման՝ անհնարին) լինի Հայաստանի զավթումը, այնքան ավելի պակաս կլինի Հայաստանի դեմ ագրեսիայի հավանականությունը[48]: Զուգահեռաբար՝ որքան ավելի պատրաստ լինի Հայաստանը միայնակ ու հնարավորին չափ երկար դիմադրավել ագրեսիային, այնքան ավելի մեծ կլինի Ռուսաստանի և այլ

պետությունների ցանկությունը ռազմականապես օժանդակել և դաշնակցել նրան:

Այն մտայնությունը, թե Հայաստանն անպայման պարտություն կկրի Թուրքիայի կամ Թուրքիայի և Ադրբեջանի դեմ պատերազմում, ընդհանուր առմամբ, սխալ է: Համաշխարհային պատմության մեջ բազմիցս է պատահել, երբ փոքրաթիվ և պակաս սպառազինված ուժերը կարողացել են հաղթանակ պոկել տասնապատիկ գերակշիռ ուժեր ունեցող հակառակորդից:

Վերջին ժամանակաշրջանի օրինակներից կարելի է հիշել ինչպես երկարատև հակամարտությունը Իսրայելի և արաբական երկրների միջև, այնպես էլ 1994-96 թթ. Չեչնիա-Ռուսաստան պատերազմը: Եթե համեմատենք, մի կողմից, Հայաստանի (ներառյալ Արցախի) ռազմական հնարավորությունները, մյուս կողմից՝ Թուրքիայի և Ադրբեջանի հնարավորությունները միասին վերցված, ապա մեր դրությունը զգալիորեն նախընտրելի է Չեչնիայի դրությունից: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ Հայաստանն անկախ պետություն է և մեծ հնարավորություններ ունի մանրակրկիտ ծրագրելու և նախապատրաստելու իր պաշտպանությունը: Հայաստանի միջազգայնորեն ճանաչված անկախությունը նաև այլ առավելություն ունի, այն է՝ ի տարբերություն, օրինակ, Ռուսաստանի՝ Չեչնիայում ծավալած գործողությունների՝ Թուրքիան զրկված է լինելու իր ագրեսիան շատ երկարաձգելու հնարավորությունից՝ և՛ միջազգային համայնքի բարձրացվելիք բողոքի ալիքի, և՛ հատկապես Թուրքիայի տարածաշրջանային հակառակորդների (նախ՝ Ռուսաստանի և Իրանի, ապա և՝ Սիրիայի և Հունաստանի) ձեռնարկելիք միջոցների պատճառով: Ուստի Հայաստանի թեկուզ մի քանի ամսյա դիմադրությունը բավարար է լինելու թուրքական բանակի հետքաշումն ապահովելու, տարածաշրջանային դաշնակիցներից ռազմական ու դիվանագիտական աջակցություն ստանալու համար:

Պատերազմի ելքը հաճախ որոշում է ոչ թե թվային գերակշռությունը, այլ միջազգային և ներքին իրադրության բազմապիսի հանգամանքների երբեմն անկանխատեսելի խաչաձևումը: Նախապես պարտված կարելի է համարել միայն այն կողմին, որը հանգամանորեն չի ծրագրում իր դիմադրությունը հավանական բո-

լոր պատերազմներում, հրաժարվում է միայնակ դիմադրելու հնարավորության մտքից:

Կա տեսակետ, թե Ռուսաստանի հովանավորությունից զրկվելու և թուրքական կամ թուրք-ադրբեջանական միաժամանակյա հարձակմանը ենթարկվելու հավանականությունն այսօրվա ռազմական իրողությունների դեպքում Հայաստանին դնելու է անմխիթար կացության մեջ: Հանկարծակի հարձակման դեպքում թշնամու առնվազն հնգապատիկ գերակշիռ ուժերը բավական արագ կճեղքեն շուրջ վաթսուն հազարանոց Հայկական բանակի (ներառյալ արցախյան բանակի) պաշտպանական գծերը (հատկապես արևմտյան ճակատում) և կգրավեն ռազմավարական խորությունից զուրկ Հայաստանի գլխավոր դիրքերն ու ճանապարհները: Պետությունը չի հասցնի անցկացնել բնակչության զորահավաք: Շատ շուտով, առավելագույնը երկու-երեք շաբաթում, Հայաստանի դիմադրությունը կդադարի կազմակերպված լինելուց և կընդունի, ընդհանուր առմամբ, քիչ արդյունավետ պարտիզանական պատերազմի բնույթ: Մինչդեռ այդ ընթացքում թշնամին կհասցնի ոչնչացնել երկրի ամբողջ տնտեսությունը և գուցե նաև ազգաբնակչության մի մեծ հատվածը:

Բայց արդյո՞ք հնարավոր է նմանատիպ հավանական սցենարում փրկել Հայաստանը: Պատասխանը միանշանակ դրական է: Այսօրվա մեր ունեցած սուղ ռեսուրսներով և առանց լրացուցիչ ծախսերի հնարավոր է հարյուրապատիկ ամրապնդել Հայաստանի պաշտպանությունը: Սակայն դրա համար անհրաժեշտ է հիմնավորապես վերանայել ՀՀ պաշտպանական քաղաքականությունը, կատարել կտրուկ և լուրջ փոփոխություններ:

Հիմնադրույթներ՝
ՀՀ պաշտպանական քաղաքականության

ՀՀ պաշտպանական քաղաքականության կառուցումն ունի մի քանի նախադրյալ խնդիրներ: Թեև ԽՍՀՄ փլուզումից հետո Այսրկովկասում առաջացած ազգային զինված ուժերից ամենաուժեղը, այսօրվա դրությամբ, հայկական բանակն է, սակայն նոր ստեղծված աշխարհառազմավարական միջավայրում այն դեռևս հե-

ռու է Հայաստանի ռազմական անվտանգության պահանջները բավարարելուց, որովհետև դեռևս ընդունակ չէ միայնակ չեզոքացնելու թուրքական վտանգը:

Հայաստանի աշխարհառազմավարական դրության ծանրությունը և հայկական բանակի բարոյահոգեբանական ընդհանուր անբավարար վիճակը սուր հակասության մեջ են: Վրաստանի և Ադրբեջանի բանակների թույլ և անկազմակերպ լինելու հետ «արդարացուցիչ» համեմատությունները տեղին չեն, որովհետև Հայաստանն ի դեմս Թուրքիայի ունի իր ֆիզիկական գոյությանն սպառնացող ահեղ թշնամի, մինչդեռ Վրաստանը և Ադրբեջանը լինել-չլինելու նմանատիպ խնդիր չունեն:

Անցանկալի երևույթների առկայությունն այսօրվա հայոց զինուժում տարածված փաստ է, իսկ դրանց արմատահանումը՝ հրատապ անհրաժեշտություն[49]: Մեր բանակի բարոյահոգեբանականը պետք է բարելավվի հիմնավորապես, այլապես այն շարունակելու է անցանկալի հետևանքներ ունենալ ոչ միայն զինվորական, այլև Հայաստանի անվտանգության այլ ոլորտներում՝ խրախուսելով կործանարար չափերի հասած արտագաղթը, քայքայելով ռազմահայրենասիրական տրամադրությունները, խախտելով հասարակական համերաշխությունը[50]:

Հայաստանի առջև կանգնած խնդիրների լուծումը պահանջում է հիմնովին փոխել հայկական բանակի կառուցման ընտրած մոդելը: Հայաստանի պաշտպանական քաղաքականությունը պետք է կառուցվի հետևյալ հիմնադրույթների վրա.

1) Պատերազմից խուսափելու գլխավոր միջոցը հայոց զինուժն է:

2) Թուրքիան և Ադրբեջանը ունեն թվային գերակշռություն և տարածքային մեծ առավելություն:

3) Հայաստանի ժողովրդագրությունն ու տնտեսությունն առայժմ ի վիճակի չեն մեծացնել մշտական բանակի թիվը, սակայն չպետք է նաև մարդուժի զգալի նվազում թույլ տան:

4) Հայոց զինված ուժերի հարաբերական փոքրաթիվությունը պետք է փոխհատուցվի առաջնակարգ ներքին կարգապահությամբ և կազմակերպվածությամբ:

5) Հայաստանի հասարակության և բանակի փոխհարաբերությունները պետք է կազմակերպվեն շվեյցարական՝ «ազգ-բանակ» (nation in arms) մոդելի հայկական տարբերակով, որն իհարկե պետք է մանրամասնորեն մշակվի և համապատասխանեցվի հայկական իրականությանը (ինչպես այդ մոդելը՝ բազմաթիվ փոփոխություններով և լրամշակումներով, հաջողությամբ կիրառվել է Իսրայելում): Այդ մոդելը նախատեսում է բանակի պահեստուժում (ռեզերվում) 18-ից մինչև 55 տարեկան բոլոր տղամարդկանց գործուն ներգրավվածություն: Սա նշանակում է, որ և՛ մեծահարուստը, և՛ չունևորը պարտավոր կլինեն յուրաքանչյուր տարվա մեջ առնվազն երկու-երեք շաբաթ անցկացնել բանակում՝ ծառայելով հավասար հիմքերի վրա ու լիակատար հավասարապաշտության պայմաններում[51]:

Հայկական բանակը պետք է լինի ոչ թե սովորական կանոնավոր բանակ, այլ, առավելաբար, պահեստուժի բանակ: Կարևոր են պահեստուժի՝ ա) մեծությունը, բ) արագ զորահավաքը (մոտավորապես 24 ժամում), գ) արդյունավետ ներգրավումը մարտական գործողությունների մեջ՝ առանց հետզորահավաքային մարզումների վրա լրացուցիչ ժամանակ ծախսելու:

Հինգ պատերազմներում հաղթանակած Իսրայելի պաշտպանական ուժերը (ԻՊՈՒ) շուրջ 80 տոկոսով բաղկացած են պահեստուժից: ԻՊՈՒ-ի մոդելը մանրազնին ուսումնասիրած ԱՄՆ-ի բանակի գնդապետ, պատմագիտության դոկտոր Զառլզ Հելլերը նշում է.

> «Իսրայելի Պաշտպանական Ուժերի քաղաքացի-զինվորները «պահեստուժ» չեն բառիս բուն իմաստով, այլ միացյալ ընդհանուր ուժի կառուցվածքի մաս: Այս միակցվածության շնորհիվ էլ՝ Մշտական ծառայության (*Քևայի*) սպաներն ու կրտսեր սպաները հրաշալի ճանաչում են իրենց պահեստային ուժերը (*Միլուիմը*), քանի որ նրանք հասկանում են, որ ԻՊՈՒ-ն պահեստուժի բանակ է: ԻՊՈՒ-ի պահեստուժի զինվորին կարող է հատկացնեն կամ չհատկացնեն առկա նորագույն սպառազինություն: Սակայն անկախ դրանից, *Միլուիմի* շատ ստորաբաժանումներ մարտի մեջ են մտնում *Քևայի* ստորաբաժանումների հետ կողք կողքի»[52]:

Պետք է մշակել նաև կանանց կամավոր ծառայության առավել ընդունելի, արդյունավետ ձևեր:

6) Հայկական բանակի ազգաշինության կարողությունները մինչև այժմ շատ քիչ են օգտագործվել: Փաստորեն, հայոց զինված ուժերի առջև այդպիսի խնդիր չի դրվել: Այնինչ՝ հայկական բանակն ունի ժողովրդի համախմբման և պատանի սերնդի հայրենասիրական ու քաղաքացիական դաստիարակության վիթխարի հնարավորություններ[53]:

7) Թուրքական հնարավոր ագրեսիայի ինքնուրույն դիմադրավման կարողության շեշտակի բարձրացումը պետք է ուղեկցվի առավել վստահելի դաշնակիցների հետ ռազմավարական հարաբերությունների եռանդուն մշակմամբ: Առայժմ այդպիսի դաշնակից է միայն Ռուսաստանը: Ապագայում, հատկապես ԱՄՆ-Իրան հարաբերությունների մեղմացման դեպքում, Հայաստանի անվտանգության երաշխավոր և ռազմավարական դաշնակից կարող է դառնալ նաև Իրանը[54]: Անհրաժեշտ է զարգացնել հարաբերությունները նաև այն պետությունների հետ, որոնց ձեռնտու է Թուրքիայի սահմանին տեսնել ռազմականապես ամուր Հայաստան. դրանք են Սիրիան, Չինաստանը, Հունաստանը (ինքնիշխանության վերականգնումից հետո՝ նաև Իրաքը): Սակայն այս վերջինները, իրենց հեռավորության, կարողությունների և ուրիշ ավելի առաջնահերթ շահեր ունենալու պատճառով, Հայաստանի վրա թուրքական հարձակման դեպքում Թուրքիային պատերազմ չեն հայտարարի: Այս պետությունների ռազմավարական հարաբերությունները կարևոր են հայկական բանակի պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, հետախուզական տեղեկատվության փոխանակման և դիվանագիտական աջակցության բնագավառներում:

8) Վերջապես՝ Ռուսաստանի և մյուս դաշնակիցների հետ ռազմաքաղաքական հարաբերություններն ամրապնդելու լավագույն միջոցը սեփական պաշտպանական կարողությունների վրա վերադիրքորոշվելն է:

Հավասարապաշտական հասարակական մթնոլորտի անհրաժեշտություն

«Ազգ-բանակ» ռազմական մոդելի հաջող գործունեությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ Հայաստանում ստեղծվի հասարակական համերաշխության մթնոլորտ: Դա էլ իր հերթին պահանջում է, որ Հայաստանի զարգացման հիմքում ընկնի սոցիալական արդարության գաղափարը:

Ցավոք, Հայաստանը դարձել է զանգվածային աղքատության ու փոքրաթիվ մեծահարուստների երկիր: Վերն արդեն նշվել է, որ 2001-02 թթ. Հայաստանի բնակչության 50-56 տոկոսն ապրում էր աղքատության սահմանագծից ներքև[55]: 2002 թ. սկզբին Համաշխարհային բանկի հրապարակած տվյալներով՝ Հայաստանում եկամուտների անհավասարության մակարդակն անցումային տնտեսություն ունեցող երկրների (իմա՝ Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) մեջ ամենաբարձրերից էր՝ ավելի բարձր, քան Տաջիկստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Ղըրղզստանում և Մոլդովայում[56]: Եկամուտների անհավասարության Ջինի գործակիցը շարունակում է մնալ սոցիալական լարվածության տեսակետից տագնապալից 0.5-ից բարձր մակարդակում (բացասական առումով ամենաբարձրն է ԱՊՀ երկրներում)[57]: 1999 թ. դրությամբ՝ Հայաստանում բնակչության 5 տոկոսը կազմող ամենահարուստները տիրում էին ազգային հարստության 70 տոկոսին[58]: Ճիշտ է, կան զարգացած երկրներ, որտեղ սոցիալական անհավասարությունը մոտավորապես նույն մակարդակի վրա է: Օրինակ՝ ԱՄՆ-ում բնակչության 5 տոկոսը կազմող ամենահարուստները տիրում են ազգային հարստության 60 տոկոսին[59]: Բայց Հայաստանի՛ համար հասարակության այսպիսի ահռելի բևեռացումը մահացու վտանգ է ներկայացնում, քանի որ.

ա) ի տարբերություն ԱՄՆ-ի՝ այժմ Հայաստանի Հանրապետությունն աղքատ երկիր է, և նման չափերի հասնող բևեռացումը ծնում է զանգվածային չքավորություն.

բ) ԱՄՆ-ում սոցիալական անհավասարությունն առաջացել է կապիտալիստական զարգացման բնական ճանապարհով, ըստ այդմ էլ՝ ամերիկացիները շատ ավելի հանգիստ վերաբերմունք ունեն

դրա նկատմամբ: Մինչդեռ Հայաստանում մարդիկ իրավացիորեն մեծ ցավով են վերաբերվում սոցիալական անհավասարությանը, որովհետև այն առաջացել է հանկարծակի, ընդամենը մի քանի տարվա ընթացքում՝ օրենքի և արդարության ամենակոպիտ խախտումների արդյունքում: Խորհրդային շրջանում եկամուտների հարաբերական հավասարության թարմ հիշողությունը ևս հոգեբանորեն ճնշում է մարդկանց:

Այսօր Հայաստանի բնակչության մարդկային ռեսուրսներն այն աստիճան սակավ են նրա վերջնական ջախջախումը երազող ադրբեջանա-թուրքական դաշնության համեմատ, որ դասակարգային սուր առճակատումը մեզանում անթույլատրելի է: Սակայն այդպիսի առճակատումն արդեն իսկ իրականություն է. զանգվածների բողոքն առայժմ արտահայտվում է հիմնականում արտագաղթի և պետության շահերի նկատմամբ ծայրահեղ անտարբերության միջոցով: Ուստի պետք է ամենալուրջ ծրագրերը մշակել հասարակության եկամուտների բևեռացումը կտրուկ նվազեցնելու համար, այլապես հասարակական համերաշխության մասին խոսելն ավելորդ կլինի:

Հայաստանի աշխարհաքաղաքական բարդագույն դիրքն ուղղակի պարտադրում է մեր հասարակությանը յուրացնել ոչ թե «ջունգլիների» կամ, այսպես կոչված, «վայրի կապիտալիզմի» բարոյական նորմերը (որոնք, ի դեպ, վաղուց մերժվել են քաղաքակիրթ Արևմուտքում), այլ որդեգրել ընդգծված հավասարապաշտական (էգալիտարիստական) էթիկա: Սա ամենևին չի նշանակում, թե պետք է ոչնչացնել մասնավոր սեփականությունը և դարձյալ փորձել ենթարկել բոլորի եկամուտներն ու աշխատավարձերն անհեթեթ հավասարեցման: Խոսքը վերաբերում է օրենքի գերակայության հաստատմանն ու հասարակության բարոյականությանը:

Որո՞նք են հասարակական գործունեության այն ոլորտները, որտեղ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի պետք է զգա իրեն մյուսների հետ հավասար: Իհարկե, նախ և առաջ, Հայաստանում չպետք է լինեն մարդիկ ու, առավել ևս, նորահայտ «կաստաներ», որոնք օրենքը որևէ ձևով շրջանցելու հնարավորություն ունենան: Երկրորդ՝ կրթությունը, այդ թվում՝ բարձրագույնը, պետք է մատչելի լինի Հայաստանի յուրաքանչյուր ունակ երիտասարդի համար:

Վերջապես, կա մի առանձնահատուկ բնագավառ, որտեղ բոլորը պետք է ամեն ինչում հավասար լինեն: Խոսքը հայրենիքի պաշտպանության, Հայոց բանակում ծառայության մասին է: Հայոց բանակը հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակության ու մեր ազգակերտման հիմնական դարբնոցներից է: Հայոց բանակում սոցիալական արդարության սկզբունքը պետք է իրականացվի խստագույնս, որպեսզի և՛ հարուստի, և՛ չունևորի, և՛ պաշտոնյայի, և՛ ոչ պաշտոնյայի զավակները դառնան Հայաստանի պատասխանատու քաղաքացիներ և, անկախ սոցիալական կամ այլ տարբերություններից, զգան իրենց նույն երկրի, նույն պատմության և ճակատագրի մասնիկ:

Բանակը և հասարակությունը անմիջականորեն ու խորապես փոխազդում են միմյանց վրա: Այդ փոխազդեցություններն անդրադառնում են ամենազանազան հարցերին, ինչպիսիք են, օրինակ, ժողովրդավարությունը, երիտասարդ սերնդի քաղաքացիական-հայրենասիրական դաստիարակությունը, զինծառայողների կարգապահությունն ու նվիրվածությունը հայրենիքին, հասարակության համերաշխությունը և համախմբվածությունը ազգային-պետական կարևոր խնդիրների շուրջ և, վերջին հաշվով, պետության, հասարակության և բանակի կայունությունն ու ամրությունը: Բանակի ազդեցությունը հասարակության զարգացման ուղղությունների վրա մեծ է հատկապես նորանկախ պետություններում: Պետության՝ իր զինծառայողների հավաքագրման ձևերը, օրինակ, լուրջ ազդեցություններ են թողնում ինչպես զինված ուժերի, այնպես էլ հասարակության վրա: Հարկադիր հավաքագրման ենթարկված զինծառայողները, որպես կանոն, չեն ունենում այն բարոյական նվիրվածությունը, որը բնորոշ է կամավորականներին: Հարկադիր հավաքագրման ճանապարհով ստեղծված զինուժը խիստ կարգապահություն պահանջող համակարգ է, որի համախմբվածությունը հիմնված է պատժի ենթարկելու սպառնալիքի վրա: Այդպիսի զինված ուժերն ունենում են դասալքության և անկարգապահության լուրջ խնդիրներ, որոնք կարող է զսպել միայն ուժեղ կազմակերպվածությունը: Հայկական բանակի շինարարության գործում պետք է հիշել հայ զինվորի հոգեբանության հանճարեղ գիտակ Գարեգին Նժդեհի դիտողությունը.

«Հայը կռվում է աննահանջ և սխրագործում ավելի իբրև կամավոր, քան պարտադիր ծառայության զինվոր: Նրա սրտովը չէ՝ գործել հրամանով, իսկ մեռնել հրամանով՝ բնա՛վ: Պարտադիր ծառայության մեջ իսկ նա իրեն զգում է կամավոր:

Հոգեբանական այդ իրողությունը հետևանք է այն բանի, որ երկար, շատ երկար ժամանակ՝ իր պատմական ճակատագրի բերումով, հայն իր հայրենիքի պաշտպանության գործին մասնակցել է ոչ թե իբրև իր նախարարի ստրուկը, ճորտը, այլ իբրև հայ մարդ, որ պարտական է կռվելու Հայաստանի համար:

Հայի այդ հոգեգիծը՝ դրական և օրհնաբեր, պիտի պահպանվի գուրգուրանքով, քանզի կամավորության գաղափարն ավելի վեհ է, քան պարտադիր ծառայությունը»[60]:

Հայկական բանակի բարձրաստիճան սպա, պատմական գիտությունների թեկնածու Մ. Մելքոնյանը նկատում է, որ «ռազմական սպառնալիքի ծավալները պահանջում են երկրի պաշտպանության գործում ընդգրկել ողջ բնակչությանը»[61]: Սակայն Հայաստանի բնակչությունն անհաղորդ է պետության պաշտպանական ծրագրերին և, փաստորեն, դուրս է մնացել ծրագրված կերպով երկրի պաշտպանությանն իր գործուն մասնակցությունը բերելուց, թեև միայն այդ դեպքում հնարավոր կլինի հաջող պաշտպանություն կազմակերպել Թուրքիայի բազմապատիկ գերակշիռ ուժերի դեմ: Այս պայմաններում ժողովուրդն ընկալում է կամ, ավելի ճիշտ, ենթագիտակցաբար զգում է թուրքական վտանգը: Բայց վտանգը հուզականորեն ընկալելը մի բան է, ռազմավարական չափանիշներով գիտակցելը՝ բոլորովին այլ բան: Ժողովուրդն ընդամենը զգում է վտանգը: Այդ անորոշ զգացողությունը ծնում է շփոթվածություն և անպաշտպանվածության զգացում: Խնդիրն այն է, որ մշակվի թուրքական վտանգի դեմն առնելու իրատեսական ու Հայաստանի ամբողջ ժողովրդի կողմից ընդունված ռազմական քաղաքականություն[62]:

Ժողովրդավարություն և ազգային անվտանգություն

Անհրաժեշտ է անել մի վերջին պարզաբանում ևս՝ ժողովրդավարության և ազգային անվտանգության փոխհարաբերության *մա-*

սին: Արտասահմանցի որոշ դիտորդներ պնդում են, թե Հայաստանում իբր անհնար է ժողովրդավարական պետություն կառուցել, քանի դեռ Ղարաբաղյան հակամարտությունը վերջնականապես չի կարգավորվել: Պատճառաբանում են նրանով, թե մերօրյա կիսապատերազմական պայմաններում բանակն ու անվտանգության մարմինները համեմատաբար անհամաչափ մեծ կշիռ են ունենալու պետության մեջ և լինելու են քաղաքացիական կառույցների և իշխանությունների վերահսկողությունից դուրս:

Իրականում, Հայաստանի աշխարհառազմավարական դիրքը միշտ էլ պահանջելու է ունենալ հզոր բանակ և անվտանգության արդյունավետ համակարգ, սակայն այդ կառույցների քաղաքացիական վերահսկողությունը կախված է ոչ թե արտաքին շրջադրությունից, այլ, առավելապես, երկրի ներքին զարգացումներից: Կան պատմական նախադեպեր, երբ մի կողմից՝ ժողովրդավարությունը, մյուս կողմից՝ ազգային անվտանգության խստագույն պահանջները ներդաշնակորեն համագոյակցել են. օրինակ՝ Մեծ Բրիտանիան՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կամ, լուրջ վերապահումներով հանդերձ, Իսրայելը՝ վերջին հիսուն տարվա ընթացքում (թեև իսրայելական ժողովրդավարությունը թերի է՝ արաբ բնակչության հանդեպ իրականացվող խտրական քաղաքականության պատճառով):

Հայաստանի պաշտպանական ռազմավարությունները

Ադրբեջան-Հայաստան պատերազմ

Ադրբեջանի հետ պատերազմում Հայաստանի ռազմավարությունը պետք է լինի հարձակողական: Սեփական տարածքում ավերածությունների մակարդակը նվազեցնելու և թշնամու զորամիավորումներին ջախջախիչ պարտության մատնելու միջոց պետք է լինի պատերազմի տեղափոխումը թշնամու տարածք: Հայոց բանակի խնդիրը լինելու է ո՛չ թե Բաքվի գրավումը, այլ մարտադաշտում տարած վճռորոշ հաղթանակները, որոնք կարող են ժամանակի ընթացքում համոզել Ադրբեջանին, որ Արցախի և Զանգեզուրի գրա-

վումն անհնար է և անհեռանկար: Այդպիսի հաղթանակները, ամենայն հավանականությամբ, կուղեկցվեն տարածքային առաջխաղացումներով Գետաշեն-Դաշքեսան-Գետաբեկ, Գանձակ և Հորադիզ ուղղություններով կամ, ծայրահեղ ծանր իրավիճակում, Նախիջևանի ուղղությամբ: Ադրբեջանի հետ պատերազմում պաշտպանությունը պետք է լինի ընդամենը մի կարճատև անցումային փուլ՝ վճռական հարձակմանն անցնելուց առաջ (լինի դա հակագրոհ թե կանխարգելիչ հարձակում)[63]:

Իր անվտանգությանը լուրջ սպառնալիք առաջանալուն պես՝ հայկական կողմը պետք է պատրաստ լինի խափանելու ադրբեջանական նավթի արտահանումը: Հայկական զինված ուժերի այդ կարողությունը, հարվածելով Ադրբեջանի տնտեսական հզորությանը, միաժամանակ կստիպի, որ նավթային խոշորագույն ընկերությունները գործածեն Ադրբեջանի վրա իրենց ողջ ազդեցությունը՝ պատերազմի սանձարձակում թույլ չտալու համար[64]:

Թուրքիա-Հայաստան պատերազմ

Թուրքական կամ թուրք-ադրբեջանական համատեղ ներխուժման դեպքում Հայաստանը պետք է ունենա սկզբունքորեն այլ՝ խորը պաշտպանության ռազմավարություն, որն ուղեկցվելու է սահմանափակ նպատակներ ունեցող հակագրոհներով: Հայաստանի ամբողջ տարածքը պետք է վերածվի համապարփակ պաշտպանության գոտու՝ համաձայն նախապես մանրազնին մշակած և պատրաստած ծրագրերի: Ծրագրավորումն ու սառնասիրտ նախապատրաստումը ներառելու են պաշտպանության խոր, էշելոնացված մի քանի գծի կառուցում: Եթե թշնամին կարողանա ճեղքել ու թափանցել բոլոր գծերը, պետք է պատրաստ լինել անցնելու նաև դիմադրության որակապես նոր փուլին՝ պարտիզանական պատերազմին: Դրա համար պետք է ունենալ պաշտպանության հզոր ենթակառուցվածք՝ ներառյալ արագ զանգվածային զորահավաք անցկացնելու կարողություն, սննդի, զենքի և զինամթերքի հույժ գաղտնի պահեստներ և այլն: Այս տեսակ նախապատրաստությունները ոչ միայն մեծապես կամրապնդեն Հայաստանի պաշտպանունակությունը և կը-

նպաստեն սոցիալական համախմբմանը Հայաստանի ներսում, այլև ցույց կտան արտաքին աշխարհին, նախ և առաջ՝ Թուրքիային և Ադրբեջանին, Հայաստանի դեմ ագրեսիայի վճարելիք շատ թանկ գինը:

Թուրքիայի հետ պատերազմում հայկական զինված ուժերի հիմնական նպատակներն են լինելու, մի կողմից, թշնամու զորքերին հնարավորին չափ ծանր կորուստների պատճառումը, մյուս կողմից՝ սեփական ազգաբնակչությանը մեծաթիվ կորուստներից ապահովագրելը:

Հայոց բանակի գլխավոր սկզբունքը՝ «Որակն ընդդեմ քանակի»

Հաղթահարելու համար թշնամու ունեցած քանակային գերակշռությունը մարդուժի և սպառազինությունների մեջ՝ հայկական բանակը պետք է որդեգրի «որակն ընդդեմ քանակի» սկզբունքը: Հայաստանի տնտեսական պայմաններն առայժմ թույլ չեն տալու կիրառել այս սկզբունքը զինտեխնիկայի և հատուկ սարքերի բնագավառում. այստեղ մենք պետք է ձգտենք գոնե հավասարակշռություն պահպանել Ադրբեջանի հետ[65]: Սակայն «որակն ընդդեմ քանակի» սկզբունքը պետք է պարտադրաբար կիրառվի ոչ պակաս կարևոր այլ բնագավառներում, որոնցից են բանակի բարոյականը, մարտիկների մոտիվացիան և նվիրվածությունը, մարտավարական պատրաստվածության աստիճանը, սպայակազմի զարգացածությունը, ճակատամարտում հնարամիտ և անսպասելի որոշումներ ընդունելու և դրանք իրականացնելու կարողությունը[66]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] **Արթուր Աղաբեկյան**, «Ժամանակակից մարտահրավերներն ու ՀՀ ազգային անվտանգության ծրագրավորման գործընթացը». - *Օրենք և իրականություն*, նոյեմբեր 2001 թ., ¹ 21 (35), էջ 22:

[2] Իսրայելական այս հայեցակարգի մասին մանրամասն տե՛ս **Bernard Reich**, “Israel,” in **Edward A. Kolodziej and Robert E. Harkavy**, eds., *Security*

Policies of Developing Countries (Lexington, Mass.: Lexington Books, 1982), pp. 204, 212-215; **Shimon Peres**, “A Strategy for Peace in the Middle East,” *Foreign Affairs* 58 (Spring 1980), p. 891:

[3] Այսպես՝ 1997 թ. օգոստոսի դրությամբ Ադրբեջանը զերազանցում էր իր սահմանափակումները 50 տանկով, 337 զրահամեքենայով և 16 հրետանային համակարգով (տե՛ս Նոյյան տապան լրատվական ծառայության 1997 թ. օգոստոսի 31-ի հաղորդագրությունը ՀՀ արտգործնախարարության խոսնակի ասուլիսի մասին):

[4] Treaty on Conventional Armed Forces in Europe, Article II, 1 (B), in **Arie Bloed**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe: Analysis and Basic Documents, 1972-1993* (Dodrecht; Boston; London: Kluwer Academic Publishers, 1993), p. 1226.

[5] **Michael Robert Hickok**, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," *Parameters* (US Army War College Quarterly), Summer 2000, Vol. XXX, ¹ 2, pp. 105-119 (ստորև, սակայն, այս հոդվածի էջերը նշում ենք այնպես, ինչպես այն հայտնվում է ինտերնետում):

[6] **Malik Mufti**, "Daring and Caution in Turkish Foreign Policy," *Middle East Journal*, 52 (Winter 1998), pp. 34-40.

[7] **Sükrü Elekdag**, "2 and 1/2 War Strategy," *Perceptions: Journal of International Affairs*, ¹ 1 (March-May 1996), pp. 33-57.

[8] **Hickok**, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 3.

[9] **Ministry of National Defense** (Turkey), *White Paper-Defense 1998* (Ankara: Ministry of National Defense, 1998), p. 5.

[10] **Ministry of National Defense** (Turkey), *White Paper-Defense 1998*, p. 16.

[11] **Hickok**, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 4, մեջբերումը կատարված է թուրքական հետևյալ պարբերականից՝ *Ulusal Strateji* [Միջազգային ռազմավարություն] (March-April 1999), pp. 68-73.

[12] “The general operation concept of the 2000s stipulates the creation of a sensor region where the aggressor is in and defeating him beyond and in the depths of the theater. Therefore, possession of troops with overwhelming fire power and maneuver capability and ensuring by determining its weakest position, the coordinated and efficient use of target identification, detection, and

warning systems as well as the command [and] control, electronic warfare, and communication information systems are important assets to this end." **Ministry of National Defense** (Turkey), *White Paper-Defense 1998*, p. 19.

[13] **Hickok**, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," p. 4.

[14] Այս ծրագրերի մասին տե՛ս **Ministry of National Defense** (Turkey), *White Paper-Defense 1998*, pp. 117-139; **Vahit Erdem**, "Defense Industry and Investment Projects," *Turkish Review Quarterly Digest* (Spring 1988), p. 18; **Michael Robert Hickok**, "Peace Onyx: A Story of Turkish F-16 Coproduction," in *International Military Aerospace Collaboration*, ed. Pia Christina Wood and David S. Sorenson (Aldershot, U. K.: Ashgate Press, 1999), pp. 153-181; Idem, "Hegemon Rising," pp. 5-9; **Վահրամ Պետրոսյան**, «Թուրքիան և ռազմականացումը». – *Հայ գինվոր*, 10-17 ապրիլի 1999 թ., ¹ 14 (269):

[15] **Huseyin Kivrikoglu**, "Land Forces Organization," *Ankara Savunma ve Havacilik* [Անկարայի պաշտպանություն և հակաօդային պաշտպանություն] (September-October 1998), pp. 10-11.

[16] [The army would have] weapons systems that would establish preponderance over the enemy deep inside his territory, fire smart ammunition including long-range ground-to-ground missiles, and provide a continuous and sound fire cover. [The army also would have] modern tanks with advanced armor and effective anti-tank weapons systems with organic air defense and helicopters for air assault troops. Machinery would rapidly erect hurdles to the enemy's mobility and open passages to enhance the mobility of the friendly units. Intelligence gathering systems would enable units at every level to detect, pinpoint, and recognize the enemy within the range of their capability. – **Huseyin Kivrikoglu**, "Land Forces Organization," p. 18.

[17] **Արթուր Աղաբեկյան**, «Ժամանակակից մարտահրավերներն ու ՀՀ ազգային անվտանգության ծրագրավորման գործընթացը», էջ 22:

[18] **Ola Tunander**, "A New Ottoman Empire? The Choice for Turkey: Euro-Asian Centre vs. National Fortress," *Security Dialogue*, 26 (December 1995), 413-26; **Hickok**, "Hegemon Rising," p. 9-10.

[19] **Наталья Айрапетова**, "Турецкий марш на просторах СНГ. Блистательная Порта вновь стремится на геополитическую арену", *Âèçàíòèéñêîå íàñëåäñòâî* информационно-аналитический журнал No. 5, 2003, сс. 43-44.

[20] **О. А. Колобов, А. А. Корнилов, А. Г. Симонян**, *Российско-армянские отношения: исторический опыт, стратегические вызовы и перспективы развития* (Нижний Новгород-Ереван: Типография Нижегородского госуниверситета, 2001), с. 18-19.

[21] Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ևս ծագում է նույն այդ «հայելային» անվստահությունից: Նկատելով այն փաստը, թե որքան չնչին է Թուրքիայի ազգային անվտանգությանը Հայաստանի ներկայացրած իրական վտանգը, կարելի է միաժամանակ պատկերացնել, թե ինչպիսի մեծ չափերի են հասնում այդ քաղաքականությունը սնուցող թուրքերի մտավախությունները՝ հայերի մտադրությունների և Հայաստանի հետագա հզորացման վերաբերյալ: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ Գլուխ 6, «Հայոց պատմական վրեժի զգացում» ենթաբաժինը:

[22] Ըստ Հայաստանի պաշտոնական աղբյուրներից քաղված տվյալների՝ 1999 թ. հայ-թուրքական առևտրի ծավալը հասել է 42 միլիոն դոլարի, իսկ որոշ ոչ պաշտոնական տեղեկություններով՝ 150 միլիոն դոլարի (**Emil Danielyan**, "Turkey-Armenia Travel in Question as Ankara Tightens Visa Regime," *RFE/RL News Briefs,* 5 October 2000): Ինչպես գրում է այս հարցն առավել մանրամասնորեն հետազոտած հեղինակը՝ «Թուրքիան Հայաստանի հետ իրականացնում է արտաքին առևտրային կապեր, որոնք, փաստորեն, չեն գտնվում պետության վերահսկողության ոլորտում: Այդպիսի տարեբային ու պատահական ձևերով իրականացվող առևտուրը հանգեցնում է բացասական հետևանքների հատկապես Հայաստանի տնտեսության համար» (**Թորոս Թորոսյան**, *Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր:* Երևան. ՌԱՀՀԿ, 2001, էջ 5):

[23] **International Institute for Strategic Studies**, *The Military Balance*, 2001/2002 (London: Oxford University Press, 2001), p. 73.

[24] **John Ward Anderson**, "Kurdish Scar Unhealed in Turkey: Latest Attack Belies Government Resettlement Policy," *Washington Post,* November 8, 2000; p. A3. Հետաքրքիր է դիտարկել, որ 1995-ից մինչև 1997-ը թուրքական զինված ուժերի թիվն աճել էր՝ 507.800-ից հասնելով 639.000 զինծառայողի: Այս աճը տեղի էր ունեցել հիմնականում բանակում՝ 400.000-անոցից այն դարձել էր 525.000-անոց: Այս աննախադեպ աճը չի բացատրվում 1984-ից ի վեր Թուրքիայի այդ շրջաններում ընթացող քրդական ապստամբությամբ, որովհետև դա պատերազմ էր ընդամենը քուրդ պարտիզանների մանր ջոկատների ու թուրքական հակաապստամբական հատուկ ուժերի միջև: Այդ ապստամբությունը Թուրքիայի համար ռազմական լուրջ սպառնալիք չէր ներկայացնում և չէր պահանջում խոշոր բանակային զորամիա-

վորումների ներդրավում: Այդ աճն ավելի ստույգ կարելի է կապել երկու այլ հանգամանքի հետ. ա) Եվրոպայում Սովորական սպառազինություններ-ի մասին պայմանագրի սահմանափակումները հնարավորություն են ընձեռում Թուրքիային ունենալ անսահմանափակ թվով զորք և սպառազինություն 39-րդ հորիզոնականից հարավ ընկած իր տարածքում, որ սահմանակից է Հայաստանին, Իրանին և Իրաքին (տե՛ս *Treaty on Conventional Armed Forces in Europe*, Article II, 1 (B), in **Bloed, Arie**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe: Analysis and Basic Documents, 1972-1993*, p. 1226), և բ) զորքերի աճի բուն պատճառն Անկարայի ձգտումն է ռազմական ուժի ստվարացման ճանապարհով մեծացնել իր քաղաքական կշիռը Կովկասում, ինչպես նաև մերձավորարևելյան տարածաշրջանում: Զորքերի հետագա կրճատումը տեղի է ունեցել, ըստ երևույթին, Թուրքական բանակի ռազմատեխնիկական նորացման և հագեցվածության բարձրացման շնորհիվ:

[25] **International Institute for Strategic Studies**, *The Military Balance, 2001/2002*, p. 81. 1999 թ. դրությամբ Ադրբեջանի բանակում դարձյալ նշվում է 72.150 զինծառայող (*The Military Balance, 1998/1999*. London: Oxford University Press, 1998, p. 75}:

[26] 2000թ. դրությամբ՝ Ադրբեջանի բանակում դասալքությունը հասնում էր մինչև 18-20 տոկոս (ժամկետային ծառայության 19.000 զինվոր), որի պատճառով էլ օրենքով նախատեսված 17 ամսվա փոխարեն ծառայության ժամկետը շատ դեպքերում հասնում էր 3-ից մինչև 3.5 տարի, ինչն իր հերթին ծնում էր կարգապահության անկում և դասալքության աճ (տե՛ս Äàâèä Ïåòðîñÿí, "Ïðè÷èíû âîåííîãî óñïåõà àðìÿí", *Íîâàÿ êîâ÷åã* (èíôîðìàöèîííî-àíàëèòè÷åñêàÿ ãàçåòà àðìÿíñêîé äèàñïîðû ñòðàí ÑÍÃ) ¹ 4 (28) ìàé 2000): Ադրբեջանական աղբյուրների համաձայն՝ 1995-2000 թթ. ընթացքում հիվանդության, վթարների և ծեծկռտուքի հետևանքով զոհվել է 2000 և հաշմանդամ դարձել շուրջ 3000 ադրբեջանցի զինվոր (2,000 Azerbaijani Soldiers Said to Have Died from Noncombat Deaths in 1995-2000," *RFERL Newsline,* 30 August, 2001): Սակայն, միաժամանակ, Ադրբեջանը, Թուրքիայի օժանդակությամբ, եռանդուն կերպով ամրացնում է իր զինված ուժերը և բարելավում նրանց բարոյահոգեբանական վիճակը: Այդ ուղղությամբ ձեռնարկվող զանազան միջոցառումներից կարելի է առանձնացնել ադրբեջանական բանակում պրոֆեսիոնալ զինվորներից բաղկացած առանձին զորամասերի ստեղծումը (ճակատամերձ գոտում արդեն տեղակայվել են այդ սկզբունքով համալրված մի քանի գումարտակներ), ինչպես նաև միջազգային խաղաղապահ գործողություններին ու զորավարժու-

թյուններին եռանդուն մասնակցությունը (այս մասին տե՛ս **Մ. Մելքոնյան**, «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2 և 3». – *Հայ զինվոր,* 20-27 փետրվարի 1999, ¹ 7 (262) և 27 փետրվար-6 մարտ 1999, ¹ 8 (263)): Վերջերս ադրբեջանական մի ստորաբաժանում էլ ուղարկվեց Աֆղանստան ("U.S. Salutes Azerbaijan for Helping," *Associated Press,* November 19, 2002 4:26 PM ET):

[27] **International Institute for Strategic Studies**, *The Military Balance, 2001/2002*, pp. 80, 82. 1998 թ. դրությամբ՝ Հայաստանի բանակի կազմում կար 58.600, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակում՝ 20.000-25.000 զինծառայող. – **International Institute for Strategic Studies**, *The Military Balance, 1997/1998* (London: Oxford University Press, 1997), pp. 68, 74, 76; cf. *The Military Balance, 1995/1996* (London: Oxford University Press, 1995), p. 62; հմմտ. **Ara Tatevosian**, "Nagorno-Karabakh's New Army of Iron Will and Discipline'," *Transition* (OMRI) 9 August 1996, p. 23. 1999 թ. դրությամբ՝ Հայաստանի բանակի կազմում կար 52.000, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակում՝ 20.000-25.000 զինծառայող. – *The Military Balance, 1998/1999* (London: Oxford University Press, 1998), pp. 74, 76.

[28] *The Military Balance, 1997/1998, op. cit.*, p. 74. «ՄիԳ-29»-ները ժամանեցին Հայաստան 1998 թ. դեկտեմբերին (5 հատ) և 1999թ. հունվարին (10 հատ). մինչ այդ Գյումրիի օդանավակայանում տեղակայված էր ՄիԳ-23-ների մեկ էսկադրոն ("Russia reinforcing Armenian air defence base with MiG-29s," 01/21/99 *BBC Worldwide Monitoring*; Source: RIA, Moscow, 20 January 99):

[29] 2002 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 25-ը տևած այդ տեղաբաշխման ժամանակ Հայաստան են բերվել կապի առանձին մի գումարտակ, կապի միջոցների նորոգման մի արհեստանոց և սուրհանդակային կապի մի հանգույց, ընդհանուր առմամբ՝ տեխնիկայի չուրջ 100 միավոր ("Ïåðåäàèñîêàöèÿ ïðîøëà áåç ýêñöåññîâ", *Íîâîå Âðåìÿ,* ¹ 906 îò 26 äåêàáðÿ 2002ã.): "Azerbaijan Calls On Russia To Halt Weapons Transfer To Armenia," *Associated Press,* December 17, 2002.

[30] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**, *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը*, էջ 56, 67-69:

[31] **Alexei G. Arbatov**, "Military Reform in Russia: Dilemmas, Obstacles, and Prospects," *International Security*, Vol. 22, ¹ 4 (Spring 1998), pp. 83-134.

[32] "Chechen war shows deteriorated state of the Russian military: analysts say," *Agence France Press*, Washington, January 22, 2000 9:43 PM SGT; **Colin McMahon**, "Outgunned, Not Outfought," *The Chicago Tribune*, January 21, 2000. Ռուսական բանակի ծանր վիճակի մասին տե՛ս նաև հետևյալ հրապարակումները՝ **Ì èõàèë Êõóãîâ**. *Òàéíû âîåííîé ðåôîðìû*. Ì îñêâà: ÄåÊÀ, 1998; **Â. Ãåîðãèåâ**, "Àðìåéñêàÿ ïðåñòóïíîñòü óãðîæàåò áåçîïàñíîñòè Ðîññèè", *Íåçàâèñèìîå âîåííîå îáîçðåíèå*, ¹ 10, 1998; **Þ. Í. Äåðþãèí**, "Àðìèÿ Ðîññèè: âçãëÿä â XXI âåê", *Ñîöèîëîãè÷åñêèå èññëåäîâàíèÿ*, ¹ 6, èþíü, 1995, ñ. 82-87.

[33] **Hickok**, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization" p. 1. Այս կարծիքը փոքր-ինչ չափազանցված է, սակայն ճշմարտությունն այն է, որ Հյուսիսային Կովկասի և Այսրկովկասի ռազմական օկրուգներում տեղակայված ԽՍՀՄ սովորական ուժերը քանակապես և որակապես բազմապատիկ գերակշռում էին այսօր այնտեղ մնացած ռուսական զորամիավորումներին: Բերենք ընդամենը մեկ օրինակ՝ միայն Այսրկովկասի ռազմական օկրուգի ակտիվ զորամիավորումներում կար 1150 տանկ. այս և մյուս զորատեսակների համեմատական աղյուսակները տե՛ս **Andrew Duncan**, "Russian Forces in Decline," *Jane's Intelligence Review*, 1996, Vol. 8, ¹ 12.

[34] Այսրկովկասում Ռուսաստանի ռազմական քաղաքականության և, մասնավորապես, հայ-ռուսական կապերի մասին տե՛ս **Ñåðãåé Øàêàðÿíö**, *Ïîëèòèêà ïîñòîÿííîé Ðîññèè íà Êàâêàçå è åå ïåðñïåêòèâû*. Åðåâàí: ÀÖÑè Í È, 2001, ñ. 161-207; *Àðìåíèÿ: ïðîáëåìû íàçàâèñèìîãî ðàçâèòèÿ*. Ï îä îáùåé ðåäàêöèåé Å. Ì. Êîæîêèíà. Ì îñêâà: Ðîññèéñêèé èíñòèòóò ñòðàòåãè÷åñêèõ èññëåäîâàíèé, 1998, ñ. 555-565.

[35] Տե՛ս **Sezai Sengun**, "Syria Flies PKK Militants to Armenia," *Hurriyet*, 10 November, 1993, in Foreign Broadcast Information Service Daily Report (այսուհետև՝ FBIS Daily Report): West Europe, 15 Nov. 1993, p. 72; **Gorsel Polat**, "PKK Will Attach with ASALA in the Spring," *Cumhuriyet*, 27 December 1993, in FBIS Daily Report: West Europe, 5 January 1994, p. 29; **Sinan Onus**, "Intelligence Report Details Armenia-PKK ties," *Aydinlik*, 29 January 1994, in FBIS Daily Report: West Europe, 3 February 1994, p. 36; "PKK Reportedly Moving to Iran, Armenia," *Turkish Daily News*, 1 February 1994, in FBIS Daily Report: West Europe, 7 February 1994, p. 44. *Turkish Daily News*-ում 1998 թ. ապրիլի 16-ին հայտնված մի հոդվածն էլ անապա-

ցույց պնդում էր, թե իբր ՔԲԿ-ն Հայաստանում ունի 7, Իրանում՝ 11, Ռուսաստանում՝ 4, Կիպրոսում՝ 1 բազա: Այս թուրքական քարոզարշավին միացավ նաև Ադրբեջանը, որի պաշտպանության նախարարը հայտարարեց, թե «Հայ ադրեսորների օկուպացրած Լաչինի շրջանում պատրաստություն են անցնում 200 քուրդ ահաբեկիչներ, ևս 457 քուրդ գրոհայիններ ամբողջական ռազմական պատրաստություն են անցնում Հայաստանում, որպեսզի հետագայում ներմուծվեն Թուրքիայի տարածք». – **Elmira Akhundova**, “Defense Minister Abiyev: "We are keen on privileged partnership with NATO," *Azernews/Azerkhabar* 2/17/99 - 2/23/99:

[36] "If Armenia supports separatists, then we have made our decision, the button has been pressed. A war might break out any moment." *RFE/RL Newsline* Vol. 2, ¹ 197, Part I, 12 Oct. 1998, *Transcaucasus and Central Asia*.

[37] **Ed Blanche**, "Terrorism: Turkey seizes PKK commander*," Jane's Intelligence Review-Pointer*, 1 June, 1998. Նույն հոդվածագրի համաձայն՝ քրդական ապստամբության սկզբից՝ 1984 թ. ի վեր, Թուրքիայում ոչնչացվել է կամ տեղահանվել ու անմարդաբնակ է դարձվել 3.000 քրդական գյուղ: Ըստ թուրքական բանակի տվյալների՝ սպանվել կամ շարքից հանվել է 39.900 ՔԲԿ մարտիկ: Թուրքական զորքերը տվել են 4.600 սպանված: Թուրքական բանակի հետախուզության համաձայն՝ այժմ Թուրքիայում գործում են մոտ 3.000 ՔԲԿ մարտիկ, ու 4 հազարն էլ մարզվում են հարևան երկրներում:

[38] **Rouben Paul Adalian**, “Armenia's Foreign Policy: Defining Priorities and Coping with Conflict,” in **Adeed Dawisha and Karen Dawisha**, eds., *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia* (Armonk, New York: M. E. Sharpe, Inc., 1995), p. 318.

[39] Տե՛ս, օրինակ, **Ed Blanche**, "Terrorism: Turkey seizes PKK commander," *op. cit.*.

[40] ***Stratfor.com***, "Where, oh where, has the PKK gone?" 1999.08.27; "PKK Wields Pipeline Leverage," 1999.11.23.

[41] **Selcan Hacaoglu**, “Turkey's Kurdish Rebels End 5-Year Truce”, *Associated Press News*, 1 June 2004.

[42] Իր հուշերում 1993-94 թթ. Հայաստանում Հունաստանի դեսպան Լեոնիդաս Խրիզանտոպուլոսը հայտնում է, որ Թուրքիայի այդ ժամանակվա վարչապետ Թանսու Չիլլերը համաձայնության էր եկել Ռուսաստանի խորհրդարանի խոսնակ Ռուսլան Խասբուլատովի հետ՝ Հայաստանին մի

քանի «վիրաբուժական» հարված հասցնելու ուղղությամբ. - տե՛ս **Leonidas T. Chryzantopoulos**, *Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994* (Princeton & London: Gomidas Institute Books, 2002), pp. 76-78, 155; հմմտ. "Ñåíñàöèîííîå çàÿâëåíèå Ëåîíèäàñà Õðèçàíòîïóëîñà", *Âîëîñ Àðìåíèè*, 19 ñåíòÿáðÿ 2002 ã.: Այս տեղեկությունն անուղղակի կերպով հաստատեց նաև ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն՝ «Ազգ» թերթին իր տված հարցազրույցում (4 հոկտեմբեր 2002թ.), ինչպես նաև ՀՀ պետանվտանգության նախկին ղեկավար Էդվարդ Սիմոնյանցը ("'Turkey Really Was Going To Attack Armenia in Autumn 1993', Former Head of State Department of National Security, Major General Eduard Simoniants Says," *Noyan Tapan News Agency*, Yerevan, September 23, 2002).

[43] **Ð. Ýðíåñò Äþïþè è Òðåâîð Í. Äþïþè**, *Âñåìèðíàÿ èñòîðèÿ âîéí. Êíèãà ÷åòâåðòàÿ: 1925 ãîä–1997 ãîä* (Ñàíêò-Ïåòåðáóðã- Ì îñêâà: Ï îëèãî í-Àñò, 1998), ñ. 754.

[44] Տե՛ս վերը, ծնթ. 35:

[45] PKK-ի 5-րդ հերթական համագումարը որոշել է «ժամանակավորապես» և «նախապայմանով» դադարեցնել իր զինված պայքարը. այս մասին հայտնի է դարձել 2002 թ. փետրվարի 6-ին MED TV-ի հաղորդումից (տե՛ս **Հակոբ Զաքրյան**, «PKK-ն որոշեց դադարեցնել զինված պայքարը Թուրքիայում», *Ազգ*, 8 փետրվարի 2002, ¹ 24):

[46] Ահա այս մասին PanARMENIAN.Net-ի տարածած հաղորդագրությունն ամբողջությամբ. «ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔ, ՊՆԴՈՒՄ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԸ. Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Կիվրիկօղլուն պնդում է, որ Հայաստանն ունի զանգվածային ոչնչացման զենք: Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄԱՔՍ գործակալությունը, այս պնդումը պարունակվում է Թուրքիայի 6 «տագնապների» թվում, որոնք հնչեցրել է Կիվրիկօղլուն՝ Թուրքիայի վարչապետ Բուլենտ Էջևիտի ԱՄՆ կատարելիք այցի նախօրեին: Հուսեյն Կիվրիկօղլուն, խոսելով Իրաքի նկատմամբ ԱՄՆ-ի հնարավոր հարվածներին Թուրքիայի բացասական վերաբերմունքի մասին, հայտարարել է, որ ոչ միայն Սադամ Հուսեյնի ռեժիմը, այլև Հայաստանը, Սիրիան, Իրանը և մի շարք այլ երկրներ ունեն զանգվածային ոչնչացման զենք: Թուրքական գլխավոր շտաբի պետի խոսքերով՝ Հայաստանի վրա պետք է ճնշում գործադրվի, որը հավասարազոր կլինի Իրաքի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին». հմմտ. "Azeri ex-military men on threat if Armenia has weapons of mass destruction," *Azerbaijan News*

Service TV 8 January 2002; “Does Armenia Possess a Mass Destruction Weapon?”*Azerbaijan News Service*, January 9, 2002; “Armenian Defence Ministry spokesman calls Turkish general's statement ‘absurd’,” *Arminfo*, January 7, 2002:

[47] “Since the 1950s he has argued that American society requires military and intelligence services that think in the most tragic, pessimistic terms” (տե՛ս **Robert D. Kaplan**, “Looking the World in the Eye,” *The Atlantic Monthly,* December 2001, Vol. 288, ¹ 5, pp. 68-82.

[48] Ընդամենը մեկ պատմական օրինակ. Առաջին ու, հատկապես, Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում փոքրիկ Շվեյցարիան խուսափեց ներխուժումից ոչ թե նրա համար, որ իր զավթումն անհնարին էր, այլ որովհետեւ Շվեյցարիայի գրավման դիմաց որևէ ուժ (նույնիսկ ֆաշիստական Գերմանիայի գերհզոր ռազմական մեքենան) չափազանց թանկ էր վճարելու:

[49] Հայկական բանակում լուրջ խնդիրների մասին է վկայում նաև դասալիքների թիվը. 2000 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ այն կազմում էր 5289 հոգի (“Officials Discuss Alternative Military Service,” *Armenpress,* 15 November 2000). Բարեբախտաբար, գնալով նվազում է (սակայն դեռևս անընդունելիորեն մեծ թիվ է կազմում) խաղաղ ժամանակ ժամկետային ծառայության զինվորների մահվան դեպքերի թիվը. ՀՀ ՊՆ-ի տվյալների համաձայն՝ 1997-ին՝ 199, 1998-ին՝ 171, 1999-ին՝ 86, 2000-ին՝ 78, 2001 թ. ութ ամսում՝ 39 հոգի («ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԱՊՀ հայկական համայնքների «Նոյյան տապան» թերթին». – *Հայ զինվոր,* 8-15 սեպտեմբերի, 2001): ՀՀ զինվորական դատախազի տեղակալի հրապարակած տվյալներով, սակայն, 2000 թ. զոհվել է 111, իսկ 2001-ին՝ 92 հայ զինծառայող (“Armenian military prosecutor points to significant drop in army deaths,” *Arminfo,* February 1, 2002): ՀՀ ՊՆ-ի տվյալներով՝ 2003 թ. ոչռազմական պատճառներից զոհվել է 40 զինվոր, իսկ ռազմական դատախազության համաձայն՝ 48 զինվոր (**Gevorg Stamboltsian**, “Armenian Military Accused Of Hushing Up Non-Combat Deaths,” *Armenialiberty Report*, 20 May 2004):

[50] *Տե՛ս, օրինակ, նախկին հրամանատար-ազատամարտիկներից մեկի խտացված գույներով բնութագրումները՝* **Ժիրայր Սեֆիլյան**. «Ազգային բանակի հարցի շուրջ». – *Առավոտ*, 8 հունիս 2002 թ.. հմմտ. **Նույնի՝**

«Հայկական բանակը տասնմեկ տարի անց». – *Իրավունք*, հունվար 31-փետրվար 6, 2003, ¹ 6:

[51] Իսրայելում պահեստուժի մարտիկները օրենքով պարտավոր են տարեկան ծառայել առնվազն 45 օր (այս օրերի թիվը կարող է ավելանալ՝ պայմանավորված տարածաշրջանի քաղաքական իրադրությամբ), ԱՄՆ-ում՝ 39 օր, Շվեյցարիայում՝ 21 օր (ութ տարի շարունակ):

[52] **Charles E. Heller**, *Economy of Force: A Total Army, The Israel Defense Force Model* (Carlisle Barracks, PA: Strategic Studies Institute, U.S. Army War College, March 15, 1992), p. 1.

[53] Օրինակներից մեկը պատանիների հետ աշխատանքն է, որը, կարծես, սկսվում է նաև Հայաստանում՝ 2002 թ. կադետական դպրոցի հիմնումով: Մ. Մելքոնյանի հաշվարկով՝ Հայաստանում հինգ ռազմական լիցեյի ստեղծումը կբավարարի «բարձրագույն ուսումնական հաստատությունները 100 տոկոս լիարժեք ռազմական պատրաստություն անցած, հիմնավոր գիտելիքներ ունեցող կուրսանտներով համալրելու, ինչպես նաև բանակը կրտսեր հրամանատարական կազմով ապահովելու համար (**Մ. Մելքոնյան**, «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2»): Այս առումով օրինակելի է նաև իսրայելական փորձը. 14 տարեկանից սկսած՝ իսրայելացի տղաների և աղջիկների մեծամասնությունն ընդգրկվում է ԳԱԴՆԱ կիսառազմական կազմակերպության մեջ: Բացի ֆիզիկական մարզումից և դաշտային պայմաններում ապրելուն վարժեցնելուց, ԳԱԴՆԱ-ն պատանիների մեջ ներարկում է գիտելիքներ՝ Իսրայելի անվտանգության առանձնահատուկ ծանր դրության մասին: Սա և՛ քաղաքացիական կրթություն է, և՛, որոշ չափով, քաղաքական ուսուցում, որը լավագույնս նախապատրաստում է պատանիներին Իսրայելի ռազմավարական և քաղաքական իրողությունների հետ հաշվի նստելուն և իմաստ է հաղորդում նրանց հետագա պարտադիր ծառայությանը: Նույն Իսրայելի բանակն ունի հատուկ մի ծրագիր, որը հավաքագրում է պատանեկան քրեական խմբերի ղեկավարներին, այնուհետև նրանց կրթում ու մարզում նպատակային այն համոզմունքով, որ նրանք տուն վերադառնան որպես դրական և օրինակելի կերպարներ (**Samuel Rolbant**, *The Israeli Soldier: Profile of an Army*. N. Y.-London: Thomas Yoseloff LTD, 1970, pp. 222-223):

[54] 2002 թ. մարտին Իրանի պաշտպանության նախարարի՝ ադմիրալ Ալի Շամխանիի՝ պատմության մեջ առաջին այցը Հայաստան՝ ինքնին ռազմական ասպարեզում երկկողմանի հարաբերություններին զարկ տալու ցանկության պարզ արտահայտություն է (**Armen Zakarian**, “Iranian Defense Chief Plans Visit To Armenia,” *RFE/RL Armenia Report*, 4 February 2002;

Iran's Defense Chief Hopes For Closer Ties With Armenia," *RFE/RL Armenia Report*, 4 March 2002): Այս առումով զարմանալի է ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի այն հայտարարությունը, թե անվտանգության մակարդակում Հայաստանն Իրանի հետ հարաբերություններ չի զարգացնելու (**Թաթուլ Հակոբյան**, «Հայոց ցեղասպանությունը ժխտելով՝ Իսրայելը Հայաստանում ձևավորում է հակահրեական տրամադրություններ». – *Ազգ*, 12 փետրվար 2002:

[55] Տե՛ս Գլուխ Առաջին:

[56] "Income Gap Greater In Armenia Than CIS States," *Asbarez Online*, 31 January 2002. cf. **Արա Մարտիրոսյան**, «"Արդյունաբերության աճը պետք է արագացնել", նշեց Համաշխարհային բանկի Հայաստանի դրասեռնյակի ղեկավարը». - *Ազգ*, 31 հունվարի 2002.

[57] «Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագիր (նախագիծ)». - *Հայացք տնտեսությանը*, [1] 12 հոկտեմբեր 2002 թ., էջ 9:

[58] **Neil MacFarlane**, *Western Engagement in the Caucasus and Central Asia* (London: Royal Institute of International Affairs, 1999), p. 47. Ընդ որում՝ Հայաստանի արտաքին պարտքը 2002 թ. անցնելու է 1 միլիարդ դոլարից ("Armenia's Foreign Debt Exceeds $1Billion," *Asbarez Online*, 10 Jan. 2002):

[59] **Levon Chorbajian**, ed., *Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh* (New York: St. Martin's Press, 2001), p. 28. Զորբաջյանը հղում է հետևյալ աղբյուրը՝ **Edward N. Wolff**, *The Rich Get Increasingly Richer: Latest Data on Household Wealth during the 1980s* (Washington: Economic Policy Institute, 1993): 1980-ական թթ. սկզբին Մեծ Բրիտանիայի բնակչության 80 տոկոսը պակաս սեփականություն ուներ, քան 10 տոկոս հարուստները (**Ä. À. Âîëêîãîíîâ**. *Ïñèõîëîãè÷åñêàÿ âîéíà: ïîðûâíûå äåéñòâèÿ èìïåðèàëèçìà â îáëàñòè îáùåñòâåííîãî ñîçíàíèÿ*. Ì îñêâà: Âîåíèçäàòåëüñòâî, 1984, ñ. 148):

[60] **Գարեգին Նժդեհ**, *Բանտային գրառումներ (խորհրդածություններ)*, (Երևան, «Մ. Վարանդեան հրատ.», 1993), էջ 72-73:

[61] **Մ. Մելքոնյան**. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2». – *Հայ գինվոր*, 20-27 փետրվար 1999, [1] 7 (262):

[62] Թերևս անցյալի փորձը ևս նշանակություն ունի: Իր պատմության ողջ ընթացքում Հայաստանը չի եղել և, իր աշխարհառազմավարական դիրքի բերումով, չէր կարող լինել «կաստաների» բաժանված երկիր: Պատահական չէ, որ Հայաստանում ստրկատիրությունը երբեք չի արմատավորվել իբրև

հասարակական-տնտեսական կյանքի երևույթ և աշխատանքի եղանակ:

[63] Մոտավորապես նույն տեսակետն, իր չափազանց արժեքավոր հուշագրության մեջ, արտահայտում է Արցախյան պատերազմի վետերան-հրամանատար, խորհրդային բանակի կադրային սպա Դ. Ս. Բաղդասարյանը. «Եթե մեր զինված ուժերի հրամանատարությունը բավականաչափ տվյալներ կունենա հակառակորդի հարձակման նախապատրաստման և պատերազմի վերսկսման վերաբերյալ, ապա պետք է վճռական կանխիչ հարված հասցվի հակառակորդին՝ մինչև նրա հարձակման անցնելը: Եթե հակառակորդին հաջողվի անսպասելի հարված հասցնել՝ մեր զինված ուժերը չպետք է խրվեն երկարատև պաշտպանական մարտերի մեջ, դա վտանգավոր է լինելու մեզ համար, այլ պետք է ետ մղել հարձակումը և անհապաղ անցնել հակահարձակման: Երկու դեպքում էլ մեր զինված ուժերը պետք է հետապնդեն Քուռ գետի աջ ափ դուրս գալու մարտական խնդիրը: Վերականգնելով պատմական Հայաստանի հյուսիսային սահմանը՝ անհրաժեշտ է լինելու մնալ կանգնած այդ սահմանի վրա և ամրապնդել այն: Կարծում եմ, որ պատերազմի և խաղաղության հարցը նման ձևով ավելի հստակ լուծում կստանա» (**Դ. Ս. Բաղդասարյան**, *Դիմակայություն (հուշագրություններ)*: Երևան. «Մխիթար Գոշ», 1998, էջ 176):

[64] Ադրբեջանի նավթային արտահանումը խափանելու նպատակով՝ հայկական հարվածի թիրախ են դառնալու ինչպես նավթամուղները, այնպես էլ նավթադաշտերը: Վերջիններիս վրա արդյունավետ հարված կարելի է հասցնել 300-400 կմ շառավիղ ունեցող հրթիռներով, որոնք ինքնաթիռներից անհամեմատ, 30-40 անգամ, էժան են (ՍԿԱԴ-2 հրթիռների հասանելիության շառավիղը շուրջ 300 կիլոմետր է): Սակայն նավթամուղները փակելու գործում հրթիռները արդյունավետ չեն լինի. նախ՝ դրանք կարող են վրիպել (բարձր ճշգրտություն ունեցող հրթիռները շատ ավելի թանկ են), և հետո՝ մեկ հարվածից հասցված վնասը կարելի կլինի արագ նորոգել: Ուրեմն՝ կմնա երեք լուծում. ա) գրավել-կտրել նավթամուղի գիծը, բ) մոտենալ այդ գծին առնվազն 30 կմ՝ այն մշտական հրետակոծման տակ պահելու համար, կամ էլ՝ հաճախակի ռմբակոծել այն օդուժի միջոցով:

[65] Հայաստանում ռազմական շինարարության տնտեսական ապահովման խնդիրների մասին տե՛ս **Մ. Մելքոնյան**. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 3». – *Հայ զինվոր,* 27 փետրվար-6 մարտ 1999, ¹ 8 (263):

[66] Հակառակորդի թվային գերակշռությանը մշտապես բախված Իսրայելի բանակը դրան հաջողությամբ հակադրել է «փոքր զորամիավորումներին և յուրաքանչյուր մարտիկին տրվող կարևորությունը: Նրանց անհատականությունը, եռանդը, մասնակցությունն ու քաղաքական գիտակցությունը

անգնահատելի էին: Այսպիսի դրվածքը [որոշումներ ընդունելու] լայն շառավիղ է տալիս կրտսեր հրամանատարներին և խրախուսում անձնական նախաձեռնությունը» (տե՛ս **Samuel Rolbant**, *The Israeli Soldier: Profile of an Army*, p. 34): Մ. Մելքոնյանը նկատում է, որ «ամերիկյան փորձագետների համոզմամբ՝ 100 արհեստավարժ զինվորը փոխարինում է 250 նորակոչիկի, իսկ թուրք զինվորական մասնագետների պնդմամբ՝ արհեստավարժ զինվորներով համալրված վաշտը կարող է հաջողությամբ լուծել նորակոչիկներով համալրված գումարտակի մարտական խնդիրները» (**Մ. Մելքոնյան**. «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները. 2». – *Հայ զինվոր,* 20-27 փետրվարի 1999, ¹ 7 (262)):

ԳԼՈՒԽ 6.

ՀԱՅ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Փաստ է, որ մեկ տասնամյակ առաջ Հայաստանը թևակոխեց անկախության իր նոր շրջանը՝ իբրև զարգացած տնտեսություն ու սոցիալական ենթակառուցվածք ունեցող երկիր: Հայաստանի մտավոր ներուժը բավական բարձր էր գիտության և ժողովրդական տնտեսության բազմաթիվ ոլորտներում. ունեինք ընտիր ճարտարապետներ, ճարտարագետներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, բժիշկներ, տնտեսագետներ, այլ մասնագետներ, բարձրորակ բանվորական ուժ: Բոլորովին այլ հարց է, որ այժմ, իբրև հետևանք 1988 թ. երկրաշարժի, 1991-94 թթ. Ղարաբաղյան պատերազմի, թուրք-ադրբեջանական բազմամյա շրջափակման, նաև երկրի ապաշնորհ ղեկավարման և այս ամենին հետևած զանգվածային արտագաղթի, Հայաստանի զարգացածության մակարդակը կտրուկ իջել է:

Այսուհանդերձ, պետք է ընդունել, որ անկախանալու պահին՝ 1991 թ., Հայաստանում բացակայում էին արդի միջազգային հարաբերությունների և ռազմավարական հարցերի գծով առաջնակարգ և փորձառու կադրեր: Մեզանում առկա էր, ու դեռևս առկա է, մտավոր ռեսուրսների ծայրահեղ պակաս միջազգայնագիտության ոլորտում: Սա բնական բաց է ԽՍՀՄ նախկին որևէ հանրապետության համար: Նույնիսկ Ռուսաստանը, որ ուներ դիվանագետների և միջազգայնագետների մի ամբողջ փաղանգ ու նրանց միավորող ակադեմիական բազմաթիվ կառույցներ, ի վիճակի չեղավ արագորեն համապատասխանեցնելու իր ազգային անվտանգության հայեցա-

կարգը ու վերջինից բխող արտաքին քաղաքականության ուղին նոր աշխարհակարգի առաջադրած պահանջներին:

Մեզանում միջազգային հարաբերությունների մտավոր «խոպան» մնալու վառ վկայությունն է լուրջ արժեք ներկայացնող ինքնուրույն վերլուծությունների խիստ սակավությունը: Սա անընդունելի փաստ է, քանզի Հայաստանն ակամա ներքաշված է իր բուն գոյությանն սպառնացող երկարատև հակամարտության մեջ:

Հայաստանի պետական շինարարության գործում մինչև այժմ թույլ տրված խոշոր սխալներն ուղղակիորեն բխում են միջազգային և տարածաշրջանային զարգացումների մեր խիստ թերի ըմբռնումներից: Մեր ռազմավարական մտածողության մեջ գոյացած մեծ բացերը հաջողությամբ և անխուսափելիորեն լցվել ու լցվում են օտար՝ սխալ ու երբեմն էլ միտումնավոր վերլուծականներով և ապակողմնորոշիչ եզրակացություններով:

Հայաստանը կենսունակ պետություն չի դառնա, եթե չկարողանա բարձր գիտական մակարդակով վերլուծել իր ազգային անվտանգության բարդագույն խնդիրները: Անվտանգության բնագավառում ինքնուրույն մտածելու մեր տակավին շատ թույլ կարողությունները և նույնիսկ անկարողությունը հայոց պետականությունը վտանգող ամենալուրջ սպառնալիքներից են:

Հայաստանում ռազմավարական մտքի գոյացումը և առաջընթացը, վաղուց հասունացած անհրաժեշտություն լինելով հանդերձ, հնարավոր են միայն պետական հովանավորության դեպքում: Անկախությանը հաջորդած տասնամյակի ընթացքում Հայաստանում ազգային անվտանգության բնագավառն ուսումնասիրող պատշաճ գիտական որակավորում ունեցող վերլուծական կենտրոններ ու կադրեր չստեղծվեցին, թեև ի սկզբանե պարզ էր, որ Ղարաբաղյան հակամարտությունը սերտորեն առնչվում է համաշխարհային բազմաբնույթ զարգացումների, որոնց ստույգ և ժամանակին վերլուծումը պարտադիր է: Հայաստանի կառավարությունը նոր է սկսում գիտակցել այս պահանջի լրջությունն ու հրատապությունը[1]: Նկատենք նաև, որ ռազմավարագիտության բնագավառում գեգերող մի քանի ոչ պետական վերլուծական կենտրոնների արտադրանքը հիմնականում սիրողական է և ցածրարժեք:

Այս գործում հապաղել այլևս չի կարելի: Պետք է հիշել, որ մեզանից լավ ոչ ոք չի կարող վերլուծել միջազգային քաղաքակա-նության՝ մեր շահերի վրա ազդող երևույթները և ըստ այդմ էլ որո-շել մեր ազգային անվտանգության կարիքներն ու պահանջները: Խնդիրն այն է, որ «միջազգային հարաբերությունները» բազմա-ճյուղ առարկա է, որին տիրապետելը պահանջում է նույնպիսի եր-կարամյա ուսումնառություն և ջանադիր աշխատանք, ինչպիսին պահանջվում է, օրինակ, ֆիզիկոս, մաթեմատիկոս կամ քիմիկոս դառնալու համար: Որքան շուտ գիտակցենք այս իրողությունը, այնքան շուտ կձերբազատվենք արտաքին քաղաքականության մեջ սիրողականությունից՝ ինչպես հայեցակարգային առումով, այնպես էլ կադրային բնագավառում:

Այսօր էլ վաղ է խոսել ՀՀ քաղաքական վերնախավի խնդրո առարկա հարցերում պրոֆեսիոնալիզմի չափանիշներին մոտ լինե-լու մասին: Վերջերս տված իր հարցազրույցներում այս անմխիթար իրողությունը հաստատում է նաև ՀՀ պաշտպանության նախա-րարը: Թղթակցի հարցին, թե արդյո՞ք ակնկալում է լուրջ աշխար-հաքաղաքական վերաբաժանումներ եվրասիական տարածքում, պրն. Ս. Սարգսյանը պատասխանում է. «Այդպիսի ընդհանրացում-ներ անելու համար անհրաժեշտ է ունենալ լուրջ վերլուծական կա-ռույցներ, որոնք մենք, ցավոք, չունենք: Եվ առհասարակ, այդ մա-սին լուրջ խոսելու համար պետք է համապատասխանորեն լուրջ տեղեկատվություն, որով մենք առանձնապես հպարտանալ չենք կարող»[2]: Մի քանի ամիս անց մեկ այլ թղթակցի տված նմանատիպ հարցին, թե՝ «Հակաահաբեկչական պայքարի հետագա ծավալումը վտանգների առաջ չի՞ կանգնեցնի կոնկրետ մեր երկիրը», տրվում է նմանատիպ մեկնաբանություն՝ «Լիարժեք պատասխան տալու հա-մար անհրաժեշտ է լիարժեք ինֆորմացիա: Մենք այդպիսի լիարժեք ինֆորմացիայի հնարավորություն չունենք»[3]:

Հայաստանի պետության և հայ քաղաքական ուժերի հովա-նավորությամբ ու ֆինանսավորմամբ գործող վերլուծական կենտ-րոնները խիստ օգտակար կլինեն և՛ որոշում ընդունողների, և՛ հա-սարակության համար նրանով, որ կբացահայտեն ու կքննեն Հա-յաստանի անվտանգության յուրահատուկ իրադրությունը՝ իր ման-րամասնություններով և առաջնահերթ լուծում պահանջող խնդիր-

ներով հանդերձ: Այդ կենտրոնների գլխավոր գործը լինելու է հայ ռազմավարական մտքի քայլ առ քայլ ձևավորումը: Ընդ որում՝ մի-ջազգային հարաբերությունների և ռազմավարագիտության գծով մասնագիտացող հայկական ակադեմիական դպրոցի կենտրոնը պետք է լինի Երևանում, քանի որ Հայաստանից դուրս այդպիսի խնդիր լուծել հնարավոր չէ:

Հայ ռազմավարագիտության հիմնական ուղղությունները

Տեղեկատվական-վերլուծական. *անհրաժեշտ տեղեկատվու-թյամբ և վերլուծություններով սպասարկել Հայաստանի ազգային անվտանգության ընդհանուր կառույցը, առաջին հերթին՝ պաշտ-պանության նախարարությունը և ՀՀ զինված ուժերի (ԶՈՒ) գլխա-վոր շտաբը:*

Տեղեկատվական-քարոզչական. *միջազգային ասպարեզում ադրբեջանական կողմի ծավալած լայնամասշտաբ քարոզչության չեզոքացում, Հայաստանի (ներառյալ Արցախի) տեսակետների հե-տևողական և անընդհատ քարոզում, ընդ որում՝ արևմտյան ունկն-դրին առավել ընդունելի մատուցման եղանակներով:*

Ռազմատեսական. *Հայաստանի ԶՈՒ սպայական կազմի և կուրսանտների տեսական պատրաստության մակարդակի բարձրաց-մանը նպատակաուղղված տեղեկատվական-հրատարակչական-թար-գմանական գործունեություն, այդ թվում՝ ծանոթացում դասական և նորագույն ռազմական տեսություններին ու զարգացումներին:*

Գաղափարական-ռազմահայրենասիրական. *ռազմահայրենասի-րական գաղափարների և ավանդույթների քարոզում Հայաստա-նում և սփյուռքում՝ հատկապես աճող սերնդի շրջանում:*

Հայ ռազմավարագիտության օրակարգը

Ստորև ուրվագծում ենք այն կարևոր հարցերը, որոնք պետք է դառնան հայ ռազմավարագիտության՝ ակադեմիական մակարդա-կով կատարելիք ուսումնասիրությունների առարկա: Սրանք այն

հարցերն են, որոնք առավել շատ են առնչվում (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) Հայաստանի ռազմավարական իրադրությանն ու խնդիրներին:

1. Հայաստանի զինված ուժերը և հայ հասարակությունը

1.1. Հայաստանի ռազմավարական հայեցակարգի բազմակողմանի մշակումներ.

1.2. Հայաստանի՝ պոտենցիալ ագրեսորին զսպելու և հետ պահելու (deterrence-ի) ինքնուրույն կարողությունների ճշտումներ.

1.3. Հայկական բանակի կառուցվածքային բարելավումների մշակումներ՝ գործող բանակի, ռեզերվի և սպայակույտի քանակի և կազմության վերաբերյալ.

1.4. Այլ պետությունների, հատկապես Իսրայելի և Շվեյցարիայի բանակների կառուցվածքի, կանոնադրության և զինծառայության պայմանների համեմատական ուսումնասիրություններ. այդ բանակների փորձի և մոդելի զանազան տարրերը Հայաստանում կիրառելու նպատակահարմարության մանրամասն պատճառաբանված հիմնավորումներ կամ ժխտումներ.

1.5. Հայ զինվորի հոգեբանության ուսումնասիրություններ և այդ հոգեբանությանը համապատասխանող ոչ ավանդական միջոցների մշակումներ՝ կարգապահությունն ամրապնդելու, դասալքությունը բացառելու և բանակում զինակցական-եղբայրական ընդհանուր մթնոլորտ ապահովելու նպատակով.

1.6. Դպրոցներում և բուհերում ռազմակրթական կենտրոնների գործունեության ծրագրավորում.

1.7. Հայկական բանակի համազգեստի և տարբերանշանների նոր՝ ազգային խորհրդանիշեր ու տարազի տարրեր պարունակող մշակումներ.

1.8. Մշակումներ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի ծրագրի, առարկաների և հեռանկարային զարգացման վերաբերյալ.

1.9. Հայկական բանակի հետագա բարելավմանն ուղղված պատճառաբանված առաջարկություններ:

2. Տարածաշրջանի պետությունների և Այսրկովկասում շահեր ունեցող այլ տերությունների զինված ուժերը և նրանց ռազմական հայեցակարգերը

3. Ժամանակակից ռազմավարական միտքը և Հայաստանը

3.1. «Հեղափոխությունը ռազմական ոլորտում» և դրա կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները Հայաստանի համար.

3.2. Հայաստանը և ռազմավարության ու աշխարհաքաղաքականության արդի տեսությունները:

4. Ղարաբաղյան հակամարտության կարգավորում

4.1. Ղարաբաղյան հակամարտության հնարավոր լուծումների վերլուծություն.

ա) խաղաղ լուծումներ (ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթաց, խաղաղ կարգավորման այլընտրանքային ծրագրեր).

բ) պատերազմական լուծումներ.

4.2. Արցախի հայկականությունը փաստող պատմաիրավական համապարփակ թղթապանակի կազմում.

4.3. Միջազգային իրավունքը ինքնորոշման ու ինքնապաշտպանության մասին և Արցախի ազատագրումը

4.4. Արցախի և Նախիջևանի պատմական ժողովրդագրությունը:

5. Հայոց զինված ուժերի և ռազմարվեստի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը

5.1. Հայոց պատմության դպրոցական և բուհական դասագրքերում ռազմական պատմությանը վերաբերող բաժինների և լրացումների ստեղծում.

6. Հայաստան-Սփյուռք հարաբերությունները և Հայաստանի անվտանգությունը

7. Հայոց ցեղասպանությունը և Հայաստանի անվտանգությունը

8. Հայաստանը և միջազգային կառույցները (ՄԱԿ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, ԱՊՀ և այլն)

9. Կասպիական նավթի ազդեցությունը տարածաշրջանի զարգացման և աշխարհաքաղաքականության վրա

10. Ադրբեջան. զինված ուժերը, արտաքին քաղաքականությունը, հասարակությունը, տնտեսությունը, փոքրամասնությունների խնդիրը

11. Վրաստան. զինված ուժերը, արտաքին քաղաքականությունը, հասարակությունը, տնտեսությունը, հայ և մյուս փոքրամասնությունների խնդիրը

12. Թուրքիա

12.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.

12.2. Քաղաքական կուսակցությունները և նրանց տեսակետները Թուրքիայի աշխարհառազմավարությունների մասին.

12.3. Հայկական ցեղասպանության այլևայլ ժխտումներ և արդարացումներ.

12.4. Թուրք-ադրբեջանական հարաբերությունները.

12.5. Թուրք-վրացական հարաբերությունները.

12.6. Թուրք-սիրիական հարաբերությունները.

12.7. Թուրք-ռուսական հարաբերությունները.

12.8. Թուրք-ամերիկյան հարաբերությունները.

12.9. Թուրք-հունական հարաբերությունները.

12.10. Թուրք-իսրայելական հարաբերությունները:

13. Քրդական խնդիրը և Հայաստանի անվտանգությունը

13.1. Քրդական բանվորական կուսակցության պարտիզանական պատերազմը և թուրքական բանակի հակապարտիզանական մարտավարությունը.

13.2. Քրդական խնդրի՝ Հայաստանի համար վտանգավոր հնարավոր զարգացումների կանխորոշումներ և դրանց համապատասխանող միջոցառումների կանխավ ծրագրավորում:

14. Ռուսաստան

14.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.

14.2. ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունները և դրանց հնարավոր հետևանքները Հայաստանի համար.

14.3. Քաղաքական կուսակցությունները և նրանց տեսակետները Ռուսաստանի աշխարհառազմավարությունների մասին.

14.4. Ռուս-ադրբեջանական հարաբերությունները.

14.5. Ռուս-վրացական հարաբերությունները.

14.6. Ռուս-չեչենական հակամարտությունը և դրա ազդեցությունները Այսրկովկասի վրա:

15. Իրան

15.1. Զինված ուժերը և ռազմական հայեցակարգը.

15.2. Իրանա-ադրբեջանական հարաբերությունները.

15.3. Իրանա-թուրքական հարաբերությունները.

15.4. Իրանա-ամերիկյան հարաբերությունները.

15.5. Իրանա-ռուսական հարաբերությունները.

15.6. Իրանի թրքախոս, քուրդ փոքրամասնությունները:

16. Արևմտյան մամուլի և միջազգայնագիտական հրատարակությունների արտադրանքը Հայաստանի, Ադրբեջանի և Ղարաբաղյան խնդրի մասին

16.1. Միջազգային ասպարեզում թուրք-ադրբեջանական և արևմտյան քարոզչության դեմ վարվելիք երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և առաջարկությունների մշակում:

17. Կիպրոսի հակամարտությունը և բանակցությունների ընթացքը

18. Արաբ-իսրայելական հակամարտությունը և բանակցությունների ընթացքը

19. Բոսնիա. Դեյթոնի պայմանագրերը և դրանց կիրառման գործընթացը

20. Կոսովոյի պատերազմը և հետևանքները

21. Իրաքի պատերազմը և հետևանքները

22. Ռազմավարությանն ու անվտանգությանը վերաբերող դասական և ժամանակակից գրականության հայերեն թարգմանություններ և դրանց հրատարակություն

23. Ռազմավարագիտության և անվտանգության տերմինների հայերեն բացատրական և եռալեզու (հայերեն-անգլերեն-ռուսերեն) բառարանների ստեղծում

Պատմագիտական, ժողովրդագրական կամ իրավական բնույթ ունեցող թեմաների (օրինակ՝ Հայաստանի ռազմական պատմության և ժողովրդագրության) ուսումնասիրությունը պահանջելու է գիտական պատրաստվածություն, որ Հայաստանում կա և բավարար չափով զարգացած է: Նախնական որոշակի ուղղություն ստանալուց հետո՝ հայրենի պատմաբաններից, ժողովրդագրագետներից և իրավաբաններից շատերը կարող են հաջողությամբ հեղինակել վերը նշված թեմաների մի մասը: Սակայն թեմաների մեծ մասը մտնում է արդի միջազգային հարաբերությունների, ռազմավարագիտության, ռազմաքաղաքական սոցիոլոգիայի ու հոգեբանության բնագավառների մեջ:

Կրկնենք, սակայն, որ Հայաստանում ո՛չ կառավարությունում, ո՛չ էլ նրանից դուրս, վերը նշված թեմաներից որևէ մեկը գիտական համակարգված վերլուծության չի ենթարկվում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] **Gevorg Stamboltsian**, “Armenian Military To Set Up First Think-Tank,” *Armenialiberty Report*, 31 May 2004.

[2] "Чем дальше, тем ощутимее для народа будет то, что делается сейчас", *Голос Армении*, 9 октября 2001:

[3] **Սերժ Սարգսյան**, «Անում եմ այն, ինչ պարտավոր եմ...» (ՀՀ պաշտպանության նախարարի բացառիկ հարցազրույցը «Ազգ»-ին). – *Ազգ*, 21 փետրվարի 2002:

ԳԼՈՒԽ 7.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍԿՅՈՒՌՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հիմնական հարցադրումներ

Հայաստանում և արտերկրում բնակվող հայության տարանջատվածությունն իր կնիքն է դնում հայ ազգի արդի զարգացման բոլոր բնագավառների վրա՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, հոգևոր: Հայաստանի նորանկախ պետությունն իր արտաքին ու ներքին քաղաքականությունն իրապաշտորեն մշակելու և գործադրելու, ինչպես նաև սփյուռքի հետ արդյունավետ համագործակցություն կազմակերպելու համար պետք է ճիշտ պատկերացումներ ունենա հայության աշխարհասփյուռ բեկորների և ներազգային հարաբերությունների մասին: Հայաստանի և հայության առջև ծառացած բարդագույն խնդիրները լուծելու գլխավոր նախադրյալներից են սփյուռքի հետ առողջ ու դինամիկ հարաբերությունների հաստատումը, հայության բոլոր հատվածների գործունեության նպատակային համադրումը: Հետևաբար՝ Հայաստան-սփյուռք հարաբերություններն անմիջականորեն կապված են Հայաստանի ազգային անվտանգության բնագավառի հետ և խոր ու բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունեն:

Հայաստանում (նաև կառավարության մակարդակով) սփյուռքի մասին պատկերացումների հիմքում, ցավոք, ընկած են անձնական կամ յուրայինների սահմանափակ և չվերլուծված շփումներն ու փորձառությունը: Սփյուռքի նկատմամբ տարվող

քաղաքականությունը կառուցվել ու շարունակում է կառուցվել ոչ թե ճիշտ ու համապարփակ տվյալների և դրանց վրա կատարված վերլուծությունների, այլ իրականությանը չհամապատասխանող կաղապարային կարծիքների և չհիմնավորված հաշվարկների վրա[1]: Հայկական սփյուռքն ուսումնասիրված է առավելաբար պատմագիտական, փաստանկարագրողական, պակաս չափով՝ նաև սոցիոլոգիական, ազգագրագիտական ու մարդաբանական եղանակներով[2]: Սփյուռքը բացարձակապես ուսումնասիրված չէ ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից, որի նշանակությունն այսօր առաջնային տեղ ունի: Սույն գլուխն այդ բացը մասնակիորեն լրացնելու մի փորձ է: Փորձենք ներկայացնել, թե ի՞նչ է և ինչպիսի՞ն է մերօրյա հայկական սփյուռքը:

Սփյուռքի մասին ամենատարածված տեսակետը

Մեզանում սփյուռքը շարունակում է դիտվել իբրև բացարձակ դրական մի արժեք: Հայաստանում և արտերկրում ամենատարածված տեսակետն այն է, որ սփյուռք ունենալը մեծ բարիք է[3]: Հայաստանի ամենաբարձրաստիճան այրերից ոմանք նույնիսկ կարծում են, որ խիստ ցանկալի է հայերի հաստատումն աշխարհի այն երկրներում, որտեղ նրանք դեռ չեն բնակվում: 1999 թ. սեպտեմբերի 11-ին Ազգային հեռուստատեսության եթերում պատմելով Հեռավոր Արևելքի երկրներ կատարած իր այցելության մասին՝ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը բառացիորեն ասաց. «Ափսո՛ս, որ Հարավային Կորեայում հայեր չեն ապրում: Շատ լավ կլիներ, որ այդ երկրում էլ հայեր ապրեին»: Արտգործնախարարի այս անկեղծ հայտարարությունը մասամբ բացատրվում է պարզ գերատեսչական շահով՝ հայկական համայնքի առկայությունը Հարավային Կորեայում էապես կհեշտացներ Հայաստանի արտգործնախարարության աշխատանքը այդ պետության հետ՝ ներառյալ, դուցե, դեսպանության հաստատումը: Բայց չէ՞ որ հայերը Հարավային Կորեա կարող են արտագաղթել կա՛մ Հայաստանից՝ նվազեցնելով հայրենիքի առանց այն էլ ճակատագրորեն ցածր գծին հասած ազգաբնակչության թիվը, կա՛մ արդեն փոքրիշատե կազմակերպված

համայնքներ ունեցող այլ երկրներից՝ թուլացնելով հայ ավանդական գաղթավայրերը՝ զուգահեռաբար նաև առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով ուծացման համար:

Նույն միտքը գրավոր արտահայտում է սփյուռքահայ հայտնի մտավորական, Վենետիկի համալսարանի պրոֆեսոր Լևոն Զեքիյանը. «Եթե նույնիսկ Սփյուռք չունենայինք՝ բաղձալի կըլլար, որ Սփյուռք մը ստեղծեինք: Քանի վրացիի որ հանդիպած եմ, զգացած եմ իրենց մեջ ցավ մը, գրեթե «նախանձ» մը (բարի կամ ոչ՝ ըստ անձին), որ իրենք Սփյուռք չունին»[4]: Պրոֆ. Զեքիյանը թեև նշում է, որ «այս չի նշանակեր, որ իյնանք մյուս ծայրահեղության մեջ, թե Հայաստանը պարպենք, որ Սփյուռքը զորացնենք»[5], սակայն սփյուռքը բարիք համարելու նրա դիրքորոշումը հստակ է: Նա համաձայն չէ, որ «սփյուռքային իրավիճակը ըմբռնվի լոկ իբր հայրենիքե և հողե զրկում, լոկ իբր անցման շրջան մը, սոսկ ժխտական հղացումներով, առանց որևէ դրական բովանդակության: Ներկայիս, ինչ որ զգալիորեն կնշմարվի Սփյուռքի մտավորականության բավական ընդարձակ մեկ հատվածին մեջ, խորացումի շարժում մըն է՝ ի խնդիր Սփյուռքի դրական արժեքներուն, դրական մտահղացումին ու դրականորեն՝ իբր այդ ապրումին»[6]: Այլուր Զեքիյանը թվարկում է արտերկրում ապրած հայերի բերած նպաստը հայկական մշակույթի զարգացմանը (տպագրություն, լուսավորչական գաղափարներին ծանոթություն և այլն)[7], սակայն չի նշում, որ, նախ՝ նույն և անհամեմատ ավելի մեծ նվաճումներ հայերը կարձանագրեին հայրենիքում, եթե օտար նվաճողներն այն ավերած ու ստրկացրած չլինեին, և, երկրորդ, որ այդ կարգի բոլոր ձեռնարկումների գլխավոր նպատակը եղել է հայրենիքի գոյապայքարին սատարելը, մի օր այն անկախ և հզոր տեսնելը, իսկ հաճախ էլ՝ արտերկրում հայ մշակութային ու քաղաքական գործունեությունը մտահղացվել, ծրագրվել ու կազմակերպվել է հե՛նց հայրենիքից (օրինակ՝ ազատագրական շարժումների մեծ մասը, տպագրության գործը և այլն):

ՀՀ արտգործնախարարի և վենետիկցի պրոֆեսորի այսպիսի անվերապահորեն դրական տեսակետը սփյուռքի մասին մասամբ արտահայտում է ժողովրդային մտայնության մեջ վաղուց արմատավորված մակերեսային մտակաղապար (ստերեոտիպ), որը, վեր-

ջին հաշվով, հայ քաղաքական մտքի երկարատև բացակայության հետևանք է:

Ավելին՝ գնալով հաճախակի կարելի է լսել մի նոր, չափազանց վտանգավոր տեսակետ, որով Հայաստանի՝ հայության կյանքում ունեցած տեղը, կշիռն ու դերակատարումը թերագնահատվում են, հայրենիքը և ազգային պետականությունը համարվում են երկրորդական, իսկ հայերի ցրված և անորոշ նպատակներով գոյատևումը՝ առաջնային: Այսպես՝ նույն Լևոն Զեքիյանը նաև հետևյալ թեզերն է առաջադրում. «Ամբողջ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա, նույնպես վտանգավոր է: Հայաստանի ավելի քան 25-դարյա պատմության ընթացքում մենք տեսել ենք և՛ պետականություն, և՛ անկախություն, և՛ նույնիսկ կայսրություն: Այդ ամենը եղել է, անցել է, նորից կրկնվել է, նորից անցել է և նորից վերադարձել է: Բայց անփոփոխ է մնացել մի բան՝ հայ ժողովրդի գոյությունը: Սա պետք է պահպանել: Ահա սա է մեր հիմնական նպատակն ու խնդիրը: ...Մեր պատմության մեծ մասի ընթացքում մենք ապրել ենք առանց պետականության»[8]:

Ընդգծենք առաջ քաշված դրույթների փաստական սխալները·

1) Հայոց պատմությունը ոչ թե «ավելի քան 25-դարյա» է, այլ առնվազն կրկնապատիկ ավելի[9]:

2) Մեր պատմության մեծ մասի ընթացքում մենք ապրել ենք՝ ունենալով ազգային պետականություն (դրանում համոզվելու համար պետք է պարզ թվաբանական հաշվարկ կատարել՝ սկսած հայկական հնագույն պետական կազմավորումներից մինչև մեր օրերը):

3) Պրոֆ. Զեքիյանի այն թեզը, թե «ամբողջ հայ ժողովրդի կենտրոնացումը մեկ աշխարհագրական կետի՝ հայերի իրադրային կենտրոնի վրա՝ վտանգավոր է», արտառոց է մի քանի առումով: Այդ աշխարհագրական կետը, որի մասին նա խոսում է՝ Հայաստանն է (ավելի շուտ դրանից մնացած 1/10-րդ բեկորը): Թե այդ երբվանի՞ց Հայաստանը դարձավ հայերի «իրադրային կենտրոն», պարզ չէ: Իրականում՝ Հայաստանը հայերի համար ոչ թե «իրադրային կենտրոն է», այլ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայրենիքում կենտրոնանալը՝ հայահավաքը, վտանգավոր լինել չի կարող, մինչդեռ հայրենի-

քից դուրս ցրվելը և անխուսափելի ձուլմանը ենթարկվելը ոչ միայն վտանգավոր է, այլև կործանարար[10]: Սա պարզից էլ պարզ ճշմարտություն է, որը լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունի: Իսկ հայերի համար «իրադրային կենտրոններ» են եղել ու կան հայրենիքից դուրս գտնվող մեր բոլոր գաղթավայրերը, այդ թվում՝ Վենետիկն ու Վիեննան, Լոս Անջելեսն ու Մոսկվան, Փարիզն ու Լոնդոնը և մյուսները:

Առավել ևս տարօրինակ է, որ հայրենիքում հայերի կենտրոնացումը վտանգավոր է համարվում այսօր, այս օրհասական պահին, երբ Հայաստանի բնակչությունը մեկ տասնամյակում գրեթե կրկնապատիկ նվազել է, իսկ արտագաղթը դադարելու միտումներ չի դրսևորում[11]:

Մոսկվաբնակ հայտնի մի մտավորական էլ, պատասխանելով թղթակցի այն հարցին, թե ինքն ու՞մ, ի՞նչ տիպի մարդու կցանկանար տեսնել Հայաստանի նախագահի պաշտոնում, ասում է. «Ես կարծում եմ, որ նախագահի իդեալական տարբերակ կլիներ մի մարդ, որն արդեն արտահայտել է իրեն հայկական համայնք ունեցող առաջադեմ երկրներից որևէ մեկում, արդեն տարիքն առած մի մարդ, որն ունի կյանքի և քաղաքական գործունեության փորձ, որը ցույց է տվել իր լիդեր լինելու կարողությունները: Ես գիտեմ այդպիսի մարդկանց: Օրինակ, Ջորջ Դոքմեջյանը՝ Կալիֆոռնիայի նահանգապետը: Ահա նա կարող էր լինել [Հայաստանի] հիանալի նախագահ»[12]:

Սա ևս մեծապես սխալ ու վտանգներով հղի տեսակետ է, քանի որ Հայաստանի ղեկավար չի կարող լինել մի մարդ, որը հայախոս ու հայագիր չէ, անծանոթ ու անհաղորդ է հայ ժողովրդի մշակույթին ու պատմությանը, նրա նպատակներին ու իղձերին, նրա տառապանքին և ուրախությանը, որը երբեք չի ապրել հայրենիքում, չի ճանաչում երկիրն ու ազգաբնակչությունը, վերջապես՝ մարդ, որն իր կյանքում հայության ու հայկական շահերի համար անձնական ջանք, ճիգ և, առավել ևս, զոհաբերություն չի կատարել[13]: Բացի անհիմն լինելուց, նման տեսակետները վիրավորական են Հայաստանում ապրող՝ հողն ու հայրենին պահող ժողովրդի համար:

Արդի հայկական սփյուռքի հիմնական հատկանիշները

Հինգ հազարամյակ՝ ձևավորման սկզբից մինչև 20-րդ դար, հայ ժողովուրդն ապրել է իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, պատմական Հայաստանի իր բնիկ տարածքում: 1915-22 թթ. հայերը բնաջնջվեցին և արտաքսվեցին Հայաստանի մեծագույն մասից: 21-րդ դարի սկզբի դրությամբ՝ հայերն ապրում են իրենց բնօրրանի ընդամենը մեկ տասներորդ հատվածում (որի մի զգալի մասն ազատագրեցին 1992-94 թթ.), իսկ հայերի կեսից ավելին բնակվում է արտերկրում:

Հայության զարգացումը կարելի է ապահովել միայն ազգային պետականության շրջանակներում, իսկ վերջինս հնարավոր է միայն արդի Հայաստանում, որը ներառում է Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Հայաստանում ապրող հայության հատվածը, իր դասակարգային, տեղային և զանազան այլ տարբերություններով հանդերձ, տնտեսական, հասարակական ու մշակութային մի միասնական օրգանիզմ է:

Մինչդեռ հայկական սփյուռքը բազմակիորեն տարանջատված միավոր է, որը մեծ վերապահումներով միայն կարելի է դիտել իբրև մի առանձին ընդհանրություն: Որոշ հեղինակներ այդ փաստը շահարկելով՝ վերջերս նույնիսկ փորձում են ժխտել հայրենի և տարագիր հայության միևնույն ազգին պատկանելությունը[14]*:*

Սփյուռքն անժխտելիորեն հայ ազգի մի մասնիկն է: Ընդ որում՝ մյուս ժողովուրդների տարագիր հատվածների հետ բաղդատելու դեպքում՝ հայկական սփյուռքն ամենահայրենասերներից է:

Բայց հարկ է նաև ընդունել, որ սփյուռքը, բնականորեն, մշտապես ծփում-տատանումի մեջ է. մասամբ՝ օտարացման-ձուլման ընթացքում, մասամբ էլ՝ հայ հավաքական կյանքն ամրացնող ու հարստացնող աշխատանքներում: Սփյուռքի մի մասը, ցավոք, անխուսափելիորեն ձուլվում-կորչում է օտար ազգերի մեջ, իսկ մյուս՝ հայրենասեր հատվածին առայժմ հաջողվում է ներգրավել ու մասնակից դարձնել ազգային կյանքին: Հետևաբար, սփյուռքը հայության մեծ ներուժն է ու միաժամանակ ամենահեղհեղուկ հատվածը:

Ասվածը նշանակում է նաև, որ սփյուռքի կիսաուծացած՝ հայկական և օտար ինքնությունների միջև խարխափող զանգվածը հրաշալի նյութ կարող է լինել օտար այն ուժերի ձեռքին, որոնք գործում են հայության դեմ: Քանի դեռ հայկական պետությունն այսօրվա պես թույլ է, օտար ուժերը հաջողությամբ օգտագործելու են սփյուռքի հեղհեղուկ տարրերին՝ Հայաստանում և այլուր սեփական խնդիրները լուծելու համար՝ բոլորովին հաշվի չնստելով հայության շահերի հետ: Ինչին և այսօր ականատես ենք:

Սփյուռքի Ա և Բ զանգվածները

Արտերկրում հայկական համայնքների ժամանակային-տարածքային ձևավորումը խիստ տարաբնույթ է, նույնիսկ խառնիճաղանջ: Այդուհանդերձ, մեր ուսումնասիրության առաջադրած հարցերը վերաբերում են արտերկրի հայության գաղափարական ու բարոյահոգեբանական ընդհանուր վիճակին և թույլ են տալիս բաժանել արդի հայկական սփյուռքը երկու հիմնական զանգվածի, որոնց պայմանականորեն կանվանենք Առաջին (Ա) և Երկրորդ (Բ) զանգված:

Ա զանգված. կազմում են 1894-1922 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից, Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերից արտաքսված հայերի երկրորդ, երրորդ և չորրորդ սերունդները: Բուն երկրից վերապրածներ այլևս գրեթե չեն մնացել: Այս զանգվածի մեջ լցվեցին, ճակատագրով ու գաղափարապես նրա մասը դարձան նաև 1920-21 թթ. խորհրդայնացված Արևելյան Հայաստանից հեռացած հազարավոր մարդիկ:

Բ զանգված. հայկական սփյուռքի մյուս մեծ զանգվածը կազմում են վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում խորհրդային, ապա անկախ Հայաստանից, Ադրբեջանից ու Վրաստանից արտագաղթած հարյուրհազարավոր հայերը: Այս զանգվածը կարելի է ստորադասել երկու հիմնական խմբի՝ չափանիշ ընտրելով Հայաստանի ներկայի և ապագայի նկատմամբ նրանց վերաբերմունքն ու հայկական մշակույթի հետ նրանց կապվածությունը.

1. Հայեր, որոնք ցանկանում են պահպանել իրենց և սերունդ-ների հայկականությունը:

2. Հայեր, որոնք ցանկանում են օր առաջ ձուլվել իրենց աշ-խատանքով ապահովված օտար միջավայրում:

Թեև վիճակագրական հաշվարկներ կատարված չեն, սակայն երկրորդ խումբն իր թվաքանակով թերևս չի զիջում առաջինին: Այս խմբի մեջ են՝ ա) Ադրբեջանում, Վրաստանում, ինչպես նաև բուն Հայաստանում մշակութապես ապահայացված բազմահազա-րանոց տարրը, բ) վերջին տասնամյակում Հայաստանում իշխող տնտեսական-իրավական անարդարություններից դառնացած, վի-րավորված, ծանր հիշողություններով հեռացած մարդիկ:

Առաջին զանգվածը կարելի է նաև պայմանականորեն անվա-նել «հին սփյուռք», երկրորդը՝ «նոր սփյուռք»:

Բացի այս երկու հիմնական զանգվածներից, կան նաև դրան-ցից ավելի վաղ ձևավորված «դասական» սփյուռքահայ գաղթա-վայրեր՝ Նոր Ջուղայի և Կ. Պոլսի հայությունը, Վենետիկի և Վիեն-նայի մխիթարյանների կենտրոնները: Սակայն մեր ուսումնասի-րության մեջ հայության այս մշակութապես յուրօրինակ հատված-ների առանձին-առանձին ուսումնասիրությունն անիմաստ է, որով-հետև վերջին ութ տասնամյակի ընթացքում դրանք քաղաքակա-նապես ու գաղափարապես միաձուլվել և նույնանում են վերևում սահմանված Ա զանգվածի՝ «հին սփյուռքի» հետ:

Ա և Բ զանգվածների միջև միջանկյալ դիրք են գրավում նաև Նոր Նախիջևանի հայությունն ու վիրահայությունը: Սակայն դրանց արժե անդրադառնալ առանձին քննությամբ (ընդ որում՝ Ջավախքում, Թիֆլիսում, Վրաստանի այլ վայրերում և Աբխազիա-յում ապրող հայերի խնդիրները բավական տարբեր են միմյանցից, իսկ Նոր Նախիջևանի հայությունն այժմ այնպիսի թուլացած վի-ճակում է, որ նրա գոյությունը մշակութային ու քաղաքական աս-պարեզում բոլորովին աննկատ է մնում):

Խառնամուսնություններ

Վերջին երկու-երեք տասնամյակում Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում ապրող հայության (այսինքն՝ Ա զանգվածի մեծամասնության) միջավայրում խառնամուսնությունները հասնում են մինչև 60 տոկոսի[15]: Փաստական էնդոգամիայի (ներազգային ամուսնությունների) քայքայման այս ցուցանիշն արագընթաց ձուլումի պարզ վկայություն է[16]:

Օտարահպատակության բացասական հետևանքները

Սփյուռքահայությունն օտարահպատակ է: Այսինքն՝ արտերկրում ապրող հայն իրավականորեն պարտավոր է պաշտպանել, նախ և առաջ, այն պետության շահը, որի քաղաքացին է ինքը: Իսկ Հայաստանի և հայության շահերը պաշտպանելու համար նա երբեմն պետք է հակադրվի սեփական պետությանն ու նրա շահերին: Սփյուռքահայերի միայն փոքր մասն է պատրաստ այդպիսի հակադրման, որովհետև դրա հնարավոր հետևանքը անձնական շահերի զոհաբերումն է, որ կարող է ընդունել բազմազան ձևեր, ինչպես, օրինակ, կարիերայի հաջող շարունակության ձախողումը, լավ վճարվող ու հեռանկարային աշխատանք ստանալու բարդացումը կամ այդպիսի աշխատանքից այլևայլ հորինված պատճառներով զրկվելը, տնտեսական ճնշումները, նույնիսկ սարքովի դատական հետապնդումների ենթարկվելը և այլն:

Եվ այս ամենն այն պարագայում, երբ երկրորդ, երրորդ կամ չորրորդ սերնդի սփյուռքահայերի զգալի մասի նվիրվածությունը Հայաստանին արմատապես խարխլված է, քանի որ նրանք «առաջին հայրենիք» են համարում կա՛մ այն երկիրը, որտեղ ծնվել ու մեծացել են, կա՛մ էլ այն երկիրը, որի քաղաքացին են: Հայաստանն այլևս շատ շատերի համար ընդամենը «երկրորդ» կամ «երրորդ» հայրենիք է (ծննդավայրի ու քաղաքացիություն տված երկրներից հետո), այսինքն՝ պապերի հայրենիք է, ո՛չ իրենցը:

Հայկական դպրոցներ

Հայաստանում շատերն են լսել Հայաստանից դուրս գործող հայկական դպրոցների մասին, սակայն քչերը գիտեն, որ արտերկրում գործող հայկական կոչված դպրոցների բացարձակ մեծամասնությունը հայերենով ուսուցանում է ընդամենը հայոց լեզու, հայ գրականություն ու հայոց պատմություն առարկաները: Մնացած բոլոր առարկաները՝ ներառյալ աշխարհագրությունն ու հին և միջին դարերի պատմությունը, թվաբանությունն ու մաթեմատիկան, աստղագիտությունն ու երկրաչափությունը, ֆիզիկան ու քիմիան, դասավանդվում են այն երկրի պետական լեզվով, որտեղ գտնվում է տվյալ հայկական դպրոցը (որոշ դեպքերում էլ՝ անգլերեն): ԱՄՆ-ի հայկական կոչված դպրոցներում այս բոլոր առարկաները դասավանդվում են անգլերեն, Հունաստանում՝ հունարեն, Պարսկաստանում՝ պարսկերեն, Արգենտինայում՝ իսպաներեն, Ֆրանսիայում՝ ֆրանսերեն և այլն: Այսինքն՝ այդպիսի հայկական դպրոց ավարտած աշակերտի հայերենի իմացության մակարդակը ծայրաստիճան ցածր է, և իրականում այդ աշակերտներին հայախոս կարելի է համարել խիստ պայմանականորեն, քանի որ նրանցից քչերը միայն ի վիճակի կլինեն հայերեն գիրք կարդալ, էլ չասած՝ հայերենով գրել-ստեղծագործելու մասին: Այս առումով՝ արտերկրի հայկական դպրոցները նմանվում են Խորհրդային Հայաստանում գործող ռուսական դպրոցներին: Սակայն վերջինները գոնե գործում էին հայրենի միջավայրում, և այդ պատճառով նրանց աշակերտների հայեցի կրթության մակարդակը փոքր-ինչ ավելի բարվոք էր:

Արտերկրում մնացել է ընդամենը մի քանի դպրոց, որոնցում առարկաների զգալի մասը դասավանդվում է հայերեն: Մինչև վերջերս դրանց առաջատարը Կիպրոսի Մելգոնյան վարժարանն էր, սակայն այժմ այնտեղ էլ դրությունը կտրուկ փոխվել է, և առարկաների մեծամասնությունն արդեն անգլերեն է դասավանդվում (այդ փառավոր կրթօջախին վերջին ու, թերևս, մահացու հարվածը հասցվեց 2004 թ. ՀԲԸՄ-ի՝ այն ամբողջությամբ վաճառելու և փակելու մասին ընդունած որոշմամբ): Վերջին տարիներին անօրինակ տագնապի մեջ են հայտնվել նաև սիրիական միջնաբերդ համարվող Լիբանանի հայկական վարժարանները, որտեղ նույնպես շատ ծնող-

ներ սկսել են իրենց զավակներին ուղարկել ոչ հայկական դպրոց-ներ՝ հաճախ պատճառաբանելով, թե «հայերենը հաց չի կերցներ, զավակս քաղաքական մարզերուն մեջ դյուրին դիրք չունենար, տեղ չի հասնիր»[17]: Ահազանգում են նաև, որ անգամ հայկական վարժարաններում «հետզհետե երևան կուգա այլ երևույթ մը. հայ աշակերտության մոտ սկսած է զարգանալ հայագիտական նյութե-րու հանդեպ ժխտական կեցվածք մը. հարց մը, որ կդառնա մտահո-գիչ: Աշակերտները հայերեն չեն սորվիր, աշակերտության կողմէ հայոց պատմության պահերը սկսած են նկատվիլ զբաղումի, դադա-րի կամ ալ ժամանցի պահեր. և դեռ նույնիսկ կարգ մը վարժարան-ներու մեջ աշակերտները չեն մասնակցիր հայերենի ու հայոց պատ-մության դասապահերուն... Եթե հայ աշակերտը, հայերենի ու հայ ժողովուրդի պատմության դասանյութերուն պիտի չհետևի... ու՞ր կմնա հայկական վարժարաններու առաքելությունը»[18]:

Բայց ամենակարևոր հանգամանքն այն է, որ արտերկրի հայ-կական դպրոցներ հաճախում է սփյուռքահայ երեխաների ու պա-տանիների չնչին մասը միայն: Ճնշող մեծամասնությունը հաճա-խում է օտար դպրոցներ՝ զրկվելով անգամ հայկական միջավայրի մեջ ուսանելու հնարավորությունից: Այսպես՝ ԱՄՆ-ում, որտեղ ապրում է մոտ մեկ միլիոն հայ, կա ընդամենը 25 հայկական դպրոց՝ 13.616 աշակերտով. Ռուսաստանում, որտեղ ապրում է շուրջ 2.5 միլիոն հայ, գործում է ընդամենը 23 հայկական դպրոց՝ 6.437 աշակերտով[19]:

Ուծացվածության արդյունքները

Սփյուռքահայության ուծացման ուղին բռնած զանգվածի ներկայացուցիչներից շատերն արտերկրում ինչպես օտար, այնպես էլ հայկական միջավայրում տարբերայնորեն վարում են հակահա-յաստանյան քարոզչություն: Արդարացնելու համար արտերկրում ապրելու և ուծանալու իրենց ընտրությունը՝ այդպիսի «հայերը» մերժում են հայոց լեզուն և Հայաստանի հազարամյա (իրենց ան-ծանոթ մնացած) մշակույթը, ծաղրում ու հեգնում են Հայաստանի անցյալն ու ներկան, թերահավատություն սերմանում հայության

ապագայի նկատմամբ, մի խոսքով՝ ատում են իրենց հայկական ծագումը: Այսպիսի ինքնատյաց հայեր կան, պակաս չափով, նաև բուն Հայաստանում: Սրանց առկայությունն արտառոց, միայն հայկական միջավայրին հատուկ երևույթ չէ: Նման տարրեր առկա են անցյալում ճնշված, ազգային խոշոր պարտություն ապրած, ջարդ ու կոտորած տեսած որևէ ազգի մեջ: Սոցիալական հոգեբանության մեջ ուսումնասիրված է «ինքնատյաց հրեաների» (self-hating Jew) ֆենոմենը: Հազարավոր ինքնատյաց հայերն անխուսափելիորեն ծագում են հարյուրհազարավոր մշակութապես ուծացած (acculturated/assimilated) «հայկական ծագում» ունեցող մարդկանց բանակից: Այսպիսի «հայերի» առաջացմանն ու գոյությանը նպաստում է նաև Հայաստանի և հայ ազգի ներկա համակարգային ճգնաժամը:

Հայոց լեզվի, պատմության և մշակույթի չիմացություն

Չհաշված նախկին սովետահայերին, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ծնված ու կրթություն ստացած հայերին՝ մնացած ամբողջ սփյուռքը ո՛չ հայախոս է, ո՛չ էլ առավել ևս հայագիր: Այս զանգվածի մեջ են մտնում ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսասատանի սփյուռքահայերը: Լեզվի չիմացությունը սփյուռքի Ա զանգվածի այս մեծամասնության մեջ մեխանիկորեն առաջացնում է հայոց պատմության և մշակույթի չիմացություն կամ թյուր իմացություն[20]:

Դրանից զատ, վերջին տասնամյակներում բազմաթիվ հատորներով հրապարակ իջած ամերիկյան «հայագիտությունը» մի իսկական պատերազմ է սկսել հայոց ինքնության հիմքում ընկած պատմական խորհրդանիշերի դեմ: Այսպես՝ ամերիկյան կեղծ հայագիտությունը՝

1. հայտարարում է, որ հայերը Հայկական լեռնաշխարհի ոչ թե բնիկ, այլ եկվոր տարր են.
2. սևացնում է Հայոց պատմության և մշակույթի մեծ գործիչներին. պատմահայր Մովսես Խորենացուն բնու-

թագրում է որպես «լկտի և կեղծարար խաբեբա», Եղիշեին՝ ստախոս, Վարդան Մամիկոնյանին՝ «ոչ հայրենասեր» ֆեոդալ, Մեսրոպ Մաշտոցին՝ «մի քրիստոնյա քահանա, որը չի ունեցել հայրենասիրական նպատակներ» և այլն, և այլն.

3. պատմական հավաստի նյութից զուրկ, հնարովի և շինծու ստեղծագործություններ է կոչում հայոց հավաքական հիշողության հիմնաքարերը՝ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ները, Եղիշեի «Վարդանանց պատերազմը», ինչպես նաև հայկական պատմագրության այլ անգին աղբյուրներ.

4. որակում է հայկական մշակույթը որպես ինքնուրույն արժեք չներկայացնող՝ օտար փոխառությունների մի հավաքածու.

5. ներկայացնում է հայոց հին ու միջնադարյան պետականությունը որպես թույլ և անարյուն գոյություն, նեղացնում է պատմական Հայաստանի սահմանները, անտեսում կամ ժխտում է նրա ռազմական ուժն ու միջազգային կշիռը.

6. կեղծում է Հայաստանի պատմական ժողովրդագրությունը և հայերին գրեթե միշտ փոքրամասնություն հռչակում.

7. ժխտում է երիտթուրքերի՝ հայերին բնաջնջելու հստակ նպատակ ունենալը և Հայոց ցեղասպանության պետականորեն կազմակերպված լինելը.

8. հռչակում է Արցախը որպես ոչ թե միջնադարյան Հայաստանի, այլ Կովկասյան Աղվանքի մաս ու, միաժամանակ, արդի Ադրբեջանն էլ՝ Աղվանքի «իրավահաջորդ»[21]:

Կեղծ հայագիտության արտադրանքը՝ Արևմուտքում Հայաստանի ու հայության դեմ մեթոդաբար և անդադար տարվող թուրքամետ քարոզչական արշավի բաղկացուցիչ մասն է: Հայ ազգի խորհրդանիշերի դեմ պայքարը չի էլ թաքցվում: Օրինակ՝ Ռ. Սյու-

նին, իր իսկ խոստովանությամբ, փորձում է «կազմալուծել» Հայաստանի պատմական տարածքների պահանջատիրության հիմքում ընկած հայոց պատմության ավանդական «ըմբռնումը կազմող հավատալիքների հավաքածուն»[22]: Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան, ԱՄՆ-ի քաղաքացի Ջիվան Թաքիբյանը երկրորդում է Սյունիի մտքերը՝ ասելով, թե հայության մտայնության մեջ տեղ ունեցող «յուրաքանչյուր ընդունված տեսակետ, յուրաքանչյուր կարգախոս, յուրաքանչյուր քննադատությունից դուրս գտնվող գաղափար և անձ պետք է մանրամասն զննել, ստուգման ենթարկել, վիճարկել, քննարկել, ապա դրանց մարտահրավեր նետել»[23]:

Արևմուտքում հայոց քաղաքակրթությունն ու մշակույթն այնչափ աղճատված ու նսեմացված են ներկայացվում, որ անգլերենով ընթերցող սփյուռքահային կարող են հիասթափեցնել իր հայ լինելուց անգամ[24]:

Սփյուռքի ամենահարուստ ու քաղաքականապես փոքրիշատե կազմակերպված համայնքը՝ ամերիկահայությունը, մասամբ լիովին անտեղյակ է Հայոց պատմությանն ու մշակույթին, մասամբ էլ՝ օտար ուժերի մշակած կեղծ տեսություններ և, ըստ այդմ էլ, հայավնաս գաղափարախոսության ազդեցության տակ է: Ամերիկահայության այսպիսի տխուր վիճակը մեծապես ազդում է ոչ միայն մյուս հայ գաղթավայրերի վրա, այլև սպառնում է ներառել Ռուսաստանի և նույնիսկ Հայաստանի երիտասարդությանը, որի մի զգալի մասն այս կամ այն չափով արդեն իսկ ամերիկյան կենսաձևի ու մշակույթի ազդեցության տակ է[25]:

Ուծացած սփյուռքահայի կերպարն ու գաղափարախոսությունը

Արժանին մատուցելով արտերկրի բարդ միջավայրում հայկականությունն ամեն գնով պահպանելու հայրենասեր զանգվածի ջանքերին, պետք է միաժամանակ ուշադիր քննել սփյուռքահայության մեջ տեսակարար զգալի կշիռ կազմող ուծացած կամ ուծացման ուղին բռնած տարրը, որը տարերայնորեն, անձնական կենսա-

կերպի օրինակով իսկ, քարոզում է ազգային արժեքների և նպատակների մերժում: Այդ քարոզը երբեմն ուղղորդվում է օտար ոչ բարեկամ ուժերի կողմից և այդպիսով ստանում նաև կանխամտածված ու ծրագրված բնույթ: Իսկ ընդհանուր առմամբ՝ հայության կյանքում ուծացած տարրը կատարում է քայքայիչ և բարոյալքող դեր: Ուստի անհրաժեշտ է հասկանալ ուծացած հայի կերպարն ու մտայնությունը, նրա գաղափարախոսությունն ու հոգեբանությունը՝ նրան առավել արդյունավետորեն հակազդելու համար: Այդ նպատակով այս ենթագլխում քննում ենք մի հոդված, որը, թեև լույս է տեսել ավելի քան 40 տարի առաջ, սակայն չի կորցրել իր թարմությունը:

1961 թ. "Ararat" հանդեսում (ԱՄՆ) ամերիկագիտության պրոֆեսոր, ոմն Ջոն Հակոբյանը հրապարակեց մի հոդված, որում փորձում էր սահմանել, թե իր համար ի՞նչ է նշանակում հայ լինելը, և արդյո՞ք իմաստ ունի հայապահպանությունը[26]: Ինքնակենսագրական տեղեկություններից պարզվում է, որ Ջոն Հակոբյանը մանկությունից ի վեր նյարդայնացել է հայ ծնված լինելու հանգամանքից: Հակոբյանն ինքն իրեն դասում է «այն միլիոնավոր էակների թվին, որոնք վստահ չեն, թե որ էթնոսին են պատկանում. էակներ, որոնք դրանով նույնպես նեղսրտած են»[27]: Մանկության տարիներին, իր իսկ բառերով, նա «սարսափելի սրտնեղում էր» շաբաթօրյա հայկական դպրոց այցելելուց, որովհետև դրա փոխարեն ցանկանում էր խաղալ բեյսբոլ, գնալ կինոթատրոն՝ «Տարզան» դիտելու կամ պարզապես խաղալ օտարազգի հասակակիցների հետ[28]: Հասուն տարիքում, դասավանդելով Գերմանիայում, նա սրտնեղում էր, երբ իրեն հարցնում էին՝ «պրոֆ. Հակոբյան, չէ՞ որ դուք հայ եք» կամ «պրոֆ. Հակոբյան, չէ՞ որ դուք ամերիկացի եք»[29]: Արդյունքում՝ Հակոբյանը մի պահ նույնիսկ փոխում է իր ազգանունը, սակայն դա էլ այլ կարգի խնդիրներ է ստեղծում, և նա վերադառնում է իր ազգանվանը ու «համբերատարորեն» տանում բոլոր բարդությունները. «Որպես հայ ես ժամեր էի անցկացնում հայկական ձանձրալի հարսանիքներին և հուղարկավորումներին: Ինձնից փող էին պահանջում «Հայ դատի» համար: Հայ թղթախաղացներն ինձ խաբում էին պոկեր խաղալիս, իսկ Կենտրոնական հետախուզության վարչությունում աշխատող հայերն ինձ պետական գաղտնիք-

ներ էին հաղորդում: ...Իմ հայկական ազգանվան շնորհիվ ես հայտնվում էի բազմաթիվ հիշվող իրադրությունների մեջ, որոնք հաճելի էին կամ ոչ այնքան: Բայց ընդհանուր առմամբ՝ դա նյարդայնանալու աղբյուր էր, և ես հաճախ էի նախանձում Սմիթների և Ջոնսոնների հանգիստ գոյությանը»[30]:

Ինքն իրեն հարցնելով, թե ինչու՞ էին իր ծնողներն այդքան ցանկանում, որ նա հայի հետ ամուսնանա և առհասարակ պահպանի իր հայկականությունը, Ջոն Հակոբյանը փորձում է գնահատել հայոց ինքնության հիմնարար մի քանի չափանիշները՝ լեզուն և գրականությունը, Հայ եկեղեցին և դավանանքը, հայոց պատմությունն ու մշակույթը: Ահա թե ինչպիսին են այս հարցում նրա ցուցադրած գիտելիքներն ու գնահատականները:

Ուծացածի վերաբերմունքը հայոց լեզվին ու գրականությանը. *«Հանուն ինչի՞ սովորել հայերենը», հարցնում է Ջոն Հակոբյանը և պատասխանում. «...գուցե մշակութային ինչ-որ արժեքնե՞ր կան, որոնք առանց հայերենի իմացության հասանելի չե՞ն: Ըստ իս, չկա՛ն: Թերևս միայն աստվածաբանություն ուսումնասիրողների համար, բայց նրանց էլ պետք է [միայն] հին հայերենը... ի՞նչ կարելի է կարդալ հայերենով: Բաֆֆի՞: Չկա նաև մի այնպիսի հատուկ լսարան, որը գերելու համար իմաստ ունի սովորել հայերենով գրել: Այսպիսով՝ գրական որևէ ուժեղ խթան հայկական ինքնությունը պահպանելու համար ես չեմ տեսնում»*[31]:

Ուծացածի վերաբերմունքը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ. *Հայ առաքելական եկեղեցին, նրա դավանանքը, սովորույթները, արարողակարգը Ջոն Հակոբյանի համար «մեծ նշանակություն չունեն», քանի որ նա իրեն աթեիստ է հռչակում*[32]:

Ուծացածի վերաբերմունքը հայոց պատմությանն ու մշակույթին. *Ջոն Հակոբյանը հարցնում և պատասխանում է.*

> «Արդյո՞ք հայոց պատմության հանդեպ հարգանքը հայկական ինքնության կարևոր բաղկացուցիչ է: Շատ հնարավոր է: ...Սակայն եկեք նայենք իրականության աչքերին... Որևէ հայ օրացույց չի հորինել, օրենքների գիրք չի կազմել, կենսաբանության հիմքերը չի դրել, գեղանկարչության կամ քանդակագործության գլուխգործոց չի ստեղծել, նրանցից որևէ մեկը մարդկությանը հեռախոս կամ ատոմային ռումբ չի տվել... Եթե

օբյեկտիվորեն նայենք, ապա հայերի պատմական դերը խիստ համեստ է եղել, և միայն իր սխալմունքի մեջ համառող շովինիստը կարող է այլ կերպ մտածել»[33]:

Ուշագրավ է, որ Ջոն Հակոբյանը գաղափար իսկ չունի հայկական օրացույցների և նրանց կազմողների, Մխիթար Գոշի, Ալավկա որդու, Սմբատ սպարապետի ու նրանց կազմած դատաստանագրքերի, Շ. Շահամիրյանի շարադրած համաշխարհային պատմության մեջ առաջին սահմանադրության (1773 թ.), Թորոս Ռոսլինի մանրանկարների, հայ միջնադարյան երաժշտության ու ճարտարապետության գլուխգործոցների և հայկական քաղաքակրթության՝ զանազան այլ բնագավառներում արձանագրած նվաճումների մասին: Այսպիսով՝ ուծացած հայի վերաբերմունքը հայոց պատմության ու մշակույթի հանդեպ ձևավորվում է, մի կողմից, չգիտության ու ինքնանսեմացման, մյուս կողմից՝ արևմտյան մասնագետների թերի և միտումնավոր աշխատությունների վրա:

Սակայն ամենաէականը հետևյալն է. Ջոն Հակոբյանի ճամարտակություններում խսպառ բացակայում է հայության ընդհանուր շահերի ու նպատակների գիտակցումը և անձնական վերապրումը, հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների նկատմամբ տարրական հարգանքը: Ջոն Հակոբյանը և նրա նման մտածողները չունեն ազգային առողջ ինքնագիտակցության տեր հային բնորոշ գաղափարական-հոգեբանական այնպիսի հիմնարար դրույթներ, ինչպիսիք են, մասնավորապես, Հայաստանի հետ հոգևոր կապվածությունը, հայ ազգի վտանգված ապագայի նկատմամբ անհանգստությունը, Հայոց եղեռնի և կորուսյալ հայրենիքի այրող հիշատակն ու դրանից բխող զգացմունքները, այդ թվում՝ պատմական արդարությանը հասնելու ձգտումը, ցեղասպանություն իրականացնելու համար չզղջած, հետևաբար նոր ոճրագործության ընդունակ Թուրքիայի նկատմամբ բացասական դիրքորոշումը[34]:

Ջոն Հակոբյանի՝ հոդվածը պատվերով գրելու հավանականությունը. Հիշենք, որ ամերիկյան կեղծ հայագիտության՝ սփյուռքահայ զանգվածների վրա ձեռնարկած հոգեբանական գրոհն սկիզբ է առնում 1950-ական թվականներից, այն է՝ Թուրքիայի ՆԱՏՕ-ին անդամակցելուց ի վեր: Լուրջ հիմքեր կան կասկածելու, որ Ջոն Հակոբյանի այս հոդվածը կեղծ հայագիտության գործունեությունը

նախանշող մի ծրագրային, «նախակարապետ» ստեղծագործություններից է: Եթե այդպես է, ապա Ջոն Հակոբյանի «դատողությունները», բացի ուծացած (այսինքն՝ իր հոգևոր արմատներից կտրված, դրանց դավաճանած ու, ըստ այդմ, մեղքի զգացումով ապրող) անհատի հիվանդագին ենթագիտակցական մղումներից, ունեցել են մի լրացուցիչ՝ «վերևից» իջեցված աղբյուր ևս: Կասկածանք է հարուցում մասնավորապես այն, որ տարիներ անց ճիշտ նույն անհիմն ու չինծու եզրակացություններով հանդես են գալիս ոչ թե Ջոն Հակոբյանի պես հայոց պատմությանն անտեղյակ մարդիկ, այլ ամերիկացի տիտղոսակիր «հայագետները»: Բերենք օրինակներ:

1994 թ. լույս տեսած հայկական մանրանկարչության նմուշներին նվիրված մի գրքում գրեթե բառացիորեն գտնում ենք նույն անհեթեթ միտքը՝ «Հայկական արվեստի ազդեցությունը համաշխարհային արվեստի վրա փոքր է եղել»[35]:

Մեկ այլ զուգահեռ, այս անգամ՝ Ջոն Հակոբյանի և ՀՀ առաջին նախագահի օրոք բարձր պաշտոններ զբաղեցրած Ժիրայր Լիպարիտյանի մտքերի միջև[36]: Ջ. Հակոբյանի ամենավերջին եզրակացությունն այն է, թե այն անձը, որն ինքն իրեն «կապում» է որևէ ազգի շահերին և մշակույթին, դրանով իսկ իբր սահմանափակում և «անդամահատում» է իր անհատական կարողությունները, դառնում է հոգեպես հաշմանդամ[37]: Ճիշտ նույն նշանակետին՝ հայերի ազգային նպատակներին ու գաղափարախոսությանն է խփում Ժ. Լիպարիտյանը՝ գրելով.

> «Գաղափարախոսությունները, լինեն ֆաշիստական, ազգայնական, կոմունիստական թե ուրիշ, ինքնամեծար ու եսակենտրոն մարդկանց ապահովում են բարոյական ու քաղաքական իրավասությամբ, որով անհատներին ստիպում են վարվել ու մտածել որոշակի ձևով, հրաժարվել ինքնուրույն դատելու և իրենց համար ու ժողովրդի համար լավագույն ելքեր գտնելու հավակնությունից: Ազգային գաղափարախոսությունների առաջքաշումը սահմանումներ և ինքնություններ պարտադրելու փորձ է»[38]:

Ջ. Հակոբյանի հոդվածից 40 տարի անց հայերին ճիշտ նույն աշխարհաքաղաքացիության կոչն է ուղղում մեկ ուրիշ ուծացած հայ՝ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հովանավորյալ Ռոնալդ Սյունին, որն իր հերթական ապապատմագիտական հոդվածն ավարտում է հետևյալ եզրակացություն-առաջարկությամբ. «Եթե երբևիցե տարածաշրջանում խաղաղությունը դառնա տիրական, իսկ սահմանները՝ է՛լ ավելի բաց, ապա հայերը կարող են մեկ անգամ ևս ստանձնել միջնորդների և վաճառականների իրենց պատմական դերը ու հանդես գան որպես կոսմոպոլիտ ու լուսավոր դարի նախակարապետներ»[39]: Մեկնաբանությունները թողնում ենք ընթերցողին:

Հայոց պատմության և մշակույթի նկատմամբ Ջ. Հակոբյանի հեգնական վերաբերմունքը հետագայում ճգրիտ կերպով կրկնել են ամերիկացի «հայագետները»: Օրինակ՝ այն փաստը, որ հայերն են հիմնել ազգային քրիստոնյա առաջին եկեղեցին, Ջ. Հակոբյանը հեգնում է այսպես՝ «սա նույնչափ վստահ է հնչում, որքան Առաջին ազգային բանկի հիմնումը, այդպե՞ս չէ»[40]: Այս հեգնանքը հետագայում երկրորդել է Սյունին. «Հայերի՝ տանը, եկեղեցում ու դպրոցում ստացած գիտելիքները միայն հաստատում ու վերահաստատում են այն, թե [իբր] նրանց ժառանգությունը հասնում է մինչև Տիգրան Մեծ, եթե ոչ մինչև Ուրարտու, հարկավ՝ մինչև Գրիգոր Լուսավորիչ («Հայաստանը առաջին քրիստոնյա երկիրն է եղել»), մինչև Սուրբ Վարդան»[41]: Այլուր Սյունին փորձում է հեգնել «պատմական հայրենիքի» գաղափարը, ինչպես նաև հայ պատմաբաններին այն բանի համար, որ նրանք այսօրվա հայերին համարում են Ք.Ա. 2-րդ դարում ապրած հայերի ուղղակի հետնորդներ[42]:

Ջ. Հակոբյանի՝ «ի՞նչ կարելի է կարդալ հայերենով: Ռաֆֆի՞» հեգնական արտահայտությունը, թվում է, նույնպես պատահական չէ: Ինչու՞ է հե՛նց Ռաֆֆին ընտրվել որպես թիրախ, այն էլ մեկի կողմից, որը հայերեն լավ չգիտի և Ռաֆֆի էլ հաստատ չի կարդացել: Բանն այն է, որ Ռաֆֆին հայ ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիր գաղափարախոս է, որի աշխարհընկալումը ոչ միայն օրգանապես խորթ է ուծացած, հանուն ազգային շահի չնչին զոհողություն բերելու անընդունակ «հային», այլև վտանգավոր է դիտվում ամերիկյան պետական (Թուրքիայի հետ համագործակցող) այն կառույցների ու շրջանակների համար, ո-

րոնք ցանկանում են սփյուռքահայերին տեսնել միայն ջոն հակոբյանների և ռոնալդ սյունիների կոսմոպոլիտ կերպարանքի մեջ:

Ուծացումը նաև հոգեբանական երևույթ է, որը մեծապես նպաստում է ազգային շահերի արհամարհանքին ու դրժմանը: Անվանի հոգեբան Ալբերտ Նալչաջյանը, ուսումնասիրելով սեփական ազգը դավաճանող անձանց հոգեբանական տեսակները, ի թիվս այլոց, առանձնացնում է նաև «դավաճան-հարմարվողների» տեսակը[43]: Այս առումով խիստ հետաքրքրական է, որ Ռ. Սյունին, ինչպես ինքն է պատմում, 1997 թ. հունիսին Երևանում մի դասախոսություն կարդալուց հետո (ի դեպ, դա 1990-ական թթ. Երևանում նրա կարդացած առաջին և վերջին դասախոսությունն էր), արժանացել է դահլիճում ներկա հայաստանցի ունկնդիրների միահամուռ բուռն վրդովմունքին, նույնիսկ՝ «դավաճան» ու «հայ չես» գնահատականներին[44]:

Ցավալին այն է, որ նման գաղափարախոսության տեր գործիչները, միմյանց հերթագայելով, հայտնվում են նաև նորանկախ Հայաստանի պետական մարմիններում, որով նրանց քարոզի համար ստեղծվում են առավել բարենպաստ պայմաններ: Այսպես՝ Ժ. Լիպարիտյանին ՀՀ արտգործնախարարության կառույցում փոխարինելու եկած գաղափարակիցը՝ 1998 թ. ի վեր Ավստրիայում և ԵԱՀԿ կառույցներում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան, ԱՄՆ-ի քաղաքացի Ջիվան Թաբիբյանը, մի հոդվածում փաստորեն առաջարկում է սփյուռքահայ կառույցները «բարեփոխել»՝ դրանք լիովին ապաքաղաքականացնելով և օտար միջավայրի հետ գրեթե ամբողջովին ձուլելով[45]: Սփյուռքահայ կառույցների համար նրա առաջարկած օրակարգն ընդգրկում է հայապահպանման հին կետերը՝ եկեղեցի (ընդ որում՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիները, հայկական ինքնության տեսանկյունից, հավասարարժեք են համարված, որ սխալ է), հայկական դպրոց, հայկական երգ ու պար, Հայաստանին ցուցաբերվող տնտեսական ու լոբբիստական օժանդակություն: Սակայն Ջ. Թաբիբյանը ոչ մի խոսք չի ասում կորուսյալ հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի, հայ-թուրքական հարաբերությունների, ցեղասպանության միջազգային ճանաչման ու դրա հնարավոր հետևանքների մասին: Փոխարենը՝ պրն դեսպանը հնչեցնում է մեզ արդեն լավ ծանոթ կեղծ դժգոհու-

թյունն առ այն, թե իբր սփյուռքում «երիտասարդ հեղինակների վրա ճնշում են բանեցնում, որպեսզի նրանք գրեն բացառապես հայկական թեմաներով»[46]: Հիշենք, որ նույնատեսակ ամբաստանություններով հանդես է գալիս նաև ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Կովկասի բաժնի պատասխանատու Լևոն Ավդոյանը, ըստ որի՝ ամերիկահայությունն իբր «անընդհատ շովինիստական բանավեճ է» վարում և «նախնական կամ քաղաքական սպասելիքներ» ունի ամերիկացի հայագետներից[47]:

Իրականում՝ արտերկրում հայկական թեմաներով գրող պրոֆեսիոնալ և անաչառ մասնագետների վիթխարի պակաս կա, այլապես այսօր Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ անգլերենով ու միջազգային տարածում ունեցող այլ լեզուներով լույս տեսած կլինեին հայկական տեսակետը պաշտպանող ոչ թե ընդամենը մի քանի անուն գիրք, այլ տասնյակ աշխատություններ[48]: Սակայն քաղաքականապես չափից ավելի «պատրաստված» Ջ. Թաքիբյանի համար այսպիսի «մանր» խնդիրները կարևորություն չունեն, ահավասիկ նրա ևս մի քանի դատողություն. «Սփյուռքում լավ գրող լինելու համար... անհրաժեշտ չէ գրել հայերենով, ոչ էլ նույնիսկ հայկական թեմաներով»[49], կամ՝ «սփյուռքում պետք է շատ զգույշ լինել այլազգի՝ «օտար» հասկացության հանդեպ: Միայն Հայաստանում է, որ այս տերմիններն իմաստ ունեն՝ ամբողջական և իրավաբանական իմաստ: Բոլոր մյուս տեղերում այդ կեղծ բնութագրումն ընդունակ է միայն մարգինալացնել երիտասարդներին և արագացնել օտարացման ընթացքը»[50]: ՀՀ դեսպանի այս արտառոց մտքերը ոչ այլ ինչ են, քան ասիմիլիացիայի թեթևակիորեն չպարված քարոզ, որը միանգամայն համընկնում է Ջ. Հակոբյանի, Ռ. Սյունիի, Ժ. Լիպարիտյանի միևնույն աղբյուրից առաջացող գաղափարախոսությանը[51]:

Սփյուռքի կառույցները

Սառը պատերազմի՝ միջազգային քաղաքականությանը պարտադրած կարծր կանոններով՝ սփյուռքահայ ավանդական կառույցները դարձել էին օտար պետությունների հատուկ ծառայություն-

ների սևեռուն ուշադրության և ներազդման առարկա: Կասկածից վեր է, որ հայկական սփյուռքն այժմ նույնպես (ինչպես և մի շարք այլ սփյուռքներ) շարունակում է մեծ հետաքրքրություն ներկայացնել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իրանի, Իսրայելի և այլ պետությունների հատուկ ծառայությունների համար[52]: Սփյուռքի ավանդական կառույցների գործունեությունը (հատկապես՝ քաղաքական ասպարեզում) անխուսափելիորեն հայտնվել է օտար ուժերի բավական արդյունավետ վերահսկողության տակ: Իբրև ամենաթարմ օրինակ՝ կարելի է վերհիշել 2001-2002 թթ. Ամերիկայի հայկական համագումար կոչվող կազմակերպության՝ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի առաջադրանքները հլուհնազանդ կատարելու վարքագիծը՝ ներառյալ «Ազատության աջակցության ակտի» 907 հոդվածի պաշտպանությունից հրաժարվելը, այսպես կոչված «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով»-ում դրոշակակրի դերը ստանձնելը (թեև այս գործընթացին, ինչպես վերը նշվել է, մասնակից են նաև ՀՀ արտգործնախարարությունը), Թուրքիային շնորհակալություն հայտնելը՝ Հայաստանի հետ անձնագրային ռեժիմի մեջ զավեշտական «զիջումներ» անելու դիմաց և այլն[53]:

Ցավոք, օտար թափանցումներից չի խուսափել նաև սփյուռքի ամենաազդեցիկ կառույցներից մեկը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը: ՀՀԴ-ի գործուն մասնակցությամբ 1950-ական թթ. երկրորդ կեսին տեղի ունեցավ Հայոց եկեղեցու՝ պատմականորեն Ս. Էջմիածնին պատկանող թեմերի զավթումը Անթիլիասում հանգըրվանած Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից: ՀՀԴ-ն մինչև այսօր էլ շարունակում է պաշտպանել Հայոց եկեղեցու համար անդարմանելի վերք մնացած այս պառակտվածությունը:

Ժամանակին ՀՀԴ-ի և հայ ավանդական մյուս կուսակցությունների՝ արտասահմանում հակահայկական քարոզչության դեմ տարվող աշխատանքի բացակայությունը նկատել ու խստորեն քննադատել էր Գարեգին Նժդեհը.

> «Մեր ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես խաբված է, այլև բարոյապես զրպարտված Եվրոպայում և Ամերիկայում: ...Այս տեսանկյունից՝ Դաշնակցությունը, որպես հզոր գաղութային կազմակերպություն, ունի ամենամեծ մեղքը: Այն, ինչն ար-

տասահմանում կոչում են հայկական քարոզչություն, ոչ այլ ինչ է, քան դիմադրություն աղերսող լալկան նվնվոց, որն արտասահմանացիների մոտ առաջացնում է լոկ խղճահարություն և չարունակ աճող արհամարհանք: Դաշնակցական ղեկավարությունն իսկական քարոզչության մասին հասկացողություն չունի: Նա ցուցադրում է իր այժմյան ցնցոտիքը՝ անվանելով այն քարոզչություն: Նա չկարողացավ օգտագործել հայ ժողովրդի պոտենցիալ ուժը հեղափոխության շրջանում, քանզի չէր ճանաչում սեփական ժողովրդին և այժմ ի վիճակի չէ տանել ազգային իրական արժեքների քարոզչությունը, որովհետև հիմնավոր չգիտի հայոց պատմությունը, այդ պատմության փիլիսոփայությունը: Եթե նույնիսկ, վերջին քառորդ դարում (իմա 1920-45 թթ.՝ Ա.Ա.), որևէ եվրոպական լեզվով լույս է տեսել այս կամ այն հայամետ գիրքը, ապա հեղինակն արտասահմանցի է եղել: Այսպես կոչված հայասեր քարոզչության համար Դաշնակցությունը ոչինչ չի արել»[54]:

1940-ական թթ. Նժդեհի տված այս գնահատականից հետո դրությունն է՛լ ավելի է վատթարացել: Մասնավորապես, ՀՀԴ-ն, Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը բացարձակապես անտեսել են Արևմուտքում սառը պատերազմի տարիներին մեծ թափ առած՝ հայոց հին, միջնադարյան և նոր շրջանի պատմության կեղծարարությունը: Ընդհակառակը, նրանք երբեմն անուղղակիորեն խրախուսել են այդ գործընթացը: Ահա մի քանի թարմ օրինակ. երկիցս՝ 1989 և 2001 թթ., ՀՀԴ-ի ԱՄՆ-ի մասնաճյուղի ղեկավարությունը իր հովանավորությամբ լույս տեսնող Armenian Review պատմագիտական հանդեսի հրավիրյալ խմբագիր է նշանակել ամերիկյան «հայագիտական» դպրոցի պարագլուխներից մեկին՝ տխրահռչակ Ռոնալդ Սյունիին, որն էլ առիթը չկորցնելով՝ իր ներածության մեջ մի լրացուցիչ հարձակում է կատարում հայ «ազգայնամոլ» պատմաբանների դեմ[55]: Ընդ որում՝ Armenian Review-ի 2001 թ. համարը նվիրված է 1894-96 թթ. Սասունի կոտորածներին, որոնց վերաբերյալ ահա թե ինչ է գրել իր ելույթներից մեկում Ռ. Սյունին.

«1894 թ. Սասունում հայերի և քրդերի միջև տեղի ունեցած բախումները հանդեցրին պետական զորքերի միջամտությա-

նը և հարյուրավոր հայերի սպանությանը: Ավելի ուշ հայերն այս բռնությունն ընկալեցին իբրև առաջին փուլ ջարդերի այն շարքի, որ ավարտվեց 1915 թ. ցեղասպանությամբ: Բայց 1894-1896 թթ. արևելյան Անատոլիայում տեղի ունեցած ջարդերը կարելի է դիտել իբրև Աբդուլ Համիդ Բ-ի կողմից միջէթնիկական հարաբերությունների հին հավասարակշռությունը վերականգնելու փորձ»[56]:

Նույն ելույթում Սյունին ասում է, թե «Հայոց ցեղասպանությունն ավելի վրեժխնդրությունից և խուճապահարությունից դրդված ճնշման գործողություն էր, քան թե վաղուց ծրագրված ու վերևից մանրակրկիտ կերպով կառավարված ոչնչացման ծրագիր»[57]: Փաստորեն, Սյունիի այս դրույթները չեն տարբերվում թուրքերի ասածից, ուստի նույն հաջողությամբ կարելի էր այդ համարի խմբագիր նշանակել թուրք մի որևէ կեղծարարի:

Եվ սա այն դեպքում, երբ Ռ. Սյունին բազմիցս ու խստորեն քննադատվել է և՛ հայաստանյան, և՛ արտասահմանյան դաշնակցական մամուլում՝ որպես Հայաստանի և հայության շահերին մշտապես վնասող գործիչ[58]: Այսպիսի հանգամանքներում ի՞նչ գնահատական կարելի է տալ ԱՄՆ-ի ՀՀԴ մասնաճյուղի՝ Ռ. Սյունիին բարոյապես աջակցելու նշված քայլին, եթե ոչ օպորտունիզմ, հաճոյակատարություն ամերիկյան որոշ ազդեցիկ շրջանակներին, պատմական ճշմարտության ու հայկական շահերի զոհաբերում: Նկատենք նաև, որ Ռ. Սյունին վայելել ու վայելում է ՌԱԿ-ի և նրա հետ սերտորեն կապված Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) վերնախավի հովանավորումն ու աջակցությունը:

Սյունիին բարոյապես աջակցելուն հավասարազոր մի քայլ էլ կատարեց ՀՀԴ հովանու տակ գործող Համազգային հայ կրթական ու մշակութային միությունը. իր կազմակերպած Հայ համալսարանականների 8-րդ համաժողովի շրջանակներում Հայաստան հրավիրեց ևս մի կարկառուն կեղծ հայագետի՝ Ջեյմս Ռասելին, որի գրվածքներն արդեն հանգամանորեն քննադատվել էին Հայաստանի գիտական մամուլում[59]: Իսկ ի՞նչ բացատրություն կարող է ունենալ այն, որ ՀՀԴ-ի անդամ է ամերիկյան կեղծ հայագիտական դպրոցի կրտսեր սերնդի ներկայացուցիչ, Հայ-թուրքական հաշտեց-

ման հանձնաժողովի մոլի ջատագով Վինսենթ Լիման: Լիման ռասիզմի մեջ է մեղադրում բոլոր այն հայերին, որոնք թերահավատություն ունեն ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հովանու ներքո անցկացվող հայ-թուրքական անլուրջ «երկխոսության» նկատմամբ[60]: Արդյո՞ք այս ամենը նշանակում է, որ ՀՀԴ-ի ամերիկյան մասնաճյուղը, իր կենտրոնական մարմիններից անկախ գործելով, որդեգրել է կեղծ հայագետներին հովանավորելու մտածված ուղեգիծ: Չէինք ցանկանա այդպիսի եզրակացության հանգել: Բայց ժամանակն է, որ ՀՀԴ-ն ձերբազատվի ազգային հարցերում անհետևողական քաղաքականությունից և օտար թելադրանքներից[61]:

Սփյուռքի կառույցների օրակարգը

Զմոռանանք, որ Հայաստանի մեծ մասը բռնազավթված է: Սակայն այսօր սփյուռքահայ կառույցների մեծ մասի օրակարգը ըստ էության զուրկ է քաղաքական, առավել ևս ազատագրական հարցադրումներից և նպատակներից. այն սահմանափակվում է բավական նեղ մշակութային գործունեությամբ՝ հռչակված գլխավոր նպատակ ունենալով այսպես կոչված «հայապահպանումը»: Հայաստանում էլ՝ շատերը սփյուռքի գոյության իմաստը տեսնում են հայապահպանության մեջ: Բայց ի՞նչն է հայապահպանման նպատակը. ահա դա արդեն անհայտ է մնում: Արտերկրում հայապահպանումը դարձել է անիմաստ, ինքնանպատակ, ամորձատված գաղափար: Մինչդեռ հայապահպանումն իմաստ ունի միայն, եթե այն գալիս է օժանդակելու ազգային խնդիրների իրականացմանը: Պատմական այս ժամանակահատվածում այդ խնդիրներից են Հայաստանի պետության կայացումն ու ամրապնդումը, հայրենադարձությունը («հայահավաքը»), հայոց ոտնահարված ազգային իրավունքների պաշտպանությունը: Այլապես՝ հայապահպանումն ինքը դատապարտված է ձախողման: Թեև պատմական այս պահին Արևմտյան Հայաստանի ազատագրումը իրատեսական խնդիր դիտվել չի կարող, սակայն դա չի նշանակում, որ հայությունը և հատկապես սփյուռքը պետք է մեկընդմիշտ հրաժարվեն հայրենատիրության գաղափարից:

Արտերկրում Արևմտյան Հայաստանին վերատիրանալու խնդիրն առավել հստակությամբ դնում է թերևս միայն Հայկական ժողովրդային շարժում կազմակերպությունը, որի հնարավորությունները, սակայն (հատկապես՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների առումով), զգալիորեն զիջում են սփյուռքահայ խոշոր կառույցների ունեցած ռեսուրսներին[62]*: Թեև Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրերում այս վերջնական նպատակը նույնպես առկա է, ՀՀԴ-ն դրան հասնելու հիմնական միջոց է ընտրել ցեղասպանության միջազգային ճանաչման ապահովումը, որի անհեռանկար լինելուն քիչ անց անդրադառնալու ենք:*

ԱՄՆ-ի հայկական լոբբինգը և նրա ուժը

Իբրև սփյուռքահայության կազմակերպվածության և արդյունավետ գործունեության օրինակ՝ հաճախ հիշատակվում է ԱՄՆ-ում հայերի լոբբիստական աշխատանքը: Արևմտյան մամուլում, ինչպես նաև ակադեմիական պարբերականներում անընդհատ խոսվում է հայկական լոբբինգի (Armenian lobby) մեծ կշռի և ազդեցության մասին[63]*:*

Այդուհանդերձ, հայկական լոբբինգն ԱՄՆ-ում ո՛չ ֆինանսական, ո՛չ էլ կազմակերպչական առումներով չի ներկայացնում այն հզոր ուժը, որի մասին անընդհատ տարփողվում է: Իրականությունն այն է, որ հայկական լոբբինգը բավական սահմանափակ հնարավորություններ ունի, իսկ լոբբիստական կազմակերպություններից մեկն էլ՝ Ամերիկայի հայկական համագումարը, ինչպես արդեն նշվեց, բացահայտորեն դարձել է (եթե ի սկզբանե չի եղել) ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության կցորդն ու խոսափողը: Ամերիկահայ լոբբինգի հզորության մասին առասպելը տարածում են թուրքական և ադրբեջանական դիվանագիտությունն ու քարոզչությունը, ինչպես նաև նրանց արևմտյան գործընկերները (ԱՄՆ-ի պետական գերատեսչություններն ու նավթային ընկերությունները)՝ նպատակ ունենալով. 1) մերօրյա Ադրբեջանը ներկայացնել իբրև ամերիկահայերի առատ ֆինանսավորվող գործողությունների և լավ կապերի զոհ, 2) այդպիսով շեղել ուշադրությունն ինչպես

Ադրբեջանի դաշնակից Թուրքիայի՝ Վաշինգտոնում ունեցած շատ ավելի լավ կապերից, այնպես էլ բուն Ադրբեջանի ունեցած ռեսուրսներից և կապերից, 3) թաքցնել Լեռնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի պահանջների օրինականությունը, որ հիմնված է պատմաիրավական արդար հիմքերի և պատերազմում տարած հաղթանակի վրա[64]: Ինչպես նկատում է Մասսաչուսետսի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Լ. Զորբաջյանը, եթե հայկական լոբբինգն իսկապես ունենար այն ուժը, որ իրեն վերագրում են, ապա այն ընդունակ կլիներ լուծելու հետևյալ խնդիրները.

- *ԱՄՆ-ի Կոնգրեսում կհասներ Հայկական ցեղասպանության ճանաչմանը (վերջին 20 տարում այս կապակցությամբ ԱՄՆ-ի Սենատ և Ներկայացուցիչների պալատ մտած բոլոր բանաձևերը իրարահաջորդաբար տապալվել են):*
- *ԱՄՆ-ը ուժեղ ճնշում կբաներ Թուրքիայի և Ադրբեջանի վրա՝ Հայաստանի և Արցախի դեմ քայքայիչ շրջափակումները վերացնելու պահանջով:*
- *ԱՄՆ-ը ճնշում կբաներ Թուրքիայի վրա, որպեսզի վերջինս ընդունի 1915-22 թթ. հայերի դեմ գործած ցեղասպանության փաստը:*
- *ԱՄՆ-ը կճանաչեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը:*
- *ԱՄՆ-ը դիվանագիտական եռանդուն ջանքեր կգործադրեր միջազգային ասպարեզում՝ Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի անկախացմանն աջակցելու նպատակով[65]:*

Մինչև վերջերս հայկական լոբբինգի ամենամեծ նվաճումը համարվում էր ԱՄՆ-ի Ազատության աջակցության օրենքի 907 հոդվածի պաշտպանությունը, սակայն պետք է նկատել, որ 907 հոդվածը որևէ արգելք չէր դնում ամերիկյան նավթային ընկերությունների՝ Ադրբեջանում գործելու և ներդրումներ անելու առջև: ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցի գիտնական Ալեք Ռասիզադեն ճիշտ նկատում է, որ այդ ընկերությունների Ադրբեջանում կա-

տարած ներդրումները մեծապես գերազանցում են ԱՄՆ-ի Հայաստանին տրամադրած օգնությունը[66]: Իսկ 2001 թ. հոկտեմբերին Սենատը հատուկ որոշմամբ ԱՄՆ-ի նախագահին իրավունք տվեց այն կասեցնելու, որը և 2002 թ. հունվարին օգտվեց այդ իրավունքից: Ուստի հայկական լոբբինգի մինչ այսօր արձանագրած համեստ հաջողությունների թվում մնացել է միմիայն ԱՄՆ-ի հումանիտար նշանակալի օգնությունը Հայաստանին:

Ցավալին այն է, սակայն, որ Հայաստանի բարձրաստիճան դիվանագետներից ոմանք իրենք են քարոզում հայկական լոբբինգի չեղած հզորությունը՝ ապակողմնորոշելով առանց այն էլ ապակողմնորոշված հայ հասարակությանը: ՀՀ փոխարտգործնախարար և ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան Ռուբեն Շուգարյանն իր մի ելույթում պնդում է, թե «Հայկական լոբբինգն իր հզորությամբ, ուժով ԱՄՆ-ում միշտ գտնվել է 4-5-րդ տեղերում՝ հրեական, հունական, լեհական, երբեմն էլ՝ մերձբալթյան-ուկրաինական լոբբինգներից հետո[67]: Անկախությունից հետո, ըստ իս, տարիների ընթացքում մենք այսօր հաստատակամորեն զբաղեցնում ենք երկրորդ տեղը՝ հրեական լոբբինգից հետո: ...Այսօրվա դրությամբ թուրքական լոբբինգը ԱՄՆ-ում, հայկական լոբբինգի հետ համեմատած, գործոն չէ»[68]: Այս սխալ եզրակացությանը հայ դիվանագետը եկել է, ամենայն հավանականությամբ, հալած յուղի տեղ դնելով արևմտյան լրատվամիջոցների ուռճացրած գնահատականները: Ինչ վերաբերում է Թուրքիայի լոբբիստական գործունեությանը, ապա արևմտյան լուրջ մասնագետներն այն գնահատում են իբրև «չափազանց հղկված և արդյունավետ»[69]:

Գնահատելով ամերիկահայ կազմակերպությունների լոբբիստական աշխատանքների որոշակի դրական արդյունքները (որոնցից հիմնականը Հայաստանին բավական մեծ չափերի հասնող ԱՄՆ-ի տնտեսական օգնությունն է)[70], պետք է միաժամանակ նկատել նաև այն բացասական հետևանքները, որ լոբբիստական գործունեությունը թողնում է սփյուռքահայության վրա: Բանն այն է, որ լոբբինգի նպատակն ու գործելաոճն ուղղված են ոչ թե սեփական ուժերի ինքնակազմակերպման միջոցով հայության հիմնախնդիրների լուծմանը, այլ այդ հարցերից ընդամենը մի քանիսի կիսատ-պռատ առաջադրմանն օտար տերությունների առջև՝ այն հույսով, որ վեր-

ջիններս են տալու դրանց լուծումը: Լոբբինգն իր էությամբ խնդրագրության մի ձև է՝ ճիշտ նույն «թղթե շերեփը», որի վնասակար արդյունքները մեզ պատմությունից քաջ հայտնի են: Լոբբինգը լրջորեն վնասում է հայության ներքին կազմակերպվածության բարձր մակարդակի հասնելու ջանքերին՝ անընդհատ շեղելով սփյուռքահայերին ինքնակազմակերպվելու հրամայականից, ազգի ճակատագիրը սեփական ուժերով ու միջոցներով կերտելու ճանապարհից: Դառնալով ԱՄՆ-ում (առաջիկայում՝ գուցե նաև Եվրոպայում) հայ զանգվածների հետ աշխատելու հիմնական ձևը՝ լոբբինգն իրականում ոչ թե արթնացնում ու մոբիլիզացնում է սփյուռքահայ զանգվածներին, այլ քնեցնում՝ մղելով նրանց խնդրագրական տարաժամանակյա, անջատ ու անվերջ գործողությունների, որոնց արդյունքը կարող է դյուրությամբ ի դերև լինել օտար տերության շահերի ու քմահաճույքի փոփոխության հետ միասին: Այս առումով մի վառ օրինակ էր ԱՄՆ-ի Ազատության աջակցության օրենքի 907 հոդվածի սառեցումը (2001 թ.)[71]: Մինչդեռ զանգվածի համախմբումն ու մոբիլիզացումը նախատեսում է անձնական այնպիսի գործողություն, որն անհատին լրջորեն ներգրավում է հայկական կյանքի տարբեր բնագավառներում (տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն): Լոբբինգը սփյուռքահայ զանգվածին աշխուժացնելու հնարավոր գործողություններից ամենակրավորականն է, միաժամանակ՝ օտար պետության համար ամենակառավարելին:

Համասփյուռքյան կառույցի բացակայությունը

Ի տարբերություն հրեական սփյուռքի ստեղծած Համաշխարհային հրեական կոնգրեսի և նրա դուստր կազմակերպությունների՝ հայկական սփյուռքը ցայսօր չի կարողացել ձևավորել համասփյուռքյան ներկայացուցչական կառույց՝ ճյուղավորված վերկուսակցական տեղական մարմիններով: Միայն այդպիսի կառույցը կարող էր ըստ արժանվույն կազմակերպել սփյուռքահայ կյանքը, այդ թվում՝ տեղերում անցկացնել հայերի մարդահամար, ազգային որոշակի տուրք սահմանելու միջոցով ստեղծել կայուն ու վերա-

հսկելի բյուջե՝ ինչպես համայնքի, այնպես էլ Հայաստանի զանազան կարիքները հոգալու համար, միջազգային ատյաններում ներկայացնել Հայոց ցեղասպանությունից բխող քաղաքական, իրավական, ֆինանսական և այլ խնդիրները:

Սակայն նման կառույցի ստեղծումը չի խրախուսում նաև սփյուռքահայ խոշորագույն կազմակերպությունը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը: Ահավասիկ, ՀՀԴ ղեկավարներից մեկի՝ Հայ դատի ԱՄՆ-ի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանի այս առթիվ տված բացատրությունները.

> «Այն գաղափարը, թե Հայաստանը և սփյուռքը կարող են միասին աշխատել, իրականում կառույցի հարց չէ: Հարցը վերաբերում է միայն տեղեկությունների փոխանակմանը և միասնական նպատակներ որոշելուն ու կամք ունենալուն: Ամենակարևորը՝ իրար գաղափարներ հասկանանք, բայց վստահ չեմ, որ ամենակարևորը կառույցն ստեղծելն է: Մեր առաջնահերթությունները ամերիկահայության առաջնահերթություններն են և վերաբերում են համահայկական հիմնահարցերին՝ Ցեղասպանության ճանաչում, Հայաստանի ամրապնդում և Ղարաբաղի պաշտպանություն: Որևէ կառույցի վրա չէ, որ կհիմնվեն այս խնդիրները, այլ ընդհանուր հայության, ընդհանուր պատմական և մեր ապագայի տեսլականի արժեքների վրա: Մենք ամբողջովին գիտակցում ենք Հայաստանի իշխանությունների առաջնահերթությունները, Հայաստանի իշխանությունները շատ լավ գիտակցում են մեր մոտեցումները, այնպես որ, կարծում եմ՝ դա բավարար է»[72]:

Ցավոք, այսօր միջհայկական համագործակցությունը սարսափելիորեն անբավարար է: Պարզապես, իրերն իրենց անուններով կոչելու դեպքում, պետք է ասվի, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը մտավախություն ունի, թե համասփյուռքյան կառույցի ստեղծումն ու գործունեությունը կարող են ընթանալ իր վերահսկողությունից դուրս, և այդպիսով կուսակցությունը կզրկվի այսօր արտերկրում, հայկական այլ կառույցների հետ համեմատ, վայելած ուժեղ դիրքերից և ազդեցությունից: Թերևս նույնը կարելի է ասել նաև արտերկրում գործող հայ ավանդական մյուս կուսակցությունների մասին:

Հայապահպանման բուն նպատակը
և
գլխավոր միջոցը

Արտերկրում հայապահպանումը ինքնանպատակ լինել չի կարող: Սփյուռքահայության գոյապահպանման բուն նպատակը *սեփական հողերի վրա, անկախ պետականության հովանու ներքո վերամիավորվելն է, այսօր՝ այսօրվա Հայաստանում (այն ամբողջ տարածքում, որը հայկական զինված ուժերի վերահսկողության տակ է), հետագայում՝ նաև պատմական Հայաստանի ազատագրվելիք այլ հատվածներում*[73]*:*

Հայապահպանումը իբրև ինքնանպատակ դիտելը (ինչպես անում է սփյուռքահայության զգալի մասը) կտրուկ թուլացնում է նույն հայապահպանման կարևորագույն տարրերը: Մասնավորապես, հայերի քաղաքական գիտակցությունը զրկվում է ազգի գոյատևման դաշտն ու այնտեղ ամեն օր ընթացող հայ-թուրք/ադրբեջանական օբյեկտիվ պայքարը տեսնելուց: Դրանով խանգարվում է իրականության ճիշտ և խորը ըմբռնումը: Ավելին, օտար միջավայրի ձուլող իրադրության մեջ՝ հայոց լեզվի և մշակույթի թույլ ու թյուր իմացության պայմաններում, հայապահպանման բուն նպատակի անտեսումը զրկում է տարագիր հային այդ նպատակի դիմադրողականություն ներարկող ընդունակությունից: Զմոռանանք, որ օտար կենսապայմանները պարտադրաբար ծնում են սփյուռքահայի մեջ «Հանուն ինչի՞ հայ մնամ», «Հանուն ինչի՞ մտածեմ ու գործեմ հայկական խնդիրների վրա, որոնք կենսապայմաններիս բարելավմանն անմիջականորեն չեն նպաստելու» հարցերը: Երբ չկա հայապահպանման բուն նպատակի գիտակցումը, սփյուռքահայի՝ ինքն իրեն և ուրիշներին տրվող պատասխանը դառնում է թերի՝ ի վերջո վերածվելով «հայ մնալ հանուն հայ մնալու» անհամոզիչ և անտրամաբանական պատասխան-բանաձևումի: Այս հարցադրումն անխուսափելի է, այլ բան է, որ սփյուռքահայության հայրենասեր մասը, լեցուն լինելով հայկականությամբ, այսինքն, նախ և առաջ՝ հայկական նպատակներով (այդ թվում՝ հայ սերունդ ժառանգելու և հայությանը նպաստ բերելու ցանկությամբ), իրենցից *կտրականապես վանում են «հանուն ինչի՞ հայ մնալ» հարցը,*

որը պարզապես դուրս է մնում նրանց ընդունելիության շրջանակից: Այդուհանդերձ, հե՛նց այս հարցի առնչությամբ հայրենասեր սփյուռքահայերի առջև ծառանում է մեկ ուրիշ հայկական նպատակ՝ թույլ չտալ սփյուռքահայության ձուլումն օտարների մեջ: Այսպես է առաջանում հայապահպանման նպատակը: Այս նպատակն (ավելի ճիշտ՝ ընդգրկվածությունը նրա իրագործման մեջ) իր հերթին ավելի է ամրացնում նույն հայրենասեր սփյուռքահայերի էթնոդիմադրողականությունը: Սակայն, ցավոք, հաճախ նույնիսկ սփյուռքի հայրենասեր հատվածի գաղափարախոսությունից է դուրս մնում հայապահպանման բուն նպատակը՝ վատնելով նրանց ուժերը ժամանակավրեպ ու երկրորդական աշխատանքների վրա:

Գիտակցական և ենթագիտակցական մակարդակների վրա է գործում նաև խաղաղ պայմանների պատրանքը.

ա) հայ-թուրքական օբյեկտիվ հակամարտության պայմաններում գոյատևող հայ էթնոսի ներկայացուցիչների՝ այդ հակամարտության չտեսնելը թուլացնում է հայկական կողմը, ինչպես նաև հայապահպանման գործը, քանի որ ինքն իրեն «խաղաղ» պայմաններում պատկերացնող հայը չի գործադրում այն ջանքերն ու ճիգերը, որոնք բնական ու պարտադիր են պայքարի դաշտը տեսնող, զգացող և իրեն հե՛նց այդտեղ պատկերացնող հայի համար.

բ) խաղաղ պայմանների պատրանքը թմրեցնում և ուժգնորեն խախտում է հայ էթնիկական զգոնությունը, թերի կարևորություն տալիս հայապահպանման գործին, ճանապարհ հարթում այնպիսի երևույթների առջև, ինչպիսիք են խառնամուսնությունները, երեխաների անբավարար հայեցի դաստիարակությունը, հայրենադարձության կարևորության անտեսումը, արտագաղթի ուղին դյուրությամբ ընտրելը և այլն:

Հայոց պատմական վրեժի զգացմունքը

Գիտակցության տարբեր մակարդակներում է գործում նաև մի խիստ յուրահատուկ երևույթ՝ հայոց վրեժի կամ ցասման զգաց-

մունքը: Բանն այն է, որ հայի էթնոգիտակցություն ունեցող յուրաքանչյուր անհատ 1894-1922 թթ. ցեղասպանությունից հետո (ու դրանից էլ ավելի վաղ) ունեցել է գոնե մեկ անգամ առկայծած վրեժի ցանկություն[74]: Ճիշտ է՝ ամեն մեկն իր սեփական պատկերացումներն է ունեցել հայոց վրեժի մասին՝ սկսած երեխայի պարզունակ, կրավորական երևակայություններից (ֆանտազիաներից) ու վերջացրած ռազմաքաղաքական կազմակերպությունների մանրամասնորեն մշակած ու կիրառած ծրագրերով[75]:

Հայոց ցասման հիմքում ընկած է ցավը՝ ցեղասպանության զոհերի, վերապրողների տառապանքների, բնօրրան-հայրենիքի կորստյան համար: Ընդ որում՝ այս ցավի մերօրյա կրողն ականատես չի եղել այդ դեպքերին, նրա համար զոհերն անծանոթ ու հեռու անցյալում ապրած մարդիկ են: Հետևաբար, ի՞նչ չափով այսօրվա հայը ցավ կզգա անցյալում եղեռնի զոհ դարձած հայերի համար՝ կախված է նրանից, թե ի՞նչ չափով է նա նույնացնում իրեն հայ ազգի հետ, այսինքն՝ որքանով է իրեն միևնույն միավոր, միևնույն մարմին, միևնույն միս ու արյուն զգում հայության հետ: Թե որքանով էր այս նույնացումը կատարում, օրինակ, հայ բանաստեղծ Հովհաննես Շիրազը, պարզ է դառնում հայ ժողովրդին ուղղված նրա հետևյալ տողերից.

Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:

Ազգային ցավի այսպիսի վերապրումը նախատեսում է նաև անհատի հոգեբանական անքակտելի նույնացում ազգի հետ՝ ի հաշիվ իր անդամակցած հասարակական այլ խմբերի (ընտանիքի, ընկերական շրջապատի, դասակարգի, դասի) նկատմամբ տածած նվիրվածության: Եթե հայ անհատը չունի կամ մերժում է ցասման զգացմունքը, ուրեմն նրա հոգեբանական նույնացումը հայության հետ խզվել է, հայկականությունը՝ թուլացել, նա բարոյապես նահանջել է անարդարության ու բիրտ ուժի առջև, համակերպվել բնիկ բնօրրանի օտարացման և իր արյունակից նախնիների հանդեպ գործված աններելի ոճրագործության հետ: Այս նահանջը գրեթե միշտ ուղեկցվում է մեղքի ենթագիտակցական զգացումով, որն

էլ ավելի է մղում անհատին հեռանալու իր արմատներից և մոռանալու ցավի պատճառը: Վերջին հաշվով, հայոց ցասումի մերժումը հայ անհատի կողմից նշանակում է նաև Հայոց ցեղասպանության արդյունավետ լինելու կողմնակի ճանաչում և արդարացում, ինչպես նաև Թուրքիայի անուղղակի խրախուսում՝ ավարտին հասցնելու XIX դարի վերջին սկսված հայասպանդը:

Հայոց ցեղասպանությունը ծնել է նաև հայոց ցասման զգացմունքի հակոտնյան՝ թուրքերի անհանդստությունը հայերի վրեժխնդիր լինելու վերաբերյալ, որը կարելի է անվանել պատմական վրեժխնդրության ենթարկվելու վախ (ՎԵՎ): Նման մտավախություններ թուրքերը դրսևորել են դեռևս ցեղասպանության ծրագրման և իրականացման փուլում՝ նկատի առնելով հայերի վրիժապահանջ կամքը: Այսպես՝ 1915 թ. սեպտեմբերին Թալեաթի Հատուկ բյուրոյի տնօրեն Հասան Ֆեհմին գերմանացի մի թղթակցի ասում էր. «Մենք պետք է վերացնենք հայերին: Նրանք վրեժխնդիր և անհաշտ բնավորություն ունեն, ու, քանզի նրանք քաջ են, նրանք սպառնալիք են պետության համար... Մենք պետք է իսպառ բնաջնջենք հայերին»[76]:

Քանի որ Հայոց ցեղասպանությունը չհասավ իր վերջնական նպատակին՝ հայերի իսպառ բնաջնջմանը և աշխարհի քարտեզի վրայից Հայաստանի վերացմանը, թուրքերի ընկալումներում հայոց պարտությունը վերջնական չէ, և հայերը, նրանց կարծիքով, դեռ ունակ են հնարավորություն ունեն:

Հայոց վրեժխնդրությանը ենթարկվելու թուրքական պատկերացումները ներառում են բնաջնջման ենթարկվելու մտավախությունը, որովհետև, եթե ցեղասպանության դիմաց վրեժխնդրությունը կատարվի համաչափ եղանակով, ապա դա կարող է նշանակել ցեղասպանական հարվածի վերադարձ: Հե՛նց այս խիստ չափազանցված մտավախություններից էլ առաջանում է թուրքերի՝ հայերին ևս մեկ անգամ հարվածելու ցանկությունը՝ «մահացու վտանգը» մեկընդմիշտ վերացնելու համար:

Վրեժխնդրության ենթարկվելու վախն, ըստ երևույթին, ազդում է նաև թուրքերի ռազմավարական հաշվարկների վրա, մասնավորապես այն կասկածի, ըստ որի՝ եթե Հայաստանը մի օր դառնա տնտեսապես բարգավաճող, ռազմականապես հզոր ու միջազգա-

յին ասպարեզում հարգված պետություն, այն առաջ կքաշի Հայոց ցեղասպանությունից բխող տարածքային, բարոյական, մշակութային, նյութական փոխհատուցման հարցեր[77]:

Փաստորեն, մի առումով ցեղասպանությունը նույնատիպ ազդեցություն է թողնում հայերի և թուրքերի հոգեբանության վրա՝ երկուսի մեջ էլ առաջացնելով բնաջնջման ենթարկվելու վախը, սակայն երկու տարբերությամբ.

ա) կողմերի միջև ուժերի այսօրվա հարաբերակցությունը, թուրքերի օգտին լինելով, բնականաբար, շատ ավելի սուր անհանգստություն է առաջացնում հայերի, քան թուրքերի մեջ.

բ) տարբեր է այդ վախի ծագման պատճառը. հայերն, իբրև զոհ, այն ձեռք են բերել սեփական կամ «ներքին» փորձով, իսկ թուրքերը, իբրև ոճրագործ, հիմնականում ոչ սեփական կամ «արտաքին» (այս դեպքում՝ իրենց հայ զոհերի) փորձով: Բայց ՎԵՎ-ի հիմքում ընկած է նաև թուրքերի սեփական որոշակի փորձը, որովհետև հայերի հասցրած մանր ու միջին ուժգնության հակահարվածները և նույնիսկ ինքնապաշտպանությունը (լինեն դրանք 1915-21 թթ. պատերազմների, 1920-ական, 1970-80-ական թթ. վրիժառուական գործողությունների, թե 1990-ական թթ. արցախյան ազատամարտի ընթացքում) նրանք ընկալում են որպես համաչափ հարվածի փորձեր[78]:

Հայոց ցասումը համընկնում է արդարության մասին մարդկության ունեցած ամենահիմնական պատկերացումներին: Վրեժը հատուկ հոգեբանական հետազոտության առարկա դարձրած ամերիկացի անվանի գիտնական Նիկո Ֆրիջդան հետևյալ հանգուցային դիտողությունն է անում այդ զգացմունքի էության մասին. «Վրեժի ցանկությունը բանական է այնքանով, որքանով այն վերականգնում է անվտանգությունը, եկամուտների հավասարությունը, իշխանության հավասարությունը, ինքնահարգանքն ու ինքնությունը, ինչպես նաև հասարակական գործարքների վերաբերյալ վստահությունը: ...Քաղաքակիրթ հասարակությունը պետք է ճանաչի վրեժի ցանկությունն այնպես, ինչպես այն կա՝ բնական մի զգացում, որը բնական դարման է փնտրում անբնական հանցանքի միջոցով պատճառված անբնական տառապանքի համար (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)»[79]:

Համաշխարհային պատմության մեջ մեծագույն ոճրագործություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ռազմավարական խնդիրը և բարոյական պարտականությունը դրված են հայության վրա, ընդ որում՝ անժամկետ և առանց նահանջի հնարավորության[80]: Հայության հաղթանակը լինելու է ազգասպանդները կանխող, դրանց հատուցման անժամանցելիությունը հաստատող կարևոր մի երաշխիք, բարոյական լուրջ նվաճում ողջ մարդկության համար: Այդ հաղթանակի արդյունքում հայկական պետությունը ստանալու է կենսունակության և անվտանգության ամուր դրավականներ՝ տարածքային, նյութական, բարոյական և այլ կարգի փոխհատուցումների տեսքով:

Ներկայումս հայոց ցասման միակ ճիշտ արտահայտության ձև կարող է համարվել անկախ հայրենիքի կառուցմանն ուղղված անդուլ աշխատանքը, որի լավագույն մարմնացումը կլինի տնտեսապես ու ռազմականապես հզոր, իր պատմական արմատներին և էությանը հավատարիմ մնացած Հայաստանը:

Պայքարի ճակատային գծի ճշտում

Հայապահպանման գործում առկա բոլոր խոչընդոտների սպեղանի կարող է լինել սփյուռքահայ զանգվածների անմիջական մասնակցությունը հայ ազգի կենսագործունեության ամենաէական նշանակություն ունեցող ոլորտին՝ օբյեկտիվ պայքարին, որի նպատակը հայկական հողում, անկախ և հզոր պետականության ներքո վերամիավորվելն է: Անմիջական ընդգրկվածությունը հայոց կենսապայքարի մեջ սփյուռքահային տալիս է էթնիկական դիմադրողականությունն ամրացնող հույզերի, զգացմունքների և գիտելիքների այնպիսի պաշար, որն իր չափերով գերազանցում է ազգային ինքնագիտակցության սնուցիչ մյուս տարրերի՝ լեզվի, մշակույթի, ավանդական նիստուկացի տված միագումար նպաստը (մանավանդ, երբ այս վերջիններս են ճգնաժամային վիճակում), և ավելին՝ առաջացնում է ձգտում ու պահանջ՝ յուրացնելու ազգային գիտակցության բոլոր այդ տարրերը:

Այսպիսով՝ սփյուռքի հայապահպանության գործով զբաղվող կազմակերպությունների առաջնագույն խնդիրներն են.

ա) լուսաբանել սփյուռքահայ զանգվածներին հայ ազգի գոյապայքարի օբյեկտիվությունը և հայապահպանման բուն նպատակը.

բ) ցույց տալ նրանց պայքարի ճակատային գիծը և առավելագույնս ներգրավել նրանց այդ պայքարի մեջ: Մինչև Հայաստանի անկախացումն այս խնդիրը նաև հայապահպանության մեծագույն առեղծվածն էր, որովհետև դժվար էր գտնել մատչելի ճակատային գիծ զանգվածների կամ թեկուզ նրանց առաջամասի համար[81]: Այսօր այդպիսի ճակատային գիծ կա՝ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ:

Համակարգված ներգաղթը՝ Հայաստանի և հայության զարգացման ճանապարհ

Ժամանակն է դարմանել ու փոխհատուցել Հայաստանից տեղի ունեցած մեծ արտագաղթի հետևանքները: Ժամանակն է ծրագրել ու իրականացնել ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՆԵՐԳԱՂԹ, որի գլխավոր առանձնահատկությունը լինելու է ոչ թե հանպատրաստից հայրենադարձությունը, այլ աշխատանքի և բնակության հարցերի նախնական մանրակրկիտ ուսումնասիրությունն ու հստ հայրենադարձությունը, որպես խնդիր, զարմանալիորեն, բացակայում է սփյուռքահայ կազմակերպությունների օրակարգերից: Ընդհակառակը, ներգաղթը կարծես «թաբու» է դարձել Հայաստան-սփյուռք ամեն կարգի և մակարդակի հանդիպում-քննարկումներում, այդ թվում՝ Հայաստան-սփյուռք Ա և Բ համաժողովներում:ակ լուծումը: Պարզաբանենք:

Ո՛չ Հայաստանի ներկա թուլակազմ պետությունը, ո՛չ էլ սփյուռքահայ ավանդական կառույցները զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու որևէ հետաքրքրություն ու շահագրգռվածություն չեն ցուցաբերում[82]: Բարեբախտաբար, ի տարբերություն անցյալի, ներկա պատմական ժամանակաշրջանն ու հե՛նց գլոբալացումը, որը մեզ համար մինչև այժմ հիմնականում բացա-

սական ու վտանգավոր հետևանքներ է ունեցել, տալիս են հայրենադարձության խնդիրը անհատական ու խմբային մակարդակով լուծելու աննախադեպ հնարավորություններ, ինչպիսիք են՝ Հայաստանի վիզային «ազատական» ռեժիմը, մարդկային հոսքերի մեծապես աճած շարժունակությունը (մոբիլությունը), բոլոր տեսակի տեղեկատվության առկայությունը մոլորակի ամենահեռավոր վայրերում, սփյուռքահայերի տնօրինած կապիտալի բավարարությունը՝ Հայաստանում սեփական գործն ու տունը հիմնելու համար:

Զանգվածային հայրենադարձությունը կարելի է կազմակերպել տարբեր եղանակներով. անհատական, խմբային-ընտանեական, թռչակառուների ներգաղթ: Համառոտ անդրադառնանք երկրորդ և երրորդ եղանակներին:

Խմբային-ընտանեական եղանակով ներգաղթը նախատեսում է մի քանի փուլ.

1. Արտերկրում բնակվող ու հայրենադարձվել ցանկացող հայ ընտանիքները միմյանց հետ կապ կհաստատեն ու կկազմեն փոքր խմբեր՝ բաղկացած 3-ից մինչև 50 կամ ավել ընտանիքներից:
2. Յուրաքանչյուր խումբ կհավաքի մի ընդհանուր դրամագլուխ՝ Հայաստանում տնտեսական այնպիսի գործունեություն կազմակերպելու համար, որը հայրենիքում կապահովի խմբի անդամ ընտանիքներին աշխատանքով և ապրուստով: Յուրաքանչյուր ընտանիքի շահաբաժինը հավասար կլինի նրա կատարած ներդրմանը:
3. Յուրաքանչյուր խումբ պետք է 2-3 ամսով (գուցե մեկից ավելի անգամ) Հայաստան գործուղի իր ներկայացուցիչներին՝ տեղում շուկան ուսումնասիրելու, աշխատանքի և բնակության պայմանները նախապատրաստելու համար.
4. Հայրենադարձությունը կարող է իրականացվել պայմաններին համապատասխան՝ խումբը կճանապարհվի հայրենիք մաս-մաս կամ ամբողջ կազմով (որը մեծ տպավորություն կթողնի սփյուռքահայ զանգվածների վրա):

Այս եղանակով հայրենադարձվողները որևէ կառույցից կախման մեջ չեն լինելու և չափազանցված ակնկալիքներ չեն կարող ունենալ, քանի որ Հայաստանում նրանց սպասելու են իրենց իսկ գնած (կամ կառուցած) տունն ու տեղը և իրենց իսկ ստեղծած աշխատանքը: Առաջին ալիքի մեջ, հավանաբար, լինելու են նախկին հայաստանցիները, որ նշանակում է, թե նրանք նաև քաջածանոթ են լինելու Հայաստանի ներկա տնտեսական, իրավական ու այլևայլ պայմաններին:

Առավել դյուրությամբ իրականանալի ծրագիր է, թերևս, աշխատանքի կարիք չունեցող թոշակառուների զանգվածային հայրենադարձության կազմակերպումը: Այս հարցի մասին առանձին ուշագրավ ուսումնասիրություն է կատարել կանադահայ Անթուան Դերջանյանը[83]: Դերջանյանի հաշվարկներով, եթե հաջողվի Հայաստան բերել 64 տարեկանից բարձր հայերի թեկուզ 5 տոկոսը (600.000-ից 30.000-ը), ապա վերջիններիս թոշակների և այլ եկամուտների հաշվին Հայաստանում տարեկան ուղղակիորեն կներդրվի շուրջ 750 միլիոն դոլար, կաճի զբոսաշրջությունը (ընտանիքի անդամների այցելությունների հաշվին), կտրուկ կբարելավվի և կմեծանա տեղական բժշկական, ապահովագրական, սպասարկման և այլ ծառայությունների որակն ու ծավալը, կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր: Մանրամասն նկարագրելով այս ծրագիրն իրականացնելու հնարավորություններն ու բարդությունները՝ ուսումնասիրողը նկատում է, որ «մինչ այժմ սփյուռքին կոչել են զբաղվել մարդասիրական օգնությամբ և կատարել ներդրումներ: Այժմ Հայաստանը պետք է պակաս չափով հույս դնի մարդասիրական օժանդակության և ավելի կենտրոնանա սփյուռքի ներդրումների և սպառման միջոցով աշխատատեղեր ստեղծելու վրա»[84]:

Սփյուռքի՝ Հայաստանին օգնելու ծրագրերից հիմնականն էլ պետք է լինի հե՛նց ներգաղթի ֆինանսավորումը:

Անգամ միջին չափերի համակարգված ներգաղթը կլուծի հայ ազգի և պետականության առջև կանգնած մի շարք հանգուցային խնդիրներ.

1. Ժողովրդագրական. բազմահազարանոց հայրենադարձությունը կփրկի Հայաստանը հայաթափ լինելու վերահաս աղետից:

2. Տնտեսական. *կազմակերպված ներգաղթը կտրուկ կբարելավի երկրի տնտեսական դրությունը, քանի որ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ հայրենիք են վերադառնալու արդեն նախապատրաստված աշխատատեղերը գործարկելու համար, երկրի տնտեսությունը կստանա զարգացման շատ հզոր ազդակ, զգալիորեն կընդլայնվեն ներքին շուկան ու սպառումը, որն էլ տնտեսական աճի լավագույն խթանն է: Բացի այդ, հայրենադարձվողներն իրենց հետ Հայաստան կբերեն զգալի կապիտալ*[85]*:*

3. Բարոյահոգեբանական. *հայրենադարձվողները, նոր ավյուն ու եռանդ հաղորդելով հայրենիքին, կտրուկ կբարելավեն հայաստանաբնակ ժողովրդի բարոյահոգեբանական անտանելի ծանր հոգեվիճակը: Նրանք կթուլացնեն լարվածությունը երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներում՝ սկսած հայրենիքի պաշտպանությունից ու տնտեսությունից, վերջացրած ազգաբնակչության իրավական պաշտպանվածությամբ: Վերջին տարիներին Հայաստանից դուրս գտնվող մեր շատ հայրենակիցներ (ոչ բոլորն, իհարկե) ապրել են հարաբերականորեն ավելի լավ պայմաններում, քան Հայաստանում մնացածները: Հայրենադարձվողների դերը կլինի ճիշտ նույնը, ինչ ռազմաճակատներում թարմ զորագնդերինն է, որոնք գալիս են փոխարինելու հոգնած ու հյուծված, թեկուզև ընտրելագույն ջոկատներին:*

4. Իրավական. *հայրենիքում մշտական բնակություն հաստատողները չեն հանդուրժի իշխանական ապօրինությունները, բոլորովին նոր և հուժկու թափ կհաղորդեն Հայաստանում սոցիալական արդարության ու հավասար իրավունքների համար ընթացող պայքարին: Սրան նպաստելու է հատկապես այն, որ նրանք կունենան և՛ տնտեսական որոշակի անկախություն, և՛ որոշակի կազմակերպվածություն: Դրանով իսկ Հայաստանում աննախադեպ զարգացում կապրեն իրավական դաշտն ու պաշտպանվածությունը:*

5. Մշակութային. *հայրենիքում մշտական բնակություն հաստատողները նպատակ են ունենալու սովորեցնել զավակներին հայերեն, ներգրավվել հայկական մշակույթի մեջ, ապրել հայեցի վարքուբարքով (այլապես նրանք Հայաստան վերադառնալու ցանկություն չեն էլ ունենա)*[86]*: Դրանով իսկ ուժգին հարված կհասցվի Հա-*

յաստան թափանցած ապազգային, հակամշակութային այլանդակ երևույթներին:

6. Գիտական. Հայաստան մուտք կգործեն օտար լեզուներ իմացող բազմաթիվ պատանիներ ու երիտասարդներ, որոնց հետագա նպաստը հայրենի գիտությանը վիթխարի է լինելու:

7. Առողջապահական. Հայրենադարձությունը պայմաններ կստեղծի հայկական գենոֆոնդի իրարից հեռու գտնվող հատվածներին հանդիպեցնելու, խաչավորելու և առողջ հայ սերունդներ ունենալու համար:

8. Հայապահպանական. Հայրենադարձությունը կփրկի արտերկրի հայությանը անխուսափելի ձուլումից՝ սպիտակ ջարդից[87]:

Միով բանիվ՝ պատմական այս փուլում համակարգված ներգաղթը հայության լուծելիք հիմնական խնդիրներից է: Հայաստանում այս հարցերով պետք է ուղղակիորեն զբաղվի պետությունը, իսկ սփյուռքում՝ հայկական կազմակերպությունները: Եթե, սակայն, վերջինները զլանում են, ապա պատասխանատվությունն իր վրա պետք է վերցնեն ժողովուրդն ու անհատը: Հայության գոյապայքարն այժմ կենտրոնացած է ներկա Հայաստանի հայաթափումն ու հոգևոր հայազերծումը կասեցնելու վրա: Հետևաբար, ազգի ճակատագրի հանդեպ անձնական պատասխանատվություն զգացող և ստանձնող հայը պետք է բոլոր հնարավորություններն օգտագործի Հայաստանում վերաբնակվելու համար, որպեսզի իր ներկայությամբ, աշխատանքով և վտանգներին դիմագրավելու պատրաստակամությամբ ամրապնդի երկիրը:

Զանգվածային ներգաղթի դեմ եղած արգելքները

Այսօր ներգաղթը Հայաստան արգելակվում է մի շարք պատճառներով.

1) Հայաստանի կենսամակարդակն ավելի ցածր է, քան այն երկրներինը, որտեղ սփյուռքահայերն արդեն վաղուց ի վեր հաստատվել ու հարմարվել են:

2) Հայաստանում տիրում են տնտեսական գործունեություն ծավալելու համար բարդ և անծանոթ պայմաններ:

3) Հայաստանում տիրում է իրավական անպաշտպանվածության ընդհանուր մթնոլորտ, որը զգացվում է հատկապես տնտեսական գործունեության ոլորտում[88]:

Սակայն ներգաղթը տնտեսականից առավել է արգելակում մի այլ խորքային երևույթ, որը սովորաբար երբեք չի հիշատակվում: Բանն այն է, որ դեռևս մի քանի տասնամյակ առաջվա սփյուռքահայությունը (թեկուզ 1960-1970-ականներին) և այսօրվա հայկական սփյուռքը (հատկապես վերն առանձնացված Ա զանգվածը) մեծապես տարբեր են. վերջինս բազմապատիկ անգամ ավելի ուծացած է: Հիշենք, որ 1920-ականներից մինչև 1940-ականների վերջը հայերը զանգվածաբար ներգաղթում էին Հայաստան, նաև արևմտյան հարուստ երկրներից, թեև նրանցից շատերը հրաշալի գիտակցում էին, որ Հայաստանում կենսամակարդակն ավելի ցածր է, իսկ պետական ռեժիմը ոչ թե եվրոպական տիպի ժողովրդավարությունն է, այլ ստալինյան բռնատիրությունը: Բայց և այնպես, նրանք նախընտրում էին ապրել իրենց հայրենիքում, որովհետև հայ էին, և օտարությունը նրանց հոգեբանորեն էր ճնշում: Ճիշտ է, հետագայում նրանցից ոմանք դարձյալ արտագաղթեցին, սակայն դրա պատճառն այն էր, որ Խորհրդային Հայաստանը շատ հեռու էր հայկական ազգային պետականությունը մարմնավորելուց թե՛ քաղաքականապես, թե՛ գաղափարապես, թե՛ բարոյահոգեբանական առումով:

Այսօր արտերկրում կան հազարավոր հարուստ հայեր, որոնք կարող են իրենց ունեցած գումարով աշխատանք ստեղծել ու բնակվել Հայաստանում (թեև դա կարող է որոշակի անհարմարություններ նշանակել անձնական կյանքում), սակայն նրանք այդ չեն անում՝ ոմանք՝ բերելով հազար ու մի պատճառաբանություն, ոմանք էլ այդ մասին երբեք լրջորեն չխորհելով:

Մեկ այլ համեմատություն, որը նույնպես մատնանշում է այսօրվա և 20-րդ դարի առաջին կեսի սփյուռքի մեծ տարբերությունը: 1918-20 թթ. հեռավոր Ամերիկայից, Եվրոպայից և այլ երկրներից մի քանի հազար հայեր կամավորապես զինվորագրվեցին ու կռվեցին հայասպան Թուրքիայի դեմ՝ վառված և՛ վրեժի զգացումով, և՛ հայկական անկախ պետականություն կերտելու ցանկությամբ: 1991-94 թթ. Արցախյան պատերազմին իրենց մասնակցութ-

յունը բերեցին ընդամենը երեք-չորս տասնյակ սփյուռքահայեր: Եթե այս փաստից փոքր-ինչ պատկերավոր եզրահանգում անենք, ապա կստացվի, որ 70 տարվա ընթացքում սփյուռքի հայկականության մակարդակն ապրել է հարյուրապատիկ անկում, որը միանգամայն բնական է:

Այսպիսով՝ զանգվածային ներգաղթն արգելակում են ոչ միայն (և ոչ այնքան) ներկայիս Հայաստանի թուլակազմ պետականությունը՝ իր քայքայված տնտեսությամբ ու ցածր կենսամակարդակով, որքան ներկայիս հայկական սփյուռքի ուծացածության բարձր աստիճանը: *Նույնը վերաբերում է նաև արտագաղթին, որովհետև Հայաստանից արտագաղթողների մի զգալի մասը ունևոր, սակայն մշակութապես ապազգայնացված, հայրենիքի ճակատագրին անտարբեր հայեր են:*

Ինչպես ժամանակին ճիշտ նկատում էր Ճ. Գառնուզյանը՝ «արևմտահայության ֆիզիկական գոյությունը կարելի չէ եկեղեցիներու, դպրոցներու, մամուլի և մշակութային խողովակներու միջոցով երաշխավորել, ոչ ալ կուսակցություններու ստանձնած պարզ միութենական աշխատանքներով, որքան ալ անհրաժեշտ ու հրամայողական ըլլան անոնք: ...Ազգի մը ֆիզիկական գոյատևումը, տնտեսական և հավաքական կյանքի զարգացումը միշտ ու միայն կապված է այդ ազգին հողին, ջուրին և օդին հետ»[89]*:*

Հայաստանը ո՛չ իր իսկապես խղճահարություն հարուցող ներկայով, ո՛չ էլ իր՝ արևմտյան «հայագետների» ջանքերով աղճատված վիճակում մատուցվող իբր նույնպես «խղճուկ» անցյալով, չի ոգեշնչում այսօրվա սփյուռքահային այն աստիճան, որ նա թողնի իր տունն ու տեղը և հայրենիք վերադառնա: Հայաստանի անկախության հռչակումից հետո ընդամենը մի քանի տասնյակ սփյուռքահայեր են հայրենադարձվել, որոնց մի մասը դարձյալ արտագաղթել է և հայտնի չէ, թե արդյո՞ք մնացածներն էլ նրանց չեն հետևի: Այնինչ հայրենիքում մշտական բնակություն հաստատելն է այն միակ ու գլխավոր քայլը, որն ի վիճակի է ճակատագրի բերումով ազգային արմատներից ու մշակույթից հեռացած սփյուռքահային մշակութապես վերահայացնել՝ ընդամին ապահովելով նրա սերունդների հայ մնալը:

Սփյուռքի ավանդական կառույցների քաղաքական գործունեության բովանդակությունը (պայքար հանուն ցեղասպանության ճանաչման)

Հետխորհրդային տարիներին միջազգային ատյաններում Հայկական ցեղասպանության արծարծումն ընդունել է հետևյալ ձևերը.

1. *«Ճանաչման» բանաձևեր են ընդունել մի շարք պետությունների խորհրդարանները կամ դրանց առանձին պալատներն, այդ թվում՝ Արգենտինայի Սենատը (մայիս 5, 1993թ. և մարտի 31, 2004թ.), Սերբիայի խորհրդարանի վերին պալատը (հուլիս 27, 1993թ.), Ռուսաստանի Պետական դուման (ապրիլ 14, 1995թ.), Հունաստանի խորհրդարանը (ապրիլ 25, 1996թ.), Բելգիայի Սենատը (մարտ 26, 1998թ.), Իտալիայի խորհրդարանը (նոյեմբերի 16, 2000թ.), Շվեդիայի խորհրդարանը (մարտի 29, 2000թ.), Լիբանանի խորհրդարանը (մայիս 11, 2000թ.), Վատիկանը (նոյեմբերի 10, 2000թ.), Ֆրանսիայի Ազգային ժողովը (մայիս 28, 1998թ.) և Սենատը (հունվարի 15, 2001թ.), Կանադայի Համայնքների պալատը (ապրիլի 23, 1996թ. և ապրիլի 21, 2004թ.) և Սենատը (հունիսի 13, 2002թ.), Շվեյցարիայի Ազգային ժողովը (դեկտեմբերի 16, 2003թ.): Ֆրանսիայում, Արգենտինայում և Ուրուգվայում ընդունվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրենքներ (համապատասխանաբար՝ հունվարի 29, 2001թ., մարտի 18, 2004թ. և մարտի 26, 2004թ.):*
2. *ԱՄՆ-ի Կոնգրեսում առաջադրվել են Հայկական ցեղասպանությունը ոգեկոչող բանաձևերի հերթական նախագծեր, այնուհետև դրանք կանոնավոր կերպով տապալվել են: Վերջիններից ամենահաջող ձևակերպվածը [1] 398 (փոքր փոփոխություններից հետո՝ [1] 596) բանաձևի նախագիծն էր:*
3. *2004 թ. մայիսի դրությամբ ԱՄՆ-ի 35 նահանգների օրենսդիր մարմիններ ճանաչել են ցեղասպանությունը՝*

Ալյասկան, Արիզոնան, Արկանզասը, Կալիֆոռնիան, Կոլորադոն, Քոնեքթիքութը, Ֆլորիդան, Ջորջիան, Իլինոյսը, Մեյնը, Մերիլենդը, Մասսաչուսեթսը, Միչիգանը, Միննեսոթան, Նևադան, Նյու Հեմպշիրը, Նյու Ջերսին, Նյու Մեքսիկոն, Նյու Յորքը, Օկլահոման, Օրեգոնը, Փենսիլվանիան, Ռոդ Այլենդը, Հարավային Քարոլինան, Վիրջինիան, Վաշինգտոնը, Վիսքոնսինը, Այդահոն, Լուիզիանան, Միսսուրին, Մոնթանան, Նեբրասկան, Հյուսիսային Քարոլինան, Թեննեսին և Յուտան:

4. 2002 թ. փետրվարի 28-ին Եվրոպական խորհրդարանը կոչ է արել Թուրքիային ճանաչել Հայկական ցեղասպանությունը (առաջին անգամ նմանատիպ մի բանաձև Եվրոպական խորհրդարանն ընդունել էր 1987 թ. հունիսի 18-ին):

5. Նմանատիպ բանաձևեր և հայտարարություններ են ընդունել նաև տարբեր պետությունների վարչական խոշոր միավորներն ու քաղաքապետարանները[90]:

Ինչպե՞ս պետք է հասկանալ միջազգային այս ճանաչումները, ի՞նչ է դրանց նշանակությունը Հայաստանի և հայության համար: Եթե մի կողմ թողնենք հուզական զեղումները, այս հարցի վերաբերյալ հայ (նաև սփյուռքահայ) քաղաքական մեկնաբանների և ՀՀ Կառավարության տված բացատրություններն ու եզրակացությունները հանգում են հետևյալին.

1) Եվրոպական խորհրդարաններում և ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայկական ցեղասպանության արծարծումն արտացոլում է «պատմական արդարության» աննահանջ երթը:

2) Այս զարգացումը սփյուռքահայ զանգվածների ու կազմակերպությունների և (1998թ-ից դրանց միացած) ՀՀ դիվանագիտության միացյալ ջանքերի արդյունք է:

3) Այդ ջանքերը որոշ երկրներում ու հատկապես Ֆրանսիայում պսակվել են հաջողությամբ, որովհետև զուգադիպել են եվրոպական պետությունների այն ցանկությանը, ըստ որի՝ պետք է ամեն կերպ հետաձգել կամ առհասարակ վիժեցնել Թուրքիայի մուտքը Եվրոպական միություն:

Հիմնականում՝ այսքանը: Ընդ որում՝ եթե վերը նշված երկրորդ և երրորդ թեզերն իրոք արժանի են ուշադիր քննության, ապա առաջին թեզն ինքնին հուզական զեղում է, որովհետև «պատմական արդարությունն» ու նրա «անխուսափելի հաղթանակը» բարոյագիտության և աստվածաբանության ոլորտին պատկանող հասկացություններ են, որոնք որևէ կապ չունեն միջազգային քաղաքական համակարգի իրական տեղաշարժերի հետ: «Պատմական արդարություն» ասվածն առաձգական հասկացություն է, այլ ո՛չ դատաիրավական հստակ գործառույթներ ունեցող միջազգային ատյան: Համաշխարհային պատմության մեջ հայտնի են անպատիժ մնացած բազմաթիվ զանգվածային կոտորածներ, ամբողջ ժողովուրդների բռնի տեղահանություններ, ոչնչացված ընակչության ունեցվածքի թալան ու բռնագրավումներ, որոնք անպատիժ են մնացել, իսկ զոհը որևէ փոխհատուցում չի ստացել: Այդպիսի ընդամենը մի վառ օրինակ է Ամերիկա մայրցամաքի զավթումը և բնիկ հնդկացիների մեթոդիկ օտարացումը հայրենի տարածքներից ու հարստություններից: Սակայն ո՞վ կարող է այսօր հարց դնել այդ ունեցվածքն ու տարածքները նախկին տերերի սերունդներին վերադարձնելու մասին: Հնդկացիներն այն աստիճան նոսրացած ու թուլացած են, այնպիսի անհաղթահարելիորեն կախյալ վիճակում են նախկինում իրենց գաղութացրած ուժից, որ քաղաքական ինքնուրույն գոյակցություն վերահաստատելու մասին մտածե՛լ անգամ չեն կարող: Իսկ ու՞ր էր կամ ու՞ր է «պատմական արդարություն» կոչվածը: Այն պարզապես չկա: Ուրեմն, եթե ոչ քաղաքական ճառերում, դիվանագիտական հայտարարություններում կամ տեսաբանական գնահատականներում, ապա գոնե միջազգայնագիտական վերլուծություններում պետք է առհասարակ խուսափել այդ տերմինն օգտագործելուց:

Հայկական ցեղասպանության շուրջը ծավալված վերջին սրընթաց զարգացումների հետ են կապված կարևոր, սակայն շարունակաբար անտեսվող մի շարք հարցեր: Ստորև անդրադառնալու ենք հե՛նց այդ քիչ արծարծվող հարցերին, որոնց թվում են՝

- Հայկական ցեղասպանության ճանաչման նշանակությունն ու հետևանքները Հայաստանի անվտանգության համար.

- *ներկա փուլում համայն հայության լուծելիք ռազմա-վարական առաջնահերթ խնդիրները և դրանց նկատ-մամբ Հայաստանի ու սփյուռքի որդեգրած դիրքորո-շումները.*
- *միջազգային ասպարեզում Հայկական ցեղասպանու-թյան ճանաչման ներկա գործընթացի բուն դրդապատ-ճառները.*
- *Հայաստանի և սփյուռքի հետագա անելիքներն ու դրանց վերաբերյալ եղած ծրագրերը:*

Պատմության դերը և ցեղասպանության ճանաչման նշանակությունը Հայաստանի անվտանգության համար

Ի՞նչ դեր է խաղում Հայաստանի միջազգային ամենաբարդ խնդրի՝ Ղարաբաղյան հակամարտության մեջ պատմությունը, մասնավորապես՝ Հայկական ցեղասպանությունը և Թուրքիայի ու նաև Ադրբեջանի կողմից այդ պատմական իրողության ժխտումը: Մինչև վերջերս անգամ հայ դիվանագետներից կարելի էր լսել, թե այս հարցում պատմությունն իբր որևէ դեր չունի: Մեր ռազմավա-րական մտածողության թերի զարգացումն է պատճառը, որ արևմտ-յան ռազմավարաբանների և դիվանագետների այս սխալ կարծիքը հեշտությամբ թափանցել էր և ընդունվել նաև հայաստանյան դի-վանագիտական շրջանակների մեջ: Այս կարծիքը ճիշտ է միայն այն մասով, որ մեծ տերություններն իսկապես անտեսում են տա-րածաշրջանի պատմությունը, սակայն Հայաստանը, Թուրքիան, Արցախը և Ադրբեջանը իրենց ռազմավարական բոլոր կարևոր հաշ-վարկները կատարում են ներկա հակամարտության պատմական անցյալի հիմքի վրա. Թուրքիան և Ադրբեջանը՝ մտավախություն ունենալով, որ, եթե Հայաստանն ամուր պետություն դառնա, կա-րող է մի օր հարց բարձրացնել ցեղասպանության պատասխանա-տվության և տարածքային զիջումների մասին, իսկ Հայաստանն ու Արցախը՝ իրավացիորեն վախենալով, որ հայաջնջման քաղաքակա-նությունը դեռևս մնում է Թուրքիայի և Ադրբեջանի օրակարգում և հարմար առիթի դեպքում դարձյալ կարող է ողջ թափով գործա-

դրվել: Ուրեմն՝ որքանով պատմությունը հակամարտության անմիջական մասնակիցների՝ Հայաստանի, ԼՂՀ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական մտածողության ու, հետևաբար, որոշումներ ընդունելու և գործելակերպի անբաժան ու ազդեցիկ մասն է, այնքանով էլ պատմության դերը հակամարտության զարգացման մեջ չափազանց մեծ է:

Հայաստանի համար ցեղասպանության ճանաչումը ունի ոչ միայն իրավական ու բարոյական, այլև, առավելապես, ռազմավարական նշանակություն: Ճանաչելով ցեղասպանության փաստը՝ միջազգային համայնքը զգալիորեն կնվազեցնի թուրքական հնարավոր ագրեսիայի հավանականությունը: Այդ հավանականությունն էլ ավելի կնվազի (թեև իսպառ չի վերանա), եթե Թուրքիան ինքը պետականորեն ճանաչի ցեղասպանությունը:

Ցեղասպանության ճանաչման ռազմավարական մյուս կարևոր նշանակությունն էլ այն է, որ ոչ վաղ անցյալում ցեղասպանության զոհ դարձած Հայաստանի ազգաբնակչությունը չափազանց զգայուն է անվտանգության հարցերի նկատմամբ: Հայաստանի ազգային անվտանգության ռազմական ու տնտեսական ավանդական շերտերից բացի, ոչ պակաս կարևոր է հոգեբանական անվտանգության ապահովումը (իմիջիայլոց, ազգային անվտանգության հոգեբանական շերտին մեծ կարևորություն են տալիս նաև մեծ պետությունները, նույնիսկ գերհզոր Միացյալ Նահանգները)[91]: Մասամբ, հե՛նց ազգային անվտանգության անսովոր սուր գիտակցությունն ու զգացողությունը դրդեցին մի կողմից՝ մեր ազատամարտիկների անօրինակ հերոսությունը, մյուս կողմից՝ վերջին տարիների զանգվածային արտագաղթը:

Կարճ ասած՝ հայ-թուրքական երկկողմանի վստահությունը վերականգնելու միակ հիմնարար միջոց կարող է լինել Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումը և (դրանից անպայմանորեն բխող) իր զոհերին՝ հայությանն ու Հայաստանին, հատուցում տալը՝ ներառյալ տարածքային որոշակի (բանակցությունների ենթակա) զիջումները:

Սակայն դատելով Թուրքիայի ներկա քաղաքականությունից՝ առաջիկա տարիների և գուցե տասնամյակների ընթացքում այդպիսի բան տեղի չի ունենալու: Հետևաբար՝ Հայաստանի կառավարու-

թյունը իրավունք չունի անտեսելու այն փաստը, որ հայ-թուրքական հարաբերությունները դեռ երկար են զարգանալու սկզբունքային ու խորը անվստահության պայմաններում՝ անկախ դիվանագիտական ու առևտրատնտեսական երկկողմ հարաբերությունների մակարդակից:

Այսպիսով՝ վերջերս միջազգային ասպարեզում Հայկական ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ կատարված քայլերը, թեև անհետևողական են ու վախվորած, երկարաժամկետ առումով Հայաստանի անվտանգության համար որոշակի քաղաքական-իրավական արժեք, այդուհանդերձ, ներկայացնում են: Բայց հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք Հայաստանն ու սփյուռքն ի վիճակի են օգտվելու և առավելագույնս շահագործելու ռազմավարական այդ փխրուն կապիտալը, թե՞ այն պարզապես քամուն են տալու՝ լուրջ վերլուծությունների վրա հիմնված երկարաժամկետ ծրագրերի լիակատար բացակայության պատճառով: Ստորև անդրադառնալու ենք նաև այդ հարցերին:

Ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացի հետևանքները

Ինչպես վերը տարբեր առիթներով ընդգծվել է, այսօր Հայաստանի գոյատևման՝ լինել-չլինելու հարցը դրված է այնքան սուր և ուղղակի կերպով, որ Հայկական ցեղասպանության ճանաչման վերաբերյալ միջազգային վերջին զարգացումները պետք է դիտարկել նախ և առաջ այդ տեսանկյունից: Ճիշտ գնահատելու համար միջազգային ասպարեզում ցեղասպանության ճանաչման հետևանքները, մենք պետք է պատասխանենք երկու առանցքային հարցի:

Առաջին. որքանո՞վ է Հայկական ցեղասպանության ճանաչման դանդաղ և երկյուղած միջազգային ներկա գործընթացը նպաստում Հայաստանի ազգային անվտանգության ամրապնդմանը, նաև՝ որքանո՞վ է այդ գործընթացը մեղմացնում Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած ու հետևողականորեն իրականացվող անհաշտ ու քամահրական քաղաքականությունը:

Երկրորդ. *որքանո՞վ են եվրոպական խորհրդարանների և միջազգային մյուս ատյանների վերջին բանաձևերն արծարծում-շոշափում Հայոց ցեղասպանության՝ իրավականորեն անժամանցելի այդ ոճրագործության պատժելիության հարցը, ըստ այդմ էլ՝ նաև ամբողջ հայությանը, նախ և առաջ Հայաստանի պետությանը Թուրքիայի կողմից տրվելիք արդար հատուցման դրույթը:*

Առաջին հարցի պատասխանը հնարավորություն կտա բացահայտելու արևմտյան (հիմնականում եվրոպական) պետություններ՝ Հայկական ցեղասպանության ճանաչմանն ուղղված քայլերի բուն շարժառիթները: Զէ՞ որ, եթե եվրոպական խորհրդարաններն իսկապես շահագրգռված են Հայաստանի և հայ ազգի դեմ անցյալում իրականացված ցեղասպանությունը դատապարտելով, ապա նրանք պետք է ուշադրություն դարձնեն այդ հրեշավոր հանցագործությունը կատարած նույն ուժի՝ Թուրքիայի՝ Հայաստանի հանդեպ տարվող ներկա քաղաքականության վրա:

Իսկ Թուրքիայի ներկա քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ բառիս բուն իմաստով թշնամական է, այսպես՝

1) տասնամյակներ շարունակ միջազգային ասպարեզում՝ դիվանագիտական, ակադեմիական և հասարակական շրջանակներում, Թուրքիան վարում է հակահայկական լայնածավալ քարոզչություն՝ այդ ուղղությամբ զգալի գումարներ տրամադրելով պետական բյուջեից: Վերջին տարիներին այդ քարոզարշավը ոչ միայն չի թուլացել, այլ ձեռք է բերել նոր թափ և առավել մեծ ծավալ[92]*:*

2. Անկարան սկզբունքորեն հրաժարվել է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց՝ սկզբում պատճառաբանելով իր այդ քայլը Հայաստանի՝ իբր ունեցած հողային պահանջներով, ապա Ղարաբաղյան հակամարտությամբ: Միջազգային պրակտիկայում դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հրաժարվելը (մանավանդ՝ հարևան պետության նկատմամբ) նշանակում է թշնամության բացահայտ դրսևորում: Այդպիսի թշնամանքով են ներծծված հարաբերությունները ԱՄՆ-ի և Կուբայի, Սիրիայի և Իսրայելի, Իրանի և Իսրայելի, Իրաքի և Իսրայելի, Իրանի և Իրաքի միջև: Ուրեմն նույնչափ և դուցե առավել թշնամական է նաև Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի հանդեպ: Թուրքիայի՝ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբե-

ությունները հաստատելու արդեն տասներեքամյա համառ մերժումը պետք է գնահատել ոչ այլ կերպ, քան Հայաստանի՝ պետականություն ունենալու իրավունքը արմատից մերժելու փորձ: ՀՀ ղեկավարությունն առայժմ խուսափում է այս համապատասխան գնահատականը միջազգային ասպարեզում հնչեցնելուց, ինչը խանգարում է միջազգային հանրությանը ճիշտ պատկերացում կազմել Հայաստանի արտաքին քաղաքականության, հատկապես՝ Ղարաբաղյան հարցում որդեգրած դիրքորոշումների մասին:

3. Ղարաբաղյան հակամարտության ողջ ընթացքում Թուրքիան աջակցել է Ադրբեջանին իր ունեցած դիվանագիտական, քարոզչական, տնտեսական, ռազմական (զինվորական խորհրդատուների, զենք և զինամթերք մատակարարելու) բոլոր միջոցներով ու հնարավորություններով: Այս ամենն ուղեկցվել է թուրք ամենաբարձր պաշտոնյաների՝ Հայաստանի հասցեին արտահայտված սպառնալիքներով: Այսպես՝ դեռևս 1992 թ. մարտին հայերին «վախեցնելու» անհրաժեշտության մասին արտահայտվել էր Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը[93]: Ակնարկելով Հայոց ցեղասպանությունը՝ Օզալը նաև ասել էր, թե «հայերը դաս չառան Անատոլիայում (իմա՝ Արևմտյան Հայաստանում) իրենց նախորդ փորձարկումից ու կրած պատժից», իսկ Քելբաջարի ազատագրումից հետո՝ Օզալը սպառնաց, թե «ժամանակն է ատամներ ցույց տալ Հայաստանին»: Միաժամանակ՝ Հայաստանի սահմաններին թուրքական զորքերը բերվել էին «մարտական բարձր պատրաստվածության վիճակի», շուրջ 160 (այլ տեղեկությունների համաձայն՝ շուրջ 650) թուրք կադրային սպաներ վարժեցնում էին ադրբեջանական բանակը, Անկարան 30 միլիոն դոլարի վարկ հատկացրեց Ադրբեջանին՝ Թուրքիայում զենք գնելու համար և այլն[94]:

Իր սպառնալիքները Թուրքիան արտահայտել է նաև միջազգային ատյաններում՝ չվարանելով անգամ արձանագրել դրանք: Դեռևս 1993 թ. ապրիլի 26-29-ին Պրագայում կայացած ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների կոմիտեի նիստի ավարտին Թուրքիայի պատվիրակության գրավոր հայտարարության մեջ կարդում ենք նույն բացահայտ և սահմռկեցուցիչ սպառնալիքը.

«Հայաստանը պետք է գիտակցի, որ նրանք, ովքեր ուժ են գործադրում, կտեսնեն, որ ուժ կգործադրվի իրենց իսկ դեմ: Հա-

յաստանը կարող է որոշ ժամանակով գրավված պահել ադրբեջանական տարածքները, բայց քանի դեռ նա շարունակի դա անել, խաղաղություն չի ունենա: Իր գործողությունների միջոցով նա (իմա՝ Հայաստանը) ներգրավում է ինքն իրեն ընդլայնվող հակամարտության մեջ»[95]:

4. Թուրքիան, միանալով Ադրբեջանին, շրջափակել է Հայաստանը: Շրջափակման արդյունքը հավասարազոր է լայնածավալ պատերազմի հետևանքներին՝ Հայաստանի տնտեսության փլուզում և հարյուրհազարավոր մարդկանց արտագաղթ: 1992-93 թթ. ձմռանը Հայաստանի հետ իր սահմանը ժամանակավորապես բացելով՝ Անկարան հետամուտ էր, ինչպես արդեն պարզ է, զուտ քարոզչական նպատակների: Այդ ժամանակ Արցախում հայոց պարտությունը մոտալուտ էր թվում, և ալյուրով բեռնված մի քանի շարժակազմը դրությունը չէր կարող փոխել:

Համաշխարհային բանկի հաշվարկներով՝ այդ շրջափակումները Հայաստանին վնասում են նրա համախառն ներքին արդյունքի 30-ից մինչև 38 տոկոսի չափով և արգելում են Հայաստանի հնարավոր արտահանումների մինչև 50 տոկոսը: 2000 թ. Հայաստանի ՀՆԱ-ն 1,9 միլիարդ դոլար էր, հետևաբար այդ հաշվարկները նշանակում են, որ Թուրքիայի և Ադրբեջանի շրջափակումները Հայաստանին տարեկան 570 միլիոնից մինչև 722 միլիոն դոլարի վնաս են տվել[96]:

5. Վերջապես, Թուրքիան ժխտում է Հայկական ցեղասպանության փաստը: Ինչպե՞ս պետք է սա գնահատել: Միջազգային հանցագիտությունը և, մասնավորապես, ցեղասպանագիտությունը վաղուց են հաստատել, որ ծանրագույն հանցագործության փաստի կտրական ժխտումը՝ այն իրականացրած սուբյեկտի կողմից, նշանակում է հանցագործության (այս դեպքում՝ Հայոց ցեղասպանության) արդարացում և նմանատիպ նոր ոճրագործություն կատարելու պատրաստակամություն:

Զարմանալիորեն, հայ-թուրքական արդի հարաբերություններին վերաբերող՝ Հայաստանի համար վտանգավոր հետևանքներ ունեցող բոլոր վերը նշված հարցերը եվրոպական խորհրդարանների ուշադրությանը չեն արժանանում:

Անդրադառնանք նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետ կապված երկրորդ հարցին: Արդյո՞ք եվրոպական խորհրդարանների վերջին բանաձևերը որևէ կերպ նշում են Եղեռնի պատժելիության ու հատուցման անհրաժեշտությունը:

Հայերի ամենամեծ հաջողությունը համարվող Ֆրանսիայի խորհրդարանի 2001 թ. հունվարի 18-ին ընդունած (և 15 օր անց նախագահ Ժակ Շիրակի ստորագրությամբ օրենք դարձած) բանաձևը, ի տարբերություն Հրեական հոլոքոստի վերաբերյալ ֆրանսիական օրենքի, այնպես է ձևակերպված, որ ֆրանսիական օրենսդրությամբ հնարավոր չէ իրավական պատասխանատվության կանչել նույնիսկ Հայկական ցեղասպանությունը ժխտողներին[97]: Այդ բանաձևն, ի դեպ, բաղկացած է ընդամենը մեկ նախադասությունից՝ «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թ. Հայկական ցեղասպանությունը» (La France reconnaît publiquement le génocide arménien de 1915): Բանաձևը չի նշում Թուրքիային որպես ցեղասպանություն իրականացրած ուժ, սխալ է ներկայացնում ցեղասպանության ժամանակային սահմանները՝ սեղմելով այն մեկ տարվա մեջ: Սրանք պատահական վրիպումներ չեն, այլ միտված են հնարավորին չափով մեղմել Թուրքիայի պատասխանատվության չափը:

Ավելին՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում և Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայկական ցեղասպանության բանաձևերը քննարկելու ընթացքում Թուրքիան է՛լ ավելի խստացրեց իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ. Թուրք պետական ու զինվորական պաշտոնյաներն ու քաղաքական երևելի գործիչները բազմիցս սպառնացին Հայաստանին, Թուրք ցուցարարներն այրեցին հայկական դրոշը Ադանայում, Հայաստանի քաղաքացիների դեմ մտցվեցին Թուրքիա մուտք գործելու նոր արգելքներ, դարձյալ հարցականի տակ դրվեց Թուրքական տարածքի վրայով հայկական ինքնաթիռների թռիչքի իրավունքը, Թուրքիայում ճնշումների ենթարկվեց հայ համայնքը:

Այն, որ ամերիկացիներն ու եվրոպացիները բացարձակապես չդատապարտեցին Թուրքիայի այս նորագույն հակահայ ու հակահայաստանյան հիստերիան, ցույց է տալիս, որ Արևմուտքում Հայկական ցեղասպանության ճանաչումը լուծում է բոլորովին այլ

խնդիրներ, քան շատերը մեզանում մինչ այժմ ենթադրում են: Սակայն, ի տարբերություն մեզ, Թուրք-եվրոպական հարցերին քաջատեղյակ արևմտյան յուրաքանչյուր մասնագետ կամ դիվանագետ գիտի, որ Հայկական ցեղասպանությունը «ճանաչելու» բանաձևերով Արևմուտքը պարզապես կամենում է սանձել վերջին տասնամյակում իր ենթակայության տակից բավական դուրս եկած և տարածաշրջանային հեգեմոնի անկանխատեսելի ախորժակ դրսևորող Թուրքիային: Իսկ հատկապես եվրոպական պետությունները նաև փորձում են հնարավորին չափ շատ արգելքներ դնել Թուրքիայի՝ Եվրոպական միություն մուտք գործելու դեմ: Հետևաբար՝ միջազգային ասպարեզում Հայկական ցեղասպանության վերջին ճանաչումները բխում են և դրդված են, նախ և առաջ, ներկայումս Արևմուտքի ունեցած սեփական շահերից, քան արտերկրում հայության գործադրած բազմամյա ճնշումներից: Ընդհանուր առմամբ, մինչև այսօր միջազգային ատյաններում ընդունված բոլոր բանաձևերը (բացառությամբ Լիբանանի խորհրդարանինը) կատարելապես չրջանցում են Հայկական ցեղասպանության թե՛ պատժելիության և թե՛ հատուցման խնդիրը. դրանք անատամ են ու դեռևս հեռու են հայոց արդար պահանջները բավարարելուց: Զմոռանանք, որ XIX դարի վերջից մինչև 1923 թ. հայկական հարցին նվիրված բազմաթիվ բանաձևեր ընդունվեցին, որոնց արժեքը, սակայն, զրոյական էր[98]:

Դժվար է հավատալ նաև այն դրույթին, թե վերը նշված ճանաչումները գլուխ բերելու գործում մեծ ներդրում ունի Հայաստանի Հանրապետության դեռևս կախյալ դիվանագիտությունը:

Սթափ գնահատենք իրականությունը. թեև երկարաժամկետ առումով հնարավոր է, որ հայկական ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ծավալվող միջազգային վերջին զարգացումները դրականորեն ազդեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա՝ հասնելով Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչմանն ու Հայաստանին տրվելիք հատուցումներին (ներառյալ որոշակի տարածքային հատուցումները), կարճաժամկետ հեռանկարում՝ այդ զարգացումները Հայաստանին որևէ դրական բան չեն խոստանում: Ահա սա՛ է ամբողջ խնդիրը: Եթե ընդամենը մեկ տասնամյակում Հայաստանն ավելի քան մեկ միլիոն մարդով հա-

յաթափվել է և այժմ ունի 3 միլիոնից զգալիորեն պակաս բնակիչ, ապա էս մեկ տասնամյակ հետո այդ թիվը կարող է էլ ավելի նվազել: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանը մշտապես կիսապատերազմական վիճակում է Ադրբեջանի հետ և, ինչպես վերն արդեն ասվել է, չունի խոշոր ռազմական պարտության դեթ մեկ իրավունք:

Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած օրենքով ոգևորված հայկական կառույցները նրբորեն ներքաշված են երկրորդական ճակատում կռիվ մղելու և այդտեղ պարպելու հայության ուժերն ու միջոցները: Մինչդեռ իսկական ճակատամարտը ծավալվել է Հայաստանի ներսում՝ երկիրը ֆիզիկապես ու մշակութապես հայաթափելու գործընթացի դեմ: Այստե՞ղ է հանուն Հայաստանի մղվող մեր օրյա ճակատամարտն ու պայքարը: Եվ ա՛յս ճակատում պետք է կենտրոնացվեին բոլոր ուժերը՝ «Հանուն Հայաստանի՛» կարգախոսի դրոշի տակ: Եթե ճիշտ գնահատվեր այս իրողությունը, այլ կլինեին նաև հայկական դիվանագիտության նպատակներն ու ծրագրերը: Պահանջելով հանդերձ, որ եվրոպական խորհրդարանները ճանաչեն Հայկական ցեղասպանությունը (ինչը ներկա փուլում դրական քիչ բան է տալիս կյանքի ու մահու պայքար մղող Հայաստանին և կարող է օգտակար լինել միայն ավելի ուշ շրջանում), հարկ էր առաջնորդվել այսօրվա կենսական պահանջներին համահունչ ծրագրերով: Սփյուռքի բոլոր ուժերը և Հայաստանի դիվանագիտությունը պետք է զօրուգիշեր աշխատեին Հայաստանն արագ կազդուրելու ընդունակ միջոցի՝ զանգվածային ներգաղթ կազմակերպելու վրա, այնուհետև միայն միջազգային ասպարեզում, թեկուզ նույն եվրոպական խորհրդարաններում պահանջեին ընդունել այնպիսի բանաձևեր, որոնք՝ 1) դատապարտեն Թուրքիային Հայաստանը շրջափակելու համար, 2) Արցախը ճանաչեն եթե ոչ անկախ պետություն, սակայն գոնե Ադրբեջանից անկախ միավոր, 3) դատապարտեն Թուրքիային Հայկական ցեղասպանությունը ժխտելու համար (և ո՛չ թե սոսկ «ճանաչեն» Հայկական ցեղասպանությունը), 4) արտակարգ չափերով օգնություն ցույց տան Հայաստանին՝ որպես ցեղասպանությունից ահռելի վնասներ կրած, որևէ հատուցում չստացած, այդ ցեղասպանության իրականացնողի կողմից երկարատև

շրջափակման մեջ գտնվող ու վերջերս էլ երկրաշարժից ու պարտադրված պատերազմից ավերված մի երկրի:

Չի կարելի բավարարվել Հայկական ցեղասպանությունը ճանաչող եվրոպական փուչ բանաձևերով ու փորձել դրանցով ոգևորել ժողովրդին: Միաժամանակ՝ պետական մակարդակի վրա պետք է խուսափել ինչպես այս պահին Թուրքիայից բացեիբաց տարածքային պահանջներ դնելուց (Հայաստանն առայժմ անպատրաստ է միջազգային ասպարեզում նման խնդիրներ առաջադրելու և դրական որևէ արդյունքի հասնելու), այնպես էլ այդպիսի պահանջներից բացեիբաց հրաժարվելուց[99]:

Արդի միջազգային իրավունքի կարևոր բաղադրամաս համարվող՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված ու հետագա տասնամյակներում պետությունների մեծամասնության կողմից վավերացված «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան» ճանաչում է ամենածանր այդ հանցագործության անժամանցելիությունը և այն պատժելու անհրաժեշտությունը: Զուտ բարոյական տեսակետից ևս անհնար է ընդունել ծանրագույն հանցագործություն, օրինակ՝ մարդասպանություն կատարողի ներումը, եթե նա «համաձայնվի» սոսկ «ներողություն» խնդրել:

Հողային ու նյութական հատուցումներից պաշտոնապես հրաժարվելը օգուտ չի խոստանում Հայաստանին նաև քաղաքական նպատակահարմարության տեսակետից: Ընդհակառակը՝ այդպիսի հրաժարումն ի սկզբանե զրկում է Հայաստանը հետագա հայ-թուրքական բանակցություններում կարևոր խաղաքարտերից: Հրաժարումներով կարելի է խարխլել հայ ժողովրդի աշխարհընկալման ամբողջ համակարգը: Չէ՞ որ իր ազգի պատմության հետ հազարավոր տեսանելի և անտեսանելի լարերով կապված հայ մարդն սկզբունքորեն չի կարող հրաժարվել այն մտքից, որ երբևէ, թեկուզ հեռավոր ապագայում հնարավոր կլինի վերատիրանալ ցեղասպանության ճանապարհով իրենից օտարված Հայրենիքին կամ թեկուզ նրա մի մասին:

Վերջապես՝ եթե հրապարակայնորեն հրաժարվենք կորուսյալ հայրենիքից, ապա էլ ինչու՞ է ցեղասպանության ճանաչման այս

ամբողջ թոհ ու բոհը՝ արդյո՞ք միայն ինչ-որ թղթե բանաձևերի համար:

Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը պահանջում է պետական քաղաքականություն

Արդյո՞ք Հայկական ցեղասպանության միջազգային միահամուռ դատապարտումը պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում, թե՞ այդ խնդրով պետք է զբաղվեն միայն սփյուռքահայերը:

Հայաստանն ստիպված է զբաղվել ցեղասպանության հարցերով թեկուզ միայն այն պատճառով, որ հայոց պատմության կեղծարարությունը (ներառյալ ցեղասպանության ժխտումը) վաղուց դարձել է Թուրքիայի պետական մեքենայի եռանդուն միջամտության առարկա: Հայաստանը ոչինչ չի շահի, սակայն շատ կկորցնի, եթե փորձի խուսափել այս հարցին անդրադառնալուց:

Հայոց ցեղասպանության համաշխարհային դատապարտման խնդրում պետական քաղաքականություն կարող է համարվել ոչ թե սոսկ ՀՀ նախագահի կամ արտգործնախարարի ՄԱԿ-ում կամ այլ միջազգային ատյաններում այս մասին ունեցած սակավաթիվ ելույթները, այլ՝

1) *համապատասխան տեղեկատվության ամբողջական հավաքումն ու տարածումը հայ դիվանագետների, միջազգայնագետների, ցեղասպանագետների, քաղաքական կուսակցությունների, այս հարցով շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունների և վերլուծաբանների միջավայրում.*
2) *նման խմբերի և անհատների գործունեության համակարգումը.*
3) *տեղեկատվության համակողմանի վերլուծությունը.*
4) *Հայաստանի քաղաքականության ու սփյուռքի գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրումը:*

Պետական քաղաքականության այս բաղադրամասերից որևէ մեկն այսօր ուժի մեջ չէ: Չի կատարվում նույնիսկ առաջին կետով նշված ամենատարրական խնդիրը՝ տեղեկատվության հավաքումն ու տարածումը: Հայաստանի պետական հիմնարկներում չի գործում աշխատակիցների գեթ մի խումբ, որը կանոնավոր կերպով հետևեր ոչ միայն հայկական, այլև ուրիշ ցեղասպանությունների հետևանքներին քաղաքական, իրավական, տեսաբանական բնագավառներում, կհավաքեր ու դիվանագիտական, պետական և ակադեմիական համապատասխան մարմիններին կտրամադրեր անհրաժեշտ նորություններն ու վերլուծությունները[100]: Ավելին՝ հայ դիվանագիտական կորպուսը մինչև վերջերս հատուկ դասընթացների և մանրամասն մշակված գրավոր դրույթների միջոցով չի մասնագիտացել Հայկական ցեղասպանության պատմության, վերջին տասնամյակներին ցեղասպանության ժխտման դեմ պայքարի, ցեղասպանագիտություն առարկայի շրջանակներում առաջադրված արդի տեսությունների, դրանց միջազգային կիրարկումների հարցերի մեջ: Այս ամենի մասին հայ դիվանագետների (նաև մյուս պետծառայողների) մեծամասնությունն ունի ոչ բավարար գիտելիքներ, որ անթույլատրելի է:

Ի տարբերություն Հայաստանի՝ Թուրքիան իսկապես պետական մոտեցում է ցուցաբերում ցեղասպանության հարցում, ճիշտ է՝ հակառակ՝ ժխտելու ուղղվածությամբ: Այսպես՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդին կից կանոնավորապես գործում է «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգող խորհուրդը», որի նիստերում մանրամասն քննարկվում են ու այնուհետև որոշումներ ընդունվում Հայոց ցեղասպանության ժխտումն ամբողջ շառավղով կազմակերպելու ուղղությամբ: Կարդանք, օրինակ, հետևյալ հաղորդագրությունը.

> *«ԱՆԿԱՐԱ, 22 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի վարչապետի օգնական Դևլեթ Բահչելիի գլխավորությամբ այսօր Անկարայում իր հերթական նիստն է գումարել Ազգային անվտանգության խորհրդին կից «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգող խորհուրդը», որի օրակարգում մոտ օրերս ԱՄՆ-ի կինոսրահներում ցուցադրվելիք «Արարատ» ֆիլմի դեմ միջոցառումներ ձեռնարկելու ուղիներն*

են: ...Նիստում որոշվել է համակարգել Թուրքիայի կրթության և արտաքին գործերի նախարարությունների, ինչպես նաև կառավարության և քաղաքացիական կազմակերպությունների գործողություններն այս հարցում: Նիստին մասնակցում էին նաև ԱԱԽ գլխավոր քարտուղար Թյունջեր Քիլիջը, ազգային անվտանգության նախարարության խորհրդական Շենքալ Աթաշաղունը, ԱԱԽ գլխավոր քարտուղարի օգնական Իլքեր Բաշբուղը, արտաքին և ներքին գործերի նախարարությունների խորհրդականներ, ինչպես նաև Թուրքական պատմության խորհրդի նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն[101]*:*

Սա՛ է պետական քաղաքականությունը: Ընդսմին նկատենք, որ Հայաստանի Հանրապետությունում Ազգային անվտանգության խորհուրդը չի գործում[102]*:*

Բայց ամենից առաջ հարցը պետք է ճիշտ ձևակերպվի. Հայաստանը պետք է կենտրոնանա ոչ այնքան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, որքան ցեղասպանության ռազմավարական հետևանքների համալիր հաղթահարման ծրագրված աշխատանքի վրա: Միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված գործունեությունը կազմում է այս աշխատանքի մի մասը միայն: Մյուս՝ առավել կարևոր ուղղություններն են հայ ժողովրդի համախմբումը հայրենի հողի վրա՝ հայրենադարձության ճանապարհով, հայկական պետության կառուցումն ու ամրապնդումը, հայկական մշակույթի զարգացումը:

Սփյուռքի պարագան

Վերադառնանք, սակայն, այն հարցին, թե արդյո՞ք սփյուռքը միայն դրական ազդեցություն է գործում հայության արդի զարգացման վրա: Արդյո՞ք ազգային կյանքում սփյուռքը չունի նաև բացասական ազդեցություններ: Այս հարցը մեզանում չի արծարծվել և անուշադրության է մատնվել: Համառոտաբար ուրվագծենք սփյուռքի օբյեկտիվ ազդեցությունները հայության կյանքի տար-

բեր ոլորտների վրա (ստորև շարադրվածը նկատառումների մի ոչ ամբողջական շարք է):

Մեծ և հարաբերականորեն կազմակերպված սփյուռքի առկայությունը Հայաստանին ընձեռում է տարբեր պետություններում բարեկամաբար տրամադրված զանգվածների և անհատների քաղաքական, բարոյական և նյութական որոշակի աջակցության հնարավորություն, որից զուրկ են նմանատիպ սփյուռք չունեցող երկրները:

Սփյուռքի առկայությունը զգալի չափով մեղմում է տնտեսական, մշակութային և քաղաքական մեկուսացածության այն վիճակը, որ ստեղծվեց Հայաստանի համար ԽՍՀՄ փլուզումից հետո:

Սփյուռքի առկայության շնորհիվ հայությունը ձեռք է բերում հասարակական, քաղաքական, տնտեսական մեծ շարժունակություն, որը ճիշտ կազմակերպելու դեպքում կտա նաև լավ արդյունքներ: Սակայն այս պահին այն դեռևս ծառայում է սոսկ անհատական մակարդակում հաջողություն ապահովելուն:

Սփյուռքահայությունը տնօրինում է մեծաքանակ կապիտալ, որի, սակայն, չնչին մասն է միայն ծառայում Հայաստանի տնտեսության հզորացմանը: Երկու պերճախոս փաստ. 1995-99 թթ. Հայաստանի ստացած արտասահմանյան ուղղակի ներդրումները մեկ շնչին ընկնող միջին հաշվով կազմել են 30 դոլար, մինչդեռ նույն ցուցանիշը Սլովենիայում ու Լիտվայում կազմել է ավելի քան 100 դոլար, Էստոնիայում, Հունգարիայում և Չեխիայում՝ ավելի քան 200 դոլար: Ինչպես նկատում է Համաշխարհային բանկի մի վերլուծաբան, «սփյուռքից Հայաստան մտած ներդրումների մեծ բաժինը եկել է, զարմանալիորեն, Ռուսաստանից և ոչ Արևմուտքից, որտեղ հայկական համայնքներն ունեն բիզնեսի ավելի մեծ փորձառություն և ավելի մեծ ընդհանուր ներդրումային պոտենցիալ»[103]:

Սփյուռքահայերից շատ շատերն անգնահատելի գիտելիքներ ու հմտություններ ունեն տնտեսության, գիտության, պետական շինարարության բազմազան ոլորտներում, սակայն դրանից Հայաստանն առայժմ քաղում է միայն չնչին օգուտներ:

Մյուս կողմից՝ մեծաթիվ ու անհամեմատ ավելի բարեկեցիկ սփյուռք ունենալը նպաստում է արտագաղթին, որովհետև սփյուռքը, մի կողմից, վառ օրինակ է տալիս հայրենաբնակ հայությանը,

թե ինչպե՛ս կարելի է բարգավաճել Հայաստանից դուրս, օտար ափերում, մյուս կողմից՝ դյուրացնում է արտասահմանում աշխատանք գտնելու և հարմարվելու գործը: Հայրենադարձությունն անլուրջ գաղափար համարող սփյուռքը նաև հոգեբանական ինքնարդարացում է պարգևում պանդխտության ցուպը բռնած, բայց հայրենասիրության տարբեր ունեցող հայաստանաբնակ հային՝ մատուցելով նրան «այնտեղից հայրենիքին ավելի շատ օգուտ բերելու» ինքնախաբ բանաձևը:

Արտերկրում հայրենասիրական զգացմունքների թուլացման պատճառները շատ են, սակայն գլխավորն այն է, որ ամենօրյա շփումն ու աշխատանքն օտար շրջապատում նույնացնում է սփյուռքահայի կենսանպատակները այդ շրջապատի կենսանպատակներին (դրանցից, թերևս, ամենահիմնականը վայելքների ճաշակումն է), որոնք իրենց բնույթով միանգամայն խորթ են պայքարի մեջ գտնվող հայության ազգային նպատակներին[104]: Օտարները պարզապես չեն հասկանում հայ-թուրքական հակամարտության սրությունը, քանի որ Հայոց ցեղասպանության արդյունքում առաջացած ազգամիջյան փոխհարաբերություններն ու զգացմունքները նմանը չունեն Եվրոպայում, Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներում: Իսկ անձի հասարակական զգացմունքները (մեզ հետաքրքրող դեպքում՝ հայերի հայրենասիրությունը, մայրենի լեզվի նկատմամբ սերը, ակնածանքը հայոց պատմության և մշակույթի առջև, ցասումը ցեղասպանությունն իրականացրած ուժի դեմ) կարիք ունեն հասարակության կամ թեկուզ նրա մի խոշոր խմբի հավանության, համակրանքի ու ապրումակցման (էմպաթիայի), որոնց առկայությամբ միայն այդ զգացմունքները կարող են ամրանալ ու կայունանալ: Սփյուռքահայի օտար շրջապատը, սակայն, չի խրախուսում ու մերժում է բոլոր վերոհիշյալ զգացմունքները, անցանկալի և նույնիսկ վտանգավոր է դիտում դրանց դրսևորումները, ենթարկում է դրանք հետևողական ու կազմակերպված քննադատության, ծաղրանքի, հաճախ՝ թշնամական վերաբերմունքի: Ուստի պատահական չէ, որ շատ սփյուռքահայերի մոտ հայրենասիրական զգացմունքները թույլ են զարգացած, երբեմն էլ իսպառ բացակայում են: Այդ է պատճառը, որ որոշ սփյուռքահայերի հայրենասիրությունը երևութական է, զուրկ է առարկայականությունից, ան-

պատրաստ է անձնական որևէ լուրջ զոհաբերման հանուն հայրենիքի: Այս առթիվ ուշագրավ է սփյուռքը դրական երևույթ գնահատող Լ. Զեքիյանի հետևյալ խոստովանությունը. «Սփյուռքահայության մեծամասնության ինքնության դրսևորումը և անոր հայրենասիրությունը շատ հաճախ խորքային չեն և չեն անցնիր սին հռետորության, պոռոտախոսության և ազգային դատարկ զգացումներու սահմանեն անդին»[105]:

Սփյուռքահայության փոքր մասն է միայն կարողանում իր մեջ պահպանել առարկայական հայրենասիրությունը՝ հայրենիքի և ազգի համար ինքնազոհաբերման ներքին պատրաստվածությունն ու մղումը, որը սովորաբար կախված է, մի կողմից, ընտանիքում անհատի ստացած հայրենասիրական կայուն զգացմունքների քանակից ու որակից, մյուս կողմից՝ նրա երևակայության ներուժի՝ հեռավոր հայրենիքի ցավերով ու հաջողություններով ապրելու ընդունակությունից[106]:

Սփյուռքահայության կիսաուծացածությունը (այդ թվում՝ հայոց լեզվին, ազգային նպատակներին և իդեալներին անհաղորդ լինելը), վատ օրինակ ծառայելուց բացի, իջեցնում է հայության «հայկականության» միջինը բավական ցածր աստիճանի (մանավանդ, երբ նկատում ենք, որ հայաստանաբնակ հայության մի զգալի մասն ինքն էլ է ազգից օտարացած և կիսաուծացած):

Ազգային կյանքում սփյուռքի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների ճշտորոշումն ու հետևողական լուսաբանումն անհրաժեշտ են առաջինների զորացմանը և վերջինների թուլացմանն ուղղված ծրագրեր մշակելու և իրականացնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Սփյուռքագետ Է. Մելքոնյանն առաջարկում է սփյուռքի տեղեկատվական բանկ հիմնել և տեղին նկատում. «Խոսում ենք սփյուռքի ֆինանսատնտեսական, մտավոր ներուժի մասին՝ ընդամենը կցկտուր տեղեկությունների վրա հիմնվելով: Մինչդեռ առաջարկվող տեղեկատվական բանկը պետք է ներառի սփյուռքի մասին ոչ միայն ընդհանուր տեղեկություններ, այլև մանրամասն ներկայացնի տվյալ երկրի, նրա առանձին քաղաքների հայազգի բնակչության քանակական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտամշակութային ողջ բնութագիրը, սփյուռքում առկա կարևոր գործընթացները: Առանց այսպիսի տեղեկատվական հիմքի՝ անհնար է սփյուռքի հետ համագործակցության ճիշտ ծրագրումը» (տե՛ս **Նանե Մանուչյան**, «Հայաստան-սփյուռք հարաբերությունների ամբողջական մոդել. սփյուռքի հետ հարաբերությունների սկզբունքներն ու մեխանիզմները՝ սփյուռքագետ, նախկին փոխարտգործնախարար Էդվարդ Մելքոնյանի տեսակետից». - *Ազգ*, 26 հունիս 1998):

[2] Նշենք մի քանի ամփոփիչ ուսումնասիրություններ՝ **Sarkis Atamian**, *The Armenian Community: The Historical Development of a Social and Ideological Conflict* (New York, 1955). Սառը պատերազմի շնչով գրված այս բավական ուշագրավ ուսումնասիրությունը հաջորդ իսկ տարի թարգմանվել ու հրատարակվել է ռուսերեն՝ **Ñàðêèñ Àòàìÿí**, *Àðìÿíñêàÿ îáùèíà: èñòîðè÷åñêîå ðàçâèòèå ñîöèàëüíîãî è èäåîëîãè÷åñêîãî êîíôëèêòà.* Ðåôåðàò (Ì îñêâà: "Èíîñòðàííàÿ ëèòåðàòóðà", 1956): ***Հայաստանը և սփյուռքը 21-րդ դարի շեմին (գիտաժողովի նյութեր), Երևան 29-30 մայիս 1998*** (Երևան. «ԱյբԳրաֆիկ», 1998): *Ëèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000 ¹ 1-2 (համարում զետեղված ուսումնասիրությունների մեծամասնությունը հայկական սփյուռքի մասին է):

[3] Մասամբ այս կարծիքից, մասամբ էլ օտարամոլությունից է գալիս այն վնասակար և անհարկի պաշտամունքը, որին արժանանում են արտերկրում նշանավոր դիրքի հասած ծագումով հայերը, հաճախ՝ նույնիսկ անկախ Հայաստանի ու հայության շահերին նրանց անտարբեր լինելու փաստից:

[4] *Վենետիկյան միջանվագ*: Աշխատասիրությամբ՝ Ռուզան Զաքարյանի: Երևան. «Ապոլոն», 2000, էջ 107:

[5] *Նույն տեղում:* Տե՛ս նաև “Íà ïðàâàõ ÷óæåñòðàíöà (Ðàçì ûøëåíèÿ ïðîôåññîðà – î ïðîáëåìàõ íàöèîíàëüíîãî ñàìîñîçíàíèÿ, î âçàèìîîòíîøåíèÿõ ðîäèíû è ñïþðêà)”, *Íîâîå âðåìÿ*, 25 ìàÿ 2002 ã. (¹ 842):

[6] *Վենետիկյան միջանվագ*, էջ 94:

[7] **Լեւոն Զեքիեան**. *Ինքնութեան խճանկար:* Աշխատասիրեց Սալբի Գասպարեան: Պէյրութ, 2001, էջ 73-74:

[8] "Í à ïðàâàõ ÷óæåñòðàíöà", *Í îâîå âðåìÿ*, 25 ìàÿ 2002. հմմտ. *Վենետիկյան միջանվագ*, էջ 144:

[9] Մեկ այլ առիթով՝ Զեքիյանը խոսում է հայերի՝ «3000ամյա ժողովուրդ» լինելու մասին, որ անում է արդեն ոչ թե 25, այլ 30-դարյա պատմություն (տե՛ս **Լեւոն Զեքիեան**. *Ինքնութեան խճանկար*, էջ 71):

[10] Ակամայից վերհիշում ես Խորհրդային Հայաստանի երբեմնի վարչապետ (ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ, 1924-28 թթ.) Ա. Կարինյանի 1924 թ. տպագրած հոդվածը, որտեղ մասնավորապես ասված է. «Երկրի մեջ 300 հազար արևմտահայ գաղթականությունն էլ պետք է ցրել լայնածավալ Ռուսաստանի մեջ... Այդ ձևով իր հիմքի մեջ կխեղդվի ամեն մի ազգայնական փորձ և կստեղծվի ավելի ամուր պատվանդան Մերձավոր Արևելքի ժողովուրդների միության համար: Վերջ տալ հայության հավաքման գաղափարին Հայաստանում, մի գաղափար, որ մինչև այժմ էլ ապրում է ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ: ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ա) Հայաստանը հողային ազատ ֆոնդ չի ունեցել, չունի և նախատեսելի ապագայի մեջ չի կարող ունենալ:

բ) Այդ ֆոնդի բացակայությունն է եղել պատճառը, որ զարգանա ազգայնական ռոմանտիկան, և հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին»:

գ) Այդ ֆոնդի բացակայությունն է պատճառը, որ նաև այսօր վառ ու կենդանի է «միացյալ և անկախ Հայաստանի» գաղափարը ժողովրդական զանգվածների մեջ: Սրանից ելնելով պետք է վերջ դնել հայության հավաքման գաղափարին Հայաստանի մեջ». – *Արձագանք Փարիզի* (ազգային քաղաքական շաբաթաթերթ, ապա կիսամսյա թերթ, ապա տասնօրյա, 1916-25), 26 նոյեմբերի 1924 թ.:

[11] Լ. Զեքիյանի այս թեզերի քննադատությունը նախապես հնչեցրել ենք Ուպսալայում կայացած հայկական համաեվրոպական ֆորումին իր իսկ ներկայությամբ, ապա հրապարակել Պրահայում լույս տեսնող *Օրեր* հայկական ամսագրում՝ «Հայաստանը և սփյուռքը հայության զարգացման գործում», [1] 5-6, 2002: Իր արձագանքում, սակայն, Զեքիյանը չի պատասխանել վերն արծարծված կետերից և ոչ մեկին (ինչպես և չի հերքել իր ասածը): Փոխարենը՝ մերկապարանոց մեղադրել է մեզ ինչ-որ «խեղաթյուրումներ» թույլ տալու մեջ՝ չնշելով անգամ, թե որո՞նք են դրանք: Մեր քննադատության հետ որևէ կապ չունեցող երկէջանի այդ գրության մեջ

Զեքիյանն աներևակայելի տվայտանքների է ենթարկում հայոց լեզուն, ավարտելով իր խոսքը ոճամոլության հերթական գոհարով (ընդառաջելով Զեքիյանի նախասիրություններին, անփոփոխ ենք պահում նրա գործածած ուղղագրությունը). «Պիտի խնդրէի, որ նոյնութեամբ պահէիք լեզուական կիրառումներս, ուր մերթ գիտակցաբար կը խառնեմ, թէեւ առ այժմ շատ դեղեւկոտ քայլերով առ ի փորձ, արեւելահայ ձեւեր հիմնականում արեւմտահայ գրութեանս, յոսալով որ մեր Մեծասքանչին բոլորիս հասարակաց հարստութիւնը կազմող զոյգ լեզուաճիւղերուն գանձերն ու փարթամութիւնը կարենան միշտ աւելի համալրուիլ՝ փոխադարձ նորանոր ճոխացումներով» («Պատասխան խոսքի իրավունքով». – *Օրեր*, ¹ 9-10, 2002, էջ 35-36):

[12] “Õîòèì òàêîãî ïðåçèäåíòà”, *Ãîëîñ Àðìåíèè*, 11 èþíÿ 2002, ¹ 61 (18858).

[13] Ղեկավարի համար երկիրն ու ժողովուրդը ճանաչելու անհրաժեշտությունը հայերը գիտակցում էին դեռևս 5-րդ դարում. ինչպես գրում էր Ղազար Փարպեցին՝ «օտար մարզպանն որ երթայ յաշխարհն Հայոց՝ աշխարհն մեծ է, յամս երկուս և երիս հազիվ կարէ ճանաչել նախ զիրս աշխարհին, զդիւրն և զդժուարն, ապա զմարդիկ աշխարհին» (**Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան*: Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 430):

[14] Ռ. Սյունին ուղղակի հեգնում է. «Բացի Խորհրդային Հայաստանից չկա այլ Հայաստան, ու նաև չկա մի այլ հայ ազգ, բացի նրանից, որ երազում է Արարատի ստորոտում» ("There is no Armenia, but Soviet Armenia, and there is no Armenian nation but the one which dreams at the base of Ararat"). - **Ronald G. Suny**, *Armenia in the Twentieth Century* (Chico: CA: Scholars Press, 1983), p. 83. Ավելի մեղմ է արտահայտվում Ռազմիկ Փանոսյանը. «Ես ելնում եմ նրանից, որ գոյություն ունի երկու հայկական ընդհանրություն՝ պատմական հայրենիքը և սփյուռքը: Ձևականորեն մեկ ազգի մեջ միավորված լինելով, նրանք, այնուհանդերձ, արմատապես տարբերվում են միմյանցից իրենց հանրային ինքնության և քաղաքական կողմնորոշումների մեջ». - **Ðàñìèêè Ïàíîñÿí**, "Íåïðîñòîå ïðîøëîå, òðóäíîå íàñòîÿùåå, òóìàííîå áóäóùåå (îòíîøåíèÿ Àðìåíèè è äèàñïîðû â 1988-1999 ãã.)", *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2, ñ. 30.

[15] **Ýäóàðä Ìåëêîíÿí**, "Äèàñïîðà â ñèñòåìà ýòíè÷åñêèõ ìàíüøèíñòâ (íà ïðèìåðå àðìÿíêîãî ðàññåÿíèÿ)", *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2, ñ. 20, 28 (ïðè. 16).

[16] Համեմատության համար նշենք, որ 1908-12 թթ. Նյու Յորքի հայերի ա-

մուսնությունների ընդհանուր թվի մեջ խառնամուսնությունները կազմում էին ընդամենը 9,6 տոկոս, իսկ 1950-1969 թթ. Բեյրութի հայերի միջավայրում՝ 6,75 տոկոս (**Ý. Ë. Ì åëêîíÿí**, “Àðìÿíñêàÿ ñåìüÿ â óñëîâèÿõ äèàñïîðû”, *Ñîâåòñêàÿ ýòíîãðàôèÿ,* ¹ 6, 1988, ñ. 100, 103):

[17] Լիբանանահայ դպրոցի աննախադեպ տագնապի մասին տե՛ս **Պարույր Աղպաչյան**, «Զսպե՛լ այլասիրության հայանուն հետևորդները». – *Զարթօնք* (Բեյրութ), 30.07.2002, **Ժիրայր Դանիելյան**, «Անտարբերության զոհ հայ դպրոցը». – *Զարթօնք*, 24.08.2002, 07.09.2002, «Կրթական թղթածրար». – *Զարթօնք*, 18.09.2002 (այս նյութերն ամփոփվել են Ժիրայր Դանիելյանի հետևյալ մենագրության մեջ՝ *Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ*. Պէյրութ, 2002): **Շահանդուխտ**, «Լիբանանահայեր, արթնացե՛ք». – *Ազդակ* (Բեյրութ), 22.06.2002: **Հ. Բագրատունի**, «Ու՞ր է հայ դպրոցի հանդեպ երախտագիտությունը». – *Ազդակ* (Բեյրութ), 23.09.2002, «Ո՞րն է առաջնայինը, դպրոցը, թե ակումբը». – *Արծիւ*, 03.10.2002): *Հայ դպրոցը տունն է հայուն. հայութիւնը կյաւերժանայ հայ դպրոցով* (Պեյրութ, 2002):

[18] **Բաֆֆի Տեմիրճյան**, «Կրթական մարզին տագնապը». – *Ազդակ*, 18.02.2002:

[19] Հայաստանի կրթության և գիտության նախարարության Սփյուռքի բաժանմունքի տրամադրած այս տվյալներով սփյուռքում գործում են 366 հայկական դպրոցներ ուր հաճախում է 65.172 աշակերտ, այդ թվում՝ Վրաստանում՝ 156 դպրոց (23.872 աշակերտ), Աբխազիայում՝ 41 դպրոց (4.579 աշակերտ), Իրանում՝ 23 դպրոց (9.042 աշակերտ), Լիբանանում՝ 25 դպրոց (6.135 աշակերտ), Սիրիայում՝ 25 (3.066 աշակերտ). – «Սփյուռքի հայկական դպրոցներ կհաճախեն աշակերտներուն մեկ երրորդը». – *Ազդակ* (Բեյրութ), 30 սեպտեմբերի 2002: Սակայն այս թվերի հիման վրա ՀՀ կրթության նախարարության արած եզրակացությունը՝ թե արտերկրի հայկական դպրոցներ են հաճախում այդտեղ բնակվող աշակերտների մեկ երրորդը, ակնհայտորեն բազմապատիկ չափազանցված է:

Այլ տվյալների համաձայն՝ 2001-02 թթ. ուսումնական տարում Լիբանանում հայկական դպրոց է հաճախել 8.348 աշակերտ (1974-75 թթ. Լիբանանում եղել է մոտ 21.000 հայ աշակերտ): **Ժիրայր Դանիելյան**, «Անտարբերության զոհ հայ դպրոցը». – *Զարթօնք*, 07.09.2002: Մեկ այլ հաղորդման համաձայն՝ Ստամբուլում հայկական դպրոց է հաճախում 3.530, իսկ Հալեպում 11.000 աշակերտ (**Սալբի Գասպարյան**, «Իստանպուլահայ համայնքի կրթական համակարգը». – *Զարթօնք*, 18.08.2002): 1993 թ. լույս տեսած մի ուսումնասիրություն ևս նշում էր, որ ԱՄՆ-ում ամենօրյա հայկական դպրոցներն ունեն ընդամենը 5000 աշակերտ, իսկ հայ աշակերտնե-

րի ճնշող մեծամասնությունը հաճախում էր պետական դպրոցներ (**Anny Bakalian**, *Armenian-Americans: From being to feeling Armenian.* New Brunswick, NJ: Transaction Publishers, 1993, p. 280):

[20] 1960-70–ական թթ. ամերիկահայ համայնքում հայոց լեզվի կարևորության և պահպանության շուրջը ծավալված բանավեճի մասին տե՛ս **Anny Bakalian**, *Armenian-Americans: From being to feeling Armenian*, pp. 251-290.

[21] Տե՛ս **Արմեն Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն* (Երևան. «Արտադերս», 1998): «Ավարայրի անանցանելի խորհուրդը (հարցազրույց պատմաբան-քաղաքագետ Ա. Այվազյանի հետ)», *Երկիր* (օրաթերթ) մայիսի 30, 2001թ. (¹ 97): **Արմեն Պետրոսյան**, «Ջեյմս Ռասելի «Հայագիտական» հնարանքները». – *Պատմա-բանասիրական հանդես*, 2000, ¹ 3: **Հակոբ Զաքրյան**, «Միչիգանի գիտաժողովում կասկածի տակ է դրվել Հայոց ցեղասպանությունը (Սփյուռքահայ որոշ գիտնականներ նպաստել են դրան)». – *Ազգ*, 6 ապրիլի 2002, ¹ 064:

[22] **Ronald Grigor Suny**, *Looking toward Ararat: Armenia in Modern History* (Bloomington: Indiana University Press, 1993), pp. 4-5.

[23] [Every assumption, every shibboleth, every sacred cow must be scrutinized, tested, argued, debated and challenged]. – **Ambassador Jivan Tabibian**, "The Risk of Democratization: Reforming Diaspora institutions will require freeing them from each other's clutches, and insuring their autonomy," *Armenian International Magazine*, August-September 1999 (Vol. 10, ¹ 8&9), p. 33.

[24] Արևմուտքում՝ հասարակագիտական բնագավառում հայության դեմ քարոզչությունն սկսվել և ընթանում է վաղուց ի վեր: Գարեգին Նժդեհն այս մասին գրում է. «Քեմալական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, թուրքերը՝ բարբարոս, բայց արթուն քաղաքական բնազդով օժտված մի ազգ, փորձեցին մեզ ոչնչացնել նաև բարոյապես: Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանությունն արդարացնելու կամ, ծայրահեղ դեպքում, հասկանալի դարձնելու նպատակով, թուրքերը մի շարք եվրոպական ծախու գրչակների ու հասարակական գործիչների աջակցությամբ, հակահայկական քարոզչության արշավ սկսեցին: Հայկական սպանդին հետևեց բարոյական եղեռնը՝ հայերի վարկաբեկումը: Ամերիկյան ու եվրոպական ամբիոններից ոչ թուրքերը հաճախակի հայտարարում էին. «Իրենց անարդ բնավորության պատճառով հայերը դարձան թուրքերի նողկանքի, այլ ո՛չ թշնամության զոհերը»: Այսպիսով մեղադրվում և վարկաբեկվում էին միլիոնավոր զոհերը, իսկ արդարացվում՝ մարդասպանները:

Հակահայկական քարոզչությունը պնդում էր, որ մեղավոր են սպանվածները, և ոչ՝ մարդասպանները՝ հայերին վերագրելով գոյություն չունեցող արատներ. ա) քոչվորականություն, իբր հայերն իրենց հողը չեն սիրում, բ) անամոթ դիշատչի վերաբերմունք իրենց «զոհերի» նկատմամբ՝ տնտեսական բնագավառում, գ) բարոյականության բնածին պակաս, որի հետևանքով և հակահասարակական կեցվածք և այլն:

Ահա՛ թե ինչպես էին թուրքերը հայերին ներկայացնում ամերիկյան և եվրոպական ժողովուրդներին: Այդ հակահայկական քարոզչությունը վարում էին թուրքական դեսպանություններն ու հյուպատոսություններն՝ իրենց ռազմական, առևտրական ու մամուլի կցորդների հետ: Դրանում ակտիվ դեր էր խաղում և արտասահմանի թուրք ուսանողությունը: Հակահայկական քարոզչությամբ հատկապես աչքի էին ընկնում գրող Խալիդե Հանըմը, Վեհիբ փաշան և ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյը (*ի դեպ, այսօր էլ թուրք դեսպաններն ԱՄՆ-ում և այլուր նույն գործն են անում՝ Ա.Ա.*): Բնականաբար, թուրքական ծավալուն քարոզչությունը որոշ երկրներում պետք է խթաներ հակահայկականությունը... Նման իրավիճակում, երբ հայկական կուսակցություններն ու կրոնական հատվածները, փոխանակ հակազդելու թուրքական քարոզչությանը, ելել էին իրար դեմ, մեր վերաստեղծված Ցեղակրոն Ուխտերը ձեռնամուխ եղան հակաթուրքական քարոզչությանը՝ ի պաշտպանություն իրենց անարգվող Ցեղի». – **Գուրեղին Նժդեհ**, *Հատընտիր*: Երևան, «Հայաստան», 2001, էջ 314-315:

[25] Ի դեպ, պարզվում է, որ Արևմուտքում օրինականացված այլանդակ երևույթները կազմակերպված կերպով Հայաստան են ներմուծվում Թուրքիայից: Այսպես՝ Հայաստանի լեզբուհիների և երկսեռ կյանքով ապրող (կամ այդպես ապրել ցանկացող) մի քանի տասնյակ կանանց ֆինանսապես խրախուսում են Թուրքիայից (**Àííà Ñàðãñÿí**, "Òàòà, Òèíà, Ì ýò è äóõãèå", *Íîâîå âðåìÿ,* 3 àâãóñòà 2002):

[26] Մեր ձեռքի տակ է այդ հոդվածի վերջերս կատարված ռուսերեն թարգմանությունը՝ **Äæîí Õàãîïÿí**, "Íó, ìîé îòåö áûë àðìÿíèíîì, äà..." *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2, ñ. 216-225 (*Ararat*, N.Y., 1961, Vol. 2, ¹ 3, pp. 30-33).

[27] **Äæîí Õàãîïÿí**, "Íó, ìîé îòåö áûë àðìÿíèíîì, äà...", ñ. 218.

[28] Նույն տեղում, էջ 220-221:

[29] Նույն տեղում, էջ 217:

[30] Նույն տեղում, էջ 224-225:

[31] Նույն տեղում, էջ 221-222:

[32] Նույն տեղում, էջ 222:

[33] Նույն տեղում, էջ 223:

[34] Ամերիկահայության միջավայրում ուծացումը թափ էր առել շատ ավելի վաղ՝ տակավին 1920-ական թվականներին, երբ, ինչպես զայրույթով գրում էր մի հեղինակ, որոշ ընտանիքներում զավակն իր ծնողին անվանում էր You dirty Armenian (դու՛, կեղտոտ հայ). - տե՛ս **Կ. Դալլաքյան**, *Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ)*, Երևան. ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 419:

[35] **Mathews, Thomas F. and Roger S. Wieck**, eds., *Treasures in Heaven: Armenian Illuminated Manuscripts* (The Pierpont Morgan Library, New York: Prinston University Press, 1994), p. XV. Այս և նմանատիպ գնահատականների գիտականորեն անհիմն ու քաղաքականապես միտումնավոր լինելու մասին մանրամասն տե՛ս **Ա. Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 213-222:

[36] Ժ. Լիպարիտյանն այսօր էլ հանդես է գալիս ազգային ուղղվածություն ունեցող քաղաքականության և գաղափարախոսության դեմ: Այդ է վկայում նաև նրա *Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր* (Երևան. «Նաիրի», 1999) գիրքը (տե՛ս, հատկապես, էջ 107-114), որի հանդամանալից քննադատությունը տե՛ս **Äàãèê Òåð-Àðóòþíÿí**, Âûçîâ ìåëêîãî ÷èíîâíèêà, èëè íîâîå íàïðàâëåíèå ïîëèòèê÷åñêîé íàóêè – "íîðìàëèçì", *Ãîëîñ Àðìåíèè*, 3 Îêòÿáðÿ 2000, ¹ 110 (18615).

[37] **Äæîí Õàãîïÿí**, "Íó, ìîé îòåö áûë àðìÿíèíîì, äà...", ñ. 225.

[38] **Լիպարիտյան**. *Պետականության մարտահրավերը*, էջ 109:

[39] "Should it ever come to pass that peace reigns in the region and borders become more open, then Armenians might take up once more their historic role as middlemen and merchants and emerge as the harbingers of a cosmopolitan and enlightened age;" **Ronald Grigor Suny**, "Being Armenian in Georgia," *groong@ usc.edu*, February 13, 2000. Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս *«Դեմոկրատիա միություն»* ամսաթերթ (Կուսակցություններին աջակցության կենտրոն, Երևան), ¹ 4-5, 6, 2000: Նույն տեղում Ս. Շահինյանն այսպես է մեկնաբանում Սյունիի գործունեությունը. «Ռեալ ահաբեկչության կողքին զգացվում է *տեղեկատվական ահաբեկչության* չունչը: Այս նոր դրսևորումներից զերծ չեն մնացել նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները, որոնք անընդհատ մեր հայտնի հարևանների և նրանց աջակիցների կողմից մուշտակավորվում են գռեհիկից մինչև նուրբ, շղարշված, ապակողմնորոշող կեղծ, զանգվածացող տեղեկատվու-

թյամբ: Ղարաբաղյան հակամարտությամբ մտահոգված՝ հաճախ առաջարկվում է առաջ նայել՝ մոռանալով սեփական պատմությունը՝ իհարկե զուգահեռաբար չմոռանալով նենգափոխել այն: Նման հակագիտական գործունեությամբ հայտնիներից է բեմ բերված «հայագետ» Ռոնալդ Սյունին... Ընդհանուր գիտական մեթոդոլոգիայից դուրս, *կառավարվող պատմություն* կառուցելու ճանապարհին, ստեղծելով իր խաղի կանոնները, զգուշորեն վարագուրելով դրանք, նա ստանում է իրեն պատվիրված և արագորեն շրջանառության մեջ մտցվող արդյունքը»:

[40] **Äæîí Õàãîïÿí**, "Íó, ìîé îòåö áûë àðìÿíèíîì, äà...", ñ. 219.

[41] **Ronald Grigor Suny**, *Looking toward Ararat*, *op. cit.,* p. 55. Ռ. Սյունիի արտադրանքի մանրամասն քննադատությունը տե՛ս **Ա. Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 19-114:

[42] “Yet nationalists persistently draw harder and clearer boundaries between their own people and those living closest to them (who share much of each other's culture), to obscure distinctions within their own nation and to exaggerate differences with their neighbors. For example, Patrick Donabedian, a French diplomat in Erevan, quotes the Greek geographer Strabo, who attests that by the second century BC the entire population of Greater Armenia (including today's Karabakh) spoke Armenian, implying that today's Armenians are the direct descendants of those speakers” (**David D. Laitin and Ronald Grigor Suny**, “Armenia and Azerbaijan: Thinking a Way Out of Karabakh,” *Middle East Policy*, Vol. VII, October 1999, ¹ 1).

[43] **À. À. Íàë÷àäæÿí**, *Ýòíè÷åñêàÿ ôàðàêòåðîëîãèÿ* (Åðåâàí, “Îãåáàí”, 2001), ñ. 410-416:

[44] Տե՛ս **Ronald Grigor Suny**, “Constructing Primordialism: Old Histories for New Nations,” *The Journal of Modern History,* ¹ 73 (December 2001), pp. 862-864: Հայաստանում Սյունիի նկատմամբ ձևավորված միանշանակ և միահամուռ բացասական վերաբերմունքը վերջերս հարկ համարեց սուր կերպով արտահայտել նաև Հայաստանի լավագույն քաղաքական մեկնաբաններից մեկը՝ զետեղելով Սյունիի լուսանկարները (մորուքով և առանց մորուքի) և Հայաստանի սահմանապահներին կեսլուրջ-կեսկատակ կոչ անելով զգոն լինել ու թույլ չտալ այդ «գործակալի» մուտքը Հայաստան՝ տե՛ս **Ãàãèê Òåð-Àðóòþíÿíö**, “Àãåíóòà ñïåöèàëüíîãî íàçíà÷åíèÿ”, *Ãîëîñ Àðìåíèè*, 18 ìàÿ 2002 (¹ 51/18848).

[45] **Ambassador Jivan Tabibian**, “The Risk of Democratization,” *op. cit.*, pp. 28-33.

[46] Նույն տեղում, էջ 31:

[47] **Ա. Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 111, 205: Լ. Ավդոյանի հայհոյաբանության վերաճող մեղադրանքները տպագրել է *Հայկազյան հայագիտական հանդեսը*, (Բեյրութ), 2000, հ. 20, էջ 480-482: Լ. Ավդոյանի քննադատությունը տե՛ս **Асмик Гулакян**, “Перлы скверны. Открытое письмо редколлегии "Армеведческого журнала АЙКАЗЯН" по поводу выхода в свет 20-го тома”, *Голос Армении*, 6 ñåíòÿáðÿ 2001.

[48] Դրանց թվին պետք է դասել Լևոն Չորբաջյանի խմբագրությամբ լույս տեսած հետևյալ երկու արժեքավոր գիրքը՝ **Levon Chorbajian, Patric Donabedian & Claude Mutafian**, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh* (London & New Jersey: Zed Books, 1994); **Levon Chorbajian**, ed., *Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh, op. cit.*:

[49] Նույն տեղում, էջ 31:

[50] Ահա Թաբիբյանի մտքի այս «գոհարի» անգլերեն բնագիրը. “In the Diaspora, one must be very careful about what is “foreign” – *odar*. Only in Armenia do those terms have meaning, fully and juridically. Everywhere else, that false characterization can only marginalize the youth and exacerbate a process of alienation” (նույն տեղում, էջ 31).

[51] Այս համատեքստում ուշագրավ է նաև այն, որ 2002թ. մայիսին Երևանում կայացած Հայաստան-սփյուռք 2-րդ վեհաժողովի ժամանակ պրն Ջիվան Թաբիբյանը կտրուկ դեմ էր արտահայտվել համասփյուռքյան կառույց ստեղծելու առաջարկներին (տե՛ս **Ëåâîí Ìèêàåëÿí**, “Ëèìèò áåçäåéñòâèÿ èñ÷åðïàí: óðîêè ìàÿ”, *Ãîëîñ Àðìåíèè*, 30 ìàÿ 2002).

[52] ԱՄՆ-ում, օրինակ, պարսկական սփյուռքի հետ ԿՀՎ-ի տարած աշխատանքների մասին տե՛ս **Greg Miller**, "CIA Looks to Los Angeles for Would-Be Iranian Spies [ԿՀՎ-ն փորձում է իրանցի լտեսներ հավաքագրել Լոս Անջելեսում]," *Los Angeles Times*, January 15, 2002.

[53] Տե՛ս տողերիս հեղինակի հետ հետևյալ հարցազրույցները՝ «Նախարարն ապակողմնորոշում է. Սենատի որոշումը առավել քան մտահոգիչ է». – *Հայոց աշխարհ*, 30 հոկտեմբերի 2001 ([1]198), «Պետդեպարտամենտի՞, թե՞

Հայկական համագումար». – *Հայոց աշխարհ*, 31 հոկտեմբերի 2001 (¹199), «ԱՄՆ հայկական լոբբին այդչափ հզոր ուժ չէ. Պետք չէ ոգևորվել սուտ խոստումներից». – *Հայոց աշխարհ*, 21 նոյեմբերի 2001 (¹214). Հմմտ. **Raffi Hamparian**, "No Assembly Required," *Asbarez Online*, Jan. 25, 2002.

[54] **Գարեգին Նժդեհ**. *Դաշնակցության առաջացման պատմական պայմանները և նրա բնութագիրը*. - հրապարակված է հետևյալ գրքույկում՝ *Նշխարներ. Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազնունի* (Երևան. «Ազգայնական ակումբ», 2002), էջ 19. նույն տեղում տե՛ս նաև թուրքական քարոզչության մասին՝ էջ 33:

[55] *Armenian Review*, Spring-Summer 2001, Vol. 47, ¹ 1-2, p. 4; "Armenian Review Resumes Publication," *Asbarez Online*, January 11, 2002. ՀՀԴ ղեկավարության այս քայլը քննադատվել է հայաստանյան մամուլում՝ տե՛ս - **Ãàãêê Òåð-Àðóòþíÿíö**, Àãåíòóðà ñïåöèàëüíîãî íàçíà÷åíèÿ", *Ãîëîñ Àðìåíèè*, 18 ìàÿ 2002.

[56] "In 1894 clashes between Kurds and Armenians in Sassun led to the intervention of state troops and the killing of hundreds of Armenians. This violence would later be read by Armenians as the first stage of a series of massacres that would culminate in the genocide of 1915. But the massacres in eastern Anatolia can be seen as part of an effort by the Sultan Abdul Hamid II to restore an old equilibrium in interethnic relations" (**Ronald Suny**, "Nation-making, Nation-breaking: The End of the Ottoman Empire and the Armenian Community," the Paper prepared for presentation at the colloquium on *The Historian, Nationalism, and the End of Empire*, at Prinston University, May 3, 1996, p. 16).

[57] ["Rather than a long-planned and carefully orchestrated program of extermination, the Armenian Genocide was more a vengeful and panicky act of suppression"]. Սյունիի այս դրույթների մանրամասն քննադատությունը տե՛ս **Ա. Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 88-89:

[58] Ներկայացնենք, ըստ ժամանակագրական հաջորդականության, դաշնակցական մամուլում հայտնված հակասյունիական հրապարակումները՝ **Արիս Ղազինյան**, «Հայաստանը «գիտական» ահաբեկչության թիրախ». – *Երկիր*, 12 հոկտեմբեր 1999, ¹ 178 (1204). **Նույնի՝** «Մազոխիզմ». – *Երկիր*, 15 հոկտեմբեր 1999, ¹ 181 (1207), **Լևոն Մարաշլյան**, «Փրոֆ. Սյունիի քարոզած քաղաքականությունը կանտեսե Հայաստանի ապահովությունն ու Անդրկովկասի կայունությունը». – *Ասպարէզ*, 18 սեպտեմբեր, 1999.

Vartkes S. Dolabjian, "Would the real Ronald G. Suny please stand up?" *Horizon*, October 25, 1999. **Շաքէ Տեր-Մելքոնյան-Մինասյան**, «Պատմագետ-քաղաքագետ Արմեն Այվազյանի սահմռկեցուցիչ ամբաստանագիրը՝ Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ». – *Հորիզոն* (Մոնրեալ), 10 դեկտեմբերի 2002: **Ս. Գրիգորյան**, «Կեղծ գիտականությունը որպես հակազգային ծրագիր» և «Նրանք ջուր են լցնում Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունների ջրաղացին (ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի որոշումը ամերիկյան հայագիտության հիմնական միտումների մասին)». - *Երկիր*, 25 դեկտեմբեր 2001, ¹ 230 (1650): Դաշնակցականամետ մամուլից նշենք հետևյալ հրապարակումը՝ **Գևորգ Խուդինյան**, «Ճակատամարտ՝ Հայոց պատմության և մշակույթի համար». – *Հայոց աշխարհ*, 20 դեկտեմբերի 2002, ¹ 235 (1088).

[59] **Արմեն Պետրոսյան**. «Ջ. Ռասելի «հայագիտական» հնարանքները». – *Պատմա-բանասիրական հանդես*, 2000թ., ¹ 3, էջ 241-257: 2002 թ. հուլիսին Ջ. Ռասելի հայաստանյան ելույթների մասին տե՛ս **Համիկ Գուլակյան**, «Ջեյմս Ռասել. «Մխիթարվում, սփոփվում եմ այն մտքով, որ իրապես ուշադրություն եմ դրավում». – *Վասն հայության*, ¹ 28 (46), 07.08.2002. «Ջեյմս Ռասելն արևմտյան գիտնականների առջև փակում է հայագիտության դուռը». – *Վասն հայության*, ¹ 29 (47), 14.08.2002: **Àííà Ñàòÿí**, "Äæåéìñ Ðàññåë: 'Íåò, ÿ íå àðìÿíîçàùèòíèê. Ïðîñòî ÿ ñëèøêîì ëþáëþ ñâîþ ïðîôåññèþ...'", *Íîâîå âðåìÿ*, 24 èþëÿ 2002ã.; **Àñìèê Áóëàêÿí**, "Àðìåí Ïåòðîñÿí: 'Äæåéìñ Ðàññåë ïåðåêðûâàåò ïóòü â àðìåíîâåäåíèå çàïàäíû ó÷åíûì'", *Ãîëîñ Àðìåíèè*, 15 àâãóñòà 2002ã..

[60] Այս մասին տե՛ս **Levon Marashlian**, "Armenian-Turkish Dialogue and Unfounded Accusations," *Armenian Weekly* (Boston), August 19, 2000; **Àðèñ Êàçèíÿí**, "Ñåðüåçíàÿ ïðîáëåìà "äâîêàòîâ íàöèè", *Ãîëîñ Àðìåíèè*, 9 ôåâðàëÿ 2002 ã.

[61] Անցյալում ՀՅԴ-ի վարած քաղաքականության հաճախ անսկզբունքային ու անհետևողական լինելն ամենախիստ կերպով քննադատել է նաև Զորավար Անդրանիկը (տե՛ս *Զորավար Անդրանիկ կը խօսի*: Խմբագրեց և ծանոթագրեց Դոկտ. Վաչէ Ղազարեան: Պոսթոն, 1994): Վերջերս հրապարակված մի աշխատության մեջ նկատված է նաև մեր օրերի անցուդարձը. «...մտե՛ք այն նախարարությունները, որոնք երբևէ տրվել են Դաշնակցությանը և կտեսնեք, որ միջազգային կազմակերպությունների փորձագետներն են այնտեղ քաղաքականություն թելադրում, և ազգային ներուժը խոնարհված է ձեռքերին վարկեր ու ծրագրեր բռնած գաղութարարների առջև» (**Լևոն**

Դոնոյան. *Երրորդ հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը*, էջ 213):

[62] Հայկական ժողովրդային շարժումը հիմնվել է 1980 թ., այն, փաստորեն, կիսում և ներկայացնում է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) դիրքորոշումներն ու գաղափարախոսությունը քաղաքական ասպարեզում (տե՛ս, օրինակ, *Armenian Consciousness*. An information booklet prepared by the Armenian Popular Movement, 2001; *Àðìÿíñêîå íàðîäíîå äâèæåíèå*. 2000, ***Սփյուռքահայ կազմակերպություններ***: Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ 110-112):

[63] **David King & Miles Pomper**, "Congress, Armenia and the Contingent Influence of Diaspora Lobbies," *Congressional Quarterly*, 2002, ¹ 2.

[64] **Levon Chorbajian**, ed., *Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh*, pp. 21-22.

[65] *Ibid*., p. 22.

[66] **Alec Rasizade**, "Azerbaijan in the Morning after Independence: Less Oil, More Graft," *Caucasus and Central Asia Newsletter*, Issue 2, Summer 2002, pp. 19-20. Տե՛ս նաև նույնի՝ "Azerbaijan Descending into the Third World After a Decade of Independence," *Comparative Studies of South Asia, Africa and the Middle East* Vol. XXII No. 1&2 (2002).

[67] ԱՄՆ-ում գործող էթնիկ լոբբինգները թվելիս չպետք է մոռանալ կուբացի վտարանդիներին և նրանց կազմակերպված ակտիվությունը, որը հաճախ համարում են ամերիկյան ամենաազդեցիկ ներքին լոբբինգը (տե՛ս **Nicholas G. Karambelas**, "Foreign Influencies and U.S. Policy," *Defensor Pacis*, ¹ 6, September 2000, p. 14:

[68] **Ռուբեն Շուգարյան**, «Հայկական լոբբինգն արտերկրում». – *Դասախոսություն Հայաստանի Ամերիկյան համալսարանում*, 25 մայիսի 2000 թ., http://www.aua.am/EXTENS/lectures/37_a.htm:

[69] Պատկերացում կազմելու համար Թուրքիայի լոբբիստական ակտիվության մասին, նշենք, որ 1994-96 թթ. Թուրքիան տարեկան ծախսում էր 3.4-ից մինչև 4 միլիոն դոլար, իսկ 1997-98 թթ.՝ 4.600.807 դոլար: Պետք է նկատել, սակայն, որ սա հայտարարագրված գումարն է, իրականում ծախսերը շատ ավելին են եղել: Թուրքիայի լոբբիստական գործունեությունը մանրամասն ներկայացված է հետևյալ ուսումնասիրության մեջ՝ **Nicholas G. Karambelas**, "Foreign Influencies and U.S. Policy," pp. 11-24:

[70] Կարևոր են, մասնավորապես, ՀՀԴ-ի ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի՝ ա-

մերիկահայերին պարբերաբար մատուցվող Գործողությունների լոբբիստական ծրագրերը (ANCA Action Alert: Advance the Armenian Cause): Այսպես՝ 2001 թ. հունիսի 22-ի շրջաբերական-ծրագիրը նախատեսում էր երեք հիմնական կետ, որոնց պաշտպանությամբ պետք է հանդես գան ամերիկահայերը՝ Հայաստանի և Ղարաբաղի զարգացմանն ԱՄՆ-ի տրամադրած օգնության ավելացում, 907 կետի պահպանում և թուրք-ադրբեջանական շրջափակումների վերացում: Նույն հանձնախմբի 2002 թ. հունվարի 16-ի «Գործողությունների ծրագրի» 7 կետերից չորսը վերաբերում էին ցեղասպանության ճանաչման խնդիրներին, մեկը՝ Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին ցույց տրվելիք աջակցությանը, մեկը՝ Թուրքիային ամերիկյան ռազմական ուղղաթիռների վաճառքն արգելելուն, մեկն էլ՝ Թուրքիայում ասորի մի քահանայի ձերբակալությանը:

[71] Այս մասին խոսել ենք մի քանի առիթով, տե՛ս **Ա. Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 97-102. «Նախարարն ապակողմնորոշում է. Սենատի որոշումը առավել քան մտահոգիչ է». – *Հայոց աշխարհ*, 30 հոկտեմբերի 2001 (¹ 198): «ԱՄՆ հայկական լոբբին այդչափ հզոր ուժ չէ». – *Հայոց աշխարհ*, 21 նոյեմբերի 2001 (¹ 214):

[72] **Գոռ Աբրահամյան**. «Հայկական լոբբին ԱՄՆ-ում և Եվրոպայում». – *Ազգ*, 4 հունիսի 2002 (¹ 102):

[73] Հայաստանում հայկական պետականության կործանումից ի վեր այս ճշմարտությունը գիտակցվել է միշտ: Ճիշտ նույն հղացքով XVII-XVIII դարերում շրջանառության մեջ էր մի առանձին աղոթք. «*Մանավանդ ազգըս հայկազյան՝ մեղքերի պատճառով անարժան դարձած և օտարացած, մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ: Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի. և հոգու գրգանքով՝ իբրև թռչունը, որ ձագերին իր թևերի տակ է ժողովում, իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, ընիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով: Ուժ տա, կազդուրի և հաստատահիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն տեսակ բարիքներով: Հաղթող և զորավոր դարձնի ճշմարտության բոլոր թշնամիների դեմ*» (մանրամասն քննությունը տե՛ս **Արմեն Այվազյան**, *Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում:* Երևան. «Լուսակն», 2003, էջ 136-139):

[74] Իրականում՝ հայերի մեջ օտար զավթիչների դեմ ուղղված վրեժի զգացումն առաջացել է պետականության կորստից անմիջապես հետո: Հիշատա-

կենք ընդամենը մեկ օրինակ: 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման կենտրոնական գործիչ Հովսեփ Էմինը պատմում է, որ իր պապը, որն իրանական բանակում ուներ հազարապետի պաշտոն, մահանալուց առաջ իր ավագ որդուն դիմում է այսպիսի խոսքերով. «Սա է իմ սիրեցյալ զավակը, նրան է ժպտալու նախախնամությունը, նրա արու որդին, որին մկրտելու են իմ անունով՝ Էմին, Աստծո օգնությամբ բարձրացնելու է պաշտպանության սուրը, լուծելու համար վրեժը իր հայրենիքի դատի ու իր նախահայրերի արյան, որ թափվեց հանուն ճշմարտության ու քրիստոնեության ամենասրբազան ուղիի մեջ: Երբեք չհուսահատվեք, իսլամը պարտվելու է և ճնշվելու մեր տակ...» [This is my beloved boy, whom Providence will favour; his male child shall be baptised Emin, after my name, who, by God's assistance, will lift up the sword of defense to revenge the cause of his country and the blood of his ancestors, that was hed for the truth, and in the most sacred path of Christianity. Never despair, Mahometanism shall fail, and will be subdued under us...]. – *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself.* 2nd ed. (first published in London in 1792) Calcutta: Baptist Mission Press, 1918, p. 4: Վրեժի թեման մշտապես արծարծվում է նաև ժողովրդական ամենալայն տարածում ունեցած միջնադարյան «հայ ազատագրական լեգենդում» (տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*. Հ. Ա, Երևան, 1957):

[75] Վրեժի ցանկությունն ուսումնասիրած Նիկո Ֆրիջդան այս առթիվ նկատում է. «Վրեժխնդրության ֆանտազիաներն, անշուշտ, թվով մեծապես գերազանցում են վրեժխնդրության իրական գործողությունները». – տե՛ս **Nico H. Frijda**, "The Lex Talionis: On Vengeance," in Stephanie H. M. van Goozen et. al., eds., *Emotions: Essays on Emotion Theory* (Hillsdale, NJ: Erlbaum, 1994), p. 264. Ամերիկացի հեղինակն իրավացիորեն որպես վրեժխնդրություն է բնութագրում նաև 1970-80-ական թթ. թուրք դիվանագետներին ահաբեկելու հայոց գործողությունները (նույն տեղում, էջ 268): Հոգեբանության տեսանկյունից վրեժի այլ ուսումնասիրություններ գրեթե չկան (տե՛ս նույն տեղում, էջ 264-265. հմմտ. **Randy J. Larsen**, "A Report on the Decade of Emotion," *Contemporary Psychology*, 1995, Vol. 40, ¹ 11, pp. 1054-55:

[76] Տե՛ս **Vahakn N. Dadrian**, "A Review of the Main Features of the Genocide," *Journal of Political and Military Sociology,* Vol. 22, ¹ 1, Summer 1994, p. 15:

[77] Տե՛ս նաև **Ա. Այվազյան**, *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը*, էջ 29-30:

[78] Թերևս, այդ են վկայում նաև Էրզրումում ու Վանում կառուցված «Հայերի գազանությունները» պատկերող թանգարանները (թեև այդ թանգարանների նպատակը, նախ և առաջ, հակահայկական քարոզչությունն է):

[79] **Nico H. Frijda**, "The Lex Talionis: On Vengeance," p. 282-283.

[80] Ընդ որում՝ հայ անհատի մեջ թուրքական պետության նկատմամբ բացասական տրամադրվածությունն արտացոլում է ոչ միայն անցյալ, այլև վերջին տասնամյակի հայ-թուրքական թշնամական փոխհարաբերությունները:

[81] Առաջամասի պայքարն էլ է որոշ չափով ընդգրկում զանգվածներին՝ շնորհիվ այն ամենակուլ ուշադրության այդ առաջամասի ամեն մի քայլի նկատմամբ, որը զանգվածներին հաճախ հասցնում է մինչև հոգեբանական նույնացման երևույթը՝ այստեղից բխող բոլոր հետևություններով:

[82] Ռուսաստանում հայտնի իմիջմեյքեր դարձած հոգեբանական գիտությունների դոկտոր հանդուցյալ Դերենիկ Աբրահամյանը դեռևս 2000 թ. տված մի հարցազրույցում իրավացիորեն նշում էր. «Նույնիսկ արտագաղթի այս ծանր պահին չկա այն կանգնեցնելու, հայրենադարձության գործընթացների վերականգնման պետական ծրագիր: Ռուսաստանում կա գրեթե 2.5 միլիոն հայ, որոնք Հայաստանում պահանջարկ չունեն, որովհետև տեղական քաղաքական վերնախավը չի ցանկանում նրանց առջև բաց անել դռները և վախենում է մրցակցությունից: Իսկ առանց այդ հզոր ուժերի միավորումի, հայրենիքն այս վիճակից չես հանի: Ես հաշվի եմ առնում Իսրայելի փորձը, չէ՞ որ առանց սովետական հրեաների Իսրայելը կմնար հետամնաց արաբական երկրների մակարդակի վրա» (Èîñèô Âåðäÿí, "'Âàðàíàíê' äëÿ ïîääåðæêè äóõà", *Íîâîå âðåìÿ*, 9 ôåâðàëÿ 2002): Ի դեպ, նույնիսկ 2002թ. (առաջին 9 ամսվա ընթացքում)՝ պաղեստինյան ապստամբության (ինտիֆադայի) առաջացրած տնտեսական, ռազմական ու հոգեբանական լարված պայմաններում Իսրայել են ներգաղթել շուրջ 34.000 հրեաներ:

[83] **Antoine Terjanian**, "Retirement and Assisted Living in Armenia: How can we make it possible for 5% of the 600,000+ Diasporan Armenians aged 64+ to retire in Armenia?" Talk presented at the AmCham (American Chamber of Commerce in Armenia) Conference on *Diaspora as a factor of Country Competitiveness*, October 24, 2002, Yerevan.

[84] Նույն տեղում: Դերջանյանը տեղին ընդգծում է նաև, որ հապաղել այլևս չի կարելի, քանի որ ներկա թոշակառուներից շատերը գիտեն հայերեն և կապված են հայությանը մանկությունից. հաջորդ սերունդներն այդ փորձը կարող են այլևս չունենալ:

[85] Միացյալ Նահանգներից ու զարգացած մյուս երկրներից վերադարձող յուրաքանչյուր 5-հոգանոց ընտանիք իր հետ կարող է Հայաստան բերել միջինը

մոտ 30.000 ԱՄՆ դոլար: Այս ամենահամեստ հաշվարկով՝ 20 հազար ընտանիքը (100.000 մարդ) Հայաստան կբերի 600 միլիոն, 40 հազար ընտանիքը (200.000 մարդ)՝ 1.2 միլիարդ, 60 հազար ընտանիքը (300.000 մարդ)՝ 1.8 միլիարդ, 100 հազար ընտանիքը (500.000 մարդ)՝ 3 միլիարդ դոլար:

[86] Մեր սկզբունքային անհամաձայնությունն ենք հայտնում հարգարժան ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի այն մտքին, որ ներգաղթը խրախուսելու համար պետք է մի կարգ սահմանել, որով «այն երեխաները, որոնք արտասահմանում սովորում են միջին և բարձր դասարաններում, վերադառնալիս, կրթությունը պետք է շարունակեն այն լեզվով, որով կրթություն են ստացել: Չպետք է կիրառել այն հարկադրանքը, որ, եթե հայ են, անպայման շարունակեն կրթությունը հայերեն: Միևնույն է, ժամանակի ընթացքում նրանք կտիրապետեն մայրենի լեզվին» (**Վ. Ե. Խոջաբեկյան**, *Հայաստանի բնակչության վերարտադրությունը...*, նշվ. աշխ., էջ 452-453): Այս առաջարկությունն անիրագործելի է, որովհետև որևէ երկրում հնարավոր չէ ստեղծել միջնակարգ կրթության այնպիսի համակարգ, որը կընթանար տասնյակ լեզուներով՝ քայքայելով երկրի ապագան հենց դպրոցից: Անձամբ անկեղծորեն հարգելով ակադ. Վ. Խոջաբեկյանին որպես հայրենասեր գիտնականի ու քաղաքացու՝ կարծում ենք, որ նրա առաջարկությունը հեշտությամբ սրբագրելի է. ընդամենը պետք է պայմաններ ու որոշակի ժամանակ հատկացնել վերաբնակ աշակերտներին և ուսանողներին՝ հայոց լեզվի մեջ հմտանալու համար:

[87] Այս իրողությունն սկսում է գիտակցվել ու ահազանգվել նաև սփյուռքում: Ահա թե ինչ է գրում Բեյրութի *Արարատ* օրաթերթում Գ. Յազըճյանը. «Չկա՛ հավատքը Հայրենիք վերադարձի, հո՛ն ապրելու, հո՛ն արարելու և հոն մեռնելու: Առանց այս գաղափարի նկատմամբ *հավատքի,* հայապահպանումը անիմաստ է ազգային իմաստով, նախապես ձախողած գործունեություն: ...Հայրենի հողն է հայորե՛ն ապրելու և հայորեն գոյատևելու միակ և անփոխարինելի ապավենը: Հետևաբար, դա՛րձ դեպի Հայրենիք. սա՛ պետք է ըլլա այսօրվան գլխավոր նշանաբանը...» (**Գ. Յազըճյան**, «Հայրենի՛քն է մեր ապավենը». - *Արարատ*, 1-7 նոյեմբեր, 2002):

[88] Վ. Խոջաբեկյանը նշում է դեպի Հայաստան ներգաղթը կանխարգելող հետևյալ գործոնները՝ «ցածր կենսամակարդակը, նոր աշխատատեղեր ստեղծելու նվազ հնարավորությունները, աշխատանքի շուկայի լարվածությունը և գործազրկության աճը, աշխատավարձի և աշխատուժի արժեքի խիստ ցածր մակարդակը, մասնագիտական ապատրակավորման ընթացքի թափը, օժտվածության և ունակության կորուստը, սոցիալական բազմաբարդ խնդիրներ լուծելու հարցում առայժմ պետական բյուջեի տկարությունը, սեփական արտադրողների նկատմամբ պետական հովանավորչա-

կան քաղաքականության թույլ արտահայտվածությունը, հարկային և մաքսային քաղաքականության ասպարեզում լուծումներ պահանջող բազմաթիվ խնդիրների առկայությունը և այլն» (**Վ. Ե. Խոջաբեկյան**, *Հայաստանի բնակչության վերարտադրությունը...*, էջ 452):

[89] **Ճ. Գառնուզեան**, *Վերադարձ դէպի Այրարատեան լեռնաշխարհ* (Շվեյցարիա, 1977), էջ 38-39:

[90] Հայոց ցեղասպանության միջազգային հաստատման առավել թարմ և ամբողջական տվյալները զետեղված են Վաշինգտոնում գործող Հայկական ազգային ինստիտուտի (ANI) հետևյալ ինտերնետային հանգույցում՝ http://www.armenian-genocide.org/affirmation.html:

[91] Տե՛ս, օրինակ, **Roland A. Paul**, *American Military Commitments Abroad* (New Brunswick: New Jersey: Rutgers University Press, 1973), p. 5.

[92] Նույն նպատակներով 2001 թ. Անկարայում նույնիսկ հիմնեցին Հայկական ուսումնասիրությունների մի հատուկ ինստիտուտ՝ Institute for Armenian Research (ինտերնետային հասցեն է՝ http://www.eraren.org):

[93] *Financial Times* (London), March 7, 1992, մեջբերված է նաև **Shireen Hunter**, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict* (Washington, D. C.: The Center for Strategic and International Studies, 1994), p. 46.

[94] **Íèêîëàé Îãàíåñÿí**, *Êàðàáàõñêèé êîíôëèêò: ýòàïû, ïîäõîäû, âàðèàíòû ðåøåíèÿ* (Åðåâàí, 1997), ñ. 38-39.

[95] Այս հայտարարությունը լիքն է Հայաստանի հասցեին ուղղված մեղադրանքներով. տե՛ս **Arie Bloed**, ed., *The Conference on Security and Cooperation in Europe*, p. 1000.

[96] "White House Proposes $70 Million in Aid to Armenia; $46 Million to Azerbaijan," *Asbarez online*, February 8, 2002 - Source: *Trade, Transport and Telecommunications in the South Caucasus: Current Obstacles To Regional Cooperation*. World Bank 2001.

[97] Տե՛ս *Ազգ* օրաթերթ, 31 հունվար 2001:

[98] Մասնավորապես, Հայկական հարցում Ազգերի լիգայի ընդունած բանաձևերի անատամությունն ու անարդյունավետությունը ծաղրել էր Լիգայի քարտուղարության քաղաքական բաժանմունքի տնօրեն Փոլ Մոնթյոն՝ 1920 թ. վերջին կազմելով հետևյալ զավեշտ-բանաձևը. «ՀՈԴՎԱԾ 1. Հայերի ոչ մի ջարդ չպետք է տեղի ունենա առանց Լիգայի խորհրդին *մեկ ամիս* առաջ տեղեկացնելու: ՀՈԴՎԱԾ 2. Եթե ջարդերն ընդգրկելու են նաև կանանց և երեխաների, ապա Լիգայի խորհուրդը պետք է տեղեկացվի *երկու ամիս* առաջ: ՀՈԴՎԱԾ 3. Հայերի որևէ ջարդ, որն իրականացվում է

առանց սույն ձևականությունների պահպանման, պետք է համարվի *անվավեր*» (տե՛ս **Հովհաննես Ասլյան**, *Մարդու և քաղաքացու իրավունքները ժամանակակից աշխարհում*: Երևան, «Արեգ», 1994, էջ 6-7, հղված է՝ **Daniel Vare**, *Laughing Diplomat*. London: John Murrey, 1938, p. 7):

[99] ՀՀ նախագահի խոսքն այդպես էր ներկայացրել Թուրքական հեռուստատեսության լրագրողը՝ «Նոյյան տապան», 31 հունվար 2001:

[100] Բերենք մի օրինակ. 2000 թ. ապրիլի 27-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացված քննարկման ժամանակ ՀՀ արտգործնախարարության խոսնակը խոստովանեց իր բացարձակ անտեղյակությունը նույն թվականի մարտին Չիկագոյի համալսարանում ամերիկահայ և թուրք պատմաբանների միջև կայացած առաջին հանդիպման վերաբերյալ, ինչը, մեր համոզմամբ, ոչ թե անձնական թերացում էր, այլ ՀՀ արտգործնախարարության մեջ համապատասխան աշխատանք իրականացնող բաժնի բացակայության արդյունք ("The Essential Question of the Armenian Genocide – Part of State Policy or Historical Memory?" *American University of Armenia Extension Program, "Gordian Knot" Series*, Yerevan, 27 April 2000):

[101] «Թուրքիան ամենաբարձր մակարդակով «Արարատ» ֆիլմի դեմ պայքարի ուղիներ է փնտրում». – *Ազգ*, 23 հունվարի 2002, ([1]12): Թուրքիայի պետական կառույցներում կա նույն նպատակներին ծառայող եւ երկու կառույց՝ ա) վարչապետարանին առընթեր «Հատուկ խումբը», որն ստեղծվել է «Թուրքերի նկատմամբ հայերի կատարած կոտորածներն ուսումնասիրելու նպատակով, և դրա մեջ ընդգրկվել են Պետական արխիվների գլխավոր վարչության այն մասնագետները, որոնք օսմաներենի են տիրապետում», և բ) Եվրասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնին կից գործող Հայկական հետազոտությունների ինստիտուտը (տե՛ս **Հակոբ Չաքրյան**. «Թուրքիան սկսել է կեղծարարության մեջ անմիջականորեն ներգրավել պետական կառույցներին». – *Ազգ*, 6 ապրիլի 2002, [1] 102):

[102] Այս կապակցությամբ Ս. Էվոյանը գրում է. «Հայաստանի Հանրապետությունում առայսօր ձեւաւորուած չէ ազգային անվտանգութեան համապարփակ համակարգ. ահա՛ բուն խնդիրը, որի լուծման առաջին քայլն արդէն իսկ գոյութիւն ունեցող՝ Հ.Հ. նախագահին կից Ազգային Անվտանգութեան Խորհրդի վերակազմակերպումն է որպէս յատակ նպատակներ եւ աշխատանքային գործառոյթներ իրագործող կառոյցի: Այս մարմնի նպատակը պէտք է լինի աջակցութիւնը երկրի ղեկավարի գործունէութիւնն անվտանգութեան ոլորտում պետութեան ինքնիշխանութեան պահպանման ու կառավարման եւ արտաքին, ներքին, ռազմական քաղաքականութեան մշակման ու իրականացումը վերահսկելու, ինչպէս նաեւ ընկերային-տնտեսական կայունութիւնը ապահովելու հարցերում: Նշեալ նպատակի իրականացան

համար հարկ է ձեւաւորել համապատասխան կառոյց իր ղեկավար մարմնով, աշխատակազմով՝ բաղկացած պետական ու հասարակական անվտանգութեան, քաղաքացիների իրաւունքների ու ազատութիւնների, բանակի շինարարութեան ու ռազմական տեսչութեան, զօրաշարժի (մոբիլիզացիայի), սահմանային, կոռուպցիայի եւ կազմակերպուած յանցագործութեան, տեղեկատուական անվտանգութեան եւ այլ հարցերով ապահովական գործառոյթներ իրականացնող համապատասխան վարչութիւններից (բաժիններից)՝ իրենց ենթակայ միջգերատեսչական յանձնախմբերով». – **Սամվել Էվոյան**, «Ստեղծե՛լ անվտանգութեան համակարգ». *Դրօշակ*, հունվար-սեպտեմբեր 2002 (օգտվել ենք ինտերնետային էջից):

[103] **Lev M. Freinkman**, "Role of the Diasporas in Transition Economies: Lessons from Armenia," *Paper presented at the 11th Annual meeting of the ASCE*. Coral Gables, August 2-4, 2001. Մի հետաքրքրական համեմատութիւն եւս. ամեն տարի Հայաստանին օժանդակելու համար ամերիկահայ և ֆրանսահայ համայնքներում անցկացվող թելեթոններում հավաքվում է միջինը 5 միլիոն դոլար, մինչդեռ, օրինակ, 2002 թ. ապրիլի 12-ին Սաուդյան Արաբիայում՝ պաղեստինցիներին օգնելու համար անցկացված մի նմանատիպ թելեթոնը հավաքեց 92 միլիոն դոլար (**Donna Abu-Nasr**, "Saudis Raise $92M for Palestinians," *Associated Press,* Apr 12, 2002, 5:23 PM ET):

[104] Այլ հարց է, որ երբեմն նույնիսկ հայկական միջավայրում, ներառյալ բուն Հայաստանում ապրող և աշխատող հայերը, նույնպես գաղափար չունեն այդ նպատակների մասին և հոգեբանորեն պարտավորված չեն զգում իրենց ո՛չ հայ ազգի, ո՛չ էլ Հայաստանի ներկայի և ապագայի համար:

[105] **Լեւոն Զեքիեան**. *Ինքնութեան խճանկար*, էջ 75-76:

[106] Առանձին ուսումնասիրության է կարոտ նաև որոշ սփյուռքահայերի (հատկապես՝ ԱՄՆ-ում ծնվածների) մոտ ազգի հետ նույնացման *ժամանակային* կարճատևությունը. նկատի ունենք այն, որ նույնացումն ազգի հետ կատարվում է մի չնչին պատմական ժամանակահատվածում, սովորաբար՝ ցեղասպանության շրջանից սկսված, իսկ միջնադարյան և առավել ևս հին ու հնագույն շրջաններն այլևս չեն զգացվում որպես սեփական պատմություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական արդի ճգնաժամի ներքին խնդիրները

1. Թեև Հայաստանի Հանրապետությունը դե յուրե միջազգայնորեն ճանաչված է իբրև անկախ պետություն, այն դե ֆակտո տակավին թուլակազմ և լիարժեքորեն չկայացած պետություն է: Ավելին՝ այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի հայկական պետականության լիարյուն բովանդակություն:

2. Հայաստանի և սփյուռքի կառույցների զգալի մասը նվիրված չէ ազգային հիմնախնդիրների լուծմանը, չունի զարգացման երկարաժամկետ ծրագիր ու ռազմավարություն, մասամբ օտար վերահսկողության և թելադրանքի տակ է: Միանգամայն բնական է, որ ազգի բարոյապես մաքուր ու մտավորապես կարող ուժերն այդ կառույցներից դուրս են մնում՝ տեղը զիջելով գաղափարայնությունից զուրկ միջակություններին և միայն անձնական շահ ճանաչող չինովնիկներին:

3. Այսուամենայնիվ՝ այսօր առկա են հայկական պետության լիարժեք կայացումն ապահովող ֆունդամենտալ նախադրյալները. ավելի քան 40,000 կմ^2 բավականին պաշտպանունակ տարածք (ներառյալ Արցախն ու ազատագրված տարածքները), հայկական զինուժ, հրաշալի բնություն, հարուստ ընդերք, աշխատասեր, տաղանդավոր, հայրենասեր ու ճիշտ առաջնորդման պարագայում ամեն տեսակի զոհողությունների պատրաստ ժողովուրդ, ժառանգված հնագույն մշակույթ, ներառյալ ազգային լեզվով զարգացած գիտություն, մեծ գրականություն, սփյուռքի ներուժի ճիշտ օգտա-

գործման հնարավորություն, ռազմավարական հզոր դաշնակից, բարեկամ պետություններ:

Ազգային և պետական շահերն արտահայտող կառույցների ստեղծումը Հայաստանի և հայության ամենակարևոր խնդիրներից է: Այլ կերպ ասած՝ Հայաստանում դրված է պետական մարմինների և բուն պետության կառուցման ու դրանց հայկականացման խնդիրը, իսկ արտերկրում՝ համայնքային ներկայացուցչական բոլոր կառույցներն ի մի բերող, օտար ուժերի թելադրանքին դիմակայելու ընդունակ հայկական գերագույն համաստիյուռքյան վերկուսակցական մարմնի ձևավորման հրամայականը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը՝ Հայաստանի ռազմավարական անվտանգության լույսի ներքո

- Ղարաբաղյան հակամարտության հիմքում ընկած է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի երկարաժամկետ անվտանգության ապահովման խնդիրը:
- Հայ-թուրք/ադրբեջանական հակամարտության արդի փուլը՝ Ղարաբաղյան հակամարտությունն ընթանում է միմյանց անանջատ կերպով շաղկապված երկու առանցքի շուրջը՝ պայքար հանուն արցախահայության ազատության ու Սյունիքի պաշտպանունակության: Հայաստանը չի կարող դառնալ կենսունակ պետություն առանց Արցախում հայկական իշխանության և զինված ուժերի մշտական ու անկաշկանդ գոյության:
- Հակամարտության փոխզիջումային և արագ լուծումն իսկապես նախընտրելի է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» արդի վիճակից, սակայն ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Ղարաբաղը չեն կարող մեկ քայլ անգամ նահանջել իրենց ռազմական անվտանգության ներկա՝ հարաբերականորեն բարձր մակարդակից:
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի մշակած ծրագիրը չի լուծում այս խնդիրները:

- Զավեշտական է ակնկալել, թե Թուրքիայի և Ադրբեջանի հետ բնականոն առևտրա-տնտեսական հարաբերություններ հաստատելով, Հայաստանը կապահովի իր երկարաժամկետ անվտանգությունը:

Բանակցային գործընթաց

ԵԱՀԿ շրջանակներում վարվող բանակցություններն ի սկզբանե ունեցել են երեք հիմունքային ֆունկցիոնալ թերություն.

- անտեսվել է Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցների (ՂՀԱՄ) ռազմավարական մտածողությունը, որը, ի թիվս այլ տարրերի, ներառում է նաև պատմա-հոգեբանական խորը շերտեր.
- Հակամարտության մասնակիցներից մեկը՝ Հայաստանն, անընդունակ է գտնվել իր ռազմավարական մտավախությունները պարզ և բաց ներկայացնելու ու, թերևս, նաև ամբողջովին գիտակցելու դրանք.
- Թուրքիան՝ Ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցներից մյուսը, ոչ միայն չի ճանաչվել որպես այդպիսին, այլև ներգրավվել է միջնորդների խմբի մեջ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող բանակցություններում հայկական կողմի համար անփոփոխ պետք է լինեն հետևյալ դիրքորոշումները.

1. Ազատագրված տարածքները, պատմականորեն հայկական հող լինելով հանդերձ, նաև անվտանգության երաշխիք են: Բնականաբար, տարածքային զիջումները՝ հօգուտ Ադրբեջանի, կտրուկ իջեցնելու են հայկական կողմի ռազմավարական անվտանգության մակարդակը:
2. Եթե երբևէ հայկական կողմը զիջում կատարի հօգուտ Ադրբեջանի, ապա այդ զիջումը պետք է փոխհատուցվի, նախ և առաջ, անվտանգության բնագավառում, այնուհետև՝ նաև իրավական, բարոյական ու տնտեսական ա-

ռումներով: Հայկական կողմը Ադրբեջանից պետք է ստանա ռազմավարական համարժեք և վերահսկելի զիջումներ, անվտանգության ամրակուռ երաշխիքներ:

3. Ղարաբաղյան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխավոր սկզբունքը պետք է լինի հետևյալ ձևակերպումը՝ հակամարտության վերջնական կարգավորումը չպետք է հանգեցնի Հայաստանի և Արցախի ռազմավարական անվտանգության մակարդակի իջեցմանը:

Այսուհանդերձ, միջազգային և տարածաշրջանային ներկա պայմաններում հայկական կողմի տարածքային որևէ զիջում արդարացված չի լինի:

Ռազմավարական կանխատեսում

Կանխատեսելի կարճաժամկետ հեռանկարում իրադրությունն, տարածաշրջանում ամենայն հավանականությամբ, զարգանալու է հետևյալ իրողությունների շուրջ. Ադրբեջանի և Թուրքիայի վրա չկա և չի սպասվում նշանակալի արտաքին (միջազգային) այնպիսի ճնշում, որը կպարտադրեր նրանց հրաժարվել կամ գոնե մեղմացնել Հայաստանի և Արցախի հանդեպ որդեգրած անզիջում դիրքորոշումը: Այդ երկու դաշնակից պետությունները հետևողականորեն շարունակելու են Հայաստանը քայքայել փորձող իրենց այսօրվա գործողությունները՝ շրջափակումները, քարոզչական պատերազմը, ռազմական լայնածավալ պատրաստությունները: Այսպիսով, Հայաստանն ակամա ներքաշված է իր բուն գոյությանն սպառնացող երկարատև հակամարտության մեջ: Մենք, ուզենք, թե չուզենք, դեռ երկար ենք մնալու արտաքին այն իրադրության մեջ, որում այժմ ենք: Կանխատեսելի ապագայում ո՛չ Թուրքիայի ու Ադրբեջանի թշնամական քաղաքականությունն է փոխվելու, ո՛չ էլ հայկական զորքերն են նահանջելու իրենց այսօրվա դիրքերից: Հե՛նց այսպիսի անբարենպաստ արտաքին պայմաններում է, որ Հայաստանը պետք է տարիներ, գուցե և տասնամյակներ շարունակ ապրի՛, զարգանա՛ և բարգավաճի՛:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններ

Խորհրդային Միության փլուզումից ի վեր Հայաստան-սփյուռք հարաբերություններն ընթացել ու դեռ ընթանում են փոխադարձ թյուրըմբռնման, անվստահության և ընդհանուր շփոթվածության դրոշի ներքո, ինչի հիմնական պատճառներն են.

Ա. Հայաստանի Հանրապետության՝ սփյուռքի հետ հարաբերություններում մշակված ու հստակ քաղաքականություն չունենալը.

Բ. Հայկական սփյուռքի քաղաքական անկազմակերպվածությունն ու պառակտվածությունը.

Գ. Օտար պետությունների խանգարիչ միջամտությունը:

Հայաստանի պետության քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ պետք է հաշվի առնի հետևյալ առանցքային իրողությունները.

1. Հայ ազգը կարող է գոյատևել ու զարգանալ միմիայն հայրենիքի առկայության պայմաններում: Առանց Հայաստանի՝ հայկական սփյուռք երբեք ու երբևէ չի եղել ու չի կարող լինել, առավել ևս՝ հետինդուստրիալ զարգացման ու համաշխարհայնացման այս նոր դարաշրջանում (պատմական այլևայլ պայմանների բերումով մոտ երկու հազարամյակ առանց հայրենիքի գոյատևած հրեական սփյուռքի փորձը հայոց պարագայում անկիրառելի է): Հայաստանի վերջին բեկորից հայերի դուրսմղումը, նրանց, որպես պետականորեն կազմակերպված մի հավաքականություն, զարգացման դադարեցումը կտանեն հայությունը դեպի արագընթաց ոչնչացում: Ուստի և՝ սփյուռքի զարգացման ռազմավարությունը կարող է ունենալ մի ելակետ՝ ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, *այսինքն՝ Հայաստանի տնտեսական, ժողովրդագրական, ռազմական, մշակութային հզորացմանն ուղղված գործունեություն: Հայաստանակենտրոն գործունեության միջոցով միայն կարող են ամրանալ ու վերընթաց զարգացում ապրել սփյուռք-Հայաստան կապերն ու սփյուռքահայ կյանքը:*

2. Սփյուռքի Ա (հին) և Բ (նոր) զանգվածների առկայությունը և նրանց միջև եղած տարբերությունները:

3. Սփյուռքի զգալի մասի՝ մշակութային ուծացածության բարձր աստիճանի հասած լինելը:

4. Սփյուռքահայ կառույցների զգալի մասի՝ օտար պետությունների հատուկ ծառայությունների վերահսկողությամբ և ուղղորդմամբ գործելը, հաճախ՝ ի վնաս Հայաստանի և հայության շահերի:

5. Սփյուռքահայ զանգվածների ճնշող մեծամասնության՝ հայկական կառույցների մեջ ընդգրկված չլինելը, Հայաստանի և հայության շահերի նկատմամբ կրավորական և անտարբեր լինելը:

Ըստ այսմ՝ սփյուռքի նկատմամբ Հայաստանի պետության քաղաքականության հիմնական նպատակները և ուղղությունները պետք է լինեն.

- *Ներգաղթի եռանդուն խրախուսումը:*
- *Արտերկրում ներկայացուցչական այնպիսի կառույցների ստեղծման օժանդակումը, որոնք հնարավորին չափ շատ հայեր կներգրավեն իրենց աշխատանքների մեջ և հնարավորին չափ զերծ կլինեն օտար ազդեցություններից:*
- *Հայաստանյան քարոզչական այնպիսի կառույցների ստեղծումը կամ ամրապնդումը, որոնք կարող են արդյունավետ ձևերով սփյուռքահայ զանգվածներին հաղորդակից դարձնել Հայաստանի կյանքին և հայ մշակույթին[1]:*
- *Միջազգային լեզուներով (նախ և առաջ՝ անգլերեն և ռուսերեն) Հայաստանի պատմությանն ու մշակույթին նվիրված գիտական ու հանրամատչելի անաչառ գրականության հրատարակումը:*

Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո սփյուռքը զգալի միջոցներ է ծախսել ցեղասպանության ճանաչման խնդրի վրա, սակայն գրեթե ոչինչ չի արել Հայաստանի գոյատևումն ապահովող առաջնահերթ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են Հայաստանի ներկա ծանր աշխարհառազմավարական դրությունը վերլուծել-հասկանալը և զարգացման ճիշտ ուղի որոշելը, հայ ռազմավարական մտքի դպրոց ստեղծելը՝ ներառյալ արտաքին ու ներքին քաղաքականության պրոֆեսիոնալ մշակմանն օժանդակելը, զինված ուժերի կառուցումը, բանակ-հասարակություն հարաբերությունների զուտ հայկական իրականությանը համապատասխանող մոդել գտնելը: Ուժեղ անկախ պետություն ունենալուն միտված վե-

բոհիշյալ գործողությունները, ազգային խնդիրների առաջնահերթության տեսակետից, գերակայություն ունեն ցեղասպանության միջազգային ճանաչման նկատմամբ: Վերջին հաշվով, մի օր կարելի է հասնել Հայկական ցեղասպանության միջազգային համընդհանուր ճանաչմանը, սակայն եթե ունենանք թույլ պետություն և թույլ կազմակերպված սփյուռք (ինչպիսիք ունենք այսօր), ապա հայությունը չի կարողանալու օգտվել այդ հաղթանակից: Դեռ ավելին՝ այդ հաղթանակը կարող են օգտագործել այլ ուժեր՝ սեփական շահն առաջ տանելու, Թուրքիայից այլևայլ՝ հայության շահերին որևէ կերպ չառնչվող զիջումներ կորզելու համար (ինչպես տեղի է ունենում այսօր)[2]:

Այսօր հայության առաջնահերթ խնդիրը Հայաստանի հզորացումն է ժողովրդագրական, տնտեսական, ռազմական, մշակութային և այլ ուղղություններով: Այս խնդրի լուծման բանալին համակարգված զանգվածային հայրենադարձությունն է, որը հնարավորություն կտա լավագույնս օգտագործել սփյուռքահայության ներուժը ի շահ հայրենիքի և ազգի: Հայաստանն ընդունակ է արագորեն դառնալ ամուր ազգային պետություն:

Միաժամանակ պարտավոր ենք հիշել, որ մոտ մեկուկես հարյուրամյակ առաջ դրված՝ Հայաստանի լինել-չլինելու խնդիրն օրակարգից հանված չէ: Մեկ խոշոր ռազմական պարտությունը կարող է ջնջել Հայաստանը աշխարհի քարտեզի վրայից: Զարմանալի ու սարսափելի է դիտարկել, որ այսօր մեզանում շատ թույլ է այս վտանգի ռազմավարական գիտակցումը: Հայաստանի աշխարհառազմավարական բացառիկ դրությունն ու ազգային անվտանգության ծանրագույն խնդիրները, որոնք պետք է դրված լինեին պետության տնտեսական, ռազմական ու արտաքին քաղաքականության հիմքում, գրեթե մոռացված են: Ժողովուրդը թաղված է օրվա հաց հայթայթելու հոգսի մեջ, իսկ երկրի, պետության և ազգի անվտանգությամբ օրնիբուն զբաղվելու կոչված քաղաքական վերնախավը տարված է ազդեցության գոտիների անվերջ բաշխում-վերաբաշխումով: Հայոց հինգհազարամյա քաղաքակրթության գլխին կախված ոչնչացման վտանգը պետք է գիտակցի ողջ հայությունը ու գիտակցի ոչ թե հուզականորեն, այլ ռազմավարական չափանիշներով: Զթերագնահատե՛լ վտանգը: Սա՛ է այսօրվա հրամայականը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Առայժմ այս ուղղությամբ կատարվել են ճիշտ հակառակ քայլեր: 2002 թ. հունվարի վերջից Հայաստանի հանրային ռադիոյի եթերացանցից հանվել էր «Հայաստան-Սփյուռք» հաղորդումը, իսկ խմբագրության որոշ աշխատակիցներն աշխատանքից ազատվել էին. – **Մաուլենա Հովսեփյան**, Հայաստանի հանրային ռադիոյի հաղորդումները նորացվում են (ըստ Արմեն Ամիրյանի). – *Ազգ*, 9 փետրվարի 2002, **Մաուլենա Հովսեփյան**, Փակվե՞լ է «Հայրենիք-Սփյուռքը». – *Ազգ*, 21 փետրվարի 2002: Սա այն դեպքում, երբ Հայաստանի բնակչության համար արտասահմանում պատրաստվող ու քաղաքական հստակ և ամենևին ոչ անվնաս նպատակներ ունեցող հատուկ ծրագրերը՝ «Ամերիկայի ձայնը» և «Ազատությունը», Հայաստանի հանրային ռադիոյի եթերում են ամենահարմար ժամերին՝ 19:00-ից մինչև 21:00 (տե՛ս **Ëåâîí Ì èêàåëÿí**, "Â ýôèðå íàöèîíàëüíàÿ Àðìåíèÿ," *Ãîëîñ Àðìåíèè*, 16 ôåâðàëÿ 2002, ¹14 (18811). **Rouben Badalian**, "Which Is the Aim of RFE/RL Broadcasting In Armenia," *Azg* daily, ¹225, 12/07/2001. **Ռուբեն Բադալյան**, «Ո՞րն է «Ազատություն» ռադիոկայանի նպատակը». – *Ազգ*, 12 հուլիսի 2001):

[2] Տեսականորեն նույնիսկ հնարավոր է հասնել ցեղասպանության ճանաչմանը, սակայն կորցնել Հայաստանը: Հայաստանի կործանումից հետո Հայկական ցեղասպանությունը կարող է ճանաչել նաև ինքը հանցագործը՝ Թուրքիան, որովհետև այդ քայլն իր համար այլևս որևէ վտանգ չի ներկայացնի:

ՀՂՎԱԾ ԵՎ ՄԵՋԲԵՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ՈՒ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Գոռ. «Հայկական լոբբին ԱՄՆ-ում և Եվրոպայում». - *Ազգ*, 4 հունիսի 2002 (¹ 102):
Աբրահամյան Սերգեյ. *Մեր լեզուն և մեր դպրոցը:* Երևան: Անանիա Շիրակացու համալսարանի հրատ., 2001:
Աղաբեկյան Արթուր, «Ժամանակակից մարտահրավերներն ու ՀՀ ազգային անվտանգության ծրագրավորման գործընթացը». - *Օրենք և իրականություն*, ¹ 21 (35), նոյեմբեր 2001:
«Աղքատության հաղթահարման ամփոփ ռազմավարական ծրագիր (նախագիծ)», *Հայացք տնտեսությանը*, ¹ 12, հոկտեմբեր 2002:
Այվազյան Արմեն, *Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի:* Մասն Ա: Երևան, «Սամարկ», 2003, 226 էջ:
Այվազյան Ա., «Նոր աշխարհակարգը և ժողովուրդների իրավունքները». - *Հանրապետական*, ¹ 1, 2003:
Այվազյան Ա., «Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրներ». - *Հանրապետական* (Հայաստանի Հանրապետական կուսակցության պարբերական), ¹ 2, 2003:
Այվազյան Ա., «Երբ բթանում է վտանգի զգացումը». - *Վասն Հայության*, ¹ 44, 16.12.2002. *Արարատ* (Բեյրութ), 10-16 հունվարի 2003:
Այվազյան Ա., «Տարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի». - *Դրոշակ*, 33րդ (66րդ) տարի, թիվ 3 (1575), հուլիս 2002:
Այվազյան Ա., «Կգա՞ն թուրքերը Հայաստան». - *Հայոց աշխարհ*, 16 նոյեմբերի 2002, ¹ 212/1307:
Այվազյան Ա., «Կարգավորումը մոտ ապագայի խնդիր չէ (Հարցազրույց)». - *Հայոց աշխարհ*, 20 նոյեմբերի 2001:
Այվազյան Ա., «ԱՄՆ հայկական լոբբին այդչափ հզոր ուժ չէ. պետք չէ ոգևորվել սուտ խոստումներից». - *Հայոց աշխարհ*, 21 նոյեմբերի 2001 (¹ 214):
Այվազյան Ա., «Ավարայրի անանցանելի խորհուրդը (հարցազրույց)». - *Երկիր* (օրաթերթ) մայիսի 30 (¹ 97), 2001:
Այվազյան Արմեն, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն:* Երևան. «Արտագերս» հրատ., 1998:
Այվազյան Արմեն, *Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում:* Երևան. «Լուսակն» հրատ., 2003:
Այվազյան Արմեն, *Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը:* Երևան. «Հայաստան» և «Հայինֆո» հրատ., 1998:
Այվազյան Ա., «Հայության համակարգային ճգնաժամի մասին». - *Լույս* հանդես (Լոս Անջելես), ապրիլ 2002, No. 5 (146):

Այվազյան Ա., «Հայաստանը և սփյուռքը հայության զարգացման գործում». - *Օրեր* ամսագիր (Պրահա), No. 5-6, 2002.
Այվազյան Ա., «Հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները» (Strategic consequences of Armenian Genocide). - *Լույս* հանդես (Լոս Անջելես), ապրիլ 2002, No. 6 (147):
Այվազյան Ա.. «Մենք զինվոր ազգ ենք». - *Հայ զինվոր* (ՀՀ ՊՆ շաբաթաթերթ), 29 դեկտեմբերի 2001-5 հունվարի 2002, ¹ 51 (408):
Այվազյան Ա.. «Պետդեպարտամենտի՞, թե՞ Հայկական համագումար». - *Հայոց աշխարհ*, 31 հոկտեմբերի 2001 (¹ 199):
Անասյան Հ. Ս., *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում:* Երևան. ԳԱ հրատ., 1961:
Ասլյան Հովհաննես, *Մարդու և քաղաքացու իրավունքները ժամանակակից աշխարհում*: Երևան, «Արեգ» հրատ., 1994:
Բագրատունի Հ., «Ու՞ր է հայ դպրոցի հանդեպ երախտագիտությունը». - *Ազդակ* (Բեյրութ), 23 սեպտեմբերի 2002:
Բաղալյան Ռուբեն, «Ո՞րն է «Ազատություն» ռադիոկայանի նպատակը». - *Ազգ*, 12 հուլիսի 2001:
Բաղդասարյան Դ. Ս., *Դիմակայություն (հուշագրություններ):* Երևան. «Մխիթար Գոշ», 1998:
Գաբրիելյան Մխիթար, Արտակ Դաբաղյան, Աղասի Թադևոսյան, Նիկոլ Մարգարյան, *Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, «Նորավանք», 2003):
Գագյան Գագիկ, *Տնտեսական զարգացման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում* (Երևան, «Նորավանք», 2003):
Գալստյան Լիլիթ, «Օրինականությամբ» քանդում ենք դպրոցը». - *Երկիր*, 7-13 հունիս 2002, ¹ 20 (1671):
Գառնուզեան Ճ., *Վերադարձ դէպի Այրարատեան լեռնաշխարհ:* Շվեյցարիա, 1977:
Գասպարյան Սալբի, «Իստանպուլահայ համայնքի կրթական համակարգը». - *Զարթօնք*, 18 օգոստոսի 2002:
Գրիգորյան Ս.. «Կեղծ գիտականությունը որպես հակազգային ծրագիր» և «Նրանք ջուր են լցնում Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունների ջրաղացին (ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի որոշումը ամերիկյան հայագիտության հիմնական միտումների մասին)». - *Երկիր*, 25 դեկտեմբեր 2001, ¹ 230 (1650):
Գուլակյան Հասմիկ. «Ջեյմս Ռասելն արևմտյան գիտնականների առջև փակում է հայագիտության դուռը». - *Վասն հայության*, 14.08.2002, ¹ 29 (47):

Դալլաքյան Կ., *Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ)*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994:
Դանիելյան Էդվարդ, Հայ ժողովրդի ցեղասպանությունը 1894-1922 թթ. (պատճառները, իրագործման փուլերը, թուրք պետականության պատասխանատվությունը). - *Միտք* (Երևան), ¹ Բ, սեպտեմբեր 1992:
Դանիելյան Ժիրայր, «Անտարբերության զոհ հայ դպրոցը». - *Զարթօնք*, 7 սեպտեմբեր 2002:
Դանիելյան Ժ., *Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ*: Պէյրութ, 2002:
Դեմոյան Հայկ, *Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը:* Երևան, 2002:
Դոնոյան Լևոն, *Երրորդ հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամը*: Երևան. «Լուսաբաց» հրատ., 2002:
Եարտըմյան Տաճատ, *Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն:* Վենետիկ-Ս. Ղազար, 1995:
Զեքիեան Լեւոն, *Ինքնութեան խճանկար:* Աշխատասիրեց Սալբի Գասպարեան: Պէյրութ, 2001:
Էվոյան Սամվել, «Ստեղծե՛լ անվտանգության համակարգ». - *Դրօշակ*, հունվ.-սեպտ. 2002:
Թադևոսյան Աղասի, *Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը* Երևան, «Նորավանք», 2003:
Թորոսյան Թորոս, *Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր:* Երևան. ՌԱՀՀԿ, 2001:
Լալայան Մուշեղ, *Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ:* Երևան, «Նորավանք», 2003:
Լեզուն՝ ազգի հարատևման գրավական: Պատասխանատու խմբագիր և գրախոս՝ Լևոն Ղազանչյան, Երևան. «Մաշտոց միավորում», 2002:
«Թուրքական կողմը, հավանաբար, կընդգրկվի զինավարժություններում». – *Հայաստանի Հանրապետություն*, 13 նոյեմբերի 2002, ¹ 204 (3097):
Լիպարիտյան Ժիրայր, *Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր:* Երևան, «Նաիրի» հրատ., 1999:
Հայ դպրոցը տունն է հայուն. հայութիւնը կյավերժանայ հայ դպրոցով: Պեյրութ, 2002:
Հայաստանը և սփյուռքը 21-րդ դարի շեմին (գիտաժողովի նյութեր), Երևան 29-30 մայիս 1998: Երևան. «Այբ-Գրաֆիկ» հրատ., 1998:
Խաչատրյան Հարություն, «Քաղաքագետի հայացք միասնական ուղղագրության խնդրին». – *Առավոտ* օրաթերթ, 8 հուլիս 2002:

Խոջաբեկյան Վ. Ե., *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին:* Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002:
Խուդինյան Գևորգ, *Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն:* Երևան, «Նորավանք», 2003:
Խուդինյան Գևորգ, «Ճակատամարտ՝ Հայոց պատմության և մշակույթի համար». – *Հայոց աշխարհ*, 20 դեկտեմբերի 2002, ¹ 235/1088:
Խուրշուդյան Լենդրուշ, *Հայոց ազգային գաղափարախոսություն:* Երևան, 1999:
Ղազինյան Արիս, «Հայաստանը «գիտական» ահաբեկչության թիրախ». – *Երկիր,* 12 հոկտեմբեր 1999, ¹ 178 (1204):
Հակոբյան Թաթուլ, «Հայաստանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականության բաղադրիչներից մեկը ծուլությունն է». – *Ազգ,* 13 սեպտեմբերի 2002, ¹ 164:
Հակոբյան Թաթուլ, «Հայոց ցեղասպանությունը ժխտելով՝ Իսրայելը Հայաստանում ձևավորում է հակահրեական տրամադրություններ». – *Ազգ,* 12 փետրվար 2002, ¹ 27/2472:
Հայրապետյան Հրանտ, «Թիվ 60 դպրոցի ֆենոմենը. պետական հանրակրթական դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման մի մոդելի մասին». – *Կրթություն*, 24 նոյեմբերի 1998, Բ տարի, ¹ 17:
«ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հարցազրույցը ԱՊՀ հայկական համայնքների «Նոյյան տապան» թերթին». – *Հայ գինվոր*, 8-15 սեպտեմբեր, 2001, ¹ 35 (392):
Հարությունյան Գագիկ, *ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում:* Երևան, «Նորավանք», 2003:
Հովհաննիսյան Աշ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության:* Գիրք առաջին. «Հայ ազատագրական լեգենդը»: Երևան. ԳԱ հրատ., 1957:
Հովսեփյան Արմեն, Հովհաննիսյան Սիրակ, *Քաղաքականության պատմական դասերը և արդիականությունը:* Երևան. «Կախսա» հրատ., 1999:
Հովսեփյան Մաուլենա, «Փակվե՞լ է «Հայրենիք-Սփյուռք»». – *Ազգ*, 21 փետրվար 2002:
Մանասյան Ա. Ս., *Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում:* Երևան. «Գասպրինտ», 2003:
Մարաշլյան Լևոն, «Փրոֆ. Սյունիի քարոզած քաղաքականությունը կանտեսե Հայաստանի ապահովությունն ու Անդրկովկասի կայունությունը». – *Ասպարէզ*, 18 սեպտեմբերի 1999:

Մարտիրոսյան Արա, «“Արդյունաբերության աճը պետք է արագացնել”, նշեց Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի ղեկավարը». - *Ազգ*, 31 հունվարի 2002:
Մելքոնյան Մ., «Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները.1, 2 և 3». – *Հայ զինվոր*, 13-20 փետրվար 1999, ¹ 6 (261), 20-27 փետրվար 1999, ¹ 7 (262) և 27 փետրվար-6 մարտ 1999, ¹ 8 (263):
Ցազըճյան Գ., «Հայրենի՛քն է մեր ապավենը». – *Արարատ*, 1-7 նոյեմբեր, 2002:
Ներսիսյան Մ. Գ., *Պատմության կեղծարարները. հոդվածներ և հաղորդումներ*: Երևան. ՀՀ ԳԱԱ հրատ., 1998
Նժդեհ Գարեգին. *Բանտային գրառումներ (խորհրդածություններ)*: Երևան. «Մ. Վարանդեան» հրատ., 1993:
Նժդեհ Գարեգին. «Դաշնակցության առաջացման պատմական պայմանները և նրա բնութագիրը». – *Նշխարներ. Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազնունի:* Երևան, «Ազգայնական ակումբ», 2002:
Նժդեհ Գարեգին. *Հատընտիր:* Երևան, «Հայաստան», 2001:
Շահանդուխտ, «Լիբանանահայեր, արթնացե՛ք». – *Ազդակ* (Բեյրութ), 22 հուլիսի 2002:
Շիրինյան Լևոն. «Արևելյան Հայաստան. ռազմաքիտական նշանակությունը». – *Գիտելիք*, ¹ 12, 2003:
Շուգարյան Ռուբեն. «Հայկական լոբբինգն արտերկրում». - *Դասախոսություն Հայաստանի Ամերիկյան համալսարանում*, 25 մայիսի 2000 թ., http://www.aua.am/EXTENS/lectures/37_a.htm:
Զաքրյան Հակոբ. «Թուրքիան սկսել է կեղծարարության մեջ անմիջականորեն ներգրավել պետական կառույցներին». – *Ազգ*, ¹ 102, 04/06/2002:
Զաքրյան Հակոբ. «Միչիգանի գիտաժողովում կասկածի տակ է դրվել Հայոց ցեղասպանությունը (Սփյուռքահայ որոշ գիտնականներ նպաստել են դրան)». – *Ազդ*, 6 ապրիլի 2002, ¹ 064:
Պետրոսյան Արմեն. «Ջ. Ռասելի «Հայագիտական» հնարանքները». – *Պատմա-բանասիրական հանդես*, 2000, ¹ 3:
Պետրոսյան Վահրամ. «Թուրքիան և ռազմականացումը». – *Հայ զինվոր*, 10-17 ապրիլի 1999 թ., ¹ 14 (269):
Պէօճէքեան Ժ., «Երկու հարցում՝ Հայաստանի մեջ ՕԹԱՆի ռազմափորձերուն թուրք զինվորներու մասնակցության առիթով». – *Ազդակ* (Բեյրութ), 10 հունվար 2003:
Սփյուռքահայ կազմակերպություններ: Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002:

Սարգսյան Մ. Ա., «Զինված ուժերի համալրումը զորակոչով. պրոբլեմներ, մոտեցումներ, լուծումներ». – *Հայկական բանակ*, 2001, ¹ 4 (30):
Սարգսյան Սերժ. «Անում եմ այն, ինչ պարտավոր եմ...» (ՀՀ պաշտպանության նախարարի բացառիկ հարցազրույցը «Ազգ»-ին). – *Ազգ*, 21 փետրվար 2002:
Սարգսյան Սերժ. «Հարցազրույց». – *Իրավունք՝ Հարց ու պատասխան*, ¹ 58 (654), հուլիս 30 - օգոստոս 5, 2002:
Սաֆարյան Ստյոպա, *Ազգային անվտանգություն՝ Հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները* (Երևան, «Նորավանք», 2003):
Սյունի Ռոնալդ, «Հայ լինելը Վրաստանում». – *Դեմոկրատիա միություն* ամսաթերթ (Կուսակցություններին աջակցության կենտրոն), ¹ 4-5, 6, 2000:
Վարդան Լևոն, *Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը:* Բեյրութ, 1970:
Տեմիրճյան Ռաֆֆի, «Կրթական մարզին տագնապը». – *Ազգակ*, 18.02.2002:
Զօրավար Անդրանիկ կը խօսի: Խմբ. և ծանօթ. Դոկտ. Վաչէ Ղազարեան: Պոսթոն, 1994:
Տեր-Մելքոնյան-Մինասյան Շաքե, «Պատմագետ-քաղաքագետ Արմեն Այվազյանի սահմռկեցուցիչ ամբաստանագիրը՝ Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ». – *Հորիզոն* (Մոնրեալ), 10 դեկտեմբերի 2002:
Վենետիկյան միջանվագ: Աշխատասիրությամբ՝ Ռուզան Զաքարյանի: Երևան, «Ապոլոն» հրատ., 2000:
Ղազար Փարպեցի, *Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան:* Երևան, ԵՊՀ հրատ., 1982:
Քոչարյան Համլետ, *Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում:* Երևան, 2003:
Ք. Ս., «Առկա բնակչության թիվը հազիվ թե գերազանցի 2,5 մլն մարդը». - *Իրավունք*, փետրվարի 7-10, 2003, ¹ 8 (729):

Аветисян Лия. “Made in Turkey-2”, *Голос Армении*, 6 марта 2004.
Àéâàçÿí Àðìåí. “Ï îõëàùå ÒÀÊ Ï,” *Ãîëîñ Àðìåíèè*, 10 äåêàáðÿ 2002.
Àéâàçÿí Àðìåí. “Стратегические последствия геноцида армян”, информационно-аналитический журнал *Âèçàíòèéñêîå íàñëåäñòâî* ¹3, 2002; информационный журнал-дайджест *Армянский курьер*, ¹3-4, 2003.

Айрапетова Наталья. “Турецкий марш на просторах СНГ. Блистательная Порта вновь стремится на геополитическую арену”, информационно-аналитический журнал *Âèçàíòèéñêîå íàñëåäñòâî* ¹ 5, 2003.

Àðàêåëÿí Ãðèãîðèé. “Ðîáåðò Êî÷àðÿí ó âàæíîãî ðóáåæà”, *Ãîëîñ Àðìåíèè*, 23 íîÿáðÿ 2002.

Àðàêåëÿí Î. À. “Àðìÿíñòâî â ýïîõó èíôîðìàöèîííûõ òåõíîëîãèé”, â êíèãå *Àðìÿíñòâî â óñëîâèÿõ ãëîáàëüíîãî íàùåñòâà: Ãåîïîëèòè÷åñêèå è öèâèëèçàöèîííûå àñïåêòû.* Ì îñêâà: Èíñòèòóò ñîöèàëüíûõ íàóê, 2002.

Àðìåíèÿ: ïðîáëåìû íåçàâèñèìîãî ðàçâèòèÿ. Ï îä îáùåé ðåäàêöèåé **Å. Ì. Êîæîêèíà**, Ì îñêâà: Ðîññèéñêèé èíñòèòóò ñòðàòåãè÷åñêèõ èññëåäîâàíèé, 1998.

Àðìÿíñêîå íàðîäíîå äâèæåíèå. 2000.

Àòàìÿí Ñàðêèñ. *Àðìÿíñêàÿ îáùèíà: èñòîðè÷åñêîå ðàçâèòèå ñîöèàëüíîãî è èäåîëîãè÷åñêîãî êîíôëèêòà.* Ì îñêâà: "Èíîñòðàííàÿ ëèòåðàòóðà", 1956.

Áàòñåãîâ Þ. Ã. *Ãåíîöèä àðìÿí – ïðåñòóïëåíèå ïî ìæäóíàðîäíîìó ïðàâó.* Ì îñêâà: Èçä. Äîì “XXI âåê-Ñîãëàñèå”, 2000.

Âåðäÿí Èîñèô. “’Âàðäàíàíê’ äëÿ ïîääðæêè äóõà”, *Íîâîå âðåìÿ*, 9 ôåâðàëÿ 2002.

Возженников А. В. *Национальная безопасность России: методология комплексного исследования и политика обеспечения.* Москва: изд. РАГС, 2002.

Âîëêîãîíîâ Ä. À. *Ïñèõîëîãè÷åñêàÿ âîéíà: ïîäðûâíûå äåéñòâèÿ è ìåðèàëèçìà â îáèäòòè îáùåñòâåííîãî ñîçíàíèÿ.* Ì îñêâà: Âîåíèçäàòåëüñòâî, 1984.

Геворкян Г. А. “Замечания к проблеме Нагорного Карабаха”, *Азатамарт*, 17 марта 1992.

Åâîïòèä àðìÿí â Îñìàíñêîé èìïåðèè. Ñáîðíèê äîêóìåíòîâ è ìàòåðèàëîâ ïîä ðåä. Ì. Ã. Íåðñèñÿíà, 2 èçä., Åðåâàí, 1983.

Ãåîðãèâà Â. “Àðìåéñêàÿ ïðåñòóïíîñòü óãðîæàåò áåçîïàñíîñòè Ðîññèè”, *Íåçàâèñèìîå âîåííîå îáçîðåíèå*, ¹ 10, 1998.

Ãóèàêÿí Àñìèê. “Àðìåí Ïåòðîñÿí: ‘Äæåéìñ Ðàññåë ïåðâêðûâàåò ïóòü â àðìåíîâåäåíèå çàïàäíû ó÷åíûì’”, *Ãîëîñ Àðìåíèè*, 15 àâãóñòà 2002.

Гулакян Асмик. “Перлы скверны. Открытое письмо редколлегии "Армеведческого журнала АЙКАЗЯН" по поводу выхода в свет 20-го тома”, *Голос Армении*, 6 ñåíòÿáðÿ 2001.

Äàòáèíÿí Âëäèìèð. “Äîðîãè Ì ÈÄ â äûìêàõ ïàðèæåé”, *Ãîëîñ Àðìåíèè*, 22 àïðåëÿ 2000.

Äàðáàèíÿí Âëàäèìèð. “Ðåâàíø â îòäåëüíî âçÿòîì ìèíèñòåðñòâå”, *Ãîëîñ Àðìåíèè*, 20 àâãóñòà 2002.

Äåðþãåí Þ. Í. “Àðìèÿ Ðîññèè: âçãëÿä â XXI âåê”, *Ñîöèîëîãè÷åñêèå èññëåäîâàíèÿ*, ¹ 6, èþíü, 1995.

Дзлиев М. И., Урсул А. Д. *Основы обеспечения безопасности России.* Москва: “Экономика”, 2003.

Дугин Александр. *Основы геополитики. Геополитическое будущее России.* Москва:“Арктогея”, 1997.

Äþïþè Ð. Ýðíåñò è Äþïþè Òðåâîð Í. *Âñåìèðíàÿ èñòîðèÿ âîéí. Êíèãà ÷åòâåðòàÿ: 1925 âîä-1997 âîä.* Ñ Ï á- Ì îñêâà: Ï îëèãî í-Àñò, 1998.

Çàðîáÿí Íêêèòà. “Íåîáõîäèì äàèíûé äîëãîñðî÷íûé ñòðàòåãè÷åñêèé ïëàí”, *Ãîëîñ Àðìåíèè*, 16 àïðåëÿ 2002.

Золян Сурен. *Нагорный Карабах: проблема и конфликт.* Ереван: изд. “Лингва”, 2001.

Зубков А. И., *Геополитика и проблемы национальной безопасности России.* Курс лекций. Санкт-Петербург: Юридический центр Пресс, 2004

Казинян Арис. “Без права на молчание”, *Голос Армении*, 16 апреля 2002.

Êàçèíÿí À. “Äóõè’’ íà Êàðàáàõñêîì ôðîíòå: ñâèäåòåëüñòâà áîéöà àçåðáàéäæàíñêîãî Î Ï Î Í à”, *Ãîëîñ Àðìåíèè*, 4 äåêàáðÿ 2001.

Êàçèíÿí À. “Ñåðüåçíàÿ ïðîáëåìà “àäâîêàòîâ íàöèè”, *Ãîëîñ Àðìåíèè*, 9 ôåâðàëÿ 2002.

Êàçèíÿí À. “Òóðåöêèé ìàðø â Ñàðäàðàïàòà – âîçìîæíî ëè?” *Ãîëîñ Àðìåíèè*, 6 àâãóñòà 2002.

Колобов О. А., Корнилов А. А., Симонян А. Г. *Российско-армянские отношения: исторический опыт, стратегические вызовы и перспективы развития.* Нижний Новгород-Ереван: Типография Нижегородского госуниверситета, 2001.

Êõóãîâ Ì èõàèë. *Òàéíû âîåííîé ðåôîðìû.* Ì îñêâà: ÄåÊÀ, 1998.

Манасян А. С. *Карабахский конфликт в ключевых понятиях & избранные темы в расширенном формате.* Ереван, 2002.

Манасян А. С. *Карабахский конфликт. Ракурсы правового подхода.* Ереван: “Амарас”, 1998.

Мангейм Джарол Б., Ричард К. Рич. *Политология. Методы исследования.* Москва: Изд. “Весь Мир”, 1997.

Манилов В. Л. *Теория и практика организации системы национальной безопасности России*. Автореферат дисс. докт. полит. наук. Москва, 1995.

Ìàðêàðÿí Ðóáåí. “Ïîñëû ïðèõîäÿò è óõîäÿò. ×òî îñòàåòñÿ?” *Ãîëîñ Àðìåíèè*, 18 àïðåëÿ 2002.

Матрусов Н. Д. “О необходимости создания целостной системы национальной безопасности России: основные принципы, подходы, элементы”, Информационный сборник *Безопасность*, ¹ 3-4, 1996.

Ìåëêîíÿí Ý. Ë. “Àðìÿíñêàÿ ñåìüÿ â óñëîâèÿõ äèàñïîðû”, *Ñîâåòñêàÿ ýòíîãðàôèÿ* ¹ 6, 1988.

Ìåëêîíÿí Ýäóàðä. "Äèàñïîðà â ñèñòåìå ýòíè÷åñêèõ ìåíüøèíñòâ (íà ïðèìåðå àðìÿíñêîãî ðàññåÿíèÿ)", *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2.

Ìèêàåëÿí Ëåâîí. “Ëèìèò áåçäåéñòâèÿ èñ÷åðïàí: óðîêè ìàÿ”, *Ãîëîñ Àðìåíèè*, 30 ìàÿ 2002.

Ìèêàåëÿí Ëåâîí. "Â ýôèðå íàöèîíàëüíàÿ Àðìåíèÿ," *Ãîëîñ Àðìåíèè*, 16 ôåâðàëÿ 2002.

Ìèðçîÿí Áåíèàìèí. “×åðåç 15 ëåò”, *Ãîëîñ Àðìåíèè*, 9 àïðåëÿ 2002.

Íàë÷àäæÿí Àëüáåðò. *Íàöèîíàëüíàÿ èäåîëîãèÿ è ýòíîïñèõîëîãèÿ.* Åðåâàí, "Îãááàí", 1999:

Íàë÷àäæÿí À. À. *Ýòíè÷åñêàÿ õàðàêòåðîëîãèÿ.* Åðåâàí, “Îãááàí”, 2001.

“Íà ïðàâàõ ÷óæåñòðàíöà (Ðàçìûøëåíèÿ ïðîôåññîðà – î ïðîáëåìàõ íàöèîíàëüíîãî ñàìîñîçíàíèÿ, î âçàèìîòíîøåíèÿõ ðîäèíû è ñïþðêà)”, *Íîâîå âðåìÿ*, 25 ìàÿ 2002.

Íèêîíîâ Âÿ÷åñëàâ. “Ì û – ñ ñèëàìè öèâèëèçàöèè”, *Ððàæäàíèíú* (åæåìåñÿ÷íàÿ ïîëèòè÷åñêàÿ ãàçåòà), ¹ 1, äåêàáðü 2001.

Новикова О. Н. *Концепция “национальной безопасности” в современной американской политологии. Научно-аналитический обзор*. Москва, 1994.

Общая теория национальной безопасности. Учебник Российской Академии государственной службы при Президенте РФ. Ïîä ðåäàêöèåé **А. А. Прохожева.** Москва: Изд. РАГС, 2002.

Îãàíåñÿí Íèêîëàé. *Êàðàáàõñêèé êîíôëèêò: ýòàïû, ïîäõîäû, âàðèàíòû ðåøåíèÿ.* Åðåâàí, 1997.

Павленко С. З. *Безопасность российского государства как политическая проблема.* Дисс. докт. полит. наук, Москва, 1998.

Ïàíîñÿí Ðàçìèê. "Íåïðîñòîå ïðîøëîå, òðóäíîå íàñòîÿùåå, òóìàííîå áóäóùåå (îòíîøåíèÿ Àðìåíèè è äèàñïîðû â 1988-1999 ãã.)", *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2.

Ïåòðîñÿí Äàâèä. "Ïðè÷èíû âîåííîãî óñïåõà àðìÿí", *Íîâà êîâ÷åã* (èíôîðìàöèîííî-àíàëèòè÷åñêàÿ ãàçåòà àðìÿíñêîé äèàñïîðû ñòðàí ÑÍÃ), ¹ 4 (28), ìàé 2000.

Ñàðãñÿí Àííà. "Òàòà, Òèíà, Ì ýò è äðóãèå", *Íîâîå âðåìÿ,* 3 àâãóñòà 2002.

Ñàðêèñÿí Àðàèê. "Ì û ïëàòèì äàíü ñâîèì è ÷óæèì", *Ãîëîñ Àðìåíèè*, 16 èþëÿ 2002.

Ñàðìàêåøÿí Ãàÿíå. "Äîñòîéíûå ìóæè è áåäíàÿ ïàä÷åðèöà", *Ãîëîñ Àðìåíèè*, 30 àïðåëÿ 2002.

Òåð-Àðóòþíÿíö Ãàãèê. Àãåíòóðà ñïåöèàëüíîãî íàçíà÷åíèÿ", *Ãîëîñ Àðìåíèè*, 18 ìàÿ 2002.

Òåð-Àðóòþíÿíö Ã., Âûçîâ ìåëêîãî ÷èíîâíèêà, èëè íîâîå íàïðàâëåíèå ïîëèòè÷åñêîé íàóêè – "íîðìàëèçì", *Ãîëîñ Àðìåíèè*, 3 Îêòÿáðÿ 2000.

Òåð-Àðóòþíÿíö Ã. "Êîìïåìåíòàðèçì â ðàçãàðå èëè 'ïðîâåðêà íà âøèâîñòü'", *Ãîëîñ Àðìåíèè,* 19 äåêàáðÿ 2002.

Òåð-Àðóòþíÿíö Ã. "Ïðîáëåìû ñïþðêà â ðàìêàõ Ì ÈÄ ÐÀ", *Ãîëîñ Àðìåíèè*, 19 íîÿáðÿ 2002.

Òåð-Àðóòþíÿíö Ã. "Ðåãèîí áåç ãðàíèö", *Ãîëîñ Àðìåíèè,* 5 ñåíòÿáðÿ 2002.

[**Ôðåéíêìàí Ëåâ**]. "Èíòåðâüþ ñòàðøåãî ýêîíîìèñòà ïî Àðìåíèè Âñåìèðíîãî áàíêà Ëüâà Ôðåéíêìàíà èíôîðìàöèîííîìó ïîðòàëó ArcNews", *ArCNews,* 27 íîÿáðÿ, 2002.

Õàãîïÿí Äæîí. "Íó, ìîé îòåö áûë àðìÿíèíîì, äà…", *Äèàñïîðû* (íåçàâèñèìûé íàó÷íûé æóðíàë), 2000, ¹ 1-2.

"Õîòèì òàêîãî ïðåçèäåíòà", *Ãîëîñ Àðìåíèè*, 11 èþíÿ 2002

Øàêàðÿíö Ñåðãåé. *Ïîëèòèêà ïîñòñîâåòñêîé Ðîññèè íà Êàâêàçå è åå ïðñïåêòèâû.* Åðåâàí: ÀÖÑÈ Í È, 2001.

Шуберт Т. Э. *Национальная безопасность России: конституционно-правовые аспекты.* Москва: "Право и закон", 2001.

"16% íàñåëåíèÿ – î÷åíü áåäíûå", *Ãîëîñ Àðìåíèè*, 21 íîÿáðÿ 2002.

Abu-Nasr Donna, "Saudis Raise $92M for Palestinians," *Associated Press,* 12 April 2002, 5:23 PM ET.

Adalian Rouben Paul, “Armenia’s Foreign Policy: Defining Priorities and Coping with Conflict,” in **Dawisha Adeed and Dawisha Karen**, eds., *The Making of Foreign Policy in Russia and the New States of Eurasia.* Armonk, New York: M. E. Sharpe, Inc., 1995.

Aivazian Armen, “Speeches Given by Prof. Armen Aivazian To Mark the 88th Aniversary of the Armenian Genocide”, http://www.24april.org.

Aivazian Armen, “Denial of the Genocide: Security Implications for Armenia,” *Nor Horizon* (Uppsala, Sweden), June 2001, No. 24.

Aivazian Armen, "Possible Solutions for the Nagorno-Karabakh Conflict: A Strategic Perspective," *Contemporary Caucasus Newsletter* (The Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies), Issue 5, Spring 1998.

Aivazian Armen, “Possible Solutions for the Nagorno-Karabagh Problem: A Strategic Perspective,” in **Chorbajian Levon**, ed., *Making a State: From Secession to Republic in Nagorno-Karabagh.* New York: St. Martin's Press, 2001, pp. 233-234**.**

Aivazian Armen, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal.* Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997.

Akhundova Elmira, “Defense Minister Abiyev: "We are keen on privileged partnership with NATO," *Azernews/Azerkhabar,* 2/17/99 - 2/23/99.

Aliev Nair and Bagirov Mamed, “Azerbaijan Flexes Muscles Over Karabakh” *IWPR's Caucasus Reporting Service*, ¹ 97, September 7, 2001.

Ambassador Presel*, Testimony on Caucasus Conflicts*, http://usiahq.usis.usemb.se/abtusia/posts/xA1/wwwhprsl.html.

Ames Paul, “EU Sees Need to Boost Military,” *Associated Press*, 22 March 2002, 5:41 PM ET.

“Reinventing War,” *Foreign Policy,* November-December 2001.

Anderson John Ward, *“*Kurdish Scar Unhealed in Turkey: Latest Attack Belies Government Resettlement Policy,” *Washington Post,* 8 Nov. 2000; p. A3.

Arbatov Alexei G., "Military Reform in Russia: Dilemmas, Obstacles, and Prospects," *International Security*, Vol. 22, ¹ 4 (Spring 1998).

Arieff Irwin, “US Kills UN Bosnia Mission, Then Grants Reprieve,” *World-Reuters News*, July 1, 2002, 12:27 AM ET.

Armenian National Committee of America, "Armenian Caucus Asks Attorney General To Explain Armenia's Mistaken Inclusion And Subsequent Removal From I.N.S. List," *Press Release*, 21 December 2002.

Atamian Sarkis, *The Armenian Community: The Historical Development of a Social and Ideological Conflict* (New York, 1955)

"Azerbaijan will not give even one square meter of its territory to Armenia," - General S. Abiyev Baku, 22 July 2002, *Sahil (www.azerigenocide.org)*.

"2,000 Azerbaijani Soldiers Said to Have Died from Noncombat Deaths in 1995-2000," *RFERL Newsline* 30 August 2001.

Badalian Rouben, "Which is the Aim of RFE/RL Broadcasting in Armenia," *Azg* daily, ¹ 225, 12/07/2001.

Bakalian Anny, *Armenian-Americans: From being to feeling Armenian.* New Brunswick, NJ: Transaction Publishers, 1993.

Barry Colleen, "NATO Chief Warns of Military Gap," *World News-Associated Press*, 3 February 2002, 8:20 AM ET.

Blanche Ed, "Terrorism: Turkey seizes PKK commander*," Jane's Intelligence Review-Pointer*, 1 June 1998.

Bloed Arie, ed., *The Conference on Security and Cooperation in Europe: Analysis and Basic Documents, 1972-1993.* Dodrecht; Boston; London: Kluwer Academic Publishers, 1993.

Booth Ken and Herring Eric, *Keyguide to Information Sources in Strategic Studies.* London: Mansell, 1994.

Brown Justin, "NATO sets precedent in deciding to violate a border," The Christian Science Monitor, 25 March 1999.

Brzezinski Zbigniew, *The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives.* New York: BasicBooks, 1997.

Carley Patricia (Compiler), *Nagorno-Karabakh: Searching For A Solution*, A United States Institute of Peace Roundtable Report (Chapters 2 and 5). Peaceworks No. 25. First published December 1998.

"Chechen war shows deteriorated state of the Russian military: analysts say", *Agence France Press*, Washington, 22 January 2001 9:43 PM SGT

Chomsky Noam, Clark Ramsey, Said Edward W., *Acts of Agression: Policing "Rogue" States.* New York, N. Y.: Seven Stories Press, 1999.

Chorbajian Levon, Donabedian Patric & Mutafian Claude, *The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh.* London & New Jersey: Zed Books, 1994.

Chorbajian Levon, ed., *Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh.* New York: St. Martin's Press, 2001.

Chryzantopoulos Leonidas T., *Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994.* Princeton & London: Gomidas Institute Books, 2002.

Cunningham Stephen, "UK's Brown Calls for 21st Century Marshall Plan," *Reuters World News,* 16 December 2001 7:16 PM ET.

Dadrian Vahakn N., "A Review of the Main Features of the Genocide," *Journal of Political and Military Sociology* Vol. 22, ¹ 1, Summer 1994.

Dadrian Vahakn N., *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucausus*. Providence & Oxford: Berghahn Books, 1995.

Daily Matt, "Earth Summit Talks Roll On, No Deal in Sight," *World-Reuters News,* 26 August 2002, 11:09 PM ET.

Dale Helle, "Yesterday's Alliance?" *The Washington Times*, 30 January 2002.

"Defense Chief Wants Azerbaijan, Turkey to Stand up to Armenia," *Agence France Presse,* 16 March 2001.

Danielyan Emil, "U.S. Wants Political Reform For Extra Aid To Armenia," *RFE/RL Armenia Report*, 18 May 2004.

Dobbs Michael, "Foreign Aid Shrinks, but Not for All: With Clout in Congress, Armenia's Share Grows," *Washington Post*, 24 January 2001; Page A01.

Dolabjian Vartkes S., "Would the real Ronald G. Suny please stand up?" *Horizon*, 25 October 1999.

Duncan Andrew, "Russian Forces in Decline," *Jane's Intelligence Review*, 1996, Vol. 8, ¹ 12.

Durch William J., ed., *UN Peacekeeping, American Politics and the Uncivil Wars of the 1990s* (New York: St. Martin's Press, 1996).

"Economist: IMF Made 'Fatal' Mistakes in Argentina," *World-Reuters News*, 17 January 2002, 5:31 AM ET.

Elekdag Sükrü, "2 and 1/2 War Strategy," *Perceptions: Journal of International Affairs*, ¹ 1 (March-May 1996).

Elrich Reese and Andrea Cangioli, "Italy Accused of Coverup in Somalia," *San Francisco Chronicle,* 26 January 1998.
[Emin Joseph], *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself.* 2nd ed. (first published in London in 1792) Calcutta: Baptist Mission Press, 1918.
Erdem Vahit, "Defense Industry and Investment Projects," *Turkish Review Quarterly Digest* (Spring 1988).
Evelyn Leopold, "Bitter Fight with U.S. Leads to Compromises on Court," *World-Reuters News*, 13 July 2002.
Evelyn Leopold, "UN's Annan Warns Not to Punish Poor for Being Poor," *Reuters World News*, 5 Feb. 2002, 12:08 AM ET.
Fletcher Pascal, "Castro Says Cuba Lives Free of IMF 'Executioner'," *World-Reuters News*, 29 January 2000, 1:02 PM ET.
Friedman Thomas L., "The End of NATO"? *The New York Times*, 3 February 2002.
Friedman George and Friedman Meredith, *The Future of War: Power, Technology, and American World Dominance in the 21st Century.* New York: Crown Publishers, 1996.
Freinkman Lev M., "Role of the Diasporas in Transition Economies: Lessons from Armenia," *Paper presented at the 11th Annual meeting of the ASCE*. Coral Gables, 2-4 August 2001.
Frijda Nico H., "The Lex Talionis: On Vengeance," in Stephanie H. M. van Goozen et. al., eds., *Emotions: Essays on Emotion Theory.* Hillsdale, NJ: Erlbaum, 1994.
Funk & Wagnalis New Encyclopedia, Vol. 25. New York: Funk & Wagnalis, Inc., 1972.
Gee W., *Social Science Research Methods.* New York, 1950.
Goble Paul, "When States Lose Control," RFE/RL Report, 24 October 1997.
Goble Paul, "Coping with the Nagorno-Karabakgh Crisis", *The Fletcher Forum of World Affairs*, vol. 16, ¹ 2 Summer 1992.
Goltz Thomas, *Azerbaijan Diary: A Rogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post-Soviet Republic.* New York: M.E. Sharpe, 1998.
Hacaoglu Selcan, "Turkey's Kurdish Rebels End 5-Year Truce", *Assoc. Press News*, 1 June 2004.
Hamparian Raffi, "No Assembly Required," *Asbarez Online*, 25 Jan. 2002.

Heikki Vilén , Mike Karie and Roger Biesel, "Preparations of a Peace-keeping Mission for the Nagorno-Karabakh Conflict by the OSCE's High Level Planning Group (HLPG)," May 1996.

Heller Charles E., *Economy of Force: A Total Army, The Israel Defense Force Model.* Carlisle Barracks, PA: Strategic Studies Institute, U.S. Army War College, March 15, 1992.

Hickok Michael Robert, "Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization," *Parameters* (US Army War College Quarterly), Summer 2000, Vol. XXX, ¹ 2.

Hiro Dilip, "The Question of Azerbaijan", *The Nation,* vol. 255, ¹ 7, 14 September 1992.

Hunter Shireen, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict* (Washington, D. C.: The Center for Strategic and International Studies, 1994).

King David & Miles Pomper, "Congress, Armenia and the Contingent Influence of Diaspora Lobbies," *Congressional Quarterly*, 2002, ¹ 2.

"Income Gap Greater In Armenia Than CIS States," *Asbarez Online*, 31 January 2002.

International Institute for Strategic Studies, *The Military Balance, 2000/2001*. London: Oxford University Press, 2000.

International Institute for Strategic Studies, *The Military Balance*, 2001/2002. London: Oxford University Press, 2001.

International Institute for Strategic Studies, *The Military Balance, 1998/1999*. London: Oxford University Press, 1998.

International Institute for Strategic Studies, *The Military Balance*, *1997/1998*. London: Oxford University Press, 1997.

Ismailova Gulnara, "Behind The "Turkish Stars": The Depth of Turkish-Azerbaijani Military Cooperation," *The Analyst,* 29 August, 2001 (posted on www.groong.com on Oct 1, 2001).

Kaplan Robert D., "Looking the World in the Eye," *The Atlantic Monthly* December 2001, Vol. 288, ¹ 5.

Karambelas Nicholas G., "Foreign Influencies and U.S. Policy," *Defensor Pacis*, ¹ 6, September 2000.

Kivrikoglu Huseyin, “Land Forces Organization,” *Ankara Savunma ve Havacilik* [Անկարայի պաշտպանություն և հակաօդային պաշտպանություն] (September-October 1998).

Kolodziej Edward A. and Harkavy Robert E., eds., *Security Policies of Developing Countries.* Lexington, Mass.: Lexington Books, 1982.

Kupchan Charles A., “The End of the West,” *The Atlantic Monthly,* November 2002.

Johnston Douglas (project director and editor), *Foreign Policy into the 21st Century: The U.S. Leadership Challenge* (Washington, D.C.: The Center for Strategic & International Studies, September 1996).

Laitin David D. and Suny Robert Grigor, “Armenia and Azerbaijan: Thinking a Way Out of Karabakh,” *Middle East Policy*, Vole VII, Oct. 1999, ¹ 1.

Larsen Randy J., "A Report on the Decade of Emotion," *Contemporary Psychology*, 1995, Vol. 40, ¹ 11.

Lederer Edith M., “War Crimes Court Officially Begins,” *Associated Press News*, 1 July 2002 7:12 AM ET.

Lederer Edith M., “Many Oppose U.S. Peacekeeper Exemptions,” *Associated Press News,* 21 May 2004.

Lelyveld Michael, “Azerbaijan: Turkey Pursues Ambiguous Ties,” *RFE/RL* 28 August 2001.

“Turkey considering military alliance with Azerbaijan: Azeri official,” *Agence France Presse*, 11 Feb. 1999.

Leopold Evelyn, “Bitter Fight with U.S. Leads to Compromises on Court,” *World-Reuters News*, 13 July 2002, 2:45 AM ET.

Leopold Evelyn, “UN's Annan Warns Not to Punish Poor for Being Poor,” *Reuters World News*, 5 Feb 2002, 12:08 AM ET.

Lieven Anatol, "The (Not So) Great Game," *The National Interest* (Winter 1999-2000).

Ljunggren David, “Canada PM Links Sept. 11 to 'Arrogant' West,” *Reuters-News,* 12 Sep. 2002, 1:36 PM ET.

Ljunggren David, “Canada PM Again Ties Sept. 11 to Western Policies,” *Reuters-News* 16 Sep. 2002, 4:18 PM ET.

MacDonald Alastair, “End 'Global Apartheid' Call Heralds Earth Summit”, *World-Reuters News,* 25 August 2002, 9:13 PM ET.

MacFarlane Neil, *Western Engagement in the Caucasus and Central Asia.* London: Royal Institute of International Affairs, 1999.

Marashlian Levon, "Armenian-Turkish Dialogue and Unfounded Accusations," *Armenian Weekly* (Boston), 19 August 2000.

Samvel Martirosian, "Big Insinuations For Little Armenia", *Rosbalt* (Russia, Saint-Petersburg), 31/05/2004, 11:05 (Translated by Alex Anderson).

McMahon Colin, "Outgunned, Not Outfought," *The Chicago Tribune*, 21 January 2000.

Miller Greg, "CIA Looks to Los Angeles for Would-Be Iranian," *Los Angeles Times*, 15 January 2002.

Mufti Malik, "Daring and Caution in Turkish Foreign Policy," *Middle East Journal*, 52 (Winter 1998).

Onus Sinan, "Intelligence Report Details Armenia-PKK ties," *Aydinlik*, 29 January 1994, in *FBIS Daily Report: West Europe*, 3 February 1994.

Pasek Beata, "Honduras Follows Spain, Pulls Out of Iraq," *Associated Press News* April 19, 2004.

Papathanasis A. and Vasilllopulos Chris, "Functional Integration and the Middle East," *Journal of Political and Military Sociology*, Vol. 20, ¹ 2, Winter 1992.

Platt Washington, *Strategic Intelligence Production: Basic Principles.* New York, 1957.

Popeski Ron, "Russia Chides U.S. Over Chechen Contacts," *Reuters World-News,* 24 January 2002, 4:48 PM ET.

Rasizade Alec, "Azerbaijan in the Morning after Independence: Less Oil, More Graft," *Caucasus and Central Asia Newsletter*, Issue 2, Summer 2002.

Rasizade Alec, "Azerbaijan Descending into the Third World After a Decade of Independence," *Comparative Studies of South Asia, Africa and the Middle East* Vol. XXII No. 1&2, 2002.

Paul Roland A., *American Military Commitments Abroad.* New Brunswick: New Jersey: Rutgers University Press, 1973.

Peacock Mike, "Britain Wants U.S. to Explain Guantanamo Bay Photos," *World-Reuters News*, 20 January 2002, 10:17 AM ET.

Rieff David, "Nagorno-Karabakh: Case Study in Ethnic Strife," *Foreign Affairs*, March-April 1997.

"Rogue States and the New Reality", *Stratfor.com Weekly Global Intelligence Update*, 3 April 2000.

Rolbant Samuel, *The Israeli Soldier: Profile of an Army.* New York-London: Thomas Yoseloff LTD, 1970.

Roman Mar, "Final Spanish Soldiers Return From Iraq," *Associated Press News* 28 April 2004.

"Russia reinforcing Armenian air defence base with MiG-29s," 01/21/99 *BBC Worldwide Monitoring*; Source: RIA, Moscow, 20 January 1999.

Safire William, "Against Internal Agression (Essay)," *New York Times*, 25 March 1999.

Sarkesian Sam C., *U. S. National Security: Policymakers, Processes, and Politics.* Second edition. Boulder, Colorado: 1995.

"Sarkissian Responds to Turkey's Promise of Military Aid To Baku," *Armenpress*, 2 October 2001.

[Simonyants Edward,] "'Turkey Really Was Going To Attack Armenia in Autumnn 1993', Former Head of State Department of National Security, Major-General Eduard Simoniants Says," *Noyan Tapan News Agency*, Yerevan, 23 September 2002.

Skorneck Carolyn, "Study: Number of Conflicts Declines," *Associated Press*, 23 December 2001.

Shirley Edward G., "Can't Anybody Here Play This Game?" *The Atlantic Monthly* February 1998.

Smoke Richard, *National Security and the Nuclear Dilemma*. 2nd ed. New York: Random House, 1987.

Stamboltsian Gevorg, "Armenian Military Accused Of Hushing Up Non-Combat Deaths," *Armenialiberty Report*, 20 May 2004.

Stamboltsian Gevorg, "Armenian Military To Set Up First Think-Tank," *Armenialiberty Report*, 31 May 2004.

Stevenson Jonathan, *Losing Mogadishu: Testing US Policy in Somalia.* Annapolis, Maryland: Naval Institute Press, 1995.

Stratfor.com, "Where, oh where, has the PKK gone?" 1999.08.27;

Stratfor.com, "PKK Wields Pipeline Leverage," 1999.11.23.

Suny Ronald Grigor, *Armenia in the Twentieth Century.*Chico: CA: Scholars Press, 1983.

Suny R. G., "Being Armenian in Georgia," *groong@ usc.edu*, February 13, 2000.

Suny R. G., “Constructing Primordialism: Old Histories for New Nations,” *The Journal of Modern History,* ¹ 73 (December 2001).

Suny R. G., *Looking toward Ararat: Armenia in Modern History.* Bloomington: Indiana Univ. Press, 1993.

Tabibian Ambassador Jivan, “The Risk of Democratization: Reforming Diaspora institutions will require freeing them from each other’s clutches, and insuring their autonomy,” *Armenian International Magazine*, August-September 1999, Vol. 10, ¹ 8&9.

Tatevosian Ara, "Nagorno-Karabakh’s New Army of ‘Iron Will and Discipline’," *Transition* (OMRI) 9 August 1996.

Terjanian Antoine, “Retirement and Assisted Living in Armenia: How can we make it possible for 5% of the 600,000+ Diasporan Armenians aged 64+ to retire in Armenia?,” Talk presented at the AmCham (American Chamber of Commerce in Armenia) Conference on *Diaspora as a factor of Country Competitiveness*, October 24, 2002, Yerevan.

Thomson J. A., *Introduction to Science.* New York, 1911.

Turkey’s Ministry of National Defense, *White Paper-Defense 1998.* Ankara: Ministry of National Defense.

*The National Defense Council Foundation, World Conflict List, 2000, 2001***,** http://www.ndcf.org.

“Tinkering With Turkey (Editorial),” The Wall Street Journal, 16 January 2002.

Thomason Robert, "A 'Rogue' is a 'Rogue' is a 'State of Concern'," *Washington Post*, 20 June 2000.

"Threat of 'Rogue' States: Is It Reality or Rhetoric?" Washington Post, 29 May 2000.

Tunander Ola, "A New Ottoman Empire? The Choice for Turkey: Euro-Asian Centre vs. National Fortress," *Security Dialogue*, 26 (December 1995).

“Turkey Considering Military Alliance with Azerbaijan: Azeri Official,” *Agence France Presse*, 11 Feb. 1999.

Uri Avnery, “Oil, Sharon and the Axis of Evil: The Great Game,” *Counter Punch* (www. counterpunch.com) February 11, 2002 (posted in *Turkistan Newsletter*, 12 Feb. 2002 (լուրջ է տեսել նաև իսրայելական *Ma'ariv* օրաթերթում, 8 Feb. 2002).

Watkins Kevin, *Eight Broken Promises: Why the WTO Isn't Working For the World's Poor.* Oxford: Oxfam Briefing Paper ¹ 9, 2001.

Watson Julie, "World Leaders Vow to Relieve Poverty," *Associated Press* 23 March 2002, 6:03 AM ET.

Watts Michael, "Poverty and the Politics of Alternatives at the End of the Millennium," in *Global Futures: Shaping Globalization*, ed. by Jan Nederveen Pieterse, London-New York: Zed Books, 2000.

Webb Jason, **"**Developing Countries to Fight 'Economic Apartheid'," *World-Reuters News,* 15 April 2000 12:13 AM ET.

Wedel Janine R., *Collision and Collusion: The Strange Case of Western Aid to Eastern Europe*, New York, N.Y.: Palgrave, 2001.

Weir Fred, "Russia's Disarmament Gambit," *The Christian Science Monitor*, 15 November 2000.

Wilson Christopher and Salahuddin Sayed, "U.S. Holds Firm: Afghanistan Captives Are Not POWs," *World-Reuters News*, 27 January 2002, 7:50 PM ET

World Bank, Armenia. Country Assistance Strategy. Report 22111-AM. Washington, DC, 25 April 2001.

Yeager Timothy J., *Institutions, Transition Economies, and Economic Development.* Boulder, Colorado: Westview Press, 1997.

Zakarian Armen, "Iranian Defense Chief Plans Visit To Armenia," *RFE/RL Armenia Report*, 4 February 2002.

Zakarian Armen, "Iran's Defense Chief Hopes For Closer Ties With Armenia," *RFE/RL Armenia Report*, 4 March 2002.

"56 Percent Below Poverty Line," *Glasnost Foundation report* 22 January 2001.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5

ԳԼՈՒԽ 1
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱՍԻՆ..... 25

ԳԼՈՒԽ 2
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ ԵՎ ՓՈՔՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ..... 52

ԳԼՈՒԽ 3
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ... 64

ԳԼՈՒԽ 4
ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ..... 95

ԳԼՈՒԽ 5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ..... 105

ԳԼՈՒԽ 6
ՀԱՅ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ..... 151

ԳԼՈՒԽ 7
ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ..... 161

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 242

ՀՂՎԱԾ ԵՎ ՄԵՋԲԵՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 250